ՆՈՒԻՐԱՏՈՒ
ՎԱՀԱՆ Մ. ՔԻՒՐՔՃԵԱՆ
Նիւ Եորք

Gift of
VAHAN M. KURKJIAN
New York

ՄԱՏԵՆԱԴՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԱՑ

ՓԱՐՍՈՍ ԲՈՒՅԱՆԴԱՑԻ

ՓԱՒՍՏՈՍԻ

ՐՈՒՅԱՆԴԱՑՒՈՑ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ի ՀՈՐՍ ԴՊՐՈՒԹԻՒՆՍ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԲՈՒՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻ 1832 ԹՈՒՅՆ

ԱՌ ՀԱՆԴԻՊԵԱԼՍ ՄԱՏԵՆԻՍ

Զ Փաւստեայ բուզանդացւոյ պատմագրէ երրեակ խնդիրք են. նախ՝ թէ յորմէ՛ ազգէ էր, երկրորդ՝ թէ յո՛ր լեզու պատմագրեաց, և երրորդ՝ թէ արդեօք թերի՛ եցէ մատեան նորա առ մեզ հասեալ է թէ ամբողջ.

Ի՛սա ինքն 'ի սկզբան վերերորդ գրոցն (էջ 260.) խոստանալով 'ի ստորոտ պատմութեանցն տալ զինքենէ տեղեկութիւն, պատմէ 'ի հինգերորդ գլուխ նորին (էջ 264.) զՓաւստոսէ ումեմնէ եպիսկոպոսէ. և 'ի յաջորդ գլուխն ասէ, թէ "Ի՛նչ երկայր մի Փաւստեայ եպիսկոպոսի ... և էին լեալ սոքա ազգաւ Հոռոմ"։ Զայս բան է թէ զինքենէ առցէ ոք մատենագրին ասացեալ, ահա յայտնի իսկ երևի ազգ նորա։ Բայց ոմանք կարծեօք վարեցան. թէ գուցէ 'ի ստորևան խոստանալով պատմել զանձնէ, չէր նա ինքն յիշատակեալն յառաջագոյն։ Սակայն և այլ հաւաստիք

առ ձեռն կան մեզ։ Զի նոյն ինքն դարձեալ 'ի վախ-
ճան երրորդի դպրութենն (էջ 58.) կոչի ժամանա-
կագիր Յունաց։ Եւ մերոյս Ղազարայ Փարպեցւոյ
կոչելովն գնա բուզանդացի, (էջ 8 և 12.) ընդ-
ղաքն իսկ նորա Բիւզանդիոն զկարծիս զայս հաստա-
տէ։ Բայց առ քննողս հաստատագոյն ևս վկայեն այսմ
կերպարանք բանից նորա, որով բազում ուրեք ջա-
նայ ընդ վայր հարկանել զազգս Հայոց. զնախնիսն
մեր առ հասարակ եպերելով, որպէս ոչ 'ի սրտէ՝ այլ
կեղծաւորաբար անդստին 'ի սկզբանէ ընկալեալ նոցա
զհաւատս (էջ 33.) և զիշխանութիւն կաթողիկոսաց ազ-
գիս սահմանելով յօրհնութիւն ևեթ հացին սեղանոյ
արքային (էջ 226.) և դարձեալ յաճախագոյնս յօ-
դելով եպերանս զազգէս, որ մանաւանդ ատելոյ են
բանք և ոչ համազգւոյ։ Զատն որոյ Փարպեցին կա-
րի ճարտարութիւն, իբր անբասիր առնելով գնա, ըզ-
պատշաճ կարծիսն տայ գնմանէ։ "Ընդ 'ի Բիւզան-
դիոն, ասէ, յայնպիսումն քաղաքի և 'ի մէջ այնչափ
բազմութեն ուսելոյ վարժեալ այրն Փաւստոս, այնպի-
սի ինչ արդեօք անհաճոյս լսողաց բանս կարդէր 'ի
պատմութիւրումն. քա՞ և մի՛ լեցի։ Ուստի և անհա-
ւատալի իմում տկարամտութես կարծեցեալ գործն,
ասեմ՝ թէ գուցէ այլ ոք յանդուգն և անհրահանգ
բանիւ ըբաբար ձեռն արկեալ յիւրն, գրեաց զինչ
պէտս ըստ կամի. և կամ զի ուրուք անկարեալ դի-
պողս՝ այլաբանեալ վնասեաց, և անուամբ Փաւստո-
սին զիւրոյ յանդգնութեանն սխալանս համարեցաւ
ծածկել։"

Բայց զի նոյն ինքն պատմագիրն յերրորդումն
դպրութեան 'ի գլուխն երկոտասաներորդ (էջ 29.)

'ի թուէն զիշխանս տոհմից հայկազանց, ընդ նոսա համարի և զիւրն յասէն. «Ամերոյ տոհմի ազգի իշխանն Սահառունեաց». հարկ է ապա ասել, զի յոյն գոլով յազգէ՝ թերևս յազգականութենէ տանն Սահառունեաց խառնեալ էր, կամ 'ի Սահառունեայ ումեմնէ 'ի Ռիւզանդիոն ծնեալ։

Բ. Ոդ զի յոյն էր սա ազգաւ, կարծեցին ոմանք զի և 'ի յոյն լեզու պատմագրեաց։ Բայց հմուտք հայերի բարբառոյ և ոչ մի ինչ հետս թարգմանութե 'ի գիրս յայս նշմարեն. մանաւանդ զի և ոչ միշտ ազգ շարագրողին զշարագրածոյն հաւաստեալ ցուցանէ զբարբառ։ Ա. 'ի ահաւանիկ և Բ. գաթանգեղոս 'ի հայ լեզու պատմագրեաց, այլ ինքն հռոմայեցի էր ազգաւ. ընդ որ եթէ տարակուսեսցի ոք, զաներկբայելի լուծումն տարակուսանացն գտցէ 'ի սկիզբն Բ. գաթանգեղեայ մատենին՝ որ ընդ հուպ եղցէ 'ի լոյս։ Բ. պաքէն դժուարին թուի յայր օտարազգի ներհուն հայկաբանութենն 'ի գիրս յայս երևեալ. սակայն և ընդ Բ. գաթանգեղեայ հայկաբանութենն նոյն զարմանք էն, զի հռոմայեցին հաւասար մերազնեայ ընտիր մատենագրացս հայկաբանէ։ Բ. պա ասելի է. զի որպէս Տերենտիոս կարքեդոնացին առ հռոմայեցիս վարժեալ՝ հրաշազան օրինակ լատին բարբառոյ զքերթածս իւր եթող, ըստ նմին օրինակի և Փաւստոսս այս յոյն և Բ. գաթանգեղոս հռոմայեցի վարժեալք 'ի մանկութէ 'ի մերս բարբառ՝ կարօղք եղեն որպէս ընիկ իւրեանց բարբառովն պատմագրել նովաւ։ Իսկ զի Պրոկոպիոս յիշէ գիրս իմն անուանեալ ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, յորմէ ինչ ինչ նման սմին առեալ պատմէ, և զի Փարպեցին նովին անուամբ

զգիրս զայս յորջորջէ, ապա ուրեմն եթէ չիցէ այլ մատեան համանուն՝ զընթերցեալն նորա յոյն օրինակ թարգմանութիւն հայ բնագրիս մարթ է համարել, և կամ զի սորին մատենագրի յերկաքանչիւր բարբառս իցէ պատմագրեալ։

Մինայ արդ երրորդ խնդիրն իրաւապէս երկբայելի. զի 'ի սկիզբն գրոցս դպրութիւն երրորդ արձանագրելով, երկու այլ դպրութիւնս նախագրեալս հարկ է վարկանել։ Սակայն և 'ի հակառակէն նոյն ինքն մատենագիրն յայտ առնէ 'ի յառաջաբանին՝ քառեակ գիրս գրեալ. և ահա ջրոք գիրք յերրորդէն մինչև ցվերջերորդն պահին։ Պպա մարթ է կարծել, զի երկու այլ նախորդ դպրութիւնք ոչ սորին պատմագրի իցեն, այլ այլոյ՝ զորս նոյն ինքն 'ի յառաջաբանին յիշատակէ, որք 'ի քարոզութէն Թադէի մինչև ցկատարումն Գրիգորի մերոյ Լուսաւորչին պատմագրեցին. յորոց մի և զԱթանագեղեայ գիրսն անշուշտ համարելի է, որում զհետ յաջորդէն գիրքս այս։ Յայն սակս իսկ թուի յաւելուլ ամենայն գրքչագրաց առ հասարակ, և կամ թերևս մատենագրին իսկ, զբառս ՍԿԻԶԲՆ զհետ մակագրին երրորդի դպրութէն, որպէս զի մի՛ ոք տարակուսեալ՝ թերի զմատեանս զայս համարիցի։

Բայց թէպէտ և սկիզբն այսր ինքնուրոյն մատենիս ամբողջ և անթերի թուի մեզ, այլ գոյ կասկածել նախ, զի թերևս և այլ մատեան ուրոյն զնախնեացն մերոց իցէ սորա յօրինեալ, և նովին անուամբ կոչեցեալ զայն ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՑՈՑ, ուստի նորին Պրոկոպեայ իցէ առեալ զիրսն Աբգարու թագաւորին մերոյ. զոր և ըստ օրինակագրիս առասպելախառն

ոՀոյ պատմագրէ։ Որպէս զի և զանանուն պատմագիրն, զորմէ անոՀ իմն յաղագս Հայկայ կակաղեալ ասէ Լեւոնեացին, զսա կարծեցին ոմանք։ Այլ երկրորդ կասկածելի է, զի և քառեակ գիրքս այս մասամբ իմն 'ի վերջ կուսէ Թերի գտանիցին։ Բանզի 'ի սկիզբն վեցերորդի դպրութենն, որպէս ասացաք, խոստանայ պատմագիրն՝ 'ի ստորոտ Շամ պատմուեցին տալ զինքենէ տեղեկութիւն. և մինչ չև 'ի ստորոտն հասեալ՝ 'ի գլուխն վեցերորդ զՓաւստեայ ուսումնէ եպիսկոպոսէ Հարևանցի իմն պատմէ, յետ կոյս մատենին ոչ ինչ զանձնէ տալով տեղեկութիւն։ Ուստի մարթ է կարծել՝ զի ստորոտ պատմուեցին՝ ուր ստուգապատում առնէրն զինքենէ նմին դժբախտութեան իցէ հանդիպեալ, որում հանդիպեցան մերոյս քերթողահօր տաղքն յինքն և 'ի Սահակ բաղրատունի, յաւելեալք 'ի վերջ կոյս երրորդ գրոց պատմութենն, որ 'ի ցանկս գլխոցն ԼԷԹ նշանակեալ՝ ոչ ուրեք 'ի գիրսն երևին։ Բ.րդ ԷԹԷ արդարև կասկածանքս այս չիցեն տարապարտ, և ժամանակին օգնականութիւն լրացի Թերին, յայնժամ Թերևս լոյսի մեզ ստուգագոյնս ինչ հաւաստել զմատենագրէս. զի առ այժմ աւելի ինչ քան զայս ասել ոչ ունիմք։ Լոկ յաղագս չհամաձայնելոյ ժամանակագրութենէ սորա ընդ հաւատարմագոյնս 'ի մերոց պատմագրաց՝ ոչ է մեզ անկ վիճել։

Հնգեակ օրինակաց բաղդատութիւն առաջնիկայ տպագիրսարարաւ. յորոց մին հնագոյն և անթուական 'ի ներհուն գրչէ գրեալ, որում մանաւանդ ըստ հետ չոքաք, զկարևոր զանազանութիւս այլոց օրինակացն առ 'ի ստորևս ի՛ջից նշանակեալ՝ ըստ մերումն

առ 'ի բազմաց վկայեալ հաւատարմութեան։ Բայց խոստովանիմք զի առ ձեռին գտեալ օրինակքս չէ՝ զեն բաւական յանսխալ տպագրութեի. քանզի բազում ուրեք և 'ի յայտնի վրիպական ամենեքին համաձայնէին, թերևս անդստին 'ի միոջէ օրինակէ գաղափարեալք։

ԲՈՒԶԱՆԴԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ԽՈՍՏԱՌԱՆՈՒԹԻՒՆ ՆԱԽԱԳՈՏԵԼԻ

Այս ինչ է 'ի դպրութիս երրորդ՝ պատմութիւնս. ժամանակագիր կանոնք մատենից, և առնմին դպրութիւնք երեք, այս ինքն են սոքա չորք մատեանք. և չորեքին միոյ իրաց յիշատակարանք են, յիշեցուցիչք պատմութեց ազգացն Հայաստան աշխարհին որդւոց Լուսորդմայ։ Այս ինքն կարգ անցելոց իրաց, գործք և վարք մինչև ցիւրաքանչիւր ելս յաշխարհէս քահանայապետաց սրբոց արանց՝ այ, և Թագաւորաց տէրանց աշխարհաց արշակունեաց, և զօրավարաց՝ առանց անուանեաց քաջ նախարարաց, և խաղաղութեան և պատերազմին և շինութեան և աւերածոյ և արդարութեան և անօրէնութեան և աստուածպաշտութեան և ամբարշտութեան. ժամանակագիր արարեալ 'ի Թագաւորութենէն Խոսրովու որդւոյ Տրդատայ մինչև 'ի միւս վերջին ժամանակն վատթարելոյ Թագաւորացն Հայոց, և 'ի քահանայապետութէն Վրթանայ որդւոյ Գրիգորի առաջնոյ քահանայապետի մինչև ցայսոսիկ 'ի վերջինսն՝ որք կային գլխաւորք եպիսկոպոսք Հայոց, մի ըստ միոջէ կարգաւք Թուաւք և համարաւք կանոնեալ դրոշմեալ նկարեցի իւրաքանչիւր գլխովք։ Եւ չորս խոստմունս չորից չորեցունց դպրութեանցս յիւրաքանչիւր իւր գլուխս պատուաստեցի մինչև 'ի կատարած սորին, առ 'ի զօգուտն ժառանգել՝ որք միանգամ կամին սրտի մտաւք հասու լինել սմին զոր ասելոցս եմ։

ԽՈՍՏՈՒՄՆ ԵՐՐՈՐԴ

ԿԱՆՈՆՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ՄԱՏԵՆԻՑ ՄԻՆՉԵՒ ՑՔՍԱՆ ԵՒ ՄԻ

Ա. Յաղագս որ ինչ յետ քարոզութեան Թադէոսի Առաքելոյ յերկրին Հայաստան աշխարհին որդւոյ Թորգոմայ։

Բ. Յաղագս մեծի առաջնոյ քահանայապետին Գրիգորի, և նոցունց շիրմանցն։

Գ. Յաղագս Թադաւորութեան Խոսրովու որդւոյ Տրդատայ, և Վրթանայ մեծի քահանայի որդւոյ Գրիգորի։

Դ. Յաղագս երկուց տոհմանցն՝ որք անղաւակեցան, մանաւաղեանքն և Որդունիք, 'ի մէջ Հայաստան աշխարհին։

Ե. Յաղագս որդւոյ քահանայապետին Վրթանայ, որոց անուանք էին երիցուն Գրիգորիս, և երկրորդին Յուսիկ։

Զ. Յաղագս Գրիգորիսի՝ որդւոյ Վրթանայ, և նորուն վախճանին, և տեղին՝ ուր եդաւն։

Է. Յաղագս մարտի պատերազմին հինին եկելոց յարշաւանաց Թագաւորին Մազքթաց յաշխարհն Իշխանուէ Հայոց Թագաւորին, և կամ որպէս սատակեցաւ նա զօրքն իւրովք հանդերձ։

Ը. Յաղագս մայրեացն տնկելոց, և պատերազմացն ընդ Պարս, և աղգահատութիւն տան նախարարացն տոհմին Բզնունեաց։

Թ. Յաղագս Բակուրայ բդեշխի, որ ապստամբեաց յարքայէն Հայոց. և թէ զի՞արդ սատակեցաւ 'ի զօրացն Հայոց, և փոխանակ նորա լինէր բդեշխ Վաղինա սիւնի։

Ժ. Յաղագս Յակոբայ եպիսկոպոսին Մըծբնայ։

ԺԱ. Յաղագս մեծի պատերազմին Պարսից և Հայոց ընդ միմեանս, և անկանելոյ 'ի պատերազմին մեծի զօրավարին Վաչէի, և մահուան Թագաւորին Խոսրովու, և փոխելոյ յաշխարհէ հայրապետին Վրթանայ։

ԺԲ. Յաղագս Թագաւորելոյ Տիրանայ յետ հօր իւրոյ 'ի վերայ Հայոց աշխարհին։ Սոյնպէս և Յուսիկ յետ իւրոյ հօրն Վրթանայ կալաւ զաթոռ հայրապետաց. և կամ որպէս սպանաւ 'ի Տիրանայ արքայէ վասն յանդիմանելոյ զԹագաւորն։

ԺԳ. Յաղագս Թէ զի՞արդ յետ մահուն Յուսկան անառաջնորդ լինէր երկիրս Հայոց. և ոչ որդիքն Յուսկան լինէին արժանի հօրն աթոռոյն։

ԺԴ. Յաղագս վարուց մեծին Դանիէլի՝ առն ՅԱ, և կամ որ-
պէս յանդիմանեաց զԹագաւորն Տիրան, և կամ որ-
պէս պատուհասեալ մեռաւ 'ի նմանէ ։

ԺԵ. Յաղագս որդւոցն Յուսկան, եթէ որպէս ընթադրեալ
առ ոսն հարին զմեծ քահանայութիւն զնայ զպատիւն ։

ԺԶ. Յաղագս Փառինայ, որ կալաւ զաթոռ Հայրապետացն ։

ԺԷ. Յաղագս Շահակայ, որ էր 'ի զաւակէ Աղբիանոսի ե-
պիսկոպոսի, որ յաջորդեաց զտեղի Հայրապետացն յա-
թոռոց. և թէ որպէս յայնմ ժամանակի երկիրն Հայոց
թողեալք զտէր և զպատուիրանս նորա ։

ԺԸ. Յաղագս հայր մարդպետի, որ վատ խրատ տալով թա-
գաւորին՝ տայր կոտորել զազգս նախարարացն Հայոց ։

ԺԹ. Յաղագս որդւոցն Յուսկանն, Պապայն և Ա՛ռանադի-
նէին, եթէ որպէս կամ զիարդ սատակեցան յանօրէ-
նութիւն իւրեանց 'ի տեղիսն սուրբ ։

Ի. Յաղագս Տիրանայ թագաւորին, եթէ որպէս մատնե-
ցաւ յիւրմէ սենեկապետէն Խիսակայ սիւնոյ, եթէ
որպէս կորեաւ, և 'ի խաղաղութիւն ժամանակի յանկար-
ծակի դերեցաւ 'ի Վարազ իշխանէն պարսկէ. և կամ
որպէս ՅԱ՛մ երկիրն Հայոց ընդ նմին կորեաւ և կործա-
նեցաւ ։

ԻԱ. Յաղագս թէ որպէս ժողովեցան միաբանութիւն ՅԱ՛մ նա-
խարարքն Հայոց, և չոգան ածին զթագաւորն Յունաց
իւրեանց 'ի Թիկունս օգնականութիւն յերկիրն Հայոց.
և կամ որպէս եկն թագաւորն Պարսից բազում զօրօք,
և կոտորեալ լինէին զօրքն Պարսից 'ի զօրացն Յունաց
և 'ի մնացորդաց Հայոց. և Ներսեհ արքայն Պարսից
յերկրէն Հայոց միաձի ճողոպրեալ յերկիրն Պարսից
փախստական անկանէր ։

ԲՈՒՋԱՆԴԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ԵՐԲՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԻՍԿԻԶԲՆ

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս որ ինչ յետ քարոզութեանն Թադէոսի Առաքելոյ յերկիրն Հայաստան աշխարհին. կանոնք ժամանակագիր մատենից։

Ի ՔԱՐՈԶՈՒԹԵՆԷՆ Թադէոսի Առաքելոյ և նորուն յետոյ և 'ի մարտիրոսութենէն մինչև 'ի կատարումն վարդապետութեն Գրիգորի և իւրոյ հանգստեանն, և յառաքելասպան Սանատրկոյ արքային մինչև յակամայ հնազանդելն հաւատոցն, և 'ի նորուն հանգստեան արքային Տրդատայ զանցեալ իրացն զառաջնոցն զվարսն լաւացն, և որ զնոցուն հակառակ ընդդիմակաց, այն ամենայն 'ի ձեռն այլոցն գրեցան։ Բայց և մեք 'ի մերում ատ եդաք փոքր 'ի շատէ 'ի կարգի պատմութեանէ, ոչ զանց արարեալ թողաք վասն պատշաճ իրաց կարգին։ Այն զի է ինչ մեր պատմութիւն՝ որ առաջին է, և է ինչ՝ որ վերջին է. իսկ որ միջին ինչ եղև, այն 'ի ձեռն այլոց գրեալ գրեցաւ։ Բայց զի մի 'ի միջի մերոյ պատմութեանս ընդհատ երևեսցի հուն մի, նշանակեցաք. զոր օրինակ աղիւս մի կարգաւ 'ի մէջ որմոյն շինուածոյ, 'ի կատարումն բովանդակութեանէ։ Այս ինչ, որ ինչ յետ այսորիկ կարգի, ատ պատմի ատտէն առ ամին։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս որ ինչ վասն մեծի քահանայապետին Գրիգորի և նոցունց շիրմանցն։

Զրդ 'ի թագաւորութեանն Տրդատայ՝ որդւոյն Խոսրովու, լուսաւորութիւն հաճոյական սիրով և աստուածպաշտութիւնն հաւատոյ, ծանօթութիւն 'ի ձեռն Գրիգորի՝ որդւոյն Անակայ, մեծի քահանայի. և ո՛ր ոյ ընդ նմին կրսեր որդին Աբրիստակէս հօրն էր գործակից եպիսկոպոսակից յամ ընթացս վարդապետութեան զամ աւուրս կենաց իւրոց մինչև յօրն քրիստոսակոչ հանգստեանն իւրոյ։ Իսկ սոցա պատրաստեցան տեղիք բնակութիւն, և արժանի եղեալ շիրիմք հանգստեան. և մեծին Գրիգորի 'ի Գարանաղեաց գաւառին, 'ի գիւղն՝ որ անուանեալ կոչի Թորդան. և սրբոյն Աբրիստակայ որդւոյ նորա՝ յետ խոստովանութեան մահուն իւրոյ, և տարան զնա 'ի Ծոփաց գաւառէ, և եդին զնա յԱկեղեաց գաւառի 'ի Թիլն աւանի, 'ի կալուածս Գրիգորի հօրն իւրոյ։

ԳԼՈՒԽ Գ.

Որ ինչ վասն Թագաւորութեն Խոսրովու՝ որդւոյ Տրդատայ. և Վրթանայ մեծի քահանայապետին՝ որդւոյ Գրիգորի։

Զոգ յետ այսորիկ Թագաւորեաց Խոսրով Կոտակ, Թոռն Խոսրովու, որդի քաջի և առաքինւոյն Տրդատայ արքայի։ Յաւուրս սորա եկաց և եղև քահանայապետ յաթոռն հօրն, փոխանակ հօրն իւրոյ և եղբօրն իւրոյ, երէց որդին Գրիգորի Վրթանէս։ Խաղաղութի և շինութի, մարդաշատուի և առողջութի, պտղաբերութի և ստացուածաշատութի և շահեկանութի, և մեծն աստուածասէր պաշտօն 'ի

հաՀոյակատարն բարութիւն յամն յաւուրս սոցա ա-
ՀԵլ բազմացաւ։ Լուսաւորիչ և առաջնորդիչ նոցա
սուրբն Պ ղթանէս՝ իբրև զՀայր իբրև զեղբայր իւր.
իրաւունք և արդարութիւն ծաղկեալ էին 'ի դարուն
յայնմ։

Օ այնու ժամանակաւ երթեալ հասանէր եպիս-
կոպոսապետն Պ ղթանէս 'ի մեծն յառաջին 'ի մայրն
եկեղեցեացն Հայոց, որ էր յերկրին Ցարօնու, ուր
նշանաւքն եղեալքն կործանեցան բազինք մեհենից յայն
ժամ, վաղ ևս առ մեծաւն քահանայապետաւն Գրիգ-
որիու։ Սա երթեալ կատարէր անդ, ըստ հանապազ
սովորութեանն, զտեառնն զնաչական զփրկութեանն զպա-
տարագն զոհութիւն, զՀաղորդութիւն չարչարանաց յի-
շատակի, զկենդանարարն և զաղատիչն զմարմին և
զարիւն աստուածորդոյն տեառն մերոյ Յիսի Քրիստի։
Քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն
Հայոց, հանդերձ թագաւորաքն և մեծամեծաքն, նա-
խարարաքն և աշխարհախումբ բազմութիւնքն պատուել
զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կռ-
ռոցն, և ապա յանուն աստուածութեանն սրբեցան, և
եղեն տուն աղօթից և տեղի ուխտից՝ ամ ումեք։
Մանաւանդ յայն 'ի գլխաւոր տեղին եկեղեցին ժո-
ղովել 'ի յիշատակ սրբոցն՝ որ էին անդ, կատարել
անդ ամի ամի եւթն անգամ. որք զնոյն ունէին սո-
վորութիւն առաւել ևս 'ի մեծի մարգարէարան մատ-
բանն Յովհաննու։ Այոյնպէս և յառաքելարանս՝ ան-
աշակերտացն, սոյնպէս և 'ի վկայարանս մարտիրո-
սացն ամի ամի ժողովեալք, զօր տօնին յիշատակի նո-
ցա վարուց գործոց կենաց քաջութիւն խմբեալ՝ ցն-
ծային։ Իսկ դէպ ի մն լինէր 'ի ժամանակին՝ յորում
մեծ քահանայապետն Պ ղթանէս երթեալ շրջէր ա-
ռանձինն սակաւուք, կատարել զպատարագն օրհնու-
թեան։ Ա՛ռդ որք միանգամ զՀնութիւն կռապաշտութե-
հեթանոսութիւն զնոյն սովորութիւն մինչև ցայնժամ
ևս ունէին դաղտնի, 'ի մի միաբանութիւն ժողովեալք՝
հասանէին իբրև հազարք երկու, խորհուրդ եղեալ
ընդ միմեանս՝ սպանանել զքահանայապետն՝ այ զՊ ղ-
թանէս։ Բայց ունէին և սակաւ մի խորհուրդ հա-
մարձակութիւն 'ի կնոջէ թագաւորին, զայն գործել.

վասն զի յանդիմաներ զնա սուրբն վասն դաղտնի ընու-
թեան կծծուութիւն բարոյից պոռնկուն։ Եւ հասեալ
պատէին զմեծ քաղաքորին եկեղեցւոյն Աշտիշատու։
Մինչ դեռ նա ի ներքս մտեալ՝ զպատարագն կատա-
ռեր, արտաքուստ բազմաղօրուն փակեալ պաշարել
կամեցան։ Որոց առ հասարակ ոչք ի գնդին էին բա-
զուկք իւրաքանչիւր՝ յետս դարձեալ ի վերայ իւ-
րաքանչիւր թիկանց, առանց իրիք կապելոյ՝ սքանչե-
լապէս կապեալ լինէին։ Այսպէս պաշարեալք ին-
կապչեալք գելեալք վանեալք կծկեալք, ամենե-
քեան առ հասարակ յերկիր անգեալք անբարբառ
կային, անխաղացք ի տեղւոջէն. որք էին տոհմք և
ազգք աշխարհակերք աշխարհաւերք ժանդագործք
քրմացն։ Այդ այնպէս պաշարեալք, դիպեալ կային
ամբոխն ի գաւթի եկեղեցւոյն. զորս ելեալ իւր իսկ
ինքնին Ս ընթանէս մատուցեալ հարցանէր զնոսա,
եթէ դուք ո՞յք էք, կամ ուստի՞ գայք, կամ զո՞ խընդ-
դրէք, կամ ուստի՞ եկիք։ Իսկ նոցա զարդարն սկը-
սեալ խօսել, խոստովան լինէին՝ եթէ եկաք զի աւե-
րեսցուք զտեղիս, և զքեզ սպանցուք, հրամանաւ հա-
մարձակեալ ակնարկելով մեծին Հայոց տիկնոջն.
այլ տեր ՝ՈՒ զզօրութիւն իւր յայտնեաց, և ետոյց մեզ՝
թէ ինքն միայն է ՝ՈՒ. և այժմ ծանեաք և հաւա-
տացաք՝ եթէ նա միայն է ՝ՈՒ։ Այդ այսպէս կամք
աւասիկ կծկեալք, զի և շարժել անդամ ոչ կարեմք
ի տեղւոջէս։ Իսկ երանելին Ս ընթանէս զբանն վար-
դապետութեն ի մէջ առնոյր, հաստատեր զնոսա ի
հաւատն ի մի տեր Յ՝ՈՒ Վ՝ՈՒ, շատ ինչ խօսեր ընդ
նոսա։ Այպա աղօթս մատուցանէր, և խնդրեր յՈՒ.
բժշկեր և արձակեր զնոսա յաներևոյթ կապանացն
և յանհնարին կծկութենէն տանջանացն։ Եւ նոքա
իբրև փրկեցան յայնմանէ, ապա առ հասարակ անկա-
նէին առաջի նորա, և խնդրէին ապաշխարութեան
զդէղն. և նա տայր ժամանակ սահմանեալ ապաշ-
խարութե։ Եւ ուսեալք զՀաւատն միամտական՝ ոչ
երրորդութեն, և ապա մկրտեր իբրև հաղարս եր-
կուս. թո՛ղ զկանայս իւրեանց և զմանկտի. և այս-
պէս ՝ի հաւատ խառներ, և արձակեր սրբեալս և
հաւատացեալս։

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս երկուց տոհմիցն՝ որք անզաւակեցան 'ի մէջ Հայաստան աշխարհին, վասն մանաւաղենիցն և Որդունեաց։

Այլ զայն ժամանակաւ յարեաւ խռովութիւն մեծ յաշխարհին Հայոց, զի մեծ նախարարքն և իշխանք երկու, դաւառակալք աշխարհատեսքն անգանէին ընդ[1] միմեանս, մեծաւ ոխութիւն յարուցին կռիւ, և տային ընդ միմեանս մարտ պատերազմի առանց իրաւանց։ Այլ պղտորէին զմեծ աշխարհն Հայոց իշխանն մանաւաղեան տոհմին, և միւս ևս նահապետն Որդունեաց տոհմին։ Կռուեցան ընդ միմեանս մեծաւ պատերազմաւ և բազում մարդկան լինէր ծախսումն կոտորածոյ։ Այսպա առաքեցին Թագաւորն Խոսրով և մեծ եպիսկոպոսապետն Վրթանէս զպատուական զմեծ եպիսկոպոսն Աղբիանոս 'ի մէջ նոցա, խօսել 'ի հաշտութիւն խաղաղութիւն։ Երթեալ հասանէր 'ի մէջ նոցա երանելին Աղբիանոս, զնոսա ուղղել նուաստել՝ ընդ միմեանս հաշտեցուցանել։ Անարգեցին զնա, և ոչ լուան բարեխօսութեանն եկեղցին. անգոմնեցին զյղելիսն, և մեծաւ թշնամանօք արձակեցին զեպիսկոպոսն, և առնուին աւերէին զտունն արքունի։ Այլ զայրացեալք խստութեամբ, հապճէպ տային ընդ միմեանս մարտ պատերազմի։ Այսպա մեծ ցասմամբք և բազում սրտմտութիւն արձակեաց Թագաւորն 'ի վերայ նոցա զվաչէ որդի Աբատաւազայ, զնահապետ մամիկոնեան տոհմին՝ յազգէ սպարապետութիւն Հայոց, զմեծ զօրավար զօրաց իւրոց, սատակել կորուսանել զազգն երկոսեան։ Այսպա երթեալ հասանէր 'ի վերայ նոցա զօրավարն Վաչէ. հարկանէր վանէր զազգն երկոսեան, և ոչ թողոյր զերկոցունց տոհմացն զորձ կորիւն և ոչ զմի. և ինքն դառնայր առ արքայն Խոսրով Թագաւորն Հայոց, և առ եպիսկոպոսապետն Վրթանէս։ Այլ ետ զաւանն և զբուն

1 Յօրինակի միում ընդ դիմաց։

գահոյից գեւոնն նահապետին մանաւազնից եպիսկոպոսին Աղբիանոսի յեկեղեցի. զմանաւազակերտ ամ սահմանոքն և գաւառական հանդերձ՝ որ շուրջ զնոքօք էր, որ կայ 'ի կողմանս գետոյն Եփրատայ։ Եւ ետուն զքուն գեւոնն Որդունեաց, որոյ անուն էր Որդորու. ուստի եպիսկոպոս Բասանու ամ սահմանոքն հանդերձ, որ ինքն իսկ է յերկրին Բասանու։

ԳԼՈՒԽ Ե.

Վասն որդւոցն Վրթանայ, որոց անուանքն այս են. առաջնոյն Գրիգորիս, երկրորդին Յուսիկ։

Այս Վրթանէս և Աբիստակէս որդիք էին մեծի քահանայապետին Գրիգորի, և էր Աբիստակէս կուսան՝ սուրբ 'ի մանկութէ. զի Թէոպէտ և կրսեր որդի էր, կանխաւ եհաս յաթոռ Հայրենի եպիսկոպոսութէ։ Իսկ Վրթանէս էր ամուսնացեալ և անորդի. և բազում ժամանակս խնդրեր նա յայ, զի մի՛ զրկեսցի նա յօրհնութէ զաւակի, այլ 'ի պողոյ նորա կացցէ առաջի նորա 'ի պաշտօն տեառն։ Եւ 'ի ծերութէ նորա լուաւ տէր աղօթից նորա. յղացաւ ամուսին նորա, և ծնաւ երկուս որդիս երկուորեակս, և կոչեաց զանուն երիցուն յանուն հօր իւրոյ Գրիգորիս, և երկրորդին Յուսիկ։ Որք մնան զառաջեաւ թագաւորին Հայոց, և ուսման զրոց փոյթ 'ի վերայ կալան ուսուցանել զնոսա։ Ապա երեց որդին Գրիգորիս եհաս յեպիսկոպոսութէ կողմանց Աղուանից և Վրաց, վասն հոգեկիր առաքինի արդասեացն, բարեհասակ, և զգիտութիւն այ յանձին կրելով։ Որ ամուսնացաւ նա, այլ 'ի հնգետասանամենից եհաս յաստիճան եպիսկոպոսութէ աշխարհին Վրաց և Աղուանից, այս ինքն սահմանացն Մազքթաց։ Յրթեալ նորոգեաց անդ զեկեղեցիսն լուսաւոր կարգաւք, առաջնոյն Գրիգորի՝ հօրն գործոցն նմանեալ։

Իսկ զՅուսիկ մնուցանէր Տիրան որդի Թագաւորին Խոսրովու. և ետ արքայորդին Տիրան զդուստր իւր կնութիւն Յուսկանն որդւոյ Ալրթանխի։ Եւ մինչ դեռ մանուկն էր, յետ միանգամ յառաջնում գիշերին մնանելոյ՝ յղացաւ կինն։ Եւ իսկ և իսկ ետես 'ի տեսլեանն՝ զի երկու էին մանկունքն, և ոչ հաՀոյ 'ի պաշտօն տեառն ՀայՀ։ և զղջացաւ զամուսնանալն։ Լայր, և աղաչէր զՀԱԾ, և ապաշխարէր մեծաւ տառապանօք։ Եւ յամուսնանալն բռնադատեցաւ 'ի Թագաւորէն իբրև զմանուկ. սակայն և այն ըստ ՀայՀ շնորհացն գործէր, զի որք առ յապայն և առնելոց էին 'ի նմանէ հովիւքն գլխաւորք, որք յօգուտ աշխարհին և 'ի շահ մշակութեանն եկեղեցեաց յաւետարանական հրամանացն սպասաւորել։ Այլ սակայն նա ըստ այն մի գիշերն այլ ոչ եմուտ առ կինն իւր. և ծնաւ կինն երկաւորիս, որպէս և ետես 'ի տեսլեանն յառաջագոյն. և կոչեցին զանուն առաջնոյն Պապ, և զերկրորդին Աթանագինէս։

Եւ յետ միոյ գիշերոյ 'ի կինն մերձենալոյ այլ ոչ ևս մերձեցաւ 'ի նա, վասն առաքինութեան մանկութեան. իբրև ոչ եթէ զամուսնութիւնն ինչ աղտեղի համարէր, այլ կասկածէր նա 'ի տեսլենէն՝ զոր ետես, եթէ ընդէ՞ր ինաւ 'ի նմանէ այնպիսի զաւակ անպիտան ծնանիցի։ Արանզի ոչ երկրաւոր զաւակի ցանկացեալ էր, այլ այնպիսումն՝ որ 'ի սպասաւորութիւն սպասու պաշտաման ծառայութեան տեառն ՀայՀ կացցեն։ Եւ զՀԱՄ իսկ զերկրաւորս առ ոչինչ համարեալ, ոչ լաւ համարեցաւ զանցաւորս՝ այլ զվերինն. երկնակեաց կենացն ցանկացեալ հայէր։ Լաւ համարէր զծառայելն միայն Արեի, անձին փառս համարէր. ոչ ինչ ածէր ընդ միտ զսէր Թագաւորին կամ 'ի նմանէ կուսէ զպատուեալն, կամ զմեծութիւն, կամ զընդանութիւն փեսայութեան Թագաւորին. այլ յայնմ ՀամՀ ուրացեալ հրաժարէր, և օտարոտիս և գարշելիս և պատրանս համարէր։ Եւ յետ առաջնոյն այլ ոչ ևս խաբեցաւ երբէք ուրեք իբրև զմանուկ. այլ հայրական միտս զծերական հանՀարոյն ստացեալ, զխրատն իմաստութեանն անմահութեան։ Լաւ համարեցաւ զնախատինսն Արեի, քան զմեծութիւն Թագաւո-

բացն. զՀգունս վարուց ընդրեալ անձին իւրոյ, յեր-
կոտասանամեայից և 'ի վերս առաքինանայր։ Որ իւրոյ
հարցն նմանեալ, և զեղբօրն իւրոյ Գրիգորի զորի-
նակ բերեր անձին իւրոյ. զքրիստոսեան լուծն առանց
ամ յապաղութեան ձգեր մինչև 'ի վաղջան։

Բայց վասն զի թշնամանացեալ էր տուն թագա-
ւորին ընդ նմա, և մինչ դեռ վասն այնորիկ զզուէին
զնա աներք նորա, մեռաւ կին նորա. ազատեալ լի-
ներ Յուսիկ 'ի [1] բաներոյն։ Եւ մինչ նա հոգացեալ
վասն իւր ծննդոց մնացելոց զաւակին, և վասն այսո-
րիկ հոգալով կայր յաղօթս առ ամ, և երևեցաւ նմա
հրեշտակ տեառն 'ի տեսլեանն, և ասէ ցնա. Յու-
սիկ, որդի Գրիգորի, մի երկնչիր. զի լուաւ տէր ա-
ղօթից քոց, և ահա ծնցի 'ի քո զաւակացդ այլ զա-
ւակ։ Զի լիցին նոքա 'ի լուսաւորութեան գիտութեան,
և աղբեւրքդ հոգևոր իմաստութեան հայաստան աշխարհ
հիս։ Եւ 'ի նոցանէ բղխեսցեն շնորհք պատուիրա-
նացն ամ. և խաղաղութեան բազում և շինութեան և հաս-
տատութիւն բազում եկեղեցեաց 'ի տեառնէ նոցա
տացի, բազում յաղթութիւն և մեծաւ զօրութիւն. և
բազում մոլեալք դարձցին 'ի Ճանապարհս Ճշմար-
տութեան. որով և Աստ բազում լեզուաք փառաւորեսցի
նոքաք։ Որք սիւնք եկեղեցեաց լինիցին, և մատակա-
բարք բանին կենաց, և հիմունք հաւատոց. պաշտօ-
նեայք Աստի և արբանեակք հոգւոյն սրբոյ. զի ուս-
տի հիմն եցէ շինուածոյն, և կատարն անտի լինիցի։
Եւ բազում տունկք պտղաբերք և շայեկանք և օգ-
տակարք 'ի հոգևոր դրախտին 'ի նոցա մշակութեն
աճոյն տնկեսցին և ընկալցին զօրհնութիւն յամ։ Իսկ
որք ոչն կամիցին տնկել նոքաք, և 'ի նոյն հոգևոր ցո-
ղոյն գիտութեն ըմպել, խոտան գտանիցին՝ մերձեալք
յանէծս. և վաղջան նոցա լիցի այրումն հրոյն։ Բա-
զում անգամ վասն տեառն լինիցին նոքա 'ի հեռ և
'ի նախանձ յանարժանացն. այլ կացցեն 'ի հաւատս
անշարժ իբրև զվէմ, և յաղթեսցեն նոցա համբե-
ռութեամբ բազմաւ։ Եւ յետ նոցա թագաւորեսցէ
ստութիւն, յապարատան յանձնասէր յարծաթասէր

1 Յօրինակի միում 'ի անէրոյն։

'ի մտախսաբ յանպատասպարան յանպիտան 'ի սուտակ և 'ի բանսարկու մարդկանէ. և ապա եթէ ոք գտցի՝ որ և արասցէ ունել զուխտ հաստատութիւն հաւատոյ, հաղիւ հաղիւ։ Այլ զայս ամ լուեալ մանուկն Յուսիկ 'ի հրեշտակէն, մխիթարութիւն մեծաւ գոհանայր զտեառնէ՝ այ, որ արժանի արար զնա այսոցիսի յայտնութիւն պատասխանւոյն. և զամ աւուրս կենայ իւրոց գոհանայր և եթէ յամ ժամ անդադար։

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս Գրիգորի վաղնանին։

Այլ վասն Գրիգորի եպիսկոպոսի, որդւոյ Ամրթանայ, եղբօրն Յուսկան, որ կաթողիկոսն էր կողմանցն Ամրայ և Աղուանից. իբրև եկաց սա յիւրում պաշտամանն, մինչ դեռ մանուկն ևս էր, շինեաց նորոգեաց զամ եկեղեցիս կողմանցն այսոցիկ, և ձգեցաւ 'ի գաւառակողմանցն Աղտրպատականի։ Արարող ճշմարտութիւն հաւատոյն Քրիստի լինէր նա, և առաջի իսկ ամենեցուն էր սքանչելի և զարմանալի. խստագոյն և դժուարագոյն անհամարեալ ծանրաբեռն վարուցն կրթութիւնք խստամբերութեն, պահօք և սրբութիւնք, տքնական հսկմամբ անձանձրոյթ աղօթիցն ջերմութիւնք առ ՝ի ՝ի ծանխելոյ վասն ամ մարդոյ։ Օ աւետարանական ընթացքն և զվերակացութիւն եկեղեցւոյ սրբոյ ընորհօքն այ առանց պակասութեան տանէր. առաւել ևս փութայր, զուն [1] եղեալ յորդորելով զամենեսեան առ 'ի բարեացն քաջալերութիւն, զցայգ և զցերեկ պահօք և աղօթիւք և ուժգին [2] խնդրուածովք և բարձրակալ կատարման հաւատովքն՝ մերձաւորաց և հեռաւորաց զհոգևոր երանդն ածէր. իբրև զպատերազմասէր նահատակ

1 'Ի կրկին օրինակս գոյն էդէաւ։ 2 Յօրինակի միում ուծագին։

միշտ զանձն 'ի կրթութիւն և 'ի պատրաստութիւն ունէր ամ փորձութեաց և վշտաց, առ 'ի տալ պատասխանի ամ համարձակութիւն, վասն ճշմարտուն հաւատոյն մարտնչել որ վասն Քրիստի։

Եւ իբրև ուղղեաց և նորոգեաց զամ եկեղեցիս կողմանցն այնոցիկ, եհաս նա մինչև 'ի Ճամբար բանակին արշակունեաց աղքային Պազքթաց, որոյ անուն իւր Սանէսան կոչեր։ Քանզի և նոցա և Հայոց թագաւորացն մի ազգաւորութիւն էր տոհմին ընտանի։ Եւ երթեալ յանդիման լինէր թագաւորին Պազքթաց, իշխանին բազմութիւն զօրացն Հոնաց. և եկաց առաջի նոցա, սկսաւ քարոզել և աւետարանել նոցա զՔրիստ։ Ասէ ցնոսա՝ թէ ծաներ՛ուք զանծ. լուան և ընկալան զառաջինն և հնազանդեցան։ Ապա սկսան քննել զօրէնսն Քրիստի, և ուսան 'ի նմանէ՝ թէ առեալ է այ աւարութիւն և յափշտակութիւն, սպանութիւն, ագահութիւն, այլազգկութիւն, զայլոցկերութիւն, ցանկութիւն այլոց ստացուածոց։ Ապա այսպիսի լինն իրօք իբրև լուան, զայրացան ընդ բանս նորա և ասէն. Զի ոչ յափշտակեսցուք, զի ոչ աւարեսցուք, զի ոչ առցուք զայլոյ, ի՞ւ կեցցուք այսչափ անչափ զօրաց բազմութիւք։ Եւ թէպէտ բիւրաւոր բանիւք բարեաց կամէր հաճել զսիրտս նոցա, ոչ ինչ կամէին ունկընդիր լինել, այլ ասէին ցմիմեանս. Եկեալ այսպիսի բանիւք կամի 'ի քաջութիւն որսոյն կենաց մերոց խափանել զմեզ. իսկ եթէ սմա լուիցուք, և դարձցուք յօրէնս քրիստոնէութիւն, ի՞ւ կեցցուք, զի ոչ յերիվար հեծցուք ըստ բնութիւն օրինաց սովորութեան մերոց։ Այլ, ասէին, այս խորհուրդ Հայոց թագաւորին է. զսա յղել առ մեզ, զի այսու ուսմամբ խափանեսցէ զմեր արշաւանս ասպատակութիւն հինի յաշխարհին իւրմէ. այլ եկայք զսա պակասեցուսցուք 'ի միջոյ, և մեք 'ի Հայս արշաւեսցուք, աւարաւ զմեր աշխարհս լցցուք։

Ապա շրջեցաւ թագաւորն, և լուաւ բանից զօրացն իւրոց. և կալան ձի մի ամենի, կապեցին կախեցին զմանուկն Գրիգորիս զաչս ձիոյն, և արձակեցին ընդ ծովեզեր դաշտին հիւսիսական ծովուն մեծի, արտաքոյ իւրեանց բանակին 'ի դաշտին Ամատեայ։

Եւ այսպէս սպանին զառաքինի քարոզն Քրիստի զմանուկն Գրիգորիս։ Եւ ապա բարձին զնա ողբ ընդ նմա երթեալ էին 'ի գաւառէն Հաբանդայ, և բերին 'ի գաւառն Իւրեանց 'ի կողմանս Աղուանից 'ի սահմանս Հայոց 'ի Հաբանդ, 'ի գեօղն՝ որ անուանեալ կոչի Ամարաց։ Եւ եդին զնա առ եկեղեցեաւն, զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հաւուն Գրիգորիսի՝ քահանայապետին մեծի աշխարհին Հայաստանի երկրին։ Եւ ամ յամէ աշխարհաժողովուրդք 'ի մի վայր ժողովեալ կողմանցն այնոցիկ և աշխարհաց գաւառացն այնոցիկ, զսորա զօր տօնին զյիշատակ քաջութեան ցնծան։

ԳԼՈՒԽ Է.

Յաղագս մեծի պատերազմին հինին եկելոց յարշաւանաց արքային Պաղքթաց յաշխարհ իշխանութեան Հայոց Թագաւորին. և թէ որպէս սատակեցաւ նա և զօրքն իւր։

ՅԱՅՆՄ ժամանակի Թագաւորն Պաղքթաց Սանեսան անհնարին նիւթեաց զսրտմտութեան ոխութեան ընդ իւրում աղգակցին Խոսրովու արքային Հայոց, և գումարեաց ժողովեաց զամ զօրս Հոնաց և Գոխաց, Թաւասպարաց, Հեճմատակաց, Լժմախաց, Գաթաց, և Գղուարաց, Գուգարաց, Շ ջաց և Ղ՚ղեաց և ԲաղասՃաց և Նդեբսուանացն, և այլոց խառնաղանՃ բազմութիւն անթիւ անբնակին վաչկատուն զօրութեանց, որում միանգամ ինքն իշխէր զօրացն բազմաց։ Նոքն անց ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, և եկն տարածեցաւ ելից զերկիրն Հայոց աշխարհին։ Եւ չգոյր թիւ բազմութեան հեծելազօր գնդացն, և ոչ համար շերտաւոր հետևակ զօրուն. զի և ինքեանք զինքեանս զիւրեանց զօրսն թուել ոչ կարէին։ Բայց ուր լինէր հանդէս, 'ի նշանաւոր տեղիս գնդի գնդի, դրօշու դրօշու, վաշտուց վաշտուց,

յերևելի երևելի տեղեաց՝ մէն մի բռնաքար առ այր հրամայէին, զի բերցէն ընկեսցէն՝ շեղջ կուտել. զի որչափ լեցի, այնու երևեսցի նշանակ բազմութեանն, առ իմանալ առ վաղիւ անցելոց իրացն ահաւորութիւն նշանակ։ Եւ ընդ որ միանգամ անցանէին, այսպէս թողուին յամ ՀԱՆապարհակիցս, 'ի վերայ անցից պռղտայից։ Եւ ելին լցին ծածկեցին զամենայն երկիրն Հայոց. քանդեցին, գերեցին, առ հասարակ աւերեցին. սփռեցան տարածեցան զսահմանսքն, լի և լի ծաւալեցան մինչև 'ի փոքր քաղաքիկն Սատաղու, և մինչև 'ի Գանձակ սահմանս ատրպատական. խաղացուցին 'ի մի վայր ժողովեցին, 'ի ժամադիր կողմանս յայրարատեան դաշտին բանակ մեծ լինէր։

Եւ խոյս ետ Թագաւորն Հայոց Խոսրով յիւրմէ եղբարցն, նոյն 'ի Սանէսանայ յարքայէն Մաղքեթայ. և անկան յամուր բերդն Դարեւնից[1] յերկիրն Կովգայ[2], և ընդ նմա ծերունին Ղրթանէս եպիսկոպոսապետն Հայոց։ Գալա առնուին պահս պահել, և խնդրել յայ՝ զի փրկեսցէ զնոսա յայնմ 'ի դառն դահՃէն, և սկսան խնդրել 'ի տեառնէ այ։ Եւ նա ծածկեալ բռնացեալ ունէր զերկիրն առ հասարակ իբրև տարի մի։ Գալա եկն ետես Ղ աչէ որդի Գրտաւազդայ 'ի Մամիկոնէն տոհմէն, զբարվոյ ամ Հայոց մեծաց։ Զի երթեալ էր նա 'ի ժամանակին յայնմիկ զերկայն ՀԱՆապարհս 'ի կողմանս Յունաց։ Գալա ժողովեաց նա զամ քաջս քաջս նախարարացն, և գունդ կազմէր բազում յոյժ. և հասանէր անկանէր 'ի վերայ բանակին, յառաւօտուն ժամուն այգենալոյն պաշտամանն. զի բանակեալ էին նոքա 'ի լերինն՝ որ կոչի Յլու գլուխ. և առ հասարակ ընդ սուր հանէն զամենեսեան, և ոչ մի ոչ ապրեցուցանէր, և դարձուցանէր զազգմութիւն գերեացն։ Եւ յետ այսորիկ առնոյր զաւարն, խաղայր գնայր երթայր ի Ջանէր 'ի դաշտն այրարատեան դաշտին. երթայր գտանէր զՍանէսան Թագաւորն Մաղքեթայ բուն գնդաւն, անթիւ անհամար զօրքն հանդերձ 'ի Ղ աղարշապատ քաղաքի։ Գալեալ զգունդն Ղ աչէ, և յան-

1 Յօրինակի միում Տարանէ։ 2 Յամ օրինակս Կովգայ։

կարծակի յարձակեցաւ 'ի վերայ քաղաքին, և մատ-
նեաց զնոսա ՝ի ձեռս նորա։

Այլ երբև տեսին զնա յարձակեալ 'ի վերայ իւ-
րեանց, փախեան ելին 'ի քաղաքէ անտի յառապարն
'ի կողմն յ()շական բերդին. և զսնապատն, և զքա-
ղուտ տեղիսն ապաւէին իւրեանց համարեցան. և լի-
նէր սաստիկ պատերազմ յոյժ յոյժ։ Այլ նիզակակիցք
զօրավարին Հայոց, որ էին Բագրատ բագրատունի,
Մեհուն[1]դակ և Գարեգին ըրբշտունիք, և Վա-
հան՝ նահապետն ամատունեաց տոհմին, և Վարազ
կամիկեան, հասանէին հարկանէին սատակէին զօրսն
Ալանացն, և Մազքթացն, և Հունացն և զայլոց ազ-
գացն, և ընուին զդաշտն առապարացն առ հասարակ
դիակամբ մեռելոց. մինչ զի երբև զգետ յարուցեալ
երթայր արիւնն անհնարին, և ոչ լինէր թիւ զօրացն
մեռելոց։ Այլ զմնացեալսն սակաւս առաջի իւրեանց
հալածականս տանէին մինչև յաշխարհն Բաղասճաց,
և զգլուխն Սանէսանայ մեծի թագաւորին եկին բե-
րին առաջի արքային Հայոց։ Սակայն երբև ետես,
լալ սկսաւ. ասէ, Այղբայր իմ էր ազգաւ արշակու-
նի։ Այլ եկեալ էր արքային 'ի տեղի Ճակատուն, և
ընդ նմա մեծ եպիսկոպոսապետն Հայոց. և տեսին
զկոտորածն զօրացն հարելոց, զի նեխէր երկիրն 'ի
հոտոյ մեռելոցն։ Այլ ետուն հրաման՝ գուգազ հա-
նել յաշխարհէ, և անդէն ծածկել քարակարկառ վի-
մօք, զի մի 'ի շարաւոյ հոտոյն մեռելոտի ոսկերացն
երկիրն պղծեսցի։ Այլ զաղարեաց երկիրն 'ի խաղաղ
զուարթեան ամն հարուստ մի. և այսպէս վրէժ սրբոյն
Գրիգորի խնդրեցաւ 'ի թագաւորէն Սանէսանայ,
և 'ի բանակէ նորա. զի ոչ մնաց 'ի նոցանէ և ոչ մի։

1 Յերկուս օրինակս Վահրան, և 'ի միւս այլ Վահրվան։

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս մայրեացն տնկելոց, և վասն պատերազմացն ընդ Պարս. և վասն ազգահատուածն տոհմին Բզնունեաց նախարարութեան։

Եւ երբեմն առ ժամանակ մի խաղաղացաւ երկիրս Հայոց, ապա ետ հրաման Թագաւորն Հայոց Խոսրով, տալ պարգևս արանցն քաջացն՝ որ վաստակեցին նմա, և փոխանակեցին զանձինս իւրեանց փոխանակ աշխարհին Հայոց մեծաց յամ 'ի մարտ ճակատուցն պատերազմաց։ Եւ ետ Վաչէի զօրավարի զականս ՚Ջանջանակին, և զ՚Ջրաբաշխիս, և զՅլու գլուխ, ամ գաւառակօքն հանդերձ. նոյնպէս և այլոց նախարարացն մեծամեծ պարգևս։ Եւ ետ հրաման Թագաւորն զօրավարին իւրոյ՝ հանել խաշար յաշխարհէն բազում, և բերել զվայրենի կաղին մայրեաց, և տընկել զայն յայրայրատեան գաւառին. և առեալ յամուր բերդէն արքունի, որում կոչէն Դառնի, մինչև 'ի դաշտն Մեծամօրի 'ի բլուրն՝ որ անուանեալ կոչի Դուին, որ կայ 'ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արտաշատու, զգետն խոնարհ մինչև յապարանսն Տիկնուանի՝ տնկեցին զկաղինն։ Եւ կոչեաց զանուն նորա Տաճար մայրի։ Եւ միւս 'ի մայրեացն յեղեգնաբերանին 'ի նմանէ 'ի հարաւակոյս լցին զդաշտն կաղնատուն՝ տնկով. և կոչեցին զանուն նորա Խոսրովակերտ։ Եւ անդ շինեցին զապարանսն արքունական, և զերկոսեան տեղիսն պարսպեալ փակեցին. և ոչ կցեցին 'ի միմեանս վասն պողոտայի ճանապարհին։ Եւ աճեաց բարձրացաւ. և ապա զամ երեսս, և ըզգաղանս հրամայեաց ժողովել Թագաւորն, և ընուլ զքաղաքորմն, զի լցին նոցա տեղիք որսոց զբօսանաց ուրախութեան Թագաւորութեան նորա։ Եւ զօրավարն Վաչէ կատարեր վաղվաղակի զասացեալսն արքայի։

Եւ մինչդեռ նա յայնմ գործ զմայրեւօքն տնկելովք էր, յանկարծակի գուշակ հասանէր առ Խոսրով 'ի Հեր և 'ի Օարաւանդ գաւառ, թէ պատրաստեալ էն զօրքն Պարսից գալ հասանել 'ի գործ

պատերազմի 'ի վերայ քո։ Եպա հրաման եւ արքայ Խոսրով Դատաբայնահապետի Մզնունեաց, զուգազ հանել յաշխարհէ աւելի քան զչափն. և զհամար զօրսն մատենի [1] գնդաւն ընդ առաջ նոցա խաղալ հասանել 'ի դիմի հարկանել, արգելուլ զթշնամին։ Եպա Դատաբէն երթայր ընդ առաջ զօրացն Պարսից բազմութիւն զօրքն Հայոց։ Իբրև հասանէր Դատաբէն, խորհուրդ միաբանութիւն դնէր ընդ իշխանսն զօրացն Պարսից. կամեցաւ մատնել 'ի ձեռս նոցա զաբքայն Հայոց զտէրն իւր, դարան հրամայեաց գործել թշնամեացն 'ի վերայ իւրոց զօրացն, և անդրէն սուր եւ դնել 'ի վերայ իւրոց զօրացն։ Յանկարծ յեղակարծումն տարակարծի՝ քառասուն հազար զօրսն Հայոց միանգամայն կոտորէին, և այլ զօրքն փախուստական լինէին. և Դատաբէն չարագործ առնոյր զօրսն Պարսից, և կամէր անկանել 'ի վերայ թագաւորին Հայոց։ Եպա փախստականք զօրացն վաղ հասանէին 'ի բանակ արքային Հայոց, գոյժ առնել զանհնարին կործանումն իրացն եղելոց, զչարագործութիւն մատնութեն անօրէն Դատաբէնայ։

Եպա անդանէր թաւալէր խնդրէր յայր բազում պաղատանօք և ուժգին արտասուօք թագաւորն Հայոց Խոսրով, հանդերձ Վրթանաւ քահանայապետիւն։ Եւ յետ այսորիկ աՀՃապարէր կուտէր զօրսն առ ինքն իբրև երեսուն հազար, հանդերձ զօրավարաւն Վաչէիւ. զայր հասանէր ընդ առաջ նոցա, ՈՒմ աւադախումբ մեծամեծ նախարարօք իւրովք։ Եւ դիպեցան միմեանց առ ափն ծովուն Մզնունեաց, Մռեստն աւանի, 'ի ձկնատեսանն արքունի 'ի վերայ գետակին։ Եւ տեսին զօրսն Պարսից, զի ոչ գոյր թիւ բազմութեն. զի էին իբրև զաստեղս երկնից, և իբրև զաւազ առ ափն ծովու. զի եկեալ էին անթիւ փղօք և անչափ զօրօք։ Եւ սոքա հասին անկան 'ի վերայ բանակին, յուսացեալք առ ՈՒծ. հարին, սատակեցին, կոտորեցին, և ոչ թողին 'ի նոցանէ և ոչ մի։ Եւ թափէին աւար բազում, և զփիղսն և զՈՒմ այժ զօրութեն նոցա։ Զերբակալ արարեալ զԴատաբ

1 Յերիս օրինակս մատենի։

բէնն Ա աչէ սպարապետն և քաջ Ա ահան ամատուն, ածէին զնա առաջի մեծի Թագաւորին Խոսրովու, և քարկոծ առնէին զնա քարամբ իբրև զայր, որ աշխարհի և գնդի և զօրաց տեառն իւրոյ դաւաճան լեալ էցէ։ Եւ զազգ նորա և զկին և զորդիս գտանէր յամրոցի անդ իշխանին ըռշտունեաց յանուանեալն Յ՚ՁԹամար կղզւոջ. 'ի նաւ ելեալ Ա աչէ սպարապետն, անցեալ 'ի կղզին՝ առ հասարակ ոչ զէգ Թողցայր և ոչ զարու։ Եւ այսպէս բարձաւ ազգատոհմ նախարարութէն այնորիկ. և զտուն նոցա յարքունիս կալան։

Բայց յետ այսորիկ ոչ դադարէին Պարսք 'ի տալ պատերազմ ընդ Խոսրովու արքային. և նա դնէր օրէնս, զի մեծամեծ աւագանին, նախարարքն աշխարհակալքն աշխարհատեարքն՝ որ էին բիւրաւորքն և հազարաւորքն, կայցեն առ արքային, և ընդ նմա շրջեսցին, և մի՛ ոք երԹիցէ 'ի նոցանէ ընդ զօրս արքունի։ Զ՚ի երկնչէր նա յերկմտութէնէ նոցա, զի գուցէ զնոյն գործ Դատաբէնայն գործիցեն, և ապրստամբ լինիցին 'ի նմանէ։ Բայց վստահ լինէր 'ի ծերունին Ա աչէ, 'ի բուն սպարապետն 'ի զօրավարն Հայոց մեծաց, և 'ի քաջ Ա ահան յամատունի։ Դումարէր զօրսն ՝ամ տանցն աւագանւոյն ընդ զօրսն արքունի, և տայր զգումարտակն ՝ամ 'ի ձեռս նոցա. և հանապազ կային 'ի քաջութէ 'ի մարտ պատերազմի 'ի սահմանս Պարսից. և ոչ տային անխտիր արշաւել աւերել զերկիրն Հայոց, և ոչ նայել։ Եւ կայր արքայ 'ի հանգստի, և աշխարհ 'ի շինութէ և 'ի խաղաղութէ զ՚ամ աւուրս կենաց նոցա։

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս Բակուր բդեշխին՝ որ ապստամբեաց յարքայէն Հայոց, և փոխանակ նորա լինէր բդեշխ Վասինակ։

Ի ԱՅՆՈՒ ժամանակաւ ապստամբեաց յարքայէն Հայոց մի 'ի ծառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց, որ անուանեալ կոչէր բդեշխն. որ էր մի 'ի ջորից, զահերէց բարձերէց տաճարին արքունի։ Նա ձեռս յարքայն Պարսից. և մատնեաց զարքունի տունն, որ յեց յինքն էր։ Նա էած զբրս արքային Պարսից 'ի Թիկունս իւր, և հատաւ յերկրէն յիշխանութենէն Հայոց, և տայր պատերազմ ընդ արքային Հայոց՝ ուժով Պարսից թագաւորութենն. և սաստկանայր մարտ պատերազմին։ Այսպա առաքէր թագաւորն Հայոց զբարեկիր զծառայս իւր, զիշխանն Կորդուաց զՋինն, և զիշխանն մեծի Ծոփաց ըզՄար, և զիշխանն Ծոփաց Շահեի Ներսեհ, և զիշխանն Սիւնեաց զՎաղինակ, և զիշխանն Հաշտենից զԳատ, և զիշխանն Բասենոյ զՄանակ, հանդերձ բազում զօրօք։ Այսպա չոգան յաղթեցին զօրացն Պարսից, և առ հասարակ ընդ սուր հանին զամ. և սպանին զբդեշխն, եղբարքք և որդւովք իւրովք հանդերձ։ Բայց զաղջիկ մի զդուստր նորածին, և զգլուխն Բակուր բդեշխին բերին առ արքայ։ Նա ելեալ այլ ոք ոչ էր մնացեալ յազգէն, եթ արքայ զաղջիկն կնութեան սիրելւոյն արքայի Վաղինակայ սիւնւոյ, և զտունն Աղձնեաց. և արար զնա բդեշխ և պայազատ տան նորուն։ Յառանդն բազմացաւ, և հանդերձ աշխարհաւն և ամ ուժովն կայր բդեշխն Վաղինակ 'ի ծառայութենէ արքային հանապազ։ Բայց յորդւոցն Բակուր բդեշխի պատանեակ մի փախեաւ անկաւ առ զօրավարն Հայոց Վասէ, և անդ ապրեցաւ թագուցեալ 'ի տան նորա։ Որ առ յապա ժառանգ տան նորա լինէր։ Որ յայլում ժամանակի դարձաւ կալաւ զտունն իւր. որոյ անուն Խեշա կոչէր։

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագս Յակոբայ եպիսկոպոսի Մծբնայ։

Զ ԱՅՆՈՒ ժամանակաւ խաղաց գնաց մեծ եպիս-
կոպոսն Մծբնացւոց, այր սքանչելի ծերունի, վաստա-
կասէր 'ի գործս Ճշմարտութեան, որում անուն Յա-
կոբ, փոխանակ աղգաւն պարսիկ կոչէր, այր ընտրեալ
յայ, յիւրմէ քաղաքէ անտի գալ հասանել 'ի լերինս
Հայոց, 'ի լեառնն Վարարադայ 'ի սահմանս այրայ-
ռատեան տերութեան 'ի գաւառն Վորդուաց. այր լի
շնորհօքն Վ՚ռեի, որպէս զօրութիւնք նշանաց և արուեստ-
ից լինէին 'ի ձեռաց նորա։ Այս եկեալ ցանկացեալ
փափաքեալ մեծաւ տենչանօք աղաչէր զայծ՝ տեսա-
նել զփրկական տապանն Նոյեան շինուածոյն, զի յայս
լերին հանգեաւ նա 'ի ջրհեղեղէն. քանզի զայմ ինչ
որ հայցէր, առնոյր 'ի ներսէ։ Այլ մինչդեռ էլանէր
ընդ դժուարին ընդ անջրդի ընդ ափափայսն անապա-
տին սարարատեան լերինն, աշխատեցան և ծարաւե-
ցան նա և որք ընդ նմայն էին։ Այլ դնէր ծունր
մեծն Յակոբ 'ի վերայ երկրին, և կայր յաղօթս առ
ներ. և 'ի տեղւոջն՝ ուր եդեալ էր զդլուխ իւր՝ բըղ-
խեաց աղբիւր, և արբին նա և որ ընդ նմայն էին. որ
մինչև ցայսօր ասէն այնմիկ աղբեւր Յակոբայ։ Նա-
ինքն 'ի նմին աշխատեալ դեգերէր՝ զինդրելին տե-
սանել առանց յապաղութեան, առնէր աղօթս առ ներ։
Ա՚ռդ իբրև էր նա խոնջեալ 'ի վեր 'ի դժուարին
տեղւոջն մօտ 'ի կատարն, և կարի վաստակեալ էր,
ննջեաց նա. և եկն հրեշտակ այ, և ասէ ցնա. Յա-
կոբ Յակոբ։ Նա նա ասէ. Ա՚սասիկ ներ։ Նա ասէ
հրեշտակն. Ա՚հա ընկալաւ ներ զաղաչանս քո, և կա-
տարեաց զինդրուածս քո. այդ, որ կայ ընդ մնարս
քո, է 'ի փայտից տապանակին. ահա բերի քեզ, ան-
տի է այդ. զի այլ մի՛ ևս յաւելցես տեսանել զայն,
զի ներ այդպէս կամեցաւ։ Նա մեծաւ խնդութիւն յոտն
կացեալ, բաղում գոհութիւն երկիր պագանէր ներ, և
տեսանէր զտախտակն՝ իբրև զի կացնեաւ հատեալ

հանեալ Ձեղքեալ 'ի մեծ ինչ փայտից։ Այլ առեալ դառնայր անտի, հանդերձ շնորհատուր պարգևելովն, և որք ընդ նմայն երթեալք՝ իւրովքն Ճանապարհորդ լիներ։ Այլ ոչ այնպէս մեծն Մովսէս զուարթագոյն ցնծայր յէջեան սինէական լեռնէն, քանզի եթէ առաւելովքն պակասագոյն։ Քանզի յայ առեալ և ՝ծածագիր հրամանօք 'ի բազուկս, այր ՝ծածատեսիլ 'ի լեռնէն ի՛ջաներ։ Այլ վասն վրիժագործ ժողովրդեանն, որոց զթիկունսն 'ի տերունական [1] և կործան յերեսս՝ տիրադրուժք իւրեանցակուռ ձուլեցին երկիր պագանէին, և նովին զհրամանաբերն սրտառուչ սրտաբեկ կացուցանէին։ Քանզի 'ի տախտակացն խորտակելոցն յայտնի երևէր բերելեացն թաղծութիւն։ Իսկ այս երանելոյս, վասն որոյ և Ճառեալքս յարդարին, ոչ ըստ այնմ օրինակի՝ որ անդ գործեցաւ. այլ ինքն իւրովքն լցեալ հոգևոր մխիթարութեամբ, կարծեալ զընդունելեացն զյօժարութիւն յուսով դիտաւորութիւն զՃանապարհաց աւետաբերաց։ Քանզի յայտնեաքն և ծածկելովք, քանզի միոյն միայն յամենաշնորհն առ ամենայն ազգս երկրածնաց շնորհքն մատակարարէին։

Այսպա իբրև գայր բերէր այրն ՝այ զ՝ծածագործ մեծութեցն պատուհասին զկրատու՝ որ առ ՝ամ ազգս բանաւորաց և շնչաւորաց՝ յաւիտենից զնշանակն ըզփայտն ապրեցուցիչ, զնշանակն հայրենի գործոցն զնոյեան տապանին, ՝ամ քաղաքն և գաւառքն՝ որ շուրջ էին զնովաւ՝ անպայման և անչափ խնդութիւնք և ցնծութիւնք ընդ առաջ ելանէին։ Իբրև զառաքեալ Քեռի իբրև զհրեշտակ երկնաւոր տեսեալ զսուրբն, զնովաւ պատեին. զքաջ հովիւն իւրեանց իբրև զաստուածախօս տեսանէին. և զնովիմբ փարեալք, և զվաստակասէր զօգտաբեր զգարշապարացն զշաւիղսն համբուրէին։ Այլ զբերեալ պարգևացն զշնորհս իւրեանց յօժարութիւն ընդունէին. որ մինչև ցայսօր նշանակ սքանչելութեանն կայ պահեալ առ նոսա երևոյթ փայտն հայրապետական նոյեան տապանին։

Այսպա յետ այսորիկ լուր լուաւ յերկրէն հայաս-

1 Յ՝ամ օրինակս զԲիբլիոսանն փերոանիսն։

տանէ սքանչելի եպիսկոպոսն Յակոբ. խաղաց գնաց առ մեծ իշխանն աշխարհատէրն մեծ ծառայն արքային Հայոց առ Ա՛նաձիրհ ռըշտունի, և եկն թափեցաւ յաշխարհ նորա։ Ա՛ստն զի լուեալ էր զնմանէ՝ թէ այր չար և անզգամ է, և զուր տարապարտ 'ի ցասմանէ դառնութեէ սրտին իւրոյ կոտորէ անթիւ մարդիկ։ Այլն ուսուցանել և խրատել զնա, զի յահէ նոն երկուցեալ դարձցի յընդանութեան բարս, և մեկուսի 'ի վայր դիցէ զանասնաբար գաղտնամտութիւն մոլեգնութեէն իւրոյ։ Իսկ իբրև ետես զնա, արհամարհեաց, ծաղր և այպն առնէր անօրէնն Ա՛նաձիրհ զայրն ՝ի զՅակոբ եպիսկոպոսն։ Այլ առ վայրենի բարուցն իւրոց՝ զոր ունէր յանձին իւրում, իբրև նմա հեծուկս առնելոյ, ութ հարիւր այր՝ որ կային 'ի կապանս առանց յանցմանն՝ ետ ածել առաջի նորա. և հրամայեաց 'ի դահճէ միոջէ 'ի ծով անդր հոսել. և զայնչափ հոգի առանց յանցման կորուսանել, և կատակութիւն ծաղրու հրամայեր հալածել զնա յաշխարհէն իւրմէ։ Այլ ասէ. Ո՛ւր քում բարեսացութիւնդ տեսո՞ր զիա՛րդ մեծարեցի զքեզ. դիւր արարի նոցա 'ի կապանացն, և 'ի ծովուն դեռ ղուղին։ Իսկ նա զնացեալ անտի մեծաւ տրտմութիւն ըստ հրամանի պատուիրանին տեառն իւրոյ, թօթափէր զփոշի ոտից իւրոց 'ի վերայ նոցա։ Ոչայր հասա նէր 'ի լեառն երկաթահատացն և կապարահատացն, և որ ընդ նմայն էին, ընդ Ռըշտունիս։ Այլ բաժանէր լեառն բարձր, ուստի երևէին գաւառքն բովանդակ, որում անուն Ինձաքիարս կոչէին։ Իբրև հուպ եղև յայն լեառն 'ի ստորոտ լերինն. քանզի բազում աւուրք էին զի չէր ինչ թնաւ ամենևին ճաշակեալ, և ծարաւեաց խիստ ծարաւով։ Այկաց յաղօթս առ Տէր, զնէր ծունր, և եդ զգլուխ իւր 'ի վերայ երկրի, և բխեաց աղբիւր. ուստի արբ ինքն և որք ընդ նմայն էին։ Այլ եղև այս ըստ առաջին օրինակին. որպէս արար 'ի Սարարադ լերինն, սոյնպէս և առ ոտին Ինձաքիարս լերինն 'ի ծովեզերն ըռշտունեաց ծովուն. որ ըստ առաջնոյն օրինակի կոչի և այս աղբեւր Յակոբայ մինչև ցայսօր ժամանակի։

Այլ ելանէր քահանայապետն ՝ի Յակոբ 'ի գլուխ

լերինն Ընձաքիարս. և նզովէր զաշխարհն, զի մի պա-
կասեսցէ անտի խռովութիւն մինչև 'ի սպառ, փոխա-
նակ տերունի խաղաղութեան՝ որ ոչ լուան։ Այլ սուրբ
աւետարանիչ եպիսկոպոսն գնաց 'ի տեղի իւր։ Իսկ
յայնմ գաւառի, յետ գնալոյ նորա անտի, յետ երե-
կուց աւուրց սատակեցաւ կինն Մանաձերհայ Եւթն
որդւով իւրով. յետոյ և ինքն չարամահ ծակոտեալ
էլանէր մեծաւ տանջանօք յաշխարհէ։ Այլ ըստ բա-
նին՝ որ ասացաւ, ոչ եղև խաղաղութիւն յաշխարհին
յայնմիկ յօրէն յայնմանէ և յապա։

Բայց այս Յակոբ գործէր սքանչելիս մեծամեծս.
և սա դիպեցաւ 'ի մեծ սիւնհոդոսին 'ի Նիկիա, որ
եղև յամն Կոստանդիանոսի կայսեր Հռոմոց, որ
ժողովեցան երեք հարիւր և ութեւտասն եպիսկոպոսք.
վասն անիծեալ աղանդոյն Արիանոսի աղէքսանդրա-
ցւոյ, որ էր 'ի նահանգէ անտի Եգիպտոսի։ Արդ-
ամ եպիսկոպոսքն նատէին առաջի Կոստանդիանոսի.
և 'ի Հայոց էր անդ Արիստակէս, որդի Գրիգորի
սքանչելոյ՝ առաջի կաթողիկոսին Հայոց մեծաց։ Ակն-
սաւ երևել սքանչելեօք նշանաց Հոգւոյն սրբոյ այնմ
Յակոբայ ծածկեալ գործք զարմանալի թագաւո-
րին։ Այսպէս զի արքայն Կոստանդիանոս քուրձ զգե-
ցեալ էր 'ի ներքոյ իւրոց ծիրանեացն և պատմուճա-
նին, և հրեշտակն կայր պահապան սպասաւորել նմա։
Զարմացեալ եպիսկոպոսն Յակոբ, ասաց այլոց բազ-
մութեամբ ժողովոյն եպիսկոպոսացն զիրս հրեշտակին, որ
ոչ հաւատային իրացն։ Իսկ նա պնդեալ վիճէր և
ասէր. Որովհետև դուք գիտէք զիրս ծածկեալս,
նախ զայդ յայտ արարէք, զինչ է այն որ զգեցեալն
է թագաւորն 'ի ներքոյ պատմուճանին։ Որ ինքն 'ի
մէջ կացեալ, 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ յայտնէր զխո-
նարհութիւն կրօնազգեաց աստուածասիրուն նշանակ
թագաւորին Կոստանդիանոսի. և զինեալ առաջի ա-
մենեցուն ցուցանէր, զի 'ի ներքոյ ընդ ծիրանեաքն
քուրձ զգեցեալ էր առ սէր ջերմեռանդ հաւատոցն՝
որ առ Քն ունէր։ Այլպա ետես և թագաւորն Կոս-
տանդիանոս զհրեշտակն սպասաւոր երեսացն Յակո-
բայ, և անդաւ առաջի ոտից նորա, և մեծապատիւ
մեծապարգև մեծարեաց զնա։ Այլ արկ զաթոռ նո-

ըս 'ի վերոյ քան զբազումս 'ի նոցանէ , որք 'ի սինհրոս դոսին յայն էին : Բայց ոսկերք նորա չնորհեցան քաղաքին ամդացւոց , ընդ այլ մծբնացիսն 'ի փոխելնդ բա անտի անդր 'ի մարտս պատերազմացն Յունաց թագաւորացն ընդ թագաւորին Պարսից :

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս մեծի պատերազմին Պարսից և Հայոց ընդ միմեանս. և անկանելոյ 'ի պատերազմին՝ զօրավարին Վաչէի : Եւ մահուն խոսրովու արքայի , և փոխելոյ յաշխարհէ հայրապետին Վրթանայ :

Եւ յետ այսորիկ յաւել և ս լինել մարտ խստութեամբ պատերազմի 'ի մէջ Պարսից և Հայոց ընդ միմեանս . զի ժողովեցան հասին կուտեցան առնուլ զաշխարհն հայաստան երկրին : Եպա ժողովեր սպարապետն զօրավարն Հայոց մեծաց Վաչէ զաղատախումբ բանակ նախարարակոյտ զօրացն : Եւ ելանէր տայր ընդ զօրսն Պարսից պատերազմ, և լինէր անհնարին կոտորուած յերկոցունց կողմանցն , և բազում ծախ մեծամեծ աւագանւոյն կոտորելոցն : Ընկանէր 'ի պատերազմին յայնմիկ մեծ սպարապետն Հայոց Վաչէ . և լինէր ամենայն աշխարհին սուգ անհնարին , զի բազում անգամ էր ոն փրկութիւն տուեալ Հայոց 'ի ձեռն նորա : Եպա ժողովեր եպիսկոպոսապետն Վրթանէս , միթարէր զամենեսեան , և զինքնին թագաւորն զԽոսրով, և զորսն ամ, որք բազում անձկայրեաց տրտմութեաբ և արտասուականթ ողբով և ծանրաթախիծ հոգով , մեծաւ կոծով և անհնարին աշխարանօք պաշարեալք , զգնացելոցն կարիս մնացելոցն համարեալ՝ սգային : Օ որս մատուցեալ սիրափէր զնոսա մեծն Վրթանէս , և ասէր .

Ամիթարեցարուք 'ի Տէր . վասն զի մանաւանդ որք մեռանն , նոքա յաղագս աշխարհի և եկեղեցեաց և ճշմարտոյ օրինացն տուչութեաբ , զի մի դերեալ քան-

դեսցի աշխարհս, և սուրբ եկեղեցիքն անօրինեսցին, և կամ մարտիրոսք անարգեսցին, և կամ ՝ի՛ սպասքն ՝ի ձեռս պղծոցն և անօրինացն անկցին, և ՝ի՛ ուխտն այլայլեսցի, և որդիք մկրտութեան զերութեան անկցին ՝ի պէսպէս պղծութիս անօրէնութեան կարգաց պաշտամանց։ Այլ եթէ զաշխարհս ունիցին արդեւք թշնամիքն, և զիւրեանց զանօրէն զանկրօն զանաստուած կրօնիցն զօրէնս, աստ արդեւք հաստատեցին. որ, զոր խնդրեմքս, քա՛ւ և մի՛ լիցի։ Իսկ մեր բարեպաշտութեան նահատակք ՝ի վերայ այսորիկ ՀԳնեալ պատերազմաւ, զչար պահեալ հեռացուցեալ հալածեալ յաշխարհէ՝ մեռան, զի մի՛ յայսպիսի աստուածապաշտ և աստուածասէր աշխարհ անօրէնութեան մտեալ, չարի կամացն ՝ի ծառայութիւն արկցէ, և զբազում ոգիս ջերմեռանդն սիրով քնութեան ՝ի միմեանց քակտեալ քայքայեսցէ։ Իսկ տոքա մինչդեռ կենդանի էին, արդար վաստակօք ՝ի վերայ այսորիկ վաստակեցան. և ՝ի մահուն իւրեանց զմիամտութեան հաստատութեան զանձինս փոխանակ տալով ընդ Հշմարտութեան ՝ոն, մատուցին ՝ի վերայ եկեղեցեաց, և ՝ի վերայ մարտիրոսաց, և ՝ի վերայ ուխտին սրբութեան օրէնացն, և ՝ի վերայ կարգաց հաւատոցն, և ՝ի վերայ ուխտին քահանայութեան, և ՝ի վերայ անթիւ նոր ՝ի Քրիստոս մկրտելոցն, ՝ի վերայ բանակի տեառն աշխարհիս։ Որք այնմ ՝ամի փոխանակ զանձինս իւրեանց ոչ խնայեցին, ընդ վկայս Քրիստի է նոցա համար պատուոյ։ Արդ մի՛ լայցուք զնոսա, այլ պատուեսցուք ընդ Հշմարտութեան, առ նահատակսն դիցուք ընդ աշխարհ օրէնս յաւիտեանս յաւիտենից, զի ՝ամ որ զսոցա յիշատակ քաջութեան իբրև Քրիստի նահատակաց անխափան կատարեսցէ։ Այլ մեք տօնս արասցուք, և ուրախ լիցուք. զի ՝ած այսոքիւք հաՀեսցի ընդ մեզ, յայսմ հետէ խաղաղութեան շնորհեսցէ։

Այլ եդ օրէնս ընդ աշխարհ մեծ քահանայապետն Ոլրթանէս, զնոցա առնել զյիշատակն ամ յամէ. և որք փոխանակ աշխարհին փրկութեան մեռանիցին ՝ի նմանութեան նոցա, եդ կանոն՝ յիշել զսոսա առ սուրբ սեղանն ՝այ ՝ի ժամ պատարագին. յորժամ զանուանս սրբոցն կարդիցեն, և ապա զկնի նոցա զնոցայն. և

մնացեալոցն յանցեալոցն գութ և խնամ կալցին։ Օ՛ի սոքա, ասէ. 'ի նմանութեանէ Յուդայ և Մատաթիայ Մակաբէի անկան 'ի Ճակատ պատերազմի, և նմանութեանէ եղբարց նոցա։ Մակայն զմ աչէի զօրավարի փոքրիկ մանգիկ մի զնորուն զորդի 'ի հայրենի բարձ գահոյն մատուցանէին, որում անուն էր յանուն հօր իւրոյ Ազատազդ։ Առաջի Թագաւորին զհօրն պատիւն 'ի գլուխն դնէին, և զսպարապետութենն նորուն տեղի. զի կարի որդի վաստակաւորի էր, և 'ի վաստակաւոր ազգէ. զի այլ յազգին ոչ գտաւ հօժ կու, զի 'ի մեծ պատերազմին մեռան։ Եւ զզօրավարութեանէ զգործ յանձն առնէին Աբշաւրայ կամնարա կանի՝ իշխանին Շ իրակայ և արշարունեաց գաւառին, և Անդովկայ իշխանին Սիւնեաց. զի նոքա փեսայք էին տանն մամիկոնեան տոհմին։ Եւ հրաման ետուն մեծ եպիսկոպոսապետն Ալրթանէս՝ հանդերձ Թագաւորաւն՝ Աբշաւրայ և Անդովկայ մնուցանել զպատանեակն զԱ՛ազատազդ, զի կացցէ 'ի տեղի նախնեացն իւրոց և հօր իւրոյ, և գործ քաջութեանէ գործեսցէ ամենատեառնն Աստի, և առաջի իւրոյ մարմնաւոր բնատերանց [1] արշակունեաց քաջ արանց, և տան և կենաց. և խնամակալ լիցի այրեաց և որբոց, և զնորուն գործ քաջութեանէ սպարապետութեանէ անուանի զօրավարութենն յաջորդեսցէն զամ աւուրս կենաց իւրոց։

Ապա յետ այսորիկ փոխեալ լինէր քաջ արանցն աշխարհաշէնն Խոսրով, Թագաւորն Հայոց մեծաց։ Ողողվեալ, աշխար եղեալ, լացին զամ սահմանք աշխարհաց գաւառաց Հայոց մեծաց. և տարան առ իւր նախնիսն յԱնին յեկեղեցագաւառն [2] Ողարանաղեաց։ Եւ յետ սորա փոխեցաւ և յաշխարհէ մեծ քահանայապետն Ալրթանէս. և ժողովեցան ամենայն աշխարհն Հայոց, և մեծաւ պաշտամամբ, սաղմոսիւք և երգովք հոգևորօք, կանթեղօք և մոմեղինօք և խնկածուխ հոտովք, արքունական կառօքն ընդն Ալրթանէս, անհնարին բեկմամբ՝ վասն իւրեանց

1 Յօրինակի միում բնակ պէ-բանց։

2 Յերիս օրինակս Յեկեղեաց գաառան։

յայնմ բնակ տեառնէն կամ 'ի հոգևոր վարդապետութենէն որբ մնալոյ, մեծաւ լալեաց տրտմութեբ մինչև 'ի գետն Յորդան 'ի Պարանաղեաց գաւառն յուղարկէին։ Եւ անդ առ մեծի հայրապետին Պրիի գորի զսորա սուրբ զոսկերսն հանդուցանէին. և ըզմիշտակատար զսորա կենդանի յիշատակն 'ի վերայ կատարեալ, դառնային։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս Թադաւորելոյ Տիրանայ յետ հօր իւրոյ. և թէ որպէս Յուսիկն յետ հօր իւրոյ Ս. բթանայ կալաւ զաթոռ հայրապետացն, և թէ որպէս սպանաւ 'ի Տիրանայ արքայէ յաղագս յանդիմանութեան։

Եւ յանցանելն յաշխարհէ Թագաւորին Խոսրովու, Տիրան որդի Խոսրովու առ զթագաւորութիւն իշխանութեբ աշխարհացն Հայոց մեծաց։ Եւ ընդ նմին սուրբն Երանելի մանուկն Յուսիկ յաՋորդեաց զտեղի հայրապետացն Հայոց։ Բայց գումարեաց ընդ նմա Թագաւորն Տիրան զմեծամեծ նախարարսն ըստ սովորութեբ օրինակին, զմեծ հազարապետսն 'ի հազարապետութենն։ Իսկ 'ի տոհմէ ամ Հայոց մեծաց, զԱ աղարշ, որ էր իշխան Նշձտայ. և ընդ նմա Զարեհ իշխանն, նահապետն մեծի Ծոփաց, և զԱ ռաջ Շահունի իշխանն Ծոփաց աշխարհին, և զԸ նիթ իշխան Հաշտենից գաւառին 'ի կամենական տոհմէն. զԱ որոթ իշխանն Ամանդայ գաւառին, և զՇ ահէն իշխանն անձևացեաց տոհմին, և զՄտամ իշխանն Պողթան, և զԱնաւազ իշխանն կողբացոց. զՊորութ իշխանն Զորոց աշխարհին, և ըզԱնասպ զիսրխսուունեաց զիշխանն մաղխազունեան տանն։ Եւ զմերոյ տոհմի ազգի իշխանն սահառունեաց, և զԼբա իշխանն գնունեաց։

Օնոսա զամենեսեան հրամայեաց երթալ ընդ մեծի հազարապետին Ա աղարշու, զի նստուսցեն զերա

նելին Յուսիկ յաբքունական կառն, և խաղացեն զնասցեն 'ի սահմանակիցս իւրեանց 'ի մայր քաղաքացն Դամրաց 'ի Կեսարիա, հասուցանել զմանուկն Յուսիկ յառաքելական աթոռն հայրապետացն։ Գնա նացին եկին հասին 'ի քաղաքն կեսարացւոց. ետուն 'ի կաթողիկոսութիւն զՅուսիկն ձեռնադրել, զորդին Վրթանայ։ Եւ նստուցին զնա յաթոռն Աղաքեղոյն Մոգէոսի, և յաթոռ իւրոյ հաւուն մեծին Գրիգորի. և դարձան անդրէն մեծաւ խնդութիւն, եկեալք առողջութիւն, յաջողեալք հասանէին յայրայրատեան աշխարհն։ Եւ զնշանսն երկոսին, և նոցուն Ներսիսոյ, յառաջ արձակէին աւետաւորս առաքայն։

Ապա էրրև լուաւ ինքն արքայն, ընդ առաջ ելանէր նմա 'ի դաշտն յայն կոյս գետոյն Տափերն կամրջի, ՝եմ բանակօքն բազմութեամբք։ Ապա ողջոյն տուեալք զցանկալի ողջոյնն միմեանց, անցեալ ընդ կամուրջն Տափերայ, մտեալ 'ի քաղաքն մեծ Աղատաշատ, յեկեղեցին դառնային. և նստուցանէին զցանկալի մանուկն Յուսիկ յաթոռ հայրապետական։ Սա զհետ հօրն իւրոյ Վրթանայ զառաքելական յաջորդէր, հայրական չափոյն նմանեալ ծնունդ, ամենևին զՀՄ յՀՄի հրեշտակակրօն զանձն ցուցանէր, զՀՄ ըստ պարգևացն ՝այ զշնորհացն կատարէր։ Քրիստոսական բանաւոր խաշանցն հովուելով, աւետարանական պատգամաւորքն խրատելով ընձեռեռեցաւ։ Օ՛ի աւուրքք մանուկ, տիւք առոյգ, և բարձր հասակաւ. գեղով երեսաց սքանչելի և չքնաղ, զի այլ ոչ գտանէր ուրեք նման նմա 'ի վերայ երկրի։ Սուրբ և պայծառ հոգւով, ամենևին ոչ ինչ զբաղեալ ընդ աստիս. իբրև զքաջ սպառազէն Քրիստի, իբրև զախոյեան նահատակ 'ի տղայութիւնն տիոց նշկահէր, աներևոյթ թշնամոյն յաղթութիւն սպառնացեալ։ Այն առնուլ կամ աչառել մարդկան բնաւ ամենևին ոչ գիտէր. այլ զբան Հոգւոյն սրբոյ սուսեր ածեալ ընդ մէջ իւր կրէր։ Իսկ շնորհատուր Հոգւոյն լցեալ զնա, գիտութեն էր աղբիւրացեալ զՀՄ լսելեացն ցուրս ականջացն և սրտիցն երկրին։

Իսկ թագաւորն Տիրան, և այլ մեծամեծ աւա-

զանին նախարարացն, կամ աշխարհն ամ, ոչ ինչ
ըստ այ կամացն վարս յանձն առեալ՝ իմաստուն ինչ
գնացեալ լինէին։ Վասն զամ մանաւանդ Թագա-
ւորն կամ իշխանքն սպանութիս՝ անխտիր 'ի հեղուլ
զարիւն արդար 'ի տարապարտուց՝ գործէին, և այլ
մեղս բազումս. և ոչ հայէին 'ի հրամանս վերնոյն,
'ի հանապազորդ լսելոյն ոչ խրատեալք 'ի յուշն նո-
ցա առնելոց զայ յոյսն։ Վասն որոց հանապազ ընդ-
դիմացեալ լինէր երանելի հայրապետն Յուսիկն,
վարժ բանիւքն համեստութեն քրիստոսական խրա-
տուն՝ հանապազ յերեսս յանդիմանութիւն հարկա-
նելով խրատելով կշտամբելով արկանէր, զսպանումն
տանջանաց յաւիտենական բարկութեն անշէջ հրոյն
դատաստանին պատմելով, բողոքէր։ Օ 'ի թէպէտ
աւուրքք մանուկ էր, այլ զաւագութի ծերութեան
խրատուն յինքեան ցուցանէր, զհայրենի գործ խրա-
տուականն զառաւելութի քաջութեան կատարէր։
Հարցն նմանեալ 'ի մանկութե իմաստութե, ծե-
րութե պատիւն պատուական պատուականութեանն
զհանձարոյն զուարթութեն ուշութեն, իբրև զծա-
ղիկ 'ի դիտաւորութեն հասեալ, վասն Ճշմարտութեն
մինչ 'ի մահ մարտնչէր. նախ զանձն ապրեցուցանե-
լոյ, և վասն այլոց հոգւոց զնոյն առնել կամէր։ Ո՛չ
չափ էր երկիւղած 'ի տեառնէ, զի ոչ զսէր և ոչ զահ
Թագաւորին առ ոչինչ համարէր։ Լոկ գիտութիւն
այ, դպրութե գրոց սրբոց արուեստաւն լի էր. և առ-
նոյր 'ի պատուհասել և յանդիմանել. արդելոյր ըզ-
Թագաւորն և զմեծամեծսն չտալ Թոյլ մտանել յե-
կեղեցին։

Ո՛րդ եղեալ կապէր մեծապէս պատուհասիւք, քա-
հանայական իշխանական բանիւ յանդիմանութեն,
վասն անօրէնութե պոռնկութեն և արուագիտութե
և արենհեղութեն, զրկութե, յափշտակութե, աղ-
քատատեցութե և այլոց բազում մեղաց՝ որ այսմիկ
նման իցէ։ Այս ինքն վասն ահի սատից օրինացն տոն՝
Թշնամի համարեալ Թուէր որոց հանապազ անցա-
նէին զկարգաւքն Աստի, և հանապազ 'ի սմանէ սուրբ
բանիւն այ խոցոտեալ լինէին։ Այս այս մարտ պատե-
բազմի էր սորա առ հասարակ ընդ ամենեսեան յան-

դիմանուԹԵ զամ աւուրս կենաց իւրոց։ Որ իբրև օր մի յաւուրց տարեկան, դիմեաց գալ Թագաւորն Տիրան հանդերձ այլովք աւագանւովն մտանել յեկեղեցին. իսկ նա ընդդէմ բարբառեալ ասէր. Ձեզ արժանի, հիմ գաս, մի գար 'ի ներքս։ Վասն որոյ անդէն 'ի ներքս քարշէին զնա յեկեղեցւոջն. բրաւեալ եղեալ ջաղջախեալ քահանայապետն այ սուրբ, երանելի մանուկն Յուսիկ, կիսամահ կոչկոՁեալ ընկեցեալ լինէր։ Որ բարձեալ պաշտօնէիցն դրան եկեղեցւոյն 'ի Բնաբեղ բերդէն արքունի՝ մեծ Ներսիսեան գաւառին, եկին բերին 'ի գաւառն Պարանաղեաց 'ի գեւղն Մորդան. և անդ ոչ ինչ յետ բազում աւուրց հանդեաւ, և եդաւ մօտ առ Գրիգորի և ընդ հարս իւր։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս Թէ զնարդ յետ մահուանն Յուսկանն անառաջնորդ լինէր երկիրս Հայոց, և ոչ որդիքն Յուսկանն արժանի եղեն հօրն աԹոռոյն։

Եւ յետ այսր անցեալ ժամանակաց, զկնի Թոսպամահն լինելոյ երանելոյն Յուսկան, անառաջնորդք եղեալ՝ իբրև զկոյրս մոլորեցան երկիրն լեզուին Թորգոմական աշխարհին։ Բանզի տուաւ նոցա ոգի մոլորուԹեան, աչս՝ զի մի տեսցեն, և ականջս՝ զի մի լուիցեն, և սիրտ՝ զի մի իմասցին դառնալ յապաշխարուԹիւն։ Եւ զնաւարային խորխորատ կորստեան գտեալ, հարեալ իւրեանց անձանց Ճանապարհ, կործանեցան անկեալք. զի ոչ այն ոք գոյր՝ որ նոցա մոլեգնուԹենն պատկառուկս արկանէր ըստ մեղս գործելոյ, այլ անհոգիւք էին։ Ի կորստեան Ճանապարհն՝ համարձակէին 'ի չարիս՝ կամաք գնացեալք, և կամաք լեալք որդիք բարկուԹեան. և առանց այ շրջէին յաշխարհի կամակոր ազգ տանն Հայոց երկրին։ Ամենեալք լինէին այնմ հօտի խաշանց, որ զպահպանուի

շանցն պահողաց պահապանացն 'ի բաց մերժեցին, և կամաք իւրեանց կերակուր գէշ թշնամութեամբ գայլոցն մատնեցան, ըստ նմանութեան մեծին աթենացւոց քաղաքին։

Յայսմ ժամանակի զթագաւորն իւրեանց օրինակ չարի առնէին, և նովին օրինակաւ ձևել սկսան, և նոյնպէս գործել։ Զի 'ի վաղնջուց, յորմէ հետէ առին նոքա զանուն քրիստոնէութեան, ըստ միայն իբրև զկրօնս իմն մարդկութեան յանձինս իւրեանց և ոչ ջերմեռանդն ինչ հաւատովք ընկալան, այլ իբրև ըստ մոլորութեան իմն մարդկութեան 'ի հարկէ։ Ոչ եթէ որպէս պարտն էր գիտութեամբ յուսով կամ հաւատով, բայց միայն սակաւ ինչ ոքք զՀանգամանս գիտէին հելլէն կամ ասորի դպրութեաց, որք էին հասու ինչ այնմ փոքր 'ի շատէ։ Իսկ ոքք արտաքոյ քան զգիտութեան արուեստին էին այլ խառնաղանձ բազմութեամբ մարդկան ժողովրդոց նախարարացն և կամ շինականութեանն, եթէ զցայգ և զցերեկ նստեալ վարդապետացն և ըստ նմանութեան ամպոցն իբրև զյորդահեղեղ ինչ անձրևաց սաստկութեամբ զվարդապետութեանն 'ի վերայ հոսէին, ոչ ոք 'ի նոցանէն և ոչ մի ոչ, և ոչ մի բան, և ոչ կէս բանի, և ոչ դոյզն յիշատակ ինչ, և ոչ նշմարանս ինչ զոր լսէինն, և ոչ կարէին ինչ ուսնել 'ի մտի։ Ա՛ամն զի միտք իւրեանց ընդ անպիտանս ընդ անօգուտս նեթ զբօսեալ էին. զոր օրինակ մանկունք տղայք ընդ մանգութեանն և ընդ տղայութեանն խաղալիկ խանկարեալք, և զպիտոյիցն և զկարևորացն ոչ ինչ փոյթ արարեալ, սոյնպէս և դեգերեալ մաշէին յանուղղայ կրթութեամբ ընդ չքնոտի մտացն 'ի հնութեամբ հեթանոսութեանց սովորութեանց, բարբարոս խուժադուժ միտս ունելով։ Այս զիւրեանց երգս աստուածոց զվիպասանութեանն սիրեցեալք 'ի փոյթ կրթութեանցն, և նմին հաւատացեալք, և 'ի նոյն հանապազորդեալք, 'ի հեռ և 'ի նախանձ ընդ միմեանս չարակնութեամբ, թշնամութեամբ ոխութեանց, զմիմեանս խածատել, և նենգել այր զընկեր և զեղբայր։ Սիրելիք սիրելեաց, և մերձաւորք մերձաւորաց, և ընտանիք ընտանեաց, ազգակիք ազգականաց, խնամիք խնամեաց դնէին գայթակղութեամբ։

Ընդ եր տեսանել այր ընկերի արեամբք ծարաւեալք ըմպելով, ոգովք չափ գային ինասուցն՝ անխրատ վարս և անհանձար միտս ունելով։ Այս զդիցն հնութեանն պաշտամունս 'ի նմանութեան պոռնկութեան գործոյն ընդ խաւար կատարէին. և ոմանք զնոյն իսկ ցանգութեան գիջութեանն պոռնկութեան կատարէին յանձինս իւրեանց։ Ա՝ ասն այսորիկ ոչ զնորատ իմաստուն լսէին, և ոչ առաջնորդացն ասելոյ զայ պատգամն անսացեալք հնազանդէին. այլ վասն 'ի նոցանէն յանդիմանութեանն, ատէին և հալածէին զնոսա և սպանանէին։ Այս ըստ մարգարէական բանին առ նոսա ասելոյ, թէ «Ատէին 'ի դրունս զյանդիմանիչս», և զբանս սուրբս արհամարհէին։ Զանազի ոչ էին թէ որպէս այլոց ազգականացն և հաւատացելոցն կամ իմաստնոցն ետ նոցա զգիտութեան ճշմարտութեան հաւատոցն ածաբանիւ քարոզութենն, որպէս ոքք ընկալանն՝ առին գոհութիւն և հաւատացին և վայելեցին 'ի շնորհս մարդասիրութենն արդեւք, այլ ըստ հրեական մտացն կուրացելոց և խաւարելոց և կաղացելոցն 'ի ճշմարտութենէն։ Զոերեւս և առ այս ազգ մի տեր բանն մարգարէական յառաջգիտական, եթէ «Ոդիք անմիտք, և ոչ որդիք իմաստունք. իմաստունք են զչար գործել, և զբարի գործել նոքա երբեք ինչ ոչ գիտացին»։ Այս դարձեալ ասէ. «Որդիք եղջերիկք, խստասիրտք, խստաշունչք, ոյք դառնացուցին զիս նոքա և հարք իւրեանց»։ Բայսպէս լքեալք և սոքա, զի ոչ իմացան և ոչ հաւատացին յաներևոյթն այ երևելեօքս. յարարածոց աստի չիմացան՝ զարարիչն և զկարգիչ և զինամիչն առնուլ 'ի միտ։ Յաճախեաց զերևոյթ նշանս իւր և զսքանչելիս, մինչև զմարդկայինն բնութիւս շարժեաց 'ի կերպարանս անասնոյ. ուստի փրկութենն նոցա լինէին պատճառք։

Այս մինչև յայս յանպիտան և յանմիտ թագաւորութենն իսկ, առ այն թագաւորաւ Տիրանաւ, ընդ նոյն իսկ ընդ այս նայեցեալք, անցուցին չարութիւք քան յամ դարս։ Ա՝ անաւանդ քան զամ, զի զգլխաւորն առաջնորդն թոպամահ սպանին, և այնուհետև ըստ կամաց գնային։ Զանազի ոչ ոք այն ոք գոյր, յորմէ խիթայինն յանդիմանութենն՝ որ նոցա արգել ար-

կանէր գնալ յանօրէն Ճանապարհն ելանել։ Այլ բարձեալ թողեալ եղէն նոքա 'ի ձեռանէ տեառն, երթեալք ըստ հետ կամաց սրտից իւրեանց. ապա վայր ոք առաջնորդ և ոչ գլուխ քահանայութեանն։ Սակայն փոյթք եղէն նոքա ոչ վասն Ճշմարտութեան ինչ խնդրել իւրեանց հովիւ կամ առաջնորդ՝ որ կայցէ գլուխ ժողովրդեանն հօտապետութեէն, այլ բանից ընկերք իւրեանց խնդրէին զայն ոք՝ որ ըստ նոցա կամացն վարիցէ։

Յայնժամ խորհուրդ արարեալ թագաւորին և իշխանացն, և համօրէն իսկ աշխարհին, թէ զո՞ արժանի այնմ իմիք գտանիցէն. քանզի երկու մնացեալք[1] երկուորիք երկու մանգունք, միումն Պապ անուն, և միւսումն Աթանագինէս, Ճանաչէին ստահակք և անխրատք, որք ոչ ինչ ըստ իմաստութեէ աստուածէղէն գրոց, և ոչ վարժ հրահանգաւք առաքինութեէն, և ոչ հօրն իւրեանց չափոց ինչ նմանեցին միտ եդեալ, և ոչ ընդ իւրեանց ծնիչն հայրն Յուսիկ նայեցան, և ոչ մեծին Գրիգորի յառաքինութենն ուշ եդին, և ոչ զիւրեանց հոգևորն պատուականութի՝ յաւիտենական կենացն զպատիւ ինչ եդին 'ի մտի։ Այլ իւրեանց ժամանակի դարուն նմանեալք, և պանձացեալք յիւրեանց յանցաւոր մտոտի'ի մարմնաւոր տոհմականութենն ազգականութե, զինուորական զվարսն ընտրեցին։ Ամն այնորիկ անընտիրքն եղեալք, 'ի հպարտութեանն խոտեցան ըստ յառաջագոյն տեսլեանն հօրն իւրեանց. ոչ մտին 'ի լուծ աստուածպաշտութենն։ Այլ ոչ այլ ոք 'ի նմին տանէ զաւակին Գրիգորի գոյր ոք. զի այնչափ իսկ կային մարմնաւոր զաւակին, և սոքա ինչ ոչ թէ արժանի հարցն գնացեալ նմանեցին վարուց։ Այլ այլ ոչ ոք էր, որ զառաջնորդութե գլխաւորութե քահանայապետութենն վերակացութենն ոք տէրունական տանն հրամանատարութենն կատարեալ, պաշտաման յաջորդէր։

1 'Ի չորս օրինակս գնացեալ։

Գ. ԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս վարուց և գործոց մեծին Դանիէլի առն ՅՍ, և թէ որպէս յանդիմանեաց զԹագաւորն Տիրան, և կամ որպէս պատուհասեալ մեռաւ 'ի նմանէ։

ԲԱՑՅ յայնժամ դեռ ևս կենդանի էր ծերունի սուրբն մեծն քորեպիսկոպոսն Դանիէլ, այր աքանչելի։ Աշակերտ եղեալ էր սա մեծին Գրիգորի, վերակացու և գլխաւոր Եկեղեաց նահանգին Տարօնոյ, Գրիգորի ձեռակա՝ իշխանութեանն կողման մասին գործակալութեն մեծի դատաւորութեանն, ունէր զիշխանութիւն զայն առանձինն. այլ վերակացու և հրամատար տեսուչ և հոգաբարձու ամ եկեղեցեացն Հայոց մեծաց ընդ ամ տեղիս. այլ և 'ի կողմանս Պարսից յօտար տեղիս քարոզեաց սա, և անթիւս 'ի մոլորութենէ դարձոյց։

Եւ էր սա ազգաւ ասորի. և ունէր սա զաստիճան աթոռոյն գլխաւորութե Տարօնոյ, 'ի մեծն և նախ զառաջին եկեղեցին 'ի մայր եկեղեցեացն ամ Հայաստանեաց։ Այս ինքն նախ և զառաջին և գլխաւոր տեղին պատուական. զի յառաջ նախ անդ շինեալ էր զսուրբ եկեղեցին, և ուղղեալ սեղան յանուն նոն։ Այսպէս և 'ի ներքոյ քան զնա մարգարէանոցն Յովհաննու, նոյնպէս մօտ 'ի տուն տեառն Հանգիստ առաքելոցն։ Արդ այս տեղիք վասն յառաջակարգութե, կանոնաւ 'ի Հայրապետացն և 'ի Թագաւորացն պատուեալք լինէին. որպէս 'ի Դարանաղեաց գաւառին յեկեղեցին Թորդանու պատուին վասն գերեզմանացն Հայրապետին Գրիգորի։ Այսպէս և ըստ յիշատակս Թագաւորին Տրդատայ թէ կամք թէ ակամայ, որ արժանին լեալ էր նախաճանօթ 'ի Աստն հաւատոց։ Վասն այսորիկ կամ եղև աշխարհին ընդ նախնեաց ժամանակին հարանց եպիսկոպոսաց զայս տեղիս պատուել, ուր սոքա եդեալն էին. զի սիրելի էր աշխարհին, պատուել զյառաջնածայն Աստի ընդ Թագաւորն իւրեանց Տրդատ։ Այսպէս և զյառաջ-

եպիսկոպոսն զնախավաստակն Գրիգորիս. սոյնպէս և 'ի դաւառն այրարատեան զնախավկայն Քրիստի, ուր Գայիանէն և Հռիփսիմէն կային, իւրեանց հանդերձ գործակցօքն. սոյնպէս առաւել և զնախեկեղեցին։

Այս տեղիքս սմա էին յանձն հանդերձ դաւառօքն յորս էին. հաւատարիմ էր սա այնմ գլխաւոր սեղանոյն, իշխանութեան ամթոռոյն հայրապետացն, հաստատութիւն ուխտին կաթողիկէ եկեղեցւոյն։ Այլ էր սորա ընկալեալ զքորեպիսկոպոսութիւն ձեռնադրուի աստիճանին 'ի ձեռաց մեծին Գրիգորի, յաւուրս յորում կործանեաց զբագինս մեհենից Հերակլեայ՝ այս ինքն Ագահագնի, որում տեղոյ Աշտիշատն կարգացեալ. որ նախ եդ զհիմունս եկեղեցւոյ սրբոյ։

Այլ էր սա այր զարմանալի, առնէր նշանս և զօրութիւնս մեծամեծս յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստի։ Սա և կօշկօք քայլելոյն գնայր 'ի վերայ ջուրց գետոց, և ոչ թանային. և ոչ հանէր սա։ Այլ յաւուրս ձմերանոյն՝ յորժամ կուտեալ դիզեալ զմեծութիւն բազմութիւն թանձրութեանն ձեանցն կուտակեալ հիւսեալ ձեանցն 'ի վերայ ձմերային լերանցն՝ յայնպիսի լերանց 'ի վերայ ընդ այնպիսի ժամանակի կամէր ուրեք երթալ 'ի պէտս ճանապարհի, յանկարծօրէն ձիւնն ցամաք արջն լինէր առաջի նորա։ Այլ զի կամէր 'ի հեռաստան ուրեք երթալ, իբրև զփայլակն սլացեալ լինէր անաշխատ. իբրև թռուցեալ յոր կամէրն երթալ 'ի տեղին, յանկարծօրէն անդ դտանէր։ Յարուցանէր զմեռեալս, առնէր և բժշկութիւնս հիւանդաց, և այլ ևս մեծ նշանս և զօրութիւնս քան զնոյնս գործէր, զորս ոչ բաւեսցէ ընդ գրով նշմարանաց փակել։ Այլ բնակութիւն իւրոց կայենիցն յանմարդի լերինս, այլ զտեսչութիւն մարդկան պիտոյից ոչ երբեք անփոյթ առնէր։ Մի հանդերձ մաշկանափորտն սանդաղաւոր, և կերակուր իւր արմատք բանջարոց, և դաւազան անգամ ընդ ինքեան ոչ ունէր։ Այլ առ բանն այ այնչափ էր հզօր, զի զինչ հայցէրն յայ՝ առնոյր, և զոր ինչ ասէր՝ այն լինէր։ Այլ կայեանք տեսչութեան իւրոյ, յորժամ

յանապատաց 'ի շէնս իջանէր վասն գործոյ այ, 'ի գլխաւոր տեղիսն յեկեղեցեացն լինէր։ Եւ յաՃախ յակն աղբերն 'ի ներքոյ սարաբարձր մեհենատեղւոյն Հերակլայ, որ կայ դէմ յանդիման լերինն մեծի՝ որում Յուլն անուանեալ կարդան, 'ի բաղնին տեղւոջէ 'ի բացագոյն իբրև քարընդէց մի 'ի ներքոյ կուսէ, 'ի դոյզն ծործորակին 'ի սակաւ անտառակին 'ի հացուտ պուրակին՝ որում անուն տեղւոյն իսկ Հացեացն դրախտ կոչեն։ Այս այն աղբերն է, յորում առնէր յայնժամ Լաս վաղ մեծն Գրիգոր զմկրտութիւնն զօրացն բազմաց։ Յայնմ տեղւոջ էր սորա կայեանք խցկան սրբոյն Դանիէլի. էր դարափոր աբարեալ բնակութեամբ. և յայնմ տեղւոջ զգիտաւորուն այցելութեան կատարէր։

Ընդ միաժողով եղեալ մեծամեծք նախարարացն, և 'ի մի վայր եկեալք, խորհուրդք խորհեցան. հաւանեցուցին զթագաւորն, ածել զծերունին զԴանիել յիւրեանց բանակն, զի ածցեն կացուցցեն զնա իւրեանց գլուխ առաջնորդ, զի նստցի նա յաթոռն հայրապետական։ Եւ յղեցին առ նա Օ ոմն իշխանն Սահառունեաց տոհմին, և զԸրտուան զիշխանն Վանանդայ, և զՎարէն իշխանն Ամատունեաց տոհմին, և զՎարազ իշխանն Գիմաքսենից տոհմին։ Եւ եկին նախարարքն հասին գտին զնա յԵկեղեաց գաւառին, 'ի գեւղն եկեղեցւոյն 'ի Թիլն. զի դեռ իմն զգործ մշակութեանն այ գործէր։ Եւ առին զնա և ածին առ թագաւորն Տիրան, 'ի գաւառն Աղձնեաց 'ի Բառաջ յաւան։ Եւ իբրև մտանէր առաջի թագաւորին Տիրանայ քորեպիսկոպոսն մեծն Դանիէլ, անդէն 'ի ձեռն առնոյր զկշտամբութիւն յանդիմանութեանն։

Սկսեալ խօսել, յառաջ մատուցեալ, ասէր՝ եթէ ընդէ՞ր մոռացարուք դուք զնա՞ծ զարարիչն ձեր, և ըզդութ նշանացն և խրատուց, և զաքանչելեաց՝ զոր արար առ հարսն ձեր և առ ձեզ. և դուք դարձայք 'ի մոլորութիւն կուապաշտութեանն նախնեացն ձերոց, և յաստելութիւս և յագահութիւս և 'ի զրկութիւս և յաղքատակերութիւս, 'ի պոռնկութիւս, 'ի նենգութիւս և 'ի միմեանսզրկութիւս և 'ի սպանութիւս։ Գործանե-

ցայք լքեայք կասեցէք կաղացայք յարդարութեան
ճանապարհաց, և թողէք դուք զբարեբարն ձեր զՅԾ՝
որ զձեզ յոչընչէ արար և հաստատեաց, և 'ի մոլորու-
թիւնս ձեր անծանօթք եղերուք դուք 'ի նմանէ։
Մ՝ինչ դուք զձեր անձինսդ անգիւտս արարեալ էիք
'ի կորստեանն, նա եկն 'ի խնդրել զձեզ. զի թէպէտ
և ինքն իսկ միածին որդին ՅՍ, եկն էջ ուսուցանել
զՀայր իւրոց արարածոց. զի թէպէտ և ոչ լուան նմա,
և չարչարեցին նա մինչև 'ի մահ, և համբեր, սակայն
և ոչ նա զիւր զօրութիւնն ոչ թագոյց յումեքէ, զի
պատճառք կենաց լիցի ամենեցուն։ Այլ զորս եգիտ
արժանիս և պատրաստականս իւրում յարութեանն,
ընտրեաց, ուսոյց, և արձակեաց քարոզս և կոչնա-
կանս և հրաւիրակս՝ 'ի փրկութիւն լոյսն հրաւիրել
զձեզ։

Սակայն և դուք յայնմ՝ փոխանակ երախտեացն
սպասիս հատուցէք. զորմէ դուք իսկ նախ զձեր
զքարոզն և զհրաւիրակն զառաքեալ առ ձեզ եկեալն
սպանէք. զայն՝ որ եկեալ զձեզ կոչէր 'ի փրկական
ճանչնալ զքայութիւն տեառն մերոյ Յսի Քրսի։ Օ՛ի
թէպէտ և դուք առ ձերում անմտութիւն՝ տիրասպան
ազգին խորհրդոյն հաղորդեցայք Հրէից. զի նոքա
զտէրն կարծեցին սպանանել, հարքն ձեր զնորին ա-
ռաքեալսն սպանին. և զՀետ նորա նորին նմանին չար-
չարեցին վասն նոյն նորին իրաց։ Իսկ զկնի սորին ի
բացս այսոցիկ եկին բազմութիւք սրբոց վկայիցն ՅՍ,
նոցին Առաքելոցն Ճգնակիցք. որք մինչ 'ի վտանգ
չարչարանացն Ճգնեալք, մինչ յիւրեանց մահն, պլն-
գեալք ցուցանեն ձեզ զՀշմարտութիւն, զի թերևս
նոքաք դառնայցէք յիմաստութիւն գիտութիւն որդւոյն
ՅՍ։ Սակայն և առ նոսա լցէք կատարեցէք բովան-
դակեցէք զսովորութիւն սպանութեց ամբարշտութեցն
կամացն ձերոց։ Սակայն նորին արեամբն՝ զոր ասացի՝
բազում և պէսպէս նշանաք խրատեաց զձեզ, և 'ի մահ
ոչ մատնեաց վասն բազում ողորմութեն. և իւր մեր-
ձաւորս արար զձեզ, և խառնեաց զձեզ 'ի բնակութիւն
կենդանութիւն ընտանութիւն վարդապետութեն իւրոյ,
ուղղութիւն օրինացն, յառաւելութիւն որդւոյն սիրե-
լոյ իւրոյ։

Եւ յետ այսորիկ եթող ձեզ զամ ինաս ձեր, և ետ ձեզ վարդապետս զսիրելիս իւր։ Բայց դուք և ոչ զմի զայն ոչ յիշեցէք, ոչ եդիք 'ի մտի, ոչ կալայք 'ի սրտի, այլ յետս դարձայք հրէական ազգին նմանեալք. առէք զնոյն յանձինս ձեր զնոցուն օրինակն գործոց։ Զի պարտ էր ձեզ յիշել զերախտիսն ոմն ձերոյ Ռեմի, որ ոչ յիշեաց զմեզս հարցն ձերոց, և ոչ զանօրէնութիւս ձեր։ Եւ ձեզ անպարտ մոռանալ զՁգնութիւն հարցն սրբոցն խրատչացն և վարդապետացն ձերոց, որք ուսուցիչքն էին ձեր, որք հանապազ տքնէին վասն փրկութեան ոգւոց ձերոց. և արժան էր ձեզ ունել գութ ընդ նոսա՝ որք հոգեպէս բանին վարդապետութեան երկնեցին և ծնան զձեզ վերստին, և ըստ ձերում եղծման անդրէն դառնալոյ՝ դարձեալ միւսանգամ վերստին ընդերոյ չարեացն ապաշխարելոյ ինքեանք իւրեանց խնդրուածովքն երկնեցին զձեզ դարձեալ, մինչև կերպարանեսցին զՔրիստոս 'ի ձեզ, զի արժանի լինիջիք մտանել յերկնից յաքբայութիւն անդր։ Պատշաճ էր և ձեզ խնամել զնոցին որդիսն և զաշակերտսն, որ ըստ հոգևոր բանին ըստ ճաճային ծննդեանն էին որդիք, առաջնորդք և վերակացուք ձեր 'ի տէր. թող թէ որ մարմնապէս իսկ էին նոցա ձէտք, և հոգևոր նոցին գործոց ոչ ինչ պակաս քան զհարսն իւրեանց։

Արդ ձեր թողեալ զաճ, և յիշեցուցէք զչարիսն ձեր զառաջինս, և լցէք զչափ մեղացն հարցն ձերոց։ Որ զի նոքա սպանին զհարսն սուրբս չարչարանօք՝ վասն բարւոյն չկամելոյ լսել զոգտակարն խրատ 'ի նոցանէն, և դուք զորդիս և զժառանգս և զգործակիցս և զնմանողս նոցին սպանէք, որք ոչ հաւանեալ գործոց մեղացն ձերոց, առաքն մանուկն Յուսիկն ըզհայրապետն զաթոռակալն զվիճակակալն զվիճակին Թադէոսի առաքելոյն և զնորին նմանոյն Գրիգորի։ Եւ դուք զհրէական բարուցն բերէք զօրինակն յանձինս ձեր, սպանութեցն սովորութեց զրկութիս. որ պէս և նոքաս անխրատք զիւրեանց զառաքեալսն կամ զմարգարէսն կոտորեցին, սոյնպէս և դուք ըստ նոցին օրինակի կատարեցէք։

Արդ վասն այսչափ ստութեց ձերոց և պղծութեց,

բարձցէ՝ որ զԹագաւորութիւդ ձեր 'ի ձէնջ. բարձցէ և զքահանայութիւդ 'ի ձէնջ։ Յրուեսջիք և բաժանեսջիք, և ցրուեսցին սահմանք ձեր որպէս և Իսրայէլ, և անտէրունչք և անինայ և անինամք լինջիք. և լինջիք դուք իբրև զնաչինք, զի ոչ դուցէ նոցա հովիւք։ Մատնեսջիք իբրև զՀօտ 'ի ձեռս գազանաց, և անկջիք 'ի փառաց ձերոց. և 'ի ձեռս օտար թշնամեաց մատնեսջիք դուք 'ի դերութիւն և 'ի լուծ ծառայութեան, և ոչ բարձցի երբէք կամ պակասեսցէ լուծ ծառայութիւն 'ի ձէնջ. և ոչ երբէք պակասեսցէ լուծ չար ստրկութիւն ծառայութենն 'ի պարանոցաց ձերոց. հաշեսջիք և մաշեսջիք 'ի ցանկութիւս ձեր։ Որպէս պատառեցաւ Իսրայէլ, և ոչ կարկատեցաւ, սոյնպէս և դուք ցրուեսջիք և կործանեսջիք. և այլք վայելեսցեն 'ի վաստակս ձեր, և այլք կերիցեն զօրութիւս ձեր. և ոչ ոք գտանիցի, որ փրկեսցէ զձեզ. և ոչ հաճեսցի ընդ ձեզ տէր, և ոչ նայեսցի և ոչ փրկեսցէ այլ զձեզ։

Զ.ԱՅԼ զի կոչեցէք զիս ելանել գալ առ ձեզ, զայս՝ամ կամիք լսել դուք յինէն։ Այթէ իմ չէր զայս՝ամ պատմել ձեզ, սակայն այս՝ամ լինելոց էր ձեզ վասն սպանման արդարոյն մեծին մանգանն Յուսկան առաքինւոյն առաջնորդին ձերոյ. որ էր 'ի տանէն զաւակին Դրիգորոյ. զի այս՝ամ լինելոց է ձեզ, զի այսպէս եցոյց ինձ՝ որ։ Զ.ԱՅԼ զի յղեցէքդ առ իս, Եթէ Էկ կաց մեզ գլուխ և առաջնորդ, զիա՞րդ լինիցիմ առաջնորդ այնոցիկ՝ որք ոչ դառնայցեն զնի տեառն. կամ զիա՞րդ կայցեմ գլուխ ազգի, զորս Եթող տէրն 'ի ձեռանէ։ Կամ զիա՞րդ բառնայցեմ զձեռս իմ աղօթիւք առ՝՝ած վասն այնոցիկ, որոց ձեռք իւրեանց շաղախեալ են արեամբ սրբոց տեառն. կամ զիա՞րդ մատուցանեմք աղօթս պաղատանս այնոցիկ՝ որք դարձուցին զթիկունս առ տէր, և ոչ զերեսս իւրեանց։ Կամ զիա՞րդ եղեց բարեխօս վասն այնոցիկ, որք նբաւաձեցինն. կամ զիա՞րդ խօսիցիմ 'ի հաշտութիւն վասն այնոցիկ, որք փախուցեալն են և ոչ կամին դառնալ. որոց ինքնին տէր նիւթեաց պատրաստեաց զ՝՝ամ չարիս 'ի վերայ նոցա վասն այսորիկ, զի ասացէք թէ ոչ տեսանէ տէր զայս՝՝ամ, և որ ինչ նման է սոցին բանիցս։

Զայս բանս խօսեցաւ սուրբ Ծերունին Դանիէլ քորեպիսկոպոսն առաջի Թագաւորին Տիրանայ, և առաջի իշխանացն, պետացն և ամ զօրացն։ Եւ մինչ դեռ խօսէր նա զայս ամ, հիացեալ զարմացեալ Թագաւորն միտ դնելով լուռ ևեթ կայր։ Եւ եղև իբրև զայս ամ լուաւ, բորբոքեալ 'ի բռնաւորութիւն դառնութեանէ ամբարշտութեանէ ցասման իւրոյ. զոր տայր հրաման անդէն խեղդամահ առնել զնա։ Զոր իբրև լուեալ անդէն սպասաւորացն, կատարեցին զգործ հրամանին վաղվաղակի։ Բայց մեծամեծք նախարարացն աւագանին շատ եդին 'ի մտի արքային, զի մի՛ կատարեսցէ զչարութիւն կամացն իւրոյ. առ դառնութեանէ սրտին ցասման, առ զայրուցս բարկութենն, ոչ ինչ անսաց նոցա. այլ Ճոպան 'ի փողս եդեալ, խեղդամահ արարին զնա։ Զայսպէս կատարեցաւ սուրբն Դանիէլ։

Եւ բարձին զմարմին նորա բազմութեամբ մարդկան, որք տեղեակ էին նմա, և գիտէին զնա. և կամեցան մեծարել զնա ընդ ոսկերս սուրբ վկայիցն Աստի։ Զայս ինքն յայտնեալ երևեցաւ առն սրբոյ աշակերտին իւրում, որոյ անուն կոչէր Եպիփան, զի մի՛ 'ի պատիւ առցէն զոսկերս նորա իբրև զայլոցն. այլ տարցին 'ի տեղին՝ ուր ինքն հրամայեաց, և ծածկեսցեն ընդ հողով։ Զի այսպէս յայտնեալ բարբառեցաւ նոցա. զի եթէ տերունական մարմինն, ասէ, 'ի գերեզմանի ծածկեցաւ աւուրս երկուս մինչև ցօրն երրորդ՝ յորում յարեաւ առ հայր իւր, որչափ ևս առաւել պարտ է մերում հողեղէն մարմինս ընդ հողով ծածկել։ Զայս բարձին զմարմին նորա Եպիսկոպոսն աշակերտք, որոյ գլխաւորին անուն էր Շաղիտա, որ 'ի նմանէ իսկ աշխարհին Կորդուաց վարդապետ տուեալ էր. և երկրորդին անուն Եպիփան, որ գաւառին Աղձնեաց և մեծաց Ծոփաց 'ի նմանէ իսկ վարդապետեալ էր, և ընդ նոսա պաշտօնեայք բանակին։ Եւ գնացին տարան. եդին զմարմինն 'ի տեղւոջն՝ ուր յառաջագոյն էր կայեանք խցկանն իւրոյ յերկրին Տարօնոյ, որ էր մայր եկեղեցեացն Հայոց, մօտ յակն աղբերն՝ ուր առնէր Գրիգոր զմկրտութիւնն աշխարհազօր բազմութեանն, 'ի տեղւոջն՝ որ

մնուանեալ կոչի Հայոց դրախտ։ Յայնմ տեղւոջ ծածկեցին զմայրին սրբոյն Դանիէլի ընդ հողով, ըստ յառաջագոյն տեսլեանն ըստ հրամանի նոցա տուեալ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս որդւոյն Յուսկանն, թէ որպէս ընթադրեալ ընդ ոսն հարին զքահանայութեան ՅՍ զպատիւ։

ԶԱՆ խորհուրդ արարին մատուցանել զորդի սրբոյն Յուսկան 'ի քահանայութեան հարցն վարդապետութեան։ Զպա առանց իւրեանց կամացն ըմբռնեցան, և բռնաբարեցան 'ի միաբանութեան եպիսկոպոսացն. զի կալեալք, ակամայ առեալք զձեռնադրուն սարկաւագութեան՝ հարկեցան Պասն և Զթանագենէս։ Որոց հարեալք զաւանդն հոգևորն պատուի, անձամբ զանձինս իւրեանց խստարատուր [1] յարուեստն զինուորութեան զինեցան, և յերկիր կործանեցան։ Զոր ընտրեցին զերկրաւոր կեանս, և առին ևս իւրեանց կանայս զքորս Թագաւորին, և մերժեցին զանձինս իւրեանց 'ի ժառանգութենէ ՅՍ։ Բայց անուանք կանանց նոցա, անուն կնոջն Պասայ՝ Ա՝ արազդուստ, նոքա անորդիք անզաւակ եղին յաշխարհէ. անուն կնոջն Զթանագենի՝ Բամբիշն, 'ի սոցանէ ծնաւ այր զանչեղի և զարմանալի 'Ներսէս, որ առ յապայն է կաց քահանայապետ։

Բայց յայնմ ժամանակի ոչ զք գոյր, որ առաջնորդեր նոցա զքահանայապետութեան։ Զպա խորհուրդ արարին՝ թէ զի գտցեն իւրեանց առաջնորդ. ապա կամ եղև ամենեցուն առ հասարակ, զի 'ի նմին տանէ իշխանութեան Գրիգորի գտցեն, որ կալցի նա զաթոռ հարցն։

1 Յերկուս օրինակս խոտորատոր։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս Փառէնայ, որ կալաւ զաթոռ Հայրապետացն։

ՅԱՑՆՄ ժամանակի համարեցան արժանի զՓառէն ոմն երեց, 'ի գաւառէն Ցարօնոյ, 'ի մեծէ մարգարէանոցէն Յովհաննու, որ էր նախ շինեալ տուն աղօթից և խնդրուածոց 'ի հանգիստ սրբոցն, զի տեղին այն նմա էր հաւատացեալ։ Այսպա կոչեցին զնա առ արքայն. և առաքեաց զնա պատարագաբ թագաւորն, և հրովարտակաբ և Ճոխ իշխանաբն՝ որ ընդ նմա առաքեցանն։ Մեծ զօրավարն Հայոց՝ որում անուն էր Վասակ, 'ի մամիկոնեան տոհմէն. և Մեհենդակ ըռըշտունի, և Ընդովկ սիւնի. և Ռշաւիր կամսարական, մեծաբ և գլխաւորաբ նահապետաբ. և տասն այր այլ, արք պատուականք, առին զնացին զՓառէն 'ի մայրաքաղաքն Գամրաց 'ի Կեսարիա, և անդ ձեռնադրեցին զնա 'ի կաթողիկոսութիւն Հայոց մեծաց։

Եւ գան դարձեալ յիւրեանց աշխարհն խաղաղութիւն։

Եւ նստաւ Փառէն յաթոռ Հայրապետական սակաւ ժամանակս. և այլ ինչ չհամարձակէր նա կամ խրատել ինչ, կամ յանդիմանել զմոլորութիւն ինչ զուրուք կամ զամբարշտութիւնս։ Այլ միայն զիւր անձն սուրբ պահէր, և 'ի հարկէ ընդերկր անօրէն թագաւորին, և ըստ նորին կամացն երթեալ հնազանդեալ։ Եւ յետ այսորիկ հանգեաւ, և յաւելաւ առ հարս իւր. և առեալ պաշտօնէիցն եկեղեցւոյ բանակին զմարմինն, զնացեալք 'ի գաւառն Ցարօնոյ՝ տարան 'ի յագարակն մեծի մարգարէանոցին Յովհաննու, որ էր ինքն 'ի կենդանութեն իւրում յառաջագոյն բնակեալ. և անդ գեղեցիկ շիրիմ գործեալ, և զսորա ոսկերս ծածկեցին։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Յաղագս Շահակայ՝ որ էր 'ի զաւակէ Աղբիանոս եպիսկոպոսի, որ յաջորդեաց զտեղի հայրապետացն աթոռոյն. և կամ որպէս երկիրն Հայոց ամ թողեալք զոր և զպատուիրանս։

Այս յայսմ ժամանակի միաբան խորհեցան աշխարհօրէն խորհուրդ, եթէ ո՛ւմ պարտ իցէ զհայրապետութիւնն զկաթողիկոսութիւնն ունել։ Այս իբրև ոչ ոք գոյր 'ի տանէն Գրիգորի այնմ արժանի, այս նմանեցուցին զՇահակ ոմն անուն 'ի տոհմէ զաւակին Աղբիանոս եպիսկոպոսին։ Եւ տան զնա 'ի ձեռս իշխանին մարդպետութեանն, որում անուն էր Հայր կոչեր. և յաւագաց գումարեն ընդ նմա զիշխանն Գարդմանաց ձորոյն. և առնեն ընդ նոսա այլ տասն նախարարս. և յուղարկեցին զնա մեծաշուք պատուով յերկիրն Գամրաց 'ի մեծ քաղաքն Կեսարիա։ Ընդ ձեռնադրեն զՇահակն 'ի կաթողիկոսութիւն Հայոց մեծաց, և պատուով դառնան առ թագաւորն։

Եւ յաջորդեաց զտեղի հայրապետացն Շահակն. և սա նմանեաց վարուցն Փառենայ։ Բաւականորդեր սա աշխարհի ըստ նմին օրինակի։ Բայց որոց հովուէրն՝ չեղեալք ունէին ինչ խրատու ճշմարտութեանն, այլ յանդիմանեալք՝ հոլանեալ գործէին զմեղս հաւմարձակութիւն՝ առանց խիթի յամ չարիս դարձեալք, թողեալք զտէր և զպատուիրանս նորա առ հասարակ թագաւորն և նախարարքն և իշխանքն։ Եւս չար քան զնոսա առ մարդիկ մարդկանն ամբարշտեալք, 'ի հնութենէ առաջին գործոցն հարցն իւրեանց դարձեալք, 'ի փոքրկանց մինչև ցմեծամեծս 'ի յայս էին հարեալք և 'ի սոյն կանխեալք։ Վասն այսորիկ ամի բարկացեալ տէր ամ 'ի վերայ նոցա՝ եթող 'ի ձեռանէ, արար զնոսա կոխան 'ի յարուցելոցն 'ի վերայ նոցա թշնամեաց նոցա։ Զանազի 'ի ժամանակաց 'ի թագաւորութենէն Տրդատայ, յորմէ հետէ զոր ինչ ճանաչելոյ՝ արար խաղաղութիւն, և լուեցոյց շուրջ

զԹշնամիս նոցա, զի ցածոյց տէր զմարտ պատերազմացն 'ի սահմանաց նոցա, և մինչև յայն ժամանակ ոչ ընդ ումեք բանք գոյին ամբոխի կամ խռովութիւն, և 'ի մեծի խաղաղութիւն էին բնակեալք։ Այլ 'ի ժամանակին յայնմիկ յարոյց զօրացոյց զգրգռութիւնս սահմանակցաց շուրջ յամ կողմանս զԹշնամիս նոցա. և ոչ մի ոք 'ի Թագաւորացն Հայոց ոչ ոք գտանէր նոցա բարեկամ, այլ ամենեքեան Թշնամիք։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս Հայոց մարդպետի, որ տայր կոտորել զազգս նախարարացն։

Բայց յայնմ յանմիտ Թագաւորութեն ժամանակի ոչ միայն Թշնամիք Թշնամեաց, և բարեկամք բարեկամաց և ընկերք ընկերաց դաւաճանութիւնս մատնութիւս սկսան յարուցանել 'ի մէջ հայաստան երկրին, և բեւր ազգի ազգի Թշնամութիւս գործէին։ Այսն զի անկաւ 'ի նոսա խռովութիւն 'ի տեառնէ, այս պղծութեն և ոգի մոլորութեն. զի նախ միմեանքք քանդեալք աւերեցան վասն անօրէնութեն իւրեանց։ Բայց քան զամենեսին աւելի այր մի անօրէն և այսամուտ, որ աւելի ընդ ազգս նախարարացն գրգռէր զԹագաւորն Տիրան։ Այս ինքն որ ունէր զպատիւն մեծի մարդպետութեն, այր ներքինի՝ չարասիրտ չարախորհուրդ չարագործ, որում Հայր կոչէին։ Զքաղաքն 'ի նախարարացն եւ քսութեամբ առանց ինասու կոտորել, և խանգարեաց զմեծ տերութեն Թագաւորութեանն։ Մանաւանդ աւելի զերկու տոհմն զաւագս տայր իւրով չարախօսութեամբն հանել ընդ սուր, և անուանդ առնել միահաղոյն զտոհմն Ուրշտունեաց և զտոհմն Աղձրունեաց. բառնային 'ի միջոյ առանց ամ ինասու և յանցման, մինչ անդամ և զեղն կոտորեցին ազգացն։ Յայնմ ժամանակի 'ի գայթակղի գտանէին 'ի դայեակս մանկունս փսխստեայս, զՅա-

ՀԱՏ որդի Մեհրնդակայ ըուրշտունեաց. և միւս և Շաւասպ որդի Վաչէի արծրունեաց. տղայք ստընդինայք, զոր ածին առաջի Թագաւորին։ Իբրև տեսանէր, տայր հրաման հանել փողոտել զմանկունսն. զի նոքա ևեթ ՀԵՏ մնացեալ էին յաղգացն։ Եւ անդ դիպեալ Աբուսաղդ և Վասակ, որք 'ի մամիկոնեան տոհմէն, որք էին զօրավարքք ամ զօրացն Հայոց, որք յարուցեալք անկան 'ի վերայ մանկանցն տղայոց, մէն մի յանԹի հարեալք՝ 'ի դուրս գնացին. զէնն 'ի վեր առեալք, կռուոց պատրաստէին՝ 'ի վերայ այնց մանկանց մեռանել։ Օ՛ի Թէպէտ և մնուցանէին նոքա զորդին զարքային զԱրշակ, սակայն զչարեալք ընդ գործ ժամանակին՝ Թողին զսանն իւրեանց զԱրշակ, և գնացին 'ի բաց 'ի բանակէն արքունի։ Եւ չոգան յաշխարհն իւրեանց յամուրս Ցայոց. և անդ նստան ամն բազումս ընտանեօք իւրեանց, և Թողին զայլ զտուն իւրեանց։ Եւ մնուցանէին զայն մանկունսն, զՇաւասպն և զՏաՀատ. և ետուն նոցա զգաստերս իւրեանց 'ի կնութեան, ուստի դարձեալ միւսանգամ ազգն այն սերեցան. և ոչ խառնէին նոքա 'ի խորհուրդս Հայոց մինչև 'ի բազում ամս։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս որդւոցն Յուսկանն, Պապայն և Ամանագէնին, Թէ զիարդ կամ ինչպէս սատակեցան յանօրէնութենէ իւրեանց։

Ամենայն որդիքն Յուսկանն, Պապն և Ամանագենէս, յաճատեցութենն զկեանս իւրեանց վարեցին. յանօրէնութենէ և յամբարշտութենէ շրջէին։ Եւ զամ աւուրս կենաց իւրեանց 'ի մեծի յանդգնութենէ էին, և ոչ երկեւղ այ առաջի աչաց նոցա. և 'ի բազում անառակութենէ և 'ի գիջութենէ գնային, և զկարգն այ արհամարհեալ այպանէին։ Եւ էին նոքա յերկրին

Տարօնոյ Այկեղեցւոջ յաւանին Աշտիշատ. ուր զառաջինն էր շինեալ զեկեղեցին 'ի Հաւոյն Նոցա Գրիգորէ։ Յայն դեւդ երկոքեան եղբարքն երթեալք հասանէին Պասն և Թանագէնէս։ Նու բազում հատեալ յարբշռութիւն, զնոյ զտաճարաւն այսն առնէին. և երթեալք երկոքին եղբարքն մտանէին յեպիսկոպոսանոցն՝ որ էրն անդ, և ըմպէին անդ գինի բոզոք և վարձակոք և գուսանոք և կատակոք. զսուրբ և զնուիրեալ տեղոքն քամահեալ, կոխան առնէին։

Նու մինչ էին յուրախութիւն մեծի, բազմեալք էին 'ի ներքս եպիսկոպոսանոցին ուտէին և ըմպէին, յան կարծակի հրեշտակ 'ոն երևեցաւ 'ի նմանութիւն փայլատական, և հարեալ սատակէր զերկոսեան զեղբարսն միանգամայն 'ի բազմականէն անդ։ Նու այլ մարդիկն՝ որք էին անդ, որք տաճարակիցք էին ուրախակիցք և բազմականակիցք էին, որք միանգամ անդ դիպեցան, առ հասարակ թողին և փախեան, և էլին արտաքս 'ի տաճարէ անտի։ Նու յահէն մեծէ այլ ոչ ևս որ 'ի նոցանէ դարձաւ անդրէն. և ոչ որ իշխեաց բնաւ այլ մարդ 'ի մարդկանէ մտաբերել մտանել 'ի ներքս, և ոչ 'ի դուրսն հուպ երթալ և դնել, քանզի 'ի բաց մնաց 'ի փախչելն նոցա. և ոչ յայլ աւուրս որ առ դրօքն իշխէր անցանել։

Նու Պասն և Թանագէնէս երկոքեան եղբարքն այսպէս սատակեցան. անկեալ դնէին 'ի ներքոյ եպիսկոպոսանոցին 'ի տեղւոջն բազմականացն։ Նու դրունք տաճարին 'ի բաց կային, և որ հուպ չիշխեր երթալ. մինչև նեխեցան մարմինք նոցա և կողոպտեցան, և յաղկեցան. քակեցան լուծան 'ի միմեանց, ցրուեցան ոսկերք նոցա։ Նու բազում ամիսք անցանէին 'ի վերայ իրացն, ապա իշխեցին մտանել ժողովել բառնալ հանել անտի զոսկերս նոցա. և դտանէին զնոսա լոկ ցամաքեալ զկճղացեալ զոսկերս նոցա. և հանէին յայգւոջն եկեղեցոյն, որում Աղարակն կոչէն։ Բայց մնաց Աթանագէնի որդի 'ի Բամբրշնէ 'ի քեռէ թագաւորին, և անուն նորա Ներսէս. որ եկաց յաթոռ հայրապետացն առ յապայ ամ երկրին Հայոց։ Բայց Պապայ 'ի բուն 'ի կնոջէն ոչ մնաց, այլ էր նորա հարճ մի 'ի գաւառէն Տարօնոյ, 'ի Հացեաց գեղջ

կարձաղատացն. և մնաց որ 'ի հարձէ անտի 'ի Հայ-
ցեկացուցն, որում անուն իւր [1] որդւոյ հարձին Ալրիկ
կոչէր։

Գ. ԼՈՒԻՍ Ի.

Յաղագս Տիրանայ Թագաւորի, թէ որպէս մատնեցաւ յիւրմէ սենե-
կապետէն Փիսակայ անուանոյ. և որպէս կորուսաւ և գերեցաւ 'ի Վարա-
զայ, և կամ որպէս ամ երկիր ընդ նմին գերեցաւ։

Ընացեալ դեռ բարեկամութիւն էր 'ի մէջ Թագաւո-
րացն երկոցունց, 'ի մէջ Թագաւորին Հայոց և Պար-
սից։ Այսուհետ յաշխարհին ատրպատական որում ա-
նուն կոչէր բարձրահին իւրում՝ Շ ապուհ Ալ արազ։
Բ.ոլոր մինչ դեռ ևս յոյժ խաղաղութիւն էր 'ի մէջ Թա-
գաւորացն երկոցունց, անկաւ 'ի ենէ խռովութիւն
ոչինչ բանիւք՝ արամբ միով անարգաւ, որ ոչ ինչ պա-
կաս քան զդև էր մոլորութիւն, որոյ անուն Փիսակ կո-
չիւր. որ սենեկապետն էր արքային Տիրանայ, աղ-
գաւ սիւնի։ Այս դեսպանագնացեալ էր առ Ալ արազ
Շ ապուհ, զոր Թողեալն էր սահմանապահ արքային
Պարսից յատրպատական աշխարհին։

Օ այնու ժամանակաւ ձի մի էր երիվար արքային
Տիրանայ, զորմէ կարի զարմանային։ Այս էր ձին գու-
նով ճարտուկ ճանճկէն. սա լի էր քաջութիւն, անուա-
նի և հոյակապ, մեծ և բարձր երկայն քան զամ ձիս,
և տեսանելով քան զայլս գեղեցիկ, զանազան՝ որ հա-
մեմատ նմա այլ ոչ գտանէր։ Զորմէ յերեթանն իւ-
րոյ դեսպանութենն՝ սենեկապետն արքային Փիսակ
մատնեաց զձին Ալ արազայ, վասն զի բարեկամացեալ
էր ընդ նմա. և 'ի նմանէն ինքն թուղթ առեալ, բե-
բեալ մատուցանէր արքային Հայոց։ Զորմէ չհա-
ւանեալ, տալ ոչ առնոյր յանձն։ Ալ վասն զի կաս-
կածէր յառնէն զի գոյժ խռովութիւն ինչ 'ի մէջ Թա-

1 Ցամ օրինակս որում անուն էր որդւոյ։

գաւորացն երկոցունցն արասցէ, 'ի խնդիր անկանելոյ զնոյն գոյն ձի, զնոյն նշան, զնոյն պատկեր, բաց 'ի մեծութենէ՝ զի այնչափ ուրեք ոչ գտանիցի, զնոյն նման զնոյն կերպարանս ձարտուկ ձանձկէն գտեալ, և հանդերձ հրովարտակաւք և պատարագաւք 'ի ձեռն մի լեկան փիսակայն առ իշխանն յԱ՛տրպատական առ Վարազն արձակեր։ Եւ միտս դնելով խորհուրդ առնէր. զի ասասցես, ասէ, եթէ այս ինքն է զոր խնդրեցերն, զի առ սէր ոչ խնայեաց 'ի քէն։ Իսկ նա յորժամ հասեալ առ Վարազն, յայտ առնէր զիրս խնայութեանն, 'ի գրգռութիւն ջնայեալ՝ ոչ կամէր բժշկել զնենգախօսութիւնն իւր. այլ ևս քան զևս սրեալ զչարախօսութիւն իւր, ասելով եթէ այնչափ 'ի հեռ և 'ի նախանձ, 'ի չարակնութիւն և 'ի թշնամութիւն, 'ի յատելութիւն և 'ի չկամութիւն, յերկմտութիւն և յաներկիւղութիւն առ թագաւորն Պարսից և առ ամ զօրսն Պարսից արքայն Հայոց Տիրան, մինչ անգամ վասն կաշոյ միոջ խնայ արարեալ՝ թագոյց, և զքեզ ծաղր արարեալ, և այլ ընդ այլոց զմիտս գողանալ քո. զոր յիմ ձեռն ետ ածել, առ քեզ առաքեաց։ Եւ ոչ այդ միայն է, ասէ. այլ 'ի կայսր և 'ի զօրս նորա յուսացեալ, խորհի հանել զթագաւորութիւն Պարսից յազգէն Վասանայ. զի ասէ, թէ մեր լեալ է և հարցն մերոց այն տէրութիւն։ Զդրդ ասէ, թէ չեմ ծուղալոց՝ մինչև դարձցի պատիւ հարցն նախնեաց. զնախնի զթագաւորութիւն այսրէն առ որդի և առ զաւակ նոցա յազգս իմ և 'ի տունս իմ և յանձն իմ դարձուցանեմ։ Եւ այսչափ և այսպիսի բանիւք գրգռէր զնա փիսակն անօրէն 'ի վերայ ոն իւրոյ քնակի, և նիւթէր զմահ 'ի վերայ իւրոյ թագաւորին։

Զպա իբրև զայս ամ լուաւ Վարազ Շապուհ ա՛տրպատական մարզպան 'ի կատաղախօս 'ի Շնաբերանն Փիսակայ, վաղվաղակի նամակ ամբաստանութեան գրեալ Վարազայ յարքայէն Հայոց մատուցանէր Ներսեհի՝ արքային Պարսից։ Եւ այնչափ զայրացոյց գրգռեաց յուզեաց դրդեաց սրտմտեցոյց բարկացոյց զթագաւորն Պարսից 'ի վերայ արքային Հայոց, որ ապա առ հրաման 'ի նմանէ, զի չև է հնար գտանել

մարթել Ճանապարհս, մեքենայիւք գայթակղութիւն դնել՝ որսալ ըմբռնել զարքայն Հայոց։ Եւ մինչ դեռ խաղաղութիւն էր 'ի մէջ Թագաւորացն երկուցունց, բարկուն ոն դրդռեաց յուղեաց զվրէժս, զի խնդրեսցին սուրբ արիւնք մահուանն երկուց մեծացն քահանայիցն առաջնորդացն յանօրէնն Տիրանայ։

Այս յայնմ ժամանակի Ա արաքն արձակէր դեսպան առ արքայն Հայոց, 'ի հաշտութիւն խաղաղութեան դաւով խօսել ընդ նմա. զանձուկ սիրոյ պատճառեալ, համարձակութիւն խնդրէր՝ գալ նմա առ նա։ Իսկ իբրև լուաւ զայն Տիրան արքայն Հայոց, փութապէս վաղվաղակի մեծաւ ուրախութիւն առ ինքն կոչել հրամայէր։ Եւ մինչ չև նա եկեալ էր, խորհէր արքայն ընդ իւր ծառայսն ներքինիսն սպասաւորսն իւրում սենեկի. ասէ. Արժան է մեզ, այր որ գայ առ մեզ՝ զբօսուցանել և ուրախ առնել որսովք և բաղմականօք, և եամ պէսպէս վայելչութիւք։ Արդ ոչ եթէ այնչափ ինչ արժան է զմեծ ինչ որսոյ տեղիս 'ի մերում երկրի ասա նմա տեսանել՝ վասն չարակնութեան յաչաղանաց չարաբարութեան նենգութեան ազգին պարսկաց. այլ նմանեցուցէք տեղիս դոյզնագիւտ որսոց ինչ՝ որով լոկ զբօսուսցուք զնա, և մի՛ որ սասցուք զառատ ինչ որսոց զտեղիս, և զի մի՛ մեծ ինչ նախճիրս որսոց կոտորեալ առ 'ի ցոյցս առնելոյ։ Արդ վարկպարազի արասցուք, ասէ, վասն դառնացող չար ազգին չարութեան դառնացող ազգին։ Արդ յերկրին Ապահունեաց, յոտինն մեծի լերինն Մասեաց, տեղին զայն որսասցուք. տեղւոյն՝ որում անուն կոչի քաղաք Աղիորսք։

Այս եկն ԵՀաս Շ ասուՀ Ա արաքն երիւք հազարօքն, և յանդիման եղև Թագաւորին յերկրին Ապահունեաց. և մեծապէս մեծարեցաւ 'ի նմանէ։ Եւ այն բանքն, որ վասն որսոյն 'ի Թագաւորէն ասացաւ, վաղվաղակի յունկն զօրավարին Պարսից հասանէին 'ի բերանոյ շորիկն շոգմոգն տիրանենկն և տիրադրուժն տիրասպանուն տիրամատնիչն Փիսակայ, յայն յաշխարհակորոյս յառնէ անտի. և աւուրս սակաւս ուրախ լինէին 'ի միասին։ Արդ իշխանն Պարսից զթշնամութիւն, զոր ունէր 'ի ներքոյ, խորամանւ

գեալ ծածկեալ մեքենայեալ առագաստեալ բերեր, և առնէր սպաս զգաւն կատարել։

Եւ 'ի ժամանակին յայնմիկ այնպէս դիպեցաւ, յայնմ ժամանակի զօրավարքն չէին անդ, այլ սարտուցեալ էին. և այլ մեծամեծք նախարարացն, և աւագ տանուտէրք ազատանէին. սոյնպէս և զօրքն արքունի յիւրաքանչիւր տունս յիւրաքանչիւր կայեանս յիւրաքանչիւր դաղարս դաղարեալ էին։ Եւ ոչ ոք էր՝ որ մնացեալ էր առ Թագաւորին, և ոչ գունդ և այրևձի. բայց միայն սակաւ սպասաւորք հանդերձ, և որսոցն պառականօք, և ռահվիրայ մարդկաւն, և խառնաղանջ խորանապահ զօրուն, և ռամիկապաս զօրքն, և տիկնաւն հանդերձ և արքայորդին Մանուէլն Բ.ըշակ։ Բ.այսպէս սակաւուք դիպեալ 'ի ժամանակին յայնմիկ, զի Թէպէտ և տեսեալ հարուստ գնդաւ եկեալ զօրավարն Պարսից, զի էին ընդ նմա սպառազէնք վառեալք արք իբրև երեք հազարք, ոչ ինչ խիթացեալ զգուշաւ անկասկած լինէր։ Վանզի տեսանէր զնա իբրև 'ի պատճառս խաղաղութեան եկեալ, մեծաւ պատարագաւ և պատուական ընծայիւք և մեծաշուք մեծարանօք։

Եւ իբրև ոչ ինչ բազում աւուրք ընդ մէջ եղեն, յընթրիս կոչէն 'ի հաց հրաւիրեալ զարքայն. 'ի սպատիս մեծարանաց կոչէր։ Բ.այս իբրև ընդ գինիս մտին, քաջ արբեալ լինէին Թագաւորն և որ ընդ նմայն էին, զօրն դարանակալ յանպատրաստից յանկարծորէն յայլակարծուց զնոսա յանկարծուստ յիւրաքանչիւր բազմականի 'ի վերայ հասեալք ըմբռնէին, և վահանափակ շերտաւորացն պատէին զԹագաւորն Տիրան։ Եւ կալեալ կապեալ զոտս և զձեռս նորա 'ի կոպս երկաթիս, և զբանակն՝ զոր դտանէր՝ աւար հարկանէր. և զդանձս և զստացուածս զկին և զորդիս Թագաւորին, զոր դտին 'ի բանակին, խաղացուցին յերկրէն Բ.ահունեաց։

Իբրև եկին հասին 'ի գեւղ մի, որում անուն Դալարիս կոչէին, յորժամ եկն եմուտ զօրավարն Պարսից 'ի նեղքս 'ի գեւղն Դալարիս, ածէր կապեալ զարքայն Տիրան ընդ իւր։ Եւ ասէ Վ.արազ. Բ.զէ՝ տեսէք ածուղ, որով երկաթ շղաղացուցցուք, զի զաչս

խարեացուք զարքայիս Հայոց։ Եւ անդէն բերին ա-
ծուղ, որով խարէին զաչսն Տիրանայ։ Ապա ինքն խո-
սել սկսաւ Տիրան, և ասէ. Փոխանակ զի իմ երկու
աչքս լուսաւորքս խաւարեցան յայս տեղւոջս, արդ
փոխանակ Դալարեացս անուան, Ա՛ծուղ անուն լի-
ցի սմա մինչև ցյաւիտեանս ժամանակաց. և այս ե-
րևոյթ նշանակս մնասցէ յիմ յիշատակի։ Ա՛յլ ինձ
յուշ եղև և գիտեմ՝ թէ այն զի խնդրեցաւ յինէն
վրէժ չարեաց մեղացն իմոց, փոխանակ զի խաւարե-
ցուցի ես զաշխարհս՝ որում թագաւորեալ էի՝ յեր-
կուց լուսաւոր վարդապետացն, և կարծեցի շինուցա-
նել զայսն Ճշմարտութեան քարոզութեան երկուց հա-
ւատարմացն, վասն այսորիկ խաւարեցաւ լոյս տեսա-
նելեաց աչացս իմոց։

Եւ յայնմ ժամանակի վաղվաղակի փութանակի
չու առնէր Ա՛ծուղ գեղջէն, խաղայր գնայր Ճեպով
իշխանն արքային Պարսից հանդերձ Տիրանաւ ար-
քայիւ և ՝ամ գերութեան յերկիրն Պարսից. և եր-
թայր յասորեստան առ տէրն իւր յարքայն Պարսից։
Լ՝ու եղև այս ՝ամ կործանումն գուժի չարեացն յան-
կարծօրէն թշուառութեան հասելոյ։ Ապա ժողով լի-
նէր նախարարացն և իշխանացն, գործակալք և զօ-
րագլուխք, պետք և ՝ամ աշխարհաժողովք բազմու-
թեանն եկելոց կուտելոցն։ Ամենեքեան և ժողովեցան
կազմեցան գունդ եղէն, պատրաստութիւն զհետ կըր-
թէին Ա՝ արազայ, ոչ ինչ կարացին հասանել։ Սա-
կայն հասանէին առնուին զկողմ՝ի Պարսից աշխար-
հէն. առ հասարակ մնրդակոտոր առնէին, և զաշ-
խարհն յայրեաց և յաւար դարձուցանէին։ Եւ ինչ
քեանք դառնային, և ՝ի մի վայր ժողովէին, կոծ ե-
դեալ աշխարանօք լային զիւրեանց բնական տէրն
զարքայն Հայոց. սոյնպէս և զկորուստ աշխարհին,
և զանձանց անտէրջութիւն կործանմանն վարանացն
աղիողորմ գործէին։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս թէ որպէս ժողովեցան միաբանութիւն նախարարքն Հայոց, և զոգան ածին զԹագաւորն Յունաց՝ Իւրեանց 'ի Թիկունս օգնականութեան 'ի յերկիրն Հայոց. և թէ որպէս եկն Թագաւորն Պարսից բազում զօրօք, և միաձի Ճողոպրեալ փախչէր յերկիրն Պարսից։

Այլ առաւել ժողովեցան 'ի մի ժողով միաբանութեն մարդիկ աշխարհին Հայաստան երկրին. նախարարքն մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք. բայց 'ի զօրավարացն, այլ և 'ի շինականաց անգամ ռամիկ մարդկանն։ Այսպա խօսել սկսան այր ընդ ընդերի, և ասեն. Զ՞ինչ է այս, որ 'ի սուգ մտեալ եմք. Թշնամիք այսու գամագիւտ լինին. այլ քան սակաւ ժամանակք են, այսրէն արշաւեսցեն Թշնամիքն։ Այլ եկայք, ասեն, զանձինս անձամբք մխիթարեսցուք. անձանց և աշխարհի պահ կալցուք, և զտեառն քնակի վրէժ խնդրեսցուք։ Այսպա առ հասարակ ամ մարդիկ աշխարհին 'ի մի միաբանութիւն և 'ի մի խորհուրդս ժողովեցան վասն օգնականութեանն և 'ի Թիկունս իւրեանց գտանելոյ։

Յայնմ ժամանակի առաքեցին 'ի մեծ նախարարաց անտի աւագանին Հայոց հանդերձ պատարագօք առ Թագաւորն Յունաց, զի 'ի նա ձեռս տուեալ՝ ծառայեսցեն նմա հնազանդութեամբ, և լինիցի նա նոցա Թիկունք օգնականութեան՝ խնդրել վրէժս 'ի Թրշնամեաց նոցա։ Այսպա առաքեցին զԱնդուվկ նահապետն Սիւնեաց, և զԱրշաւիրն կամսարական, նահապետն Աղշարունեաց։ Որք երթեալ հասեալ էին յաշխարհն Յունաց 'ի կայսերական պաղատն Թագաւորացն. և տային զհրովարտակն, և ունէին զպատարագն բերեալ առաջի, և մատուցանէին զաշխարհապաղատ պատգամն առաջի Թագաւորին։ Զոր իբրև լուաւ կայսրն զերան զայնոսիկ, մեծաւ փութով և բազում պատրաստութեամբ 'ի խնդիր ելանէր իրին հասելոյ. և օգնական և Թիկունք լինէր աշխարհին

Հայոց։ Մանաւանդ զի զուխտն յիշեալ զդաշանցն կռելոց զերդմանցն հաստատութեամբ, միջնորդութեամբ'ի մէջ կայսերն Կոստանդիանոսի և 'ի մէջ Թագաւորին Տրդատայ եղեալ էր։

Զոր մինչ դեռ դեսպանքն երթեալք յերկրէն Հայոց'ի կայսերական պաղատն չև էին անդրէն յիւրեանց աշխարհն դարձեալ, 'ի կողմանց արևելից խաղաց գնաց ինքն Ներսէհ արքայն Պարսից, գալ առնուլ այրել և աւերել, կորուսանել և միահաղոյն իսկ յիւր վտարել զսահմանս Հայաստան երկրին։ Նա առեալ զնա զոր իւրքնիւ աղխիւ և ամ մեծաւ կարաւանաւ, փղակոյտն բազմութեամբ հանդերձ, անթիւ վաճառաւք և քնիւն մաշկապաճենաւքն, և ամ կանանաւքն, և հանդերձ տիկնանց տիկնաւն, եկն եհաս 'ի սահմանս Հայոց. խաճողեաց ելից զերկիրն առ հասարակ։ Յայնմ ժամանակի աղատաղօրքն նախարարացն Հայոց առեալք զիւրաքանչիւր ընդանիս, լինէին փախստականք, 'ի կողմանս Յունաց անդանէին, զոյժ տային կայսերն բազմագունդ բանակին նախարարացն։ Զպա իբրև զայս ամ լսեր Թագաւորն Յունաց, նոյնօրինակ և նա զիւր զօրսն գումարեր. և չու արարեալ գայր հասաներ յերկիրն Հայոց ընդդէմ Թագաւորին Պարսից։ Նա եթող զիւր զբանակն զՍատաղ քաղաքաւն. և ինքն ընտրեաց իւր արս երկուս գլխաւորս, արս ի մասատունս Հայաստան բանակէն, այս ինքն զԱրշաւիրն և զԱնդովին. զի այս արք էին, որ չոգան առ նա դեսպանութեամբ յառաջնում նուագին։ Նա այսպէս հանդերձ նոքօք ինքն իսկ կայսրն 'ի շինականութեամբ կերպարանս, 'ի կաղամբաւաճառի օրինի, մտաներ 'ի բանակն Պարսից։

Իբրև էր նա բանակեալ 'ի գաւառին Բասենոյ, 'ի գետն՝ որ անուանեալ կոչի Ոսխայ, եկին մտին 'ի բանակն արքային Պարսից, դիտեցին քննեցին զչափ առին զնոցա զօրութիւն զօրացն։ Նա անտի դարձան յիւրեանց բանակն, կազմեցան պատրաստեցան. գային հասանէին գտանէին զբանակն արքային Պարսից 'ի նմին տեղւոջ բանակեալ 'ի պղերգութեամբ յանհոգութեամբ յանկասկած խաղաղութեամբ։ Զպա հասեալ 'ի տուընջեան ժամուն, անկանէին 'ի վերայ Թագաւորին

Պարսից, ընդ սուր զամ բանակն հանէին, և ոչ զմի ոչ ապրեցուցանէին։ Այլ առին զկապուտ զաւար բանակին, և զկանայս Թագաւորին և զբամբիշն, և զբանական ընդ նոսին, և զինչս և զստացուածս նոցին ընդ նմին 'ի գերութիւն վարէին, զկանայս նոցա և զդանձս և զկեանս և զկազմած նոցա։ Բայց միայն Թագաւորն պրծեալ մազապուր, պեշասպիկ[1] մի սուր հանդակ առաջի, պրծեալ ելանէր փախստական. հազիւ ուրեմն կարէր անկանել հասանել յաշխարհ իւր։ Իսկ կայսրն մեծաւ շքեղութիւն անուանի պերճացեալ 'ի մէջ բանակին երևեալ. զայր 'ի չափ հասեալ առ հասարակ կոտորէին, և զայլ ամ 'ի գերութիւն վարէին յերկիրն Յունաց։ Այլ 'ի վերայ երկրին Թողոյր զիշխանսն վերակացուս զԱնդովկ և զԱրշաւիր, մեծապարգև մեծապատիւ մեծարէր. և յանձն արարեալ զնոսա ամ իշխանացն և զաշխարհն նոցա, և ինքն կայսրն չու արարեալ գնաց յերկիր իւր յերկիրն Յունաց։

Այլ արքայն Պարսից գնացեալ փախստական յերկիր իւր. և իբրև եհաս անդր՝ ժողովէր առ ինքն զամ մնացեալս իշխանութիւն իւրոյ, և 'ի խոյզ և 'ի ինդիր անկանէր։ Խորհուրդ 'ի մէջ առնոյր, հարցանէին առնել. հրամայէր վերստին, զի տեսցեն և յայտ արասցեն՝ թէ ուստի՞ եղև սկիզբն պատերազմացն և մարտին։ Ապա 'ի վեր եկին և յայտնեցան իրքն առաջի նորա. զի յոչինչ իրաց և վատթար բանից համարեցան զիրսն եղեալս, վասն ձիոյ միոյ կարծիս առնել զայն ամբոխ խռովութիւն 'ի մոլեկան առնէն Շապուհ Ա արաբայն։ Ապա հրաման ետ հանել զպատիւն 'ի բաց՝, և մերկանալ 'ի նմանէ զպատուական պատմուճանն, և մեծաց հարուածոց արժանի առնէր զԱ արաբն։ Ետ պարկի օրինակին հրամայէր զմորթն՝ 'ի բաց հանել, և խոտով լնուլ, և 'ի հրապարակի իւրում 'ի տեսիլ ծանականաց կանգնել հրամայէր։ Այլ ինքն 'ի զղջումն եկեալ վասն իրացն եղելոց, ապա արձակէր զիշխանսն պատուականս 'ի հնազանդութիւն խաղաղութիւն վասն գերեդարձ առ-

1 Յօրինակի միում պէլասպիկ։

նել 'ի կայսերէն միւսանդամ, և այնուհետև աղօ-
թակերս արձակել 'ի հաշտութիւն խաղաղութիւն. խօ-
սել ընդ կայսերն, զի զոնեայ զկանայս իւր արձակեսցէ 'ի գերութենէն, և բարձցէ 'ի նմանէ զծանակու-
թեանցն զդարսովութեցն նախատինս։

Այսպա դատնէր հրովարտակ թագաւորն Յունաց Վաղէս առ արքայն Պարսից. Նախ դու, ասէ, դարձուսցես զգերութիւն առեալ յերկրէն Հայոց, և զթագաւորն Տիրան ինքնին դլխովին, և զամ ինչ զոր առեալ իցէ անտի. ապա յորժամ զայդ արասցես, և ես զնմա դարձուցից զոր առեալ եմ. զի եթէ ոչ՝ նախ դու զնոցա զաւարն դարձուսցես, և ես ապա զքոյդ դարձուցից։ Այլ իբրև լուաւ զայն հրամանն արքայն Պարսից, վաղվաղակի զիրսն կատարէր. հանէր զկապեալն Տիրան 'ի տանէն բանդի կապանաց, խօսէր ընդ նմա ողջոյն, զի թագաւորեցուսցէ զնա անդրէն յիւր աշխարհն արձակելով, զի երթիցէ նա պատուով։ Այսպա տուեալ պատասխանի Տիրանայ, եթէ անօգուտ է ինձ և անպատշաճ է, կուրուք, անմարթ իսկ է կարի, ունել զթագաւորութիւն. բայց փոխանակ իմ թագաւորեցո զԱրշակ զորդի իմ։

Յայնմ ժամանակի թագաւորեցուցանէր զԱրշակ որդի նորա 'ի վերայ աշխարհին Հայոց. և զկանայս թագաւորին և զայլ գերին ամ, դանձիւք ընծայիւք և ստացուածովք հանդերձ, և միանգամայն դարձ առնէր ամ գերութիւն։ Այլ զինքնին Տիրան թագաւորն Պարսից հանդերձեաց կազմեաց մեծաւ կազմութեամբ, և արձակեաց յիւր աշխարհէն յերկիրն Հայոց. և կատարեալ հաւատարմացոյց զասացեալսն հրամանաց թագաւորին Յունաց։ Այլ իբրև զնոսա 'ի Հայս յուղարկէր, ապա և զ'ի թագաւորէն Յունաց զառ ինքն եկեալսն դեսպանսն արձակէր յիւրմէ, զի երթիցեն պատմեսցեն թագաւորին Յունաց՝ թէ ո՛րպէս և կամ զի՞արդ նա զհրամանն կատարեաց զթագաւորին Յունաց, զի և թագաւորն Յունաց դարձուսցէ զգերութիւնն՝ զոր առեալ զթագաւորին Պարսից։ Այլ եղև իբրև լուաւ զայս ամ թագաւորն Յունաց՝ եթէ կատարեաց 'ի գլուխ եհան զայս ամ 'ի նմանէ զտուեալ հրամանն թագաւորն Պարսից,

և դարձ արար զերուԹեանն Հայոց և Տիրանայ արքային, հաՃեցաւ։ Յայնմ ժամանակի և Թագաւորն Յունաց առնէր զերէդարձ զերուԹԷ արքային Պարսից։ Եւ հանդերձեաց կազմեաց Թագաւորն Յունաց զկանայս Թագաւորին Պարսից մեծաւ պատուով, և զամ զերուԹիս նոցա ընդ նոսին յերկրէն Յունաց յերկիրն Պարսից դարձուցանէր, և բարեաւ առ Թագաւորն յուղարկէր։

Կապարէցաւ երրորդ դարի, դան և մ պատմութեց դպրութիւն, ժամանակագիր էանուն գախապէայ Ռէ-ղանդէայ ժամանակագիր մեծ պատմագրի, որ էր ժամանակագիր Յունաց։

ՉՈՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԲԻՒԶԱՆԴԻՆՑ

ՉՈՐՐՈՐԴ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ
ԶՈՐ ԱՍԵԼՈՑ ԵՄ ԿԱՐԳԵԼ ԶԴՊՐՈՒԹԻՒՆ
ԿԱՆՈՆՔ ԴԱՐՔ ԵՒ ԴԱՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ԶՐՈՒՑԱՑ

ԽՈՍՏՈՒՄՆ ԽՈՍՏԱՑԵԼՈՑՍ

Ա. Յաղագս թէ ո՛րպէս յետ բաղում շփոթի պատերազմաց ընդ Ներսէհի արքային Պարսից, թէ ո՛րպէս Թադաւորեցոյց զԱրշակ որդի Տիրանայ, և արձակեաց յաշխարհն Հայոց հանդերձ Տիրանաւ հարքն իւրով, և ամ դերութիւնն հանդերձ։

Բ. Յաղագս շինութիւն կարգաց և յօրինուածոց աշխարհին Հայոց, վարուց և կարգաց նուաճութիւն, և յօրինելոյ և նորոգելոյ թագաւորութիւնն։

Գ. Յաղագս սրբոյն Ներսէսի, թէ ուստի կամ ո՛րպէս ընտրեցաւ լինել կաթուղիկոս Հայոց մեծաց։

Դ. Յաղագս թէ ո՛րպէս առին զնացին տարան զՆերսէս 'ի Կեսարիա. և կամ ո՛րպէս սքանչելիքն այ եղեն։

Ե. Յաղագս Ներսէսի կաթողիկոսի Հայոց, թէ զի՞արդ յԱրշակայ արքայէ Հայոց առաքեցաւ առ Վաղէս թագաւորն Յունաց հանդերձ նախարարօքն, և թէ զի՞արդ աքսորեցաւն, և կամ զի՞արդ զայլ նախարարսն հանդերձ այլովքն պատարագովք արձակէր յերկիրն Հայոց։

Զ. Յաղագս և թէ զի՞արդ իբրև աքսորեցաւ նոքն Ներսէս, և ընկեցաւ 'ի կղզին յանապատ, և թէ ո՛րպէս և կամ զի՞արդ կերակրեցաւ, և յայ եղեն սքանչելիքն զամս ինն։

Է. Յաղագս այ սքանչելիքն, որ երևեցան 'ի Ներսէս կամ 'ի Բասիլիոս. և վասն նախանձու Եւսեբի եպիսկոպոսին Բասիլիոսի։

Ը. Յաղագս և թէ ո՛րպէս թագաւորն Յունաց, հալածեաց զամ ուղղափառս զհաւատացեալսն, և կամ ո՛րպէս կամեցաւ փայքար առնել 'ի մէջ Ճշմարիտ հաւատացելոցն և 'ի մէջ ձախող աղանդին արիանոսաց։ Եւ կամ ո՛րպէս այ սքանչելեացն տեսլեամբն Բասիլիոս կոչեալ լինէր 'ի կայսերէն 'ի փայքարէ, և ամ զօրութիւնն յալթէր ախոյանին առ եպիսկոպոսին Եւսեբի։ Եւ կամ ո՛րպէս եպիսկոպոսապետն Կեսարու Եւսեբիոս վճա-

ըեալ լինէր 'ի բանդին, և կամ որպէս Բարսիլոս արձակեալ։

Թ. Յաղագս և կամ որպէս արարին զԲարսիլոս եպիսկոպոսապետ Կեսարու, և կամ զինչ նշանք եղեն յայսքան չեղեքն. և կամ որպէս Թագաւորն Հրամայեաց յափշտակել զամ ինչսն որ 'ի Քե հաւատացեալցն. և կամ թէ որպէս խնդութիւն որք բերէին տային 'ի դուրս վասն իւրեանց հաւատոցն, և կամ որպէս և որպիսի խընդրուածովք խնդրէին յայ 'ի վերայ իւրաքանչիւր եպիսկոպոսացն։

Ժ. Յաղագս թէ զնարդ կոչէր կայսրն Վաղէս զսոփեստէսն յանդիմանութիւն ընդդէմ ճշմարտութեն հաւատոցն. և կամ զնարդ ետես սոփեստէսն զքանչելեացն տեսիլն, և Թագաւորն Վաղէս սատակեցաւ նշանաքն եղելովք, և բազում խաղաղութիւն եկեղեցեացն լինէր։

ԺԱ. Յաղագս դարձի իշխանացն յերկրէն Յունաց յերկիրն Հայոց անդրէն, որք ևս երթեալք ընդ հայրապետին Հայոց Ներսէսի առ Թագաւորն Վաղէս, և եկին դարձան անդրէն առ արքայն Արշակ Թագաւոր։ Նա թէ որպէս ըմբոստացեալ Արշակ արքայն Հայոց, ասպատակաւ մեղանչել տան Թագաւորին Յունաց։

ԺԲ. Յաղագս Խադայ եպիսկոպոսի բաղրաւանդացւոյ, զոր էր Թողեալ յիւր տեղւոջն հայրապետին Հայոց Ներսէսի. թէ սա որպիսի այր էր կամ որպիսի նշան և զքանչելիս առնէր, և կամ որպէս կայր 'ի ճշմարտութեանն, և ոչ առնոյր ակն Թագաւորին մեծի Արշակայ արքային Հայոց, և կամ որպէս դիմանայր ընդդէմ նորա վասն անօրէնութեանն ինչ գործոց. և որչափ սիրէր զաղքատս իբրև զհայրապետն Հայոց զՆերսէս։

ԺԳ. Յաղագս թէ որպէս դարձաւ նա կաթուղիկոսն Հայոց Ներսէս յերկրէն Յունաց. և կամ որպէս յանդիմանէր զմեծ Թագաւորն Հայոց զԱրշակ. և թէ որպէս յայ հասանէին հարուածք 'ի վերայ աւանին Արշակաւանին, և սատակէր առ հասարակ յանկարծօրէն ամ բազմութիւն մարդկան՝ որք միանգամ ժողովեալք էին յայնմ տեղւոջ։

ԺԴ. Յաղագս Հայր մարդպետի, որ եկն էջ 'ի դաւառն Տարօնոյ. և թէ զնարդ եկեալ էր 'ի տեղին աղօթիցն յԱշտիշատ, և կամ զնարդ դատապարտեալ գնաց անտի յիւր բերանոյն խօսիցն. և կամ զնարդ մահու պարտ եղեալ՝ սատակեցաւ 'ի Շաւասպայ արծրունոյ։

ԺԵ. Յաղագս Թագաւորին Արշակայ, թէ զնարդ կամ որպէս սպան զեղբօրորդին զԳնէլ 'ի չարախօսութէն Տիրիթայ, կամ որպէս կշտամբեալ և յանդիմանեալ ելև 'ի յառնէն այ 'ի Ներսէսէ. և կամ որպէս սպան զնոյն Տիրիթն. և կամ որպէս զկին սպանելոյն Գնելոյ

առնոյր իւր կին Արշակ Թագաւորն. և կամ որպէս
'ի վերայ այնր կանանց միւս ևս այլ կին առնոյր Արշակ
Թագաւորն, զոր ած 'ի Յունաց աշխարհէն, որում ա-
նուն Ողեմբին կոչէր։ Եւ կամ որպէս երկեցն դրան
արքային, Մրջիւնիկն, զմահուն դեղն տալով ընդ օ-
րէնսն՝ սպանանէր զՈղեմբին խորհրդով նենգութեանն
փառանձեմայ։

ԺԶ. Յաղագս թէ որպէս կամ զիարդ կոչեաց Շապուհ Թա-
գաւորն Պարսից զԱրշակ Թագաւորն Հայոց. և կամ
զիարդ մեծարեցաւ 'ի նմանէ։ Եւ կամ թէ զիարդ
Վասակ մամիկոնեան սպարապետն Հայոց սպանանէր
զորակաղն ասպաստանին Թագաւորին Պարսից։ Եւ
կամ զիարդ Արշակ Թագաւորն Հայոց, աւետարա-
նաւն երդուաւ Թագաւորին Պարսից, ուխտէր նմա.
և կամ թէ զիարդ յետոյ ստեաց, և փախեաւ 'ի նմա-
նէն. և կամ թէ զիարդ յաղագս այնորիկ արս եւթա-
նասուն զայ պաշտօնեայսն կոտորէր Շապուհ։

ԺԷ. Յաղագս թէ զիարդ յուղարկեաց զհալածեալսն Շա-
պուհ Թագաւորն Պարսից 'ի վերայ քրիստոնէութեանն
հաւատոյ։

ԺԸ. Յաղագս մահուանն Վարդանայ 'ի Թագաւորէն Ար-
շակայ նենգութեաբ իւրոյ եղբօրն Վասակայ։

ԺԹ. Յաղագս թէ զիարդ անմոռութեաբ յանդգնութեաբ գնայր
'ի սպանուիսն նախարարացն անխտիր Արշակ Հայոց
արքայ։

Ի. Յաղագս թէ զիարդ պատերազմն սաստկացեալ էր 'ի
մէջ Յունացն և Պարսից. և թէ զիարդ արքայն Հայոց
Արշակն զօրաւիգն լինէր Թագաւորին Պարսից, և հա-
նէր ընդ սուր զզօրսն Յունաց. և կամ զիարդ դաւա-
ճանութեաբ սիւնոյն Անդովկայ լինէր փախստական Ար-
շակ 'ի Շապհոյ Թագաւորէն Պարսից։

ԻԱ. Յաղագս թէ զիարդ եղև պատերազմ ընդ Շապուհ
Թագաւորն Պարսից և ընդ Արշակ Թագաւորն Հայոց.
և կամ թէ զիարդ յաղթեաց Արշակ արքայն Հայոց։

ԻԲ. Յաղագս որ յետ այսորիկ որ ընդ երիս տեղիս եղեալ
ճակատ յերկրին Հայոց 'ի միում ամսեանն, 'ի միում
աւուր, 'ի միում ժամանակի ընդ զօրավարսն Պար-
սից, երեցունց նշանն յաղթութեան Հայոց կանգնէր։

ԻԳ. Յաղագս Մերուժանայ արծրունւոյ, որ ապստամբեաց
յարքայէն Հայոց Արշակայ, և անկաւ առ Թագաւորն
Պարսից, և ևս առաւել զրգռէր զպատերազմունսն. և
թէ զիարդ ուրացաւ յայ, և թէ զիարդ եղև խոչընդ-
ակն և խոչընդոտն երկրին Հայոց մինչև յապայ։

ԻԴ. Յաղագս Մերուժանայ, թէ զիարդ ապստամբեաց. զբր-
գռէր զթագաւորն Պարսից զՇապուհ, և առնէր ստէպ
ստէպ պատերազմունս։ Եւ կամ զիարդ լեալ էր ա-

ռաջնորդ Թագաւորին Պարսից Շապհոյ. ածէր զՀէնն 'ի հայաստան աշխարհն, և դերէր զոսկերս Թագաւորացն Արշակունեաց. և կամ թէ զիարդ զօրավարն Վասակ Հայոց Թափեաց զդերութիւնն, և յաղթեաց թշնամեացն։

ԻԵ. Յաղագս թէ զիարդ արշաւեաց Արշակ Հայոց արքայն յերկիրն Պարսից, և աւերէր զատրպատական երկիրն. և քանդէր հարկանէր աւերէր, առնոյր զբանակն Շապհոյ արքային 'ի Թաւրէժն։

ԻԶ. Յաղագս Վնայ պարսկի, և չորեքհարիւր հազարին՝ որ եկեալն էին 'ի պատերազմի, և նկուն լինէր 'ի զօրացն Հայոց։

ԻԷ. Յաղագս մնդավարին Պարսից Անդիկանայ, որ քառասուն բիւրու հասանէր աւար առնուլ զերկիրն Հայաստանեաց. և թէ զիարդ Վասակ սպարապետն ելանէր ընդ առաջ նոցա երկոտասան բիւրու հանդերձ Հայոց զօրաքն, և կոտորէր զզօրս Պարսից հանդերձ զօրագլխաւն իւրեանց։

ԻԸ. Յաղագս Հազարուխտոյ, որ է մի 'ի նախարարացն Պարսից. զոր առաքեաց Շապուհ արքայ ուխտսուն բիւրովն հարկանել զերկիրն Հայոց. եթէ զիարդ էլ ընդ առաջ նոցա Վասակ մետասան հազարաւ, և հարկանէր սատակէր զնա և զզօրս նորա 'ի սահմանս Աղձնեաց։

ԻԹ. Յաղագս Դմայունդ Վսեմականայ, որ ինսուն բիւրուն տապրիկ զօրաքն՝ զոր առաքեաց 'ի վերայ Արշակայ արքային Հայոց արքայն Պարսից, ապա ելանէր Վասակ սպարապետն Հայոց, հասանէր սատակէր զնա և զզօրս նորա։

Լ. Յաղագս Վահրիճի Կահրիճայ, որ յարքայէն Պարսից չորեքհարեւրն բիւրու դայր հասանէր, տայր պատերազմ ընդ Թագաւորին Հայոց. և կամ զիարդ մատնեցաւ 'ի ձեռս Վասակայ սպարապետին, և նա և զօրքն իւր անկանէին 'ի ձեռս զօրացն Հայոց։

ԼԱ. Յաղագս Գումանդ Շապհոյ, որ մեծաւ պարծանաք պարծեցաւ առաջի Թագաւորին Պարսից Շապհոյ, և հարեւր հազար զօրաքն դայր հասանէր մինչև 'ի Հայս, և նկուն եղեալք մերժէին յերկրէն Հայոց։

ԼԲ. Յաղագս Գեհկայ նահապետի, որ առաքեցաւ 'ի Շապհոյ արքային Պարսից 'ի վերայ Արշակայ արքային Հայոց զօրաք բազմաք. ապա հարկանէր սատակէր զնա, և զզօրս նորա զօրավարն Հայոց Վասակ։

ԼԳ. Յաղագս Սուրէնայ պահլաւի, որ եկն 'ի վերայ Հայոց. ապա և սա ևս նկուն լինէր իբրև զառաջինսն։

ԼԴ. Յաղագս Ապական Վսեմականայ, որ եկն եհաս անթիւ և անհամար զօրաք հանդերձ յերկիրն Հայոց 'ի պատերազմ. ապա և նմա ևս ձախողեցաւ որպէս և առաջնոցն։

ԼԵ. Յաղագս Զրկայ նուիրակապետի Պարսից, որ առաքեցաւ 'ի Թագաւորէն Պարսից 'ի Շապհոյ 'ի վերայ Հայոց 'ի պատերազմ, հանդերձ բազում զօրօք. և նա ևս խորտակեցաւ իբրև զառաջինսն։

ԼԶ. Յաղագս Սուրենայ պարսկի, որ յետ Զրկայն և սա եկն 'ի պատերազմ. և նա 'ի բուռն անկեալ Վասակայ սպարապետին Հայոց, հանդերձ զօրքն՝ որ ընդ իւրն էին՝ սատակեցան։

ԼԷ. Յաղագս Հրեշշոմայ, որ առաքեցաւ 'ի Թագաւորէն Պարսից 'ի վերայ Հայոց ինսնուն բիւրու. և այն անդամ ևս լինէր յաղթութիւն, և նշան յաղթութեան Հայոց կանկնէր։

ԼԸ. Յաղագս Ալանոզայն, որ չորեքհարեւր բիւրուն դայր հասանէր 'ի Թագաւորէն Պարսից՝ տալ պատերազմ ընդ Թագաւորին Հայոց. և թէ զնա՛ւրդ և սա նկուն եղեալ պարտեցաւ 'ի ձեռս Վասակայ։

ԼԹ. Յաղագս Բոյանայ և քառասուն բիւրուն, զոր հարկանէր Ջնջէր սպարապետն Հայոց Վասակ։

Խ. Յաղագս Վաչական պարսկի, որ եկն 'ի Հայս ութսուն բիւրուն, և կամէր ասպատակել աւար առնել զերկիրն. ապա և զնա վանեաց Վասակ սպարապետն Հայոց, և զամ զօրս նորա Ճարակ սրոյ տայր զամ։

ԽԱ. Յաղագս Մշկանայ և երեսուն և հինգ բիւրուն, որք արշաւեցին յերկիրն Հայոց. և կամ զնա՛ւրդ կոտորեցան 'ի Վասակայ և 'ի զօրացն։

ԽԲ. Յաղագս Մարուճանայ և վաթսուն բիւրուն, եթէ զնա՛ւրդ եկեալք 'ի վերայ Թագաւորին Արշակայ յերկրէն Պարսից, և եթէ զնա՛ւրդ հարկանէր սատակէր զնոսա Վասակ զօրավարն։

ԽԳ. Յաղագս զնդակապետին, որ ինսնուն բիւրուն եկն յերկիրն Հայոց. ապա հարկանէր սատակէր զնոսա Վասակ հանդերձ զօրքն։

ԽԴ. Յաղագս որդւոյն Արշակայ արքայի, որոյ անուն էր Պապ, եթէ զնա՛ւրդ էր լի դիւք 'ի ծննդենէն իւրմէ. կամ զնա՛ւրդ յայտնեալ լինէին դևքն 'ի նմա, և հանդերձ նոքաք գործէր պղծութիւն։

ԽԵ. Յաղագս Սակստան հանդերձապետին, որ առաքեցաւ 'ի Շահպոյ արքայէն Պարսից, հանդերձ չորեքհարեւր բիւրուն. և փախոյց ևս զնա Վասակ զօրավարն, հանդերձ զօրքն Հայոց։

ԽԶ. Յաղագս Շապստան տակառապետին Պարսից, որ եկն հինգ հարեւր բիւրուն 'ի վերայ աշխարհին Հայոց. ապա զնոսա հարկանէին սատակէին զօրքն Հայոց։

ԽԷ. Յաղագս մոգուցն հանդերձապետին, որ ութ և տասն բիւրուն եկն եհաս՝ տալ ճակատ ընդ Թագաւորին Հայոց. և սա կործանէր իբրև զառաջինսն։

ԽԸ. Յաղագս Համբարակապետին Պարսից, որ ինքնսուն բիւրուն եկն մարտնչէր ընդ զօրս Թագաւորութեան Հայոց. և սատակեցաւ 'ի Սաղամաս 'ի զօրայն Հայոց 'ի գընդէն Վասակայ։

ԽԹ. Յաղագս Մռկանայ, որ քառասուն բիւրու եկն 'ի Պարսից՝ կռուել ընդ Թագաւորին Հայոց, և սատակեցաւ զօրօք իւրովք հանդերձ 'ի գնդացն Հայոց, և 'ի զօրավարէն Վասակայ 'ի Մախազան։

Ծ. Յաղագս քակտելոյ և քայքայելոյ Թագաւորութեան Հայոց, թէ որպէս բազում նախարարքն Հայոց ապստամբեցին յարքայէն Հայոց, և ձեռս ետուն 'ի Շապուհ արքայն Պարսից. և կամ զիարդ հապ այսր անդր ցրուեցան, և մեծապէս թագաւորութիւնն Հայոց նուազէր։

ԾԱ. Յաղագս թէ զիարդ միաբան համբէն աշխարհօրէն որք միաբան մնացեալք էին աշխարհին՝ ժողովէին առ իւրեանց հայրապետն Ներսէս. և թէ որպէս զբոզոք հարկանէին առաջի նորա, և ձեռնթափ լինէին և թողուին 'ի ձեռաց զիւրեանց թագաւորն Արշակ։

ԾԲ. Յաղագս Թագաւորին Պարսից, թէ զիարդ 'ի ժամանակին լուեցոյց զպատերազմ տալ ընդ Արշակայ Թագաւորին Հայոց, և նենգաւոր առ ինքն կոչէր 'ի հաշտութիւն։

ԾԳ. Յաղագս կրկին անգամ կոչելոյ Շապուհ արքայ Պարսից զԱրշակ արքայ Հայոց, և նորա երթալոյն առ նա, և միհանգոյն [1] կորնչելոյն։

ԾԴ. Յաղագս թէ որպէս դարձեալ զդիւթան և զբաւդեայն և զկախարդն հարցեալ Շապհոյ հմայիւք՝ փորձէր ըստ միտսն Արշակայ, և տայր զնա յԱնուշ բերդն 'ի պատիժս. սոյնպէս և զսպարապետն Հայոց չարամահ առնել հրամայէր։

ԾԵ. Յաղագս աշխարհին Հայոց գերութեան և հարուածոց, և գերութեան 'ի Պարս վարելոյն տիկնոջ Փառանձեմայ. և քաղաքացն Հայոց աւերելոյ, և աշխարհին 'ի հիմանց տապալելոյ։

ԾԶ. Յաղագս վկայութեան Զուիթայ երիցուն, յԱրտաշատ քաղաքէ, յերկրին Պարսից։

ԾԷ. Յաղագս աղօթքն 'ի ժամ մահուն Զուիթայ։

ԾԸ. Յաղագս դալոյն Շապհոյ արքային Պարսից յերկիր Հայոց, և միանգամայն սատակելոյ զմնացորդ երկրին Հայոց։

ԾԹ. Յաղագս Մեհրուժանայ և Վահանայ, թէ իբր մնացին յաշխարհին Հայոց. և թէ զինչ շատ գործեցին ընդ աշխարհն, և կամ թէ զիարդ սատակեցան Վահան և կինն յիւրեանց որդւոյն։

1 Յերիս օրինակս Դիահանգոյն։

ԲՈՒՉԱՆԴԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ԶՈՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆՔ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐՔ ՄԱՏԵՆԻՑ ՏԱՆ ՈՐԴԻՈՑ ԹՈՐԳՈՄԱՅ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԱՅՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս թէ ո՞րպէս յետ բազում շփոթի պատերազմացն Ներսեհ արքայն Պարսից թէ ո՞րպէս Թագաւորեցոյց զԱրշակ որդի Տիրանայ, և արձակեաց յաշխարհն Հայոց հանդերձ Տիրանաւ հարբ իւրով և ամ գերութիւնն հանդերձ։

Այլ իբրև եղև հաճութիւն և բազում խաղաղութիւն ի մէջ Թագաւորին Յունաց և Ներսեհի արքային Պարսից, հաւանեցան մեծաւ սիրով առնել զկամս միմեանց. և դարձուցանէր կայսրն Յունաց զգերուն արքային Պարսից։ Այս և Թագաւորն Պարսից Ներսեհ Թագաւորեցոյց զԱրշակ որդի Տիրանայ և հարբ նորին և հանդերձ կանամբք իւրեանց և ամ գերութիւնք հանդերձ և գանձիւք իւրեանց և ստացուածովք արձակեաց մեծաւ փառաւք։ Այսպէս գնաց Արշակ արքայ Հայոց մեծաց. Թագաւորեաց յերկրին Ասորեստանեայց հանդերձ հարբն իւրով և ամ ընտանեաւքն իւրովք. եկն ետհաս յերկիրն Հայոց, և ժողովեաց զցրուեալս երկրին, և Թագաւորեաց ի վերայ նոցա։

Եւ եղև խաղաղութիւն մեծ 'ի ժամանակին յայնմիկ։ Յողովեցան համ թագուցեալքն փախուցեալք կորուսեալք երկրին Հայոց. և էին անկասկածք բնակեալ 'ի խաղաղութիւն մեծի ընդ հովանեաւ արքային Արշակայ։ Այսպա կարգեցան կազմեցան յօրինեցան խաղաղացան աշխարհն Հայոց 'ի մէջ երկուց թագաւորացն. և յայնմ հետէ բնակեալք խաղաղութիւն վայելեալք յիւրաքանչիւր յարարս իւրեանց։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս շինութիւն կարգաց յօրինելոց աշխարհին, նուաճութիւն յիւրաքանչիւր տեղիս վարուց կարգաց, նորոգելոյ աշխարհին թագաւորութեան Հայոց։

Յաջնմ ժամանակի խնդիր եղանէր արքայն Արշակ տոհմին զօրավարաց ազգին քաջացն մամիկոնեանից. մանաւանդ զի իւր դայեակս և մնուցիչք էին։ Այսպա երթեալ գտանէր զնոսա յամուրս աշխարհին Տայոց յիւրեանց աշխարհին, և դարձուցանէր զնոսա յընդանութենն. զի պառակտեալք և քակտեալք էին յընդանութենէն և յամ գործոց Հայոց 'ի ժամանակս խուլութեն Տիրանայ։ Եւ կացոյց արքայն զվարդան զերէց եղբայրն 'ի նահապետութեն ազգին իւրեանց, և զվասակ զմիջին եղբայրն զիւր դայեակն 'ի սպարապետութեն զօրավարութե յիրս պատերազմացն. սոյնպէս և զկրտսերն 'ի պետս զօրացն կացուցանէր։ Սոյնպէս և զամ ազգն զօրացն մեծամեծացն նահապետացն, որպէս առաջին թագաւորքն նուաճեալք յիւրաքանչիւր չափու։ Եւ հնազանդէր զմեծամեծսն, զիւրաքանչիւր զօրս բաժանեալ յամ կողմանց, սահմանացն Հայոց սահմանապահս կացուցանէր։

Եւ նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւն թագաւորութեն հայաստան երկրին որպէս և զառաջինսն.

մեծամեծքն յիւրաքանչիւր գահս, և գործակալքն յիւրաքանչիւր չափս։ Այլ սկիզբն գործակալութեան հազարապետութեան աշխարհատեսն խնամակալութեան, աշխարհաշէն աշխարհատած դեհկանութեան, շինակա-նաշէն ազգն Պտուտեաց՝ հազարապետն ամ երկրին։ Այոյնպէս ստրատելատութեան սպարապետութեան զօ-րավարութեան մարտի կռուելոյ, գործոյ ըռազմիկ ձա-կատամուղ նիզակին, իրափառն[1] աղանազգիք աղա-նադրօշք արծուէնշանք վարժնականիշք աներկիւղք քաջասիրտք նահատակք քաջանունք, բարեհնաստ բա-րեհամբաւք բարեգործք յաջողակք 'ի գործ պատե-րազմաց 'ի բուն 'ի նախնեացն կարգաց 'ի մամիկո-նեան ազգին, 'ի վերայ իշխանութեան բովանդակ՝ 'ի վերայ ամ զօրաց զօրավարութեան բազմութեան Հայոց մեծաց, հանապազ յամ ժամ յաղթող ազգին պար-գևեալ յերկնից բարիանուն իրաքաջ 'ի մեծի նահա-պետութեան պատերազմի։ Այլ այլ յայսմ ազգաց և 'ի խոնարհ որ գործակալս անուն բարձիւք առա-ջի արքային պատիւ'իգլուխ բազմէին. Թող զնահա-պետս մեծամեծս և զտանուտերս՝ որք գործակալք միայն էին, ինն հարեւր բարձ՝ որ մտանէր 'ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց. Թող զտանկայս գործակալութեան սպասու։

ԳԼՈՒԽ Գ.

Ցաղագս սրբոյն Ղերսեհի, թէ որպէս կամ ուստի էր, կամ որպիսի կամ զի՞նչ ընդրեցաւ եպիսկոպոս լինել Հայոց աշխարհին։

Զգան 'ի մի ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծք նահապետք ազգաց ազգաց, տոհմաց տոհ-մաց, գնդից և դրօշուց տեարք. ամ սատրապք նա-խարարք և աղատք, պետք և իշխանք, զօրավարք և

1 Ցերկս օրինակս իրաւաքառն։

սահմանապահք, 'ի մի հաւանութիւն միաբանական խորհուրդք, զի եկեսցեն տեսցեն և խորհեսցին վասն իւրեանց առաջնորդի, թէ ո՞ւմ արժան իցէ նստել յաթոռ հայրապետութեանն և հովուել բանաւոր խաշանց Քրիստի։ Այս յաղթեաց կալաւ այս բան խորհրդի ամենեցուն առ հասարակ որ անդ էին, զի 'ի մեծ ցորդաց տանն Գրիգորի, յայնմ զաւակէ գտցեն զառաջնորդութիւն։ Զի ամենեքեան ասէին ցարքայն. վասն զի նորոգեաց՝ ած զթագաւորութիւն ձեր, սոյնպէս պարտ է 'ի յայնմ զաւակէ նորոգել զհոգեւոր նահապետութիւն։ Զի ընդ նորոգել այնր աթոռոյ, ասէն, նորոգեսցին պայծառ վարք աշխարհիս Հայոց։

Այս յականէ յանուանէ իսկ խնդրեցին աշխարհաժողով զօրքն բազմութեան զայն, որ անուանեալ կոչէր Ներսէս, զորդի Աթանագինի, զթոռն քահանայապետին Յուսկան, որդւոյ Վրթանայ, որդւոյն Գրիգորի մեծին առաջնոյ քահանայապետին. և մեր սորա Խամբիշն անուն, քոյր արքային Տիրանայ։ Սա լեալ էր ամուսնաւոր յաշխարհակեաց կեանս նախ յաստիս մանկութեանն. 'ի տղայութենէ մնեալ և ուսեալ 'ի կեսարացոց քաղաքին Դամրաց ընդ հաւատարիմ վարդապետաց. և ցանկալի եղեալ իւրոյն համարուեստն զուգակցացն։ Այլ 'ի ժամանակին յայնմիկ էր 'ի վարս զինուորութեան 'ի գործակալութեան, սիրելի սենեկապետ արքային Արշակայ, հաւատարիմ 'ի վերայ ամ կարգաց կենաց թագաւորութեանն 'ի ներքոյ և արտաքոյ։

Այր էր սա մեծ և բարձր ցանկալի հասակաւ, և վայելուչ գեղով. զի ոչ գտանէր ուրեք նման նմա գեղեցկութեանն 'ի վերայ երեսաց երկրի, տեսչալի ցանկալի և զարմանալի և ահագին ամ նայեցողաց տեսողաց, և նախանձելի յարութեանն 'ի զինուորական կրթութեանն։ Երկիւղած 'ի ներսն այ, յոյժ աւանդապահ պատուիրանաց նորա. մարդասէր՝ որ զգաստ, սաստիկ իմաստուն և առանց ակնառութեան. իրաւանց իրաւարար, ցածուն քաղցր խոնարհ աղքատասէր, 'ի սրբութիւս ամուսնութեանն օրինաւոր, և կատարեալ սիրովն այ։ Այս առ իւր ընկերս ըստ պատուիրանին սիրել զամ ընկեր իբրև զանձն. զի 'ի զի

նուրոութեան այսպէս կատարեալ էր վարուք լաւութ, որ մինչդեռ մանուկ իսկ էր՝ գնայր նա ամ պատուիր բանօքն ան և արդարութիւն, անարատութիւն և ամ պաշտամամբք առ ընկերս իւր։ Անձանձրոյթ էր, և ունէր զնախանձն այ, և եռայր սուրբ հոգւովն. այս պէս իսկ էր ամիւ կատարեալ յամի։ Այս զաղքատս և զտառապեալս այսպէս սիրեր և ակն ածէր 'ի վերայ նոցա, զի զիւր ինչ զհանդերձս և զկերակուր հասարակեր ընդ նոսա։ Այս նեղելոց և տարակուսելոց օգնական և վերակացու, և ջատագով ամ զրկելոց լիներ նա։

Մինչ դեռ ևս զզինուորական ձեւն յինքեան բերեր, և զարդարեալ էր գեղեցիկ պատմուճանաւ և զարդ վայելուչ, և ցանկալի գեղով իւրով երկայն հասակաւ, և չքնաղատես հերօք վարսից իւրոց, կայր 'ի սպասու Թագաւորին մօտ 'ի մտաս արքային, զարքունական սուսերն զպողովատիկն զոսկեպատեանն հանդերձ ականակապ մարգարտազարդ կամարաւն 'ի սպասու նորա բարձեալ ունէր, առ հասարակ ատեանն զբողոք բարձեալ աղաղակէին՝ եթէ Ելեսէս լեցի մեր հովիւ։ Որ իբրև լուեալ, զբողոք բառնալով՝ զանձն անարժան համարեալ, չկամէր չառնոյր յանձն։ Իսկ յորժամ տեսանոյր զամենեսեան 'ի նոյն յառաջին բանին վերայ սկսեալ, զի զնոյն աղաղակէին առաջի Թագաւորին. ասէին, Ոչ ոք լեցի մեր հովիւ, բայց 'ի դմանէ. և ոչ ոք նստի այլ յայնմ աթոռ, բայց դա։ Իսկ նա իբրև զանձնն չկամէր արժանի իրին առ յոյժ խոնարհութեան իւրում, ապա 'ի մէջ եկաց, սկսաւ ստել սակաւ մի, խօսել զանձնէ իւրմէ զանօրէնութիւն և զամբաստանս մեղաց՝ որ իւր չէր գործեալ։

Որ իբրև լուան բազմութիւնքն, գիտացեալ զստեղն նորա վասն անձինն, ամենեքեան առ հասարակ հանդերձ Թագաւորաւն Թալացեալ էին 'ի ծաղուէ։ Իսկ զօրքն աղաղակէին առ հասարակ. 'Ի մեզ և 'ի գլուխս մեր դարձցին այն մեղք՝ զոր գործեցերն. 'ի վերայ անձանց մերոց և 'ի վերայ որդւոց մերոց լեցին գործքն, բայց դու զգործս հօրն քո Գրիգորի, զնոյն առաջնորդութիւն նորոգեա մեզ։ Իսկ նա իբրև այլ ինչ ոչ էր գիտ տալ նոցա բանիցն պատասխանի, զի թշնամանս

լիներ զօրացն, և ասէր. Աչօրէնք էք և պիղծք, ես ոչ կարեմ ձեզ հովիւ կալ, և ոչ զձեր մեղսդ ընդ անձամբ առնուլ. ապա ոչ կարեմ աչառել, և ոչ ձերում չարութեդ համբերել։ Եւ այսօր տարապարտուց սիրեք դուք զիս տարապարտ, և վաղիւ ատելի և թշնամի և թակն զգլխոյ ձերմէ կոշկոձիչ կապեք զիս. այլ թոյլ տուք ինձ, անհոգուք ըստ իմում չափուս անարժանութիւն զկեանս իմ տառապանօք, և մեղօք հանդերձեալ դատաստանին յաւիտենից ակն ունելով, անցուցանել թերևս կարացից։ Ապա զբողոք բառնային բազմութիւնք զօրացն, և ասէին՝ եթէ այդ մեղաւորդ լեցիս մեզ հովիւ. զի այնչափ պնդեալ մարդկանն, յայ տեսչութենէն լիներ այնպէս։ Ա՛ռ սրտին դաղանութենն և յոյժ ցասմանն թագաւորն Ա՛ռչակ ինքն ձգտեալ զսուսերն արքունական կամարաւն, զոր նմա Ներսէսն բարձեալ ունէր 'ի սպասու թագաւորին ըստ օրինաց սենեկապետութենն, 'ի բաց հանէր 'ի նմանէ։ Եւ հրամայէր զնա կապել զիւրով առաջն. զհերսն գանգրագեղս զվայելուչ թագադանդուր վարսիցն, զի ուրեք երբեք նման նմա ոչ գտանէր, զայն 'ի բաց խզեալ հրամայէր. և ընդ նմին զվայելուչ պատմուճանն, զայն 'ի բաց պատառեալ հրամայէր։ Հրաման տայր, և բերին զՀանդերձս կղերիկոսաց զգեցուցանէին նմա. ետ հրաման, և կոչէին զծերունի եպիսկոպոսն՝ որում անուն էր Փաւստոս, և տայր զնա ձեռնադրել 'ի սարկաւագութիւն։ Բայց յորժամ զՀերսն դեռ վիրային 'ի նմանէ, առ յոյժ գեղեցկութեն բազումք յարտասուս հարան՝ որք լուանն կամ տեսին, 'ի գեղն աւեղկեալ՝ ըզկերպարանն փոխելոյն։ Ա՛յլ յորժամ տեսին զնա քեռան գեղոյն զարդարեալ՝ բազմաց լիներ ուրախութիւն, յորժամ հնորհք բարերարք կոչեցին զնա լինել հոգեբարձու տանն Աշի։

Յայնժամ եդ ՝ի միտս ամենեցուն խնդրել իւրեանց հովիւ զայն, որ նոցա կարող լինել զառաջնորդութիւնն կենացն Ճանապարհին ցուցանել։ Եւ մինչ դեռ իսկ զձևս զինուորուն յինքեան բերեր յերևելիսս, ներքին մարդոյն զՆա էր զգեցեալ յանձնիւր, և աղնուական վարս էր յինքեան կերպարա-

նեալ։ Այլ յուսոյն՝ զոր ունէր՝ խաչեալ էր ընդ Քրիստի, և թաղակից եղեալ էր ընդ նմին. և սիրով հաւատոյ մեռեալ էր մեղացն, և յարուցեալ յուսոյն արդարութիւն սպասէր։ Զ ասն այսորիկ յիրաւի արժանի եղև սա աթոռոյն Հայրապետաց և տեղւոյ հարցն իւրոց առաջնոց, զաթոռն Թադէոսի Պաքելոյ, և ժառանգութիւն հօրն մարմնապէս 'ի նոյն հոգևորին Գրիգորի. այլ իբրև 'ի տնէ եղև կոչումն նմա գալ յիրս այսպիսի, և էարկ 'ի միտս ամենեցուն խնդրել զսա արժանի այնմ իրին։ Իսկ նա յոյժ առ երկիւղածութիւնն և բազում խոնարհութեանն զանձն իւր անարժան համարեալ իրացն, մեծ կարգաց աստիճանին այ, յոր ձգեալ էին զնա։ Այլ բնաբարութի և միաբանութիւն և հրաման այ, մանաւանդ առ նախնեաքն, վասն նորա իսկ ասացեալ էր 'ի տեսլեանն այ առ Յուսիկն՝ եթէ այր լինելոց է 'ի սորա զաւակէ, լեցի լոյս աշխարհի։

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս թէ որպէս առին գնացին և տարան զնիրսէս 'ի Կեսարիա. և եթէ զինչ շատ աքանչելիք եղեն յայ, և կամ թէ որպէս հովուեաց իւրոց հօտին առաքելորդն։

Զ ԱՅ գումարեցին զիշխանսն մեծամեծս, զի առցեն զցանկալին Ներսէս, և գնասցեն ուր սովոր էին զՀայրապետսն օծանել։ Այս և բազմութիւն եպիսկոպոսացն Հայոց ժողովեցան առ Թագաւորն վասն նորին խնդրոյն. խոնարհել ամենեցուն միով միաբանութիւն զնա ընտրել հաճոյ Թուեցաւ ամենեցուն, զի նստցի նա յաթոռ գլխաւորութիւնն։ Ամենեցուն միաբանութիւն եպիսկոպոսացն և Թագաւորին և աշխարհախորհ ճուլիւք հաւանութիւն 'ի միասին արձակեցան և գնացին։ Զ Հայր մեծ իշխանն մարդպետութիւնն, և զԱրագարատ մեծ իշխանն սպարապետութիւնն, և

զԴանիէլ մեծ իշխանն Ծոփաց, և զՄեհանդակ ռըշտունի, և զՆդովկ իշխանն Սիւնեաց, և զԱրշաւիր իշխանն Շիրակայ և Աղբարունեաց, և զՆոյն իշխանն միւսոյ Ծոփաց, և զՊարգև իշխանն տանն Մամատունեաց. զնոսա զամենեսին կազմեցին և արձակեցին բազում ընծայիւք և մեծամեծ պատարագօք և հաւատարիմ հրովարտակօք կաթողիկոսաց առ կաթողիկոսն Անսեբիոս յերկիրն Դամրաց, և 'ի մայրն քաղաքացն [1] Նոցա 'ի Կեսարիա, զի ձեռնադրեսցեն անդ զսուրբն Ներսէս կաթողիկոսութիւն Հայոց մեծաց։

Աւ եկին ածին նոքա ցնծութիւք ուրախութիւք, և տեսին անդ զկաթողիկոսն կաթողիկոսացն զսուրբն զմեծանունն զերանելին զՀայկազանն զքանչելին Անսեբիոս։ Աւ տային զհրովարտակն արքային Աղբակայ նմա. և ունէին առաջի նորա զպատարագս բերեալս։ Աւ նորա սիրով ընկալեալ զնոսա և բազում մեծարանօք, և ըստ կանոնաց օրինակի ժողովեր առ ինքն մեծ եպիսկոպոսապետն Անսեբիոս զբազմութիւն եպիսկոպոսացն սրբոցն ըստ առաքելական օրինացն, զի ձեռնադրեսցեն զնոցն Ներսէս լինել եպիսկոպոսապետ Հայոց մեծաց։ Աւ եղեն մեծ սքանչելիք. զի մինչ դեռ այն ինչ մնեալ էին յեկեղեցին, էջ աղաւնի սպիտակ 'ի վերայ սեղանոյն յանդիման քահանայութեն և յանդիման ամ ժողովրդեանն։ Աւ իբրև է մուտ Անսեբիոս արքեպիսկոպոսապետն և երիցունքն ընդ նմա, և երիցապետ մի սուրբ՝ որում անուն Բարսեղիոս կոչէր, թռեաւ աղաւնին 'ի սեղանոյն և հանդեաւ 'ի վերայ նորա, և յամեաց բազում ժամն։ Իսկ իբրև եհաս ժամ՝ յորժամ կամեցան զՆերսէս ձեռնադրել, վերացաւ աղաւնին 'ի սրբոյն Բարսեղէ, և նստաւ 'ի վերայ գլխոյն Ներսէսի։

Իբրև այս սքանչելիք և նշանք յայ լինէին 'ի վերայ առնս այսորիկ, կային հասարակ ամ ժողովուրդն զարմացեալք, և մեծ արքեպիսկոպոսն Անսեբի։ Աւ հասարակ աղաղակէին 'ի վերայ նորա, թէ Հաճոյ է. զեր դու այ, և հոգի այ հանդեաւ 'ի վերայ քո. զի

1 Ցամ օրինակս 'ի մայրաքաղաքացն։

նմանութեան եղև ամենասուրբ Հոգոյն, որ 'ի վերայ տեառնն երևեցաւ։ Այսպա ձեռնադրեցին զնա, և հանին նստուցին յաթոռ եպիսկոպոսութեանն, և պատուէին զնա. և բազումք ասէին նմա Էնկոմիա, որ ասի՝ թէ Հոգի սուրբ հանկեաւ 'ի սա։ Բայց նա ևս քան զևս զանձն իւր անարժան համարէր իրացն եղելոց։ Այլ մեծաբանչեալաշուք յուղարկեցին զնա. նոյնպէս և զմեծամեծ նախարարքն սատրապն Հայոց։

Այլ եկին հասին նոքա մեծապարծ երևելի հոգևոր ազգեաց փառաւք 'ի Հայաստան երկիրն. և արքայն Արշակ ընդ առաջ երթայր նոցա մինչև 'ի լեառն, որ անուանեալ կոչի Արեւծ։ Այլ անդ պատահեալ մի մեանց մեծաւ լրջմտութեամբ, լցեալք օրհնութեամբ ողջունիւն, անդուստ յաշխարհն դարձան։ Այլ նստաւ ոգն Կերսէս յաթոռ Հայրապետութեան. 'ի հովուէն նորա բազում խաղաղութեամբ լինէր աշխարհին։ Զի 'ի վարս կարգաց զնացից իւրոց՝ նմանեաց իւրոյ հօրն մեծին Գրիգորի, արդարև Հայրաբարոյ գտանէր ամենաբարի. զնոյն հարցն նորոգեաց զառաքելաշնորհս, նոյն գործ երևեալ անշնաս պահելոյ յաներևոյթ թշնամեացն և յայտնեացն։

Այս և առաւել ևս առաջին ծառոյն նմանեալ. որ զնոյնազգեաց զնոյնահաս պտուղս վարդապետութեամբ բերեալ սկսեալ վերակացութեանն հովուութեանն՝ անկարօտ մատակարարէր զօգտակարսն, զհոգևոր ապրանս ջամբելով։ Զի հնորհքն այնպէս հանգեան 'ի նմա, զի մեծամեծ նշանս և բժշկութիւս առնէր հիւանդաց, ուր դեպ լինէր. զմոլորութիւս դարձուցանէր։ Այլ և զայսպիսի աքանչելիսս. զոր կարի յամառեալ տեսանէր, ահ արկանելով հաւանեցուցանէր. իսկ հլուացն, որոց ականջք սրտիցն բացեալ էին, զնոսա բանիւք քարոզութեան ածէր 'ի հաւանութի։

Շինէր և զաւերեալ եկեղեցիսս, և կանգնէր զսեղանս կործանեալս. և հաստատէր 'ի կատարումն ապաշխարութեան զթերահաւատս, զի հաւատացեալք յաճ՝ ապրել կարասցեն։ Այլ Խիթարէր զհաւատացեալս յաւիտենական յուսով բարութեանն մշանջենաւոր պարգևացն. զթագաւորական աթոռն միւսանգամ ելից, և իւրոց հարցն նմանեալ որդի եղև։ Այլ չա-

բախօսացն ընդդիմացեալ ըմբերամարտք, խափաներ և զանօրէնութիւնս և զխօսս և զգործս զայսպիսեացն միանգամայն։ Այլ վասն ճշմարտութեն մինչև 'ի մահ մարտնչէր, և զաջողակ արդարութեն քաջալերեալ խնդացուցանէր. և իւրով վարդապետութեն անձրևաւն պարարէր մտուցանել զշայեկան արդարութիւն օրհնութիւնսընդալու։ Այլ ընդ ՝ամ տեղիս սահմանացն Հայոց մեծաց, ընդ որ էր յառաջագոյն նորուն հարցն սերմանեալ զքարոզուն բանին կենաց, զնոյն և սա ոռոգեաց անձրևովն։ Զբոյսն աճեցոյց մշակն հնձող, եղեալ գործակից սերմանողաց. և բազմացոյց զյորդաբուխ արդիւնսն 'ի շտեմարանս արքայութեանն, կարգացն առաջին հարցն մշակացն փոխանորդ եղեալ՝ գործակից լինելով։

Այս և բազում զօրութիւնս անպատումն յանձին իւրում բարձեալ բերեր. նա և կարի խիստ զողորմածութեն կարգացն փոյթ արարեալ ցուցանելոյ, նախ ինքն առնելով առ իւր անձն բարի, և ապա այլոց օրինակ բարեաց դնելով, առ հասարակ վարդապետական բանիւն զամենեցուն զփակեալ դրունս մտաց 'ի բարին յորդորելով բանայր։ Զամենաբարի ուսուցանէր զսէր զյոյս զհաւատս զսրբութիւն զքաղցրութեն զհեզութեն զանտխակալութեն զինամ ունելով դարմանոյ աղքատացն տանելոյ, և յոյս հատուցման 'ի խոստացեալ աւետիսն Քրիստի. և 'ի դատաստանացն ամենին անչէջ հրոյն՝ յիշատակօք յաւիտենականն չարչարանօք սպառնալով, անսաչառական գալստեամբն Որդւոյն Յայ Քրիստի։ Այս այսու երկեցուցեալ, մինչև ամենեցուն՝ որք 'ի սահմանս Հայոց էին բնակեալ՝ ամենեքեան հաւատացեալք ընդ աղքատս իւրեանց զիւրեանց ինչս մատակարարեալ հաւանութեք հաւասարութեք, և ինքեանք ըստ մտոք զուարթութեք գործէին։

Այլ ինքն երթեալ հասանէր 'ի կողմանս Տարօն գաւառին. և ժողովէր առ ինքն զՀամ եպիսկոպոսունս Հայոց աշխարհին։ Ժողովեցան 'ի գեւղն Աշտիշատ, ուր զառաջինն զեկեղեցին էր շինեալ. զի նա էր մայր եկեղեցեացն, և 'ի տեղի լեալ նախնեացն Ժողովոց սիւնհոդոսին։ 'Ի ժողով հաւանութիս ե-

կեալ ամենեցուն, և խորհուրդ բարեաց 'ի մէջ արկանէին, կատարել անդ զաշխարհական կարգս եկեղեցւոյն և ժողովն հաւատոցն հաւասարուբ։ Յայնմ ժամանակի կարգեցին կազմեցին կանոնեցին յօրինեցին, և արարին զամ ժողովուրդս երկրին Հայոց իբրև կարգ միաբանութիւն վանականաց համաշխարհի, բայց միայն յամուսնութիւն օրինացն։ Բայց միայն զառաքելակարգ կանոնսն 'ի վերայ ամենեցուն կացուցաներ ՝ոբ եպիսկոպոսապետն Ներսէս. ամենեցուն խրատտու և առաջնորդ յորդորիչ և նախանձաւոր լիներ գործոց բարեաց։ Նախ ինքն առներ, և ամենեցուն զնոյն ուսուցաներ. առ հասարակ զնոյն օրինակ առնել հրամայեր յամ աշխարհս և 'ի գաւառս և 'ի կողմանս կողմանս, 'ի կոյս կոյս, 'ի խորշս խորշս սահմանացն Հայոց. յայտ արարեալ զպատեհ պատեհ տեղիսն զատուցանել, շինել աղքատանոցս, և 'ի ժողովել զախտաժէտս և զօրկունս և զմարմնալարս և զամ ցաւոտս. և նոցուն կարգեցին օրկանոցս և դարմանոց և ռոձիկս, և պատանս աղքատաց։ Զ'ի այսպէս ետ հրաման մեծ եպիսկոպոսապետն Ներսէս, և սոյն կամ եղև ամ սուրբ ժողովոյն, զի այնպիսիքն միայն նստեալ լիցին յիւրաքանչիւր կայեանս, և մի ելանել 'ի մուրոյն տառապանս, և մի բնաւ ելանել ըստ իւրաքանչիւր դուրս, այլ զի ամ ոք պարտապան է նոցա։ Հարկ իսկ է զի մի կարգ աշխարհի, ասէ, եղծցի. այլ արժան է զի ամենեքեան առ հասարակ ողորմածութիւն և երկիւղիւ տարեալ նոցա զդարմանսն, և զպիտոյս նոցա վճարեսցեն։

Շինեաց սոյնպէս, կարգեաց կազմեաց և հաստատեաց, բազում և այլ ողորմութիւս ուսուցաներ աշխարհի. բազում կարգս կանոնաց հայրենիս կարգեր։ Նաև առ յոյսն յարութիւն ցուցաներ ունել ակնկալութիւն. և զի մի զմահ մարդկանն առանց դարձի միւսանգամ կենդանանալոյ համարիցին, և անյուսութիւն 'ի վերայ գնացելոցն օձիրս գործիցեն լալեացն կոծոյն, զանառակութիւնս աշխարհին գնելոյ. այլ յուսով ամ գալստեանն ակն ունել և յարութենն նորոգութիւն, և իւրաքանչիւր գործոցն զյաւիտենական զհատուցումն առնուլ իւրաքանչիւր յոյս ունելով ա-

ւուր գալստեանն ՝ն սպասել։ Եւ զի լինիցին յա-
մենանութիւն օրինաւորք. մի ստել և մի դաւ բերել
իւրեանց ամենանութիւնընդալ կողմանց. և փախչել
աւելի 'ի մերձաւոր և յաղգին տոհմակից խառնա-
կութիւն ամենանութենէն. և մանաւանդ 'ի մերձա-
ւորական 'ի նուռց, և որ գամ մի այսմ նման լեալ
էր ինչ։ Եւ կանոն, հրաժարել ամենևին 'ի մեռելո-
ւոց և յարբենէ ուտելոյ, և 'ի դաշտանիկին մերձե-
նալոյ. զայդ ՝ամ պիղծ համարէր առաջի ՝ն։

Եւ զնենգութիւն և զքսութիւն և զագահութիւս
և զբարկութիւս, զցանկութիւս և զզրկութիւս, զա-
րուագիտութիւս և զիգութիւս և զամբաստութիւս, և
զանառակ արբեցութիւս և զորկորստութիւս և զյա-
փշտակութիւս և զպոռնկութիւս, և զվրէժս 'ի թշ-
նամեաց, և զստութիւս և զթշնամութիւս և զանողոր-
մածութիւս և զսուտերդմնութիւս, և զարիւնհեղութիւ
սպանութիւս և զանամագիտութիւն պղծութիւս, որ
ոչ ակն ունէին յարութիւն, և որ անյուսութիւն լան
զմեռեալս, ընդ մի օրինակ զամենեսեան 'ի միում
խորխորատ կորստեանն համարէր։ Եւ ՝ամ աշխար-
հին պատուիրէր, և գլխովին թագաւորին, առ հա-
սարակ ամենայն մեծամեծացն, և ամենեցուն՝ որ ոք
'ի վերայ ընկերին ունիցին իշխանութիւն, գութ ու-
նելով ընդ իւրեանց ծառայս և ընդ կրսերս և ընդ
աշակերտս, և սիրել իբրև զընտանիս, և մի անար-
ժանս և աւելի տարապայմանս հարկաւք նեղել քան
զչափն. յուշ առնելով, զի և նոցա ՝ամ դոյ յերկինս։
Այսպէս և ծառայից պատուիրէր՝ կալ յարգարն
հնազանդութիւն իւրեանց տերանց, զի 'ի տեառնէ լի-
նիցի նոցա վարձք։

Եւ եղև խաղաղութիւն և նորոգութիւն յաւուրս նո-
ցա ՝ամ եկեղեցեաց. և յաՃախէր շուք պատուի ՝ամ
եպիսկոպոսացն ընդ ՝ամ տեղիս Հայոց մեծաց։ Եւ
լուսաւորութիւն կարգի եկեղեցւոյ ամենապայծառ
ծաղկեաց ամենամեծ լիուք. կարգեցան կարգք կա-
թողիկէ եկեղեցեաց ՝ամ վայելչութիւն, և բազմացան
կարգք սրբութիւն պաշտամանցն, և պաշտօնեիցն յա-
Ճախուն։ Եւ բազմացոյց զկարգս եկեղեցեաց 'ի շէնս
և յանշէնս. սոյն օրինակ բազմութիւնք կրօնաւորաց։

կարգէր և 'ի տեղիս տեղիս դպրոցս յուսարէն և ասորերէն յամ գաւառս Հայոց. և բազում նեղեալց և տառապելոց գերեաց փրկութիւն և գերիդարձ առնէր, զորս ահիւ քարոզութեամբ փառացն Քրիստի զկիս, և զայլս զնովք փրկանօք ազատէր, և յիւրաքանչիւր տեղիս դարձուցանէր։ Աչրեաց և օրբոց և չքաւորաց հանդիստ և դարման առնէր, և աղքատք զօրհանապազ ընդ նմա ուրախ լինէին. և տաճար իւր և սեղան զօրհանապազ աղքատաց և օտարաց էր և հիւրոց։ Այս այսպէս առ յոյժ աղքատութեանն, զի թէպէտ և շինեաց զամ աղքատանոցս ընդ ամ գաւառս, և կարգեաց նոցա անդէն դարմանս, այսպէս զի ըստ իւրեանց անկողինս մահճացն մի ուրեք աշխատ լեցին ելանել, սակայն և զիւր տաճարն առանց նոցա ոչ առնէր. այլ կաղք և կոյրք և մարմնահարք, խուլք և հաշմեալք և ցանկանեալք և կարօտեալք ընդ նմա և 'ի նորա ակըմբի դարմանէին բազմեալք։ Այս ինքն իւրովք ձեռօքն լուանայր զամենեսեան. օծանէր պատէր, և ինքնին իսկ ջամբէր նոցա զիւրաքանչիւր կերակուրս, և զամ ինչ 'ի պէտս նոցա ծախէր. և ամ օտարքն ընդ նմա, հովանեաւ նորա հանգուցեալք, դադարէին։

Այս ամենեցուն զոր ինքն առնէր՝ զայն ուսուցանէր. և ինքն տրէ և զգաստ և արթուն, և զամ մարդ պատրաստական առ բանն ամ առնէր։ Այս ինքն ամենեցուն ըստ մարգարէիցն և կամ ըստ Աւետարանին նմա նուիրեալ զողորմածութիւնս ուսուցանէր. և էթէ զմեզս ձեր ողորմութիւն պարտ է քաւել ձեզ, և զանօրէնութիւնս ձեր դթութիւն և տրօք աղքատաց։ Այս սոյնպէս տարաւ եցոյց՝ զառաքեալսն յուշ առնելով, որ պաշտօն աղքատաց, զմեծն և զնախավկայն զյառաջնարաւ կաւագն Ստեփաննոս և զընդերս նորա՝ զորս ընտրեցին, որ զերկինս եբաց, և զԱրդին ընդ աջմէ Հօր ամ այս գործով արժանի եղև տեսանել։

Սոյնպէս և զԱյծեմնիկն իւր ողորմածութիւնն և խանդակաթ այրեացն ողբումն, 'ի ձեռն մեծին Պետրոսի, և զհրաժարեալն զգնացեալն զմեռեալն միւսանգամ այսրէն դարձուցանէր 'ի կենդանութիւն։ Սոյնպէս և մեծն Պօղոս, ասէր, պատմէ՝ թէ իբրև

տեսին զՆնորհսն, որ տուեալ էին ինձ, Յակոբոս և Կեփաս և Յովհաննէս՝ որ բուն սիւնքն էին, իբրև տեսին՝ թէ հաւատարիմ եմ ես յաւետարանն ան-թլփատութեան, որպէս նոքա 'ի թլփատութեանն, ևս քաջ համարձակեցին. ձեռն ետուն հաւանութեան ինձ և Բառնաբայ. զի մեք 'ի հեթանոսս, և նոքա 'ի թլփատութիւնն։ Բայց միայն պատուիրեցին ինձ, ասէ, զի աղքատաց խնամ կալցուք. զոր ես ինքնին իսկ, ասէ, փութայի ջանալ կատարել։

Այսպէս ևս առաւելագոյն զտէրունականն զներ առաջի, որ մեծատունն էր՝ որ զնամ պատուիրանն կատարեալ էր, ապա լուաւ 'ի նոնէ՝ եթէ վաճառեա զինչս քո և տուր աղքատաց, և գտցես քեզ գանձս յերկինս. և որ զինի սորին՝ եթէ դիւրին է մալխոյ մտանել ընդ ծակ ասխան, քան մեծատան ագահի յարքայութիւն։ Այլ դարձեալ՝ եթէ արարէք ձեզ բարեկամս 'ի մամոնայէ անտի անիրաւութեան, որ ընկալցին զձեզ 'ի յարկս իւրեանց յաւիտենից։ Կամ որպէս նոյն իսկ Պօղոս բարեաց գործոց նախանձաւոր լինէր, ստիպէ ամենեցուն ասելովն՝ եթէ զհետ երթայք սիրոյ, և նախանձաւոր լերուք հոգևորացն։ Որոյ զյօժարութիւն աքայեցւոցն վասն պաշտման սրբոցն 'ի Մակեդոնիա պատմեալ՝ նախանձեցուցեալս յորդորեաց. այլ և համարձակութիւն իսկ տայ անխափան 'ի բարեացն առաքինութիւս, թէ լաւ է յամ ժամ նախանձել 'ի բարիս։ Դարձեալ փութայ ամենեքումբք հանդերձ ըստ Աստի հետոցն վարել։ Հայեցարուք, ասէ, 'ի զօրագլուխն հաւատոց և 'ի կատարիչն Յն. դարձեալ՝ թէ յիշեցէք զառաջնորդս ձեր և զվերակացուս ձեր 'ի Տէր, որք խօսեցան ձեզ զբանն կենաց. հայեցարուք յելս գնացից նոցա, և նմանողք լերուք հաւատոց նոցա։ Այլ միանգամայն՝ թէ զայս խորհեսցի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ, որ 'ի Տէր Յն. և դարձեալ՝ թէ սկսաւ Յն առնել և ուսուցանել։ Իսկ ցանկալի եղբայրս՝ նոն Յակոբոս զհամբերն իսկ զգունդս սրբոցն հանդերձ սրբասէր տերսամբն յօրինակ առեալ 'ի Թղթին իւրում, ասելովն՝ եթէ օրինակ առէք, եղբարք, զչարչարանաց երկայնմտութեն զմարգարէսն՝ որք խօսեցան յանունն Տն.

զհամբերութիւնն Յոբայ լուարուք, և զկատարումն ՏԵՐՈՅ տեսէք։

Զայս և այսպիսի ինչ, և որ ինչ այսմիկ նման էին բանք, խօսէր հանապազ. զտիւ և զգիշեր ոչ դադարէր 'ի խրատելոյ և 'ի բողոքելոյ։ Եւ իմաստութիւնք Հոգւոյն սրբոյ, որ բնակեալ էր 'ի նմա, ըստ ամ աւուրց իւրոց ժամանակացն ամաց կենաց իւրոց երանելի եպիսկոպոսապետն Հայոց 'Ներսէս այսպէս առ ամենեսեան զխրատ վարդապետութեն առ հասարակ իբրև զՀայր բազմագութ իբրև զմայր գթած ցուցանէր. զՀոգևոր սիրոյն եռանդն ածէր առ ամենեսին, առ մեծամեծս և առ մանկունս, առ պատուականս և առ անարգս, առ հարուստս և առ աղքատս, առ ազատս և առ շինականս։ Եւ զվերակացութիւս աշխարհի ամ հոգաբարձութիւնք, առանց ամ ծուլութեան և ամ յապաղութեան, տանէր մինչև 'ի վախճան իւր, և ոչ երբեք ուրեք եղև նման նման այլ ոք 'ի հայաստան երկրին։

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս Ներսէսի Հայոց կաթողիկոսին, թէ զնարդ ԱՌՇԱԿայ արքայէ առաքեցաւ առ Վաղէս կայսրն հանդերձ նախարարօքն. թէ վասն որդւոյն կայսերն զինչ խօսեցաւ շատ բանս հաւատոյ, և կամ զնարդ կապեցաւ և աքսորեցաւ, և զայլ նախարարսն արձակեաց հանդերձ պատարագօք։

Զայն վասն խաղաղութեան ուխտին միաբանութեան դաշինն, որ էր աշխարհին Հայոց ընդ կայսերն Յունաց, դէպ եղև առաքել անդր կաղմուք մեծաւ արքային Հայոց. զի ինքնին մեծ կաթողիկոսն Հայոց 'Ներսէս, և 'ի մեծամեծացն Հայոց սատրապս տասն ընդ նմա առնել, զի երթիցէ. 'ի մէջ կայսերն և 'ի մէջ իւրեանց զուխտն հաւանութեան և խաղաղութեան նորոգեսցեն։ Զայս չոգան գնացին հասին 'ի կայսերական պաղատն Թագաւորացն Յունաց։

Օ այնու ժամանակաւ Թադաւորն մեծ Յունաց Վաղէս'ի խոտորութենն հերետիկոսութեանն արիանոսաց էր 'ի հաւատս։ Զորդ իբրև եւ տես զնոսա Թադաւորն, զառաջինն մեծապայծառ փառօք մեծաւ շքով մեծարեաց զնոսա։ Զպա դէպ եղև՝ զի որդի միամօր կայսերն, այն իսկ գտանէր նոքա զաւակ, անգեալ դնէր յախտս սաստիկ հիւանդութեան. ապա Թադաւորն վասն աղօթս առնելոյ 'ի վերայ մանկանն ստիպէր զսուրբ կաթողիկոսն Հայոց զԼերսէս։ Իսկ նա 'ի մէջ մատուցեալ, խօսեալ սկսաւ և ասէ.

Զթէ հաւատասցես՝ եթէ որ Յիս Վրա որդի և ծընունդ այ միածին, ինքն յինքնութենէ և իսկ յիսկուէ, յորովայնէ հօր ծնունդ և ոչ արարած, ծագումն հօր, լոյս փառաց էականին, և նկարագիր էութենէ նորա. զի այն ծնունդ է և որդի 'ի բնութենէ նորա. զի որպէս հայրն՝ նոյնպէս և որդի 'ի բնութենէ յառաջ քան զամ յաւիտեանս 'ի հօրէ ծնեալ, յառաջ քան զլինելն արարածոց՝ ծնունդ, գործակից արարչակից յամի առ հօր 'ի սկզբանէ. զի ամ 'ի հօրէ նոր վաւ եղև յերկինս և յերկրի. զի միշտ ընդ հօր 'ի սկզբանէ յառնելն զամ արարածս, և 'ի բնէ և 'ի սկզբանէ ընդ նմա ունէր զհամեմատ կերպարանս զիւրոյ ծնողական տալոցն նմանութենն՝ հանգոյն զուգակցութենն. որ 'ի սկզբանէ աշխարհի կրել զամ բանիւ զօրութեամբ, և իւրով բնական իշխանութենն վարէ ուղղէ և առաջնորդէ ամ արարածոց. որ 'ի սկզբանէն արար և հաստատեաց զհիմունս երկրի, և ձգեաց զերկինս որպէս զխորան. որոյ ձեռքն արարին և հաստատեցին զամ երեսս երկնից. որ արար զմարդն իսկ 'ի հողոյ, և կարգեաց զբանաւորս զխօսունս իմաստունս անձնակամն։ Այս իբրև անձնիշխան կամաւք ապականեցան մարդիկ, ոչ ծանեան զարարիչն և ոչ զպատուիրանս նորա, որդի 'ի բնէ 'ի սկզբանէ նստէր ընդ աջմէ հօր, և աթոռակից ծնողին իւրոյ էր. իսկ իբրև ետես եթէ արհամարհեալ կայր հայր 'ի մարդկանէ, խաղաց եկն էջ յաջմէ աթոռոյ անտի. ամիս փեցաւ փոքրկացաւ, և 'ի կուսէն մարմնացաւ. մարդացաւ, և զանձն ունայնացոյց. և մարդ եղեալ, կա-

մեք կրեալ զվիշտն, մեռաւ և յարեաւ և կեցոյց զա-
մենեսեան առ հասարակ. և վերացաւ և նստաւ յա-
թոռ իւրոյ բնութեանն, ընդ աջմէ Հօր՝ իւրոյ ծնողին։

Ընդ եթէ զայս այսպէս հաւատացեալ եթէ Աստ-
ուած որդի և ծնունդ է այ, որովք և բազմաք և անթիւ
վկայութեամբ հաստատեալ զքեզ, և լուանալ զքեզ
'ի սուտ և 'ի սիրտ մկրտութենէ հերետիկոսութեան
հաւատոց։ Այլ ընկալ դու զմկրտութիւն սրբութեան
հաւատոցն 'ի շնորհս յանուն Հօրն արարչին, և 'ի
խոստովանութիւն ծննդեան Որդւոյն 'ի Հօրէ, որ է
յառաջ քան զյաւիտեանս և զժամանակս, որ է ըստ
բնութեանն զոյացուած իւրոյ. և 'ի մարմնանալ 'ի կոյս-
սէն, որ եղև 'ի վաղջան ժամանակաց, որ եղև վասն
մերոյ փրկութեան և կենդանութեան. 'ի մահն և թա-
ղումն նորուն Որդւոյն Յսի Աստի. և 'ի խաղաղութիւն
և 'ի միաբանութիւնն և 'ի պարգևս նորուն Հոգւոյն
սրբոյ։ Ա՝կրտեաց դու 'ի սոյն յայս խորհուրդս սքան-
չելի կենաց թողութեան և նորոգութեան. և զմանուկն
քո այսմ սրբութենէն երանութեան լուսոյ թողութեան
մկրտութենէն արժանի արասցուք. և խնդրեսցուք 'ի
Աստուծոյ մերմէ, զի թողցէ զմեղս անհաւատութեան
հերձուածողութենէն, և ողորմի. վասն որոյ ցաւք և
տանջանք եղեն 'ի սկզբանէ և լինին։ Ա՝յդմ ես լինիմ
երաշխաւոր վասն նոր ողորմածի՝ զի զմանուկն ողջ
անարատ առաջի քո կալայց, եթէ դու յուղղափառ
եկեսցես, և իբրև զայլ որթոդոքս խոստովանեսցիս
ընդ մեզ։

Այլա թէ ոչ խոստովանեսցիս 'ի Աստ միածին Որ-
դին այ, զոր նախ յառաջ քան զամ՝ Հայր 'ի բնութեան
իւրմէ բաւական իւրոյ բնութեան հայրութեամն ծնաւ
ծնունդ կատարեալ միածին, նոյն նման զուգակից,
և աթոռակից և արարչակից. որ վասն սիրոյն նորա
սիրեաց զմեզ, առ սէր մեր առաքեցաւ 'ի Հօրէ 'ի
կոյս նոր Ա՝արիամ, և երևեցաւ մարդ 'ի կնոջէ այն՝
որ նման էր բնութեան իւրոյ ծնողին, և 'ի բնութենէ
ունէր զբնութիւն Հօրն կերպարանաց Հօրն իւրոյ, մարմ-
նոյն վասն մեր եղև իւրովք կամաք 'ի կերպարանս
ծառայի։ Այլ քանզի անկան մարդիկ ինքնակամ կա-
մաք 'ի ծառայութիւն, արդ ինքն նոր եղև 'ի կերպա-

բանս ծառայութեան, զի 'ի ծառայութէ ազատեսցէ զմեզ։ Զի 'ի սկզբանէն յորժամ առնէր ամ զարարածս, յետուստ արար զմարդն՝ յերևոյթ և յանեռևոյթ իւրոյ զօրութեցն 'ի մի և նոյն ժողովեալ. և այսպէս զամ 'ի նոյն պնդեալ ձուլեաց զարարածս, զոր և ըստ նմանութեան պատկերի կերպարանաց իւրոց արար. և եդ զնա իշխան անձնիշխան իւրոց կամաց։ Զամն որոյ նախանձու սատանայի ապականեալք հնացան 'ի բանսարկութիւն խարդախութեան պատրանացն։ Իսկ ամ եկն յայց ելեալ կորստականն, ծնաւ 'ի կուսէն 'ի մարդկան կերպարանս, զի արասցէ խաղաղութիւն յերկինս և յերկրի, և ածցէ զիւր հայրն ծնօղ 'ի հաշտութիւն ընդ արարածս իւր՝ մարդակերպ պատկերաւն, զի յանդիմանն լեցին ամ մերժեալ արարածքն աներևոյթն այ։

Զպա յիրաւի ուրեմն 'ի նորոգման արարածոց, զամ վերստին նորոգէ. զի եթէ ելցէ ոք 'ի Քրիստ, նոր արարած։ Զի այն, որ հինն էր, էանց. արդ աւասիկ եղև նոր ամ. զի եկն էառ զմարդկան կերպարանս, և ինքեամբ դարձեալ զամ նորոգեալ հաստատեաց։ Ինքն եղև օրինակ մերոյ կենդանութեան, անդրանիկ ամի մեռելոցն՝ մեռանելոցն. և նախ 'ի մեռելոցն յարութիւնն, զի յայտնի արասցէ ինքեամբ զամ. զի ըզմեզ առանց փոխման արասցէ հոգւով, և անմահ մարմնով. զի մի միայն մարդիկ յանփոփոխումն հոգւոյն կայեսցուք, այլ յանմահութիւն մարմնոյն. զի և աներևոյթքն դարձեալ և բանաւոր զօրութիւնքն ամ անփոփոխմանս այսմիկ ընդ մեզ ակն կալցին։ «Քանզի ամ արարածք ազատեսցին 'ի ծառայութենէ անտի ապականութեան՝ յազատութիւն փառաց Որդւոյն այ»։ Զի առ այն, ասեն, որ 'ի մէնջ 'ի կուսէ անտի մարդ ծնաւ ածն, որ մեք աստի առ ժամայն 'ի հաստատութիւն թօթափեալք, և հանդերձեալ ժամանակին 'ի լաւագոյնսն հասեալք ամենեքին, հայեցեալք սպասեալք ակն ունիմք 'ի սկզբանէն յարարիչն և յառաջնորդն նորոց արարածոց։ Քանզի ծնունդ և կերպարանք է նա աներևութին այ, միածին ծնունդ Հօր, արարիչ ամ արարածոց. ուստի և զհանգամանսն թարգմանեալ, ածէ թափէ Զա-

քեալ միանգամայն և ասէ՝ թէ «Լովաւ հաստատեցան ամ որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, եթէ երևելիք և եթէ աներևոյթք, եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ իշխանութիւնք, եթէ պետութիւնք, եթէ զօրութիւնք»։ Այլ խոնարհագոյն յայտնագոյն առնէր զասացեալսն. «Օ՛ի ինքն է անդրանիկ 'ի մեռելոց, զի եղիցի յամի ինքն յառաջացեալ. զ' 'ի նմա հաճեցաւ ամ լրութիւն բնակել, և կամ նովաւ կատարել զամ, զի արասցէ խաղաղութիւն արեամբ խաչիւն իւրով, նովաւ այն որ ինչ յերկինս, և որ ինչ յերկրի»։ Օ՛ի չարչարանօք ոնն Վէտի միածնի Որդւոյն այ, ամ 'ի նոյն ժողովեցաւ որ յերկինս և որ յերկրի։

Վանգի մեծութիւն այ արար զամ, և կացոյց ըզմարդն որ ամի. հրամայեաց և բազմացան։ Այս կաւ ցոյց իշխանս և կարգեաց առաջնորդս։ Իսկ յորժամ 'ի պատուիրանաւանդութիւնն գործեցին առ գամ մի, անկան յիշխանութիւն՝ զոր առեալ յառաջն ունէին։ Իսկ յերկրորդին՝ լոկ միայն վասն կարօտութեան պիտոյից ետ իմիք իշխել, և իմիք չիշխել. զի գոնեայ ապա յետոյ յետուստ իշխելոնն ծանիցուք զշնորհն, և չիշխելոնն զամենաանն տէրութիւն գիտասցուք։ Իսկ ո՞վ իցէ, որ ոչ ցանգանայ մեծութիւնն և կամ մարմնոյ առողջութիւնն, և կամ կամարարութիւն կարօտիցի, որ միայն միում միածնի Որդւոյն այ վայել է։ Իսկ մարդկանն, ոչ առ ամենեսին մեծութիւն, և ոչ առ բնաւ աղքատութիւն. և ոչ միշտ մեծք, և ոչ 'ի սպառ աղքատք, կամաւ մեծացեալք և կամաւ աղքատացեալք։ Որմանց ծնեալ, և ոչ մնուցեալ. 'ի չափ հասուցեալ, և անարգեալ թշնամանօք։ Ո՞վ իցէ, որ սիրեաց զհիւանդութիւնն և ատեաց զառողջութիւս. յամի պակասեալք, և ոչ կարօտեալք։ Կէսք 'ի կռապաշտութիւն և 'ի սպանութիւս, 'ի պոռնկութիւն և 'ի բազմազգի չարիք կաշկանդեալք զմածեալ կան. կէսք մոլորեալք և դանդաչումս մտօք ընդ պատահարօք[1] կապեն զամ, եթէ զբարի և եթէ զչար։

Իսկ յորս արեգակն արդարութիւն զլուսաւորութիւն

1 Յերկուս օրինակս ընդ պապ- ր օ ։ 'ի միում ընդ պապարագ օ ։ 'ի միւսում ընդ պապրոսակ օ ։ և 'ի միւս այլ ընդ պաՙրօ ։

հաւատոյն ծագէ, և զմէգ տգիտութեն խաւարին սեւութիւն հալածէ, նոքա հանապազ յանդիմանեն զտութիւնս և զմոլորութիւս։ Եւ նախ իբրև գործովք և օրինակ բարեաց յանձինս ցուցանելով, և ապա զայլս ուսուցանելով զնոյն. նախ ոչ երկմտելով 'ի հաւատոյն յերրորդութենէն զօրութենէ արարչութեն, և ապա զանձինս սրբութիւն և զգաստութիւն և պարկեշտութիւն պահել յաշխարհս։ Եւ կեալ ամ հանդարտութիւն ըստ կամացն Աստի, մերոյ արարչին, Ողորմոյն այ. և արհամարհել կոխել զամ անցաւորս, և վերամբարձ 'ի թեւս որ Հոգւոյն թռչել անցանել 'ի վերայ աղբախումբ զօրութեանցս՝ որ աստէն առ մեք պատաղիչքն. և այնչափ խորշել և մերժել և յանպիտոյիցս, մինչև զկերակուրս աւուրն ռոձկին արհամարհել, թող թէ զմիս կամ զգինի ճաշակել, որ զնախճամէջ պարն յուղացուցեալ մաձկացուցանէ և զճարպն, և զերիկամանքն պատեալ. ուստի բոյր և ազգի ազգի ելանեն անթիւ անօրէնութիւնքն։ Որ տայ այնպիսեացն, որ զայն սիրեն, ապաշնաչն ըստ կամն անձանց իւրեանց։

Զ.ՍՐ մեզ ընդ այսր լեցի վայել 'ի շնորհս մարդասիրութենէն բարերարութենէն, յոր ամ ազգ և ազգինք խոստովանին զամ Յոտ Աստ ծնեալ 'ի Հօրէ, ծնեալ և ոչ արարեալ, խակակից հօր և բնակից ծնողին իւրում. ծագումն, լոյս փառաց Հօր, կերպարանակից իւրոյ ծնողին։ Եւ որոց իցեն աչք մտաց, և չեն կուրացեալ 'ի հաւատոյն ճշմարտութենէն, նոցա նայելիս ցուցանէ, որոց ամ կողմանքն հայելիք են։ Ի լուսով նորա է ամ երկինք և երկիր և ամ աշխարհք, և ամենեցուն լսելիս որոշի՝ որ ամենայնիւն լսելիք են. և ամ ծածկեալք սրտից և խորհրդոց մտանեն 'ի լսելիս նորա, և զնոսա զամ շունչս մարմնոյ։ Եւ իւրովք կամօք երեւեցաւ մարմնով հասակաւ անձամբ կերպարանօք և պատկերաւ, գթութիւնքն իւր արարին. և ոյք սիրեն զնա, սէրն իւրեանց կերպարանեն զնա 'ի սիրոս իւրեանց, և երկիր պագանեն նմա հոգւոյն ճշմարտութիւն. սրբեալ զսիրտս իւրեանց և զմարմինս իւրեանց, առնեն տաճար որ Հոգւոյն. և հաղորդք և հաւասարորդք և բաժանորդք առնին մեր

երանութեան, զոր Եան ՝որ և ասէ՝ եթէ «Երանի՛ որ հաւատացեալն ճշմարտութեան». եթէ «Որ Եսեան զիս, Եսես զՀայրն իմ». և եթէ «Երանի՛ որ ոչն տեսին զիս, և հաւատացեալն յիս. զի նոքա զՀայր տեսցեն»։ Եւ միտք՝ որ յաճախութեանն հաւատոցն անմասն Եղեալ են, 'ի կերպարանացն Թափուր և ունայն իբրև ախերակք[1]։

Իսկ որք լուսաւորեալք են տեսանելեաց աներևոյթ սրտին աչօք, որպէս ասէ մարգարէն. «'Ի քեզ ասաց սիրտ իմ, և խնդրեցին երեսք իմ զերեսս քո». դարձեալ ասէ. «Երդի զՏէր առաջի իմ յամ ժամ, զի էր ընդ աջմէ իմմէ, զի մի՛ սասանեցայց». և դարձեալ ասէ. «Ուրախ եղէց յուրախութիւն երեսաց քոց»։ Այլ այժմ 'ի ծածուկ լուսաւորութենէն խորհրդովքն տեսանէին զնա ըստ նորա կամացն, ապա 'ի վաղճանի դէմ յանդիման երևեսցի. որպէս երանելի Դաւթեան Պօղոս ասէ՝ եթէ այժմ ընդ հայելի օրինակաւ տեսանեմք, իսկ յապա առ յապա յորժամ գայցէ՝ բերիցէ ինքն տալ մեզ զիւրոց փառացն զանմահութիւն և զանեղծութիւն. և յորժամ առանց նմանութեանն և առակացն գայցէ երևեալ Որդի Հօր և ՝՝՝ Հոգւոյն, յորժամ հրամայեսցէն ամենեցուն՝ եկեալ անմահութիւնքն՝ որք զՀոգն տեսանիցեն առաւել առ բազմացն արժանեացն ակնկալութիւն, կամի երևեցուցանել զփառաւոր զգալուստն իւր, որպէս վասն երկայնմտութեանն համբերողացն և յուսալից սպասելոցն գայցէ երևեալ Յիսուս ծնունդ ՝՝՝ Հօր։ Որ ՝՝՝մ արդարոցն գայ պարգևատուն վասն վկայելոցն 'ի հաւատոց անտի։ Որոց չէ ընկալեալ զաւետիսն, ՝՝՝ վասն մեր լաւագոյն խորհեալ՝ զի մի առանց մեր կատարեսցին։ Օ՛ի եթէ քննեսցէ որ զգիրս ՝՝՝ս, յամ ՝՝՝ծաշունչ մատեանսն զսոցն և զՀոգեղէն յաճախութիւն հոգևոր պատգամացն գտանէ որ. վասն զի կան պահին արդարոցն և հաւատացելոցն լուսաւորք և թագքն արքայութեան յաւիտենից ժամանակին, և թեռահաւատիցն ժխտողացն և անհնազանդիցն ժպրոհուեն պատիժք, ՝՝՝արակ լինել նոցա անշէջ հրոյն յա-

1 Ցորինակի միւսմ ասերակ։

վիտենից դատաստանին յանուն նոն, յանսպառ յանսահման առանց թուոյ և առանց չափոյ ժամանակն տանջանաց գեհենին, խաւարին դատաստանին՝ որ գալոցն է։

Ա.յլ վասն որդւոյն քո, եթէ դու 'ի ճշմարիտ հաւատս ուղղութեան եկեսցես, խնդրեսցուք 'ի նոնէ և դիցուք զձեռս մեր 'ի վերայ նորա, և ասասցուք՝ թէ ըստ հաւատոցն ձերոց բժշկէ զսա Տէր ծնունդ ոգի, և բարեմիտ ողջանդամ յարիցէ նա առաջի քո. և հանդերձ արքայութենն նորոգութենն՝ անմահութենն յաւիրժ բարեաց ևս արժանի արասցէ զձեզ։ Այլապա եթէ ոչ հաւատասցես, զիարդ արդեւք լինիցի թողութիւն և բժշկութիւն. և կամ մեք զիարդ արդեւք իշխիցեմք յանդիմանել կամ համարձակել և խնդրել, և կամ առնել աղօթս վասն այնոցիկ՝ որք բնաւ իսկ ոչ ճանաչէին զնոր, զի բարկութիւք նոն վախճանէ զայնոսիկ՝ որք ոչ ուղղութիւն զնոր խոստովանին. և կամ որ ոչն մարթիցեք խնդրել զնա, որք ոչ հաւատայք գիտուն պատուիրանացն նորա, և ոչ 'ի միտ առնուլ զօրէնս նորա։ "Զ 'ի օրէնքն նոն ամբիծ են, դարձուցանեն զոգիս. վկայութիւն նոն հաւատարիմ է, իմաստուն առնէ զտղայս։ Ա.րդարութիւն նոն ուրախ առնէ ըզսիրտս. պատուիրանք նոն լոյս են, և լոյս տան աչաց. երկիւղ նոն նոր է, և մնայ յաւիտեան։ Դատաստանք նոն ճշմարիտ են, և արդար է 'ի նոյն. ցանկալի է նա քան զոսկի, և քան զակնս պատուականս բազում. և քաղցր է նա քան զմեղու խորիսխ"։ Իսկ որոց զանձինս իւրեանց յապականութիւն տուեալ, և նիւթ հրոյ պահէ զնոսա, "Ա.յլ են բանք և ոչ էն խօսք, որոց ոչ լսին ձայնք նոցա. այլ նոցա ընդ ամ երկիր ելբարբառն, և մինչև 'ի ծագս տիեզերաց էն խօսք նոցա"։ Իսկ որք ոչն լսենն, և որք լսենն, պահէ նոցա նոր զհատուցումն նորա։

Զայս ամ բանս, և որ ինչ այսմ և սմին ինչ նման էին բանք, խօսեցաւ նոն՝ Ա.ստուածն ընդ կայսերն. և զայն յաւել՝ եթէ յօրէ յայսմանէ ինչ յաւուրս հրեշ գետասան վասն ողորմածութիւն բարերարութեն վասն ներելոյն անսացեալքեզ, կէտ ժամանակաց այնչափ աւուրց անսացեալքեզ, եթէ ոչ ուղիղ եկեսցես 'ի

հաւատան, նշան քեզ այս լիցի. որ մինչև յայն օր 'ի հաւատան ոչ հաստատեսցիս, յետ ընդդէմ եղեալ կի-տին՝ մեռցի մանուկն. զի գիտասցես եթէ հաւատա-րիմ է այս ամ, զոր խօսեցայ առաջի քո։

Այլ իբրև լուաւ Թագաւորն զայս ամ, զի մինչ դեռ խօսէրն առաջի նորա՝ նա լուռ եղեալ կայր, ոտն զո-տամբ արկեալ, արմունկն 'ի ծունգ և ձեռն 'ի ծնօ-տի՝ նստաւ այնպէս, մինչև կատարեաց խօսեցաւ զամ զբանս իւր։ Այլ գրէին զայս սեմիարք նոտարացի ար-քային, ողբ կային առաջի Թագաւորին։ Այլ մե-ծապէս 'ի ցասումն բրդեալ լինէր Թագաւորն, և տայր հրաման՝ երկաթի կապանօք մեծապէս կապել զՇՐ եպիսկոպոսապետն Հայոց զԱերսէս, և արկա-նել 'ի փիւղակէ. զի մինչև տեսեալ ուշ ունիցի մանկանն, եթէ կեցցէ՞ եթէ ոչ. ապա յետ այնորիկ տես-ցէ զինչ արժան իցէ առնել։ Այլ յետ ընուլ աւուրցն հնգետասանիցն անցելոցն, սատակեցաւ մանուկն որ դի կայսերն. և ընդ ամ այն ժառանգ դատանէր նո-րա։ Իբրև եղաց և կոծեցաւ որչափ կոծեալն էր, ա-պա ետ հրաման և ածին առաջի իւր զՇՐն Աերսէս։ Զօտ առ ինքն կոչեալ հարցանէր, եթէ 'ի ձէ՞նջ քրիստոնէից եղև մանկանն մեռանել։ Իսկ նա ետ պատասխանի, և ասէ. Հնգետասան օր յետ բանիցն եղելոց երկարեաց ՏՐՆ, թերևս դարձջիք. իսկ իբրև ոչ դարձայք, սատակեցայք։ Իսկ դու այժմ եթէ հա-ւատացես, կարող է Աստուծն այ ՅՐՆ յարուցանել զնա, և հանդերձ որդւովն քո և ամ ընդանեօքն։

Այլ զայրացեալ ընդ բանսն Թագաւորն, կամե-ցաւ զնա չարամահ առնել. ապա մատուցեալք առ Թագաւորն աւագք իւրոյ դրանն և խորհրդականք, և ասէն ցկայսրն՝ եթէ յօտար և'ի հեռաստան երկ-րէ վասն որոյ յղեալ զդոսա հզօր Թագաւորի, և մեծի ՏՈՆ հրեշտակք են, մի՛ ինչ լիցի դոցա վնաս 'ի մէնջ. եթէ ոչ, մեծ պատերազմ յառնելոց է ընդ մեզ և ընդ մեծ Թագաւորն Հայոց, և մեծ Թշնա-մութիւն 'ի մէջ անգանելոց է. զի ոչ եթէ նորա բա-նիւ մանուկն կեայր կամ մեռանէր։ Այլ Թէպէտ այսպիսի քաղում ինչ ասէին, ոչ կարէին զսրտմտութիւն բարկութիւնն շիջուցանել զԹագաւորին։

Այլ երբև յանհնարին մտանէին երբն, և պէս-դեալ յամառէին ամենայն բազմութիւնն՝ զի մի զայրն սպանցէ, ապա ուրեմն հազիւ հազիւ կարացին իւր զօրքն 'ի հաւան ածել զթագաւորն. այնչափ առ-նել, զոնեայ մի՛ սպանցէ։ Այլ սակայն արձակել տալ ոչ կարացին. այլ արկին յայն չափս, զի աքսո-րեսցի միայն։ Օ՛ի այսպէս մեծապէս ՀԳնեալ խոր-հեցան իմաստունքն, զի առ դամ միայն աքսորելո

պելոյ, և ոչ կերակուր. բայց սոսկ միայն մնապատ
իցէ, զի սովամահ սատակեսցէ զնա։ Այլ ժողովեալ
զամ իւրոյ իշխանութենն քաղաքաց զամ որթոդոքս
եպիսկոպոսս զերիցունս զսարկաւագունս, որ միան-
գամ յուղղութենն էին և 'ի հաւատս. և մեծ ժողով
առ հասարակ իշխանութենն ժողովեցան։ Այլ խօսէր
ընդ նոսա, զի ամենեքեան յանձն առցեն դառնալ
'ի խոտորութենէ հաւատն աղանդութենն արիանոսաց,
և դարձցին անդրէն երթալով յիւրաքանչիւր վի-
ճակս, և շրջեսցին զիւրաքանչիւր ժողովուրդս յա-
րիանոսաց հաւատն։ Իսկ եթէ ոչ ոք 'ի նոցանէն
այսմիկ յանձն առնուլ հաւանեցան, ապա աքսորեաց
զնոսա, և ընդեց յաշխարհս օտարս, զի մի՛ ոք 'ի նո-
ցանէն դարձցի յիւր տեղիս։ Այլ փոխանակ նոցա՝
զանօրէնութենէ հովիւսն կացուցանէր, յամ քաղաքս
արիանոսս չեպիսկոպոսս յղէր. և եղև մեծ շարժումն
և խռովուն և հերձուածք յամ եկեղեցիս տիեզերաց։

Այլ մեծ եղև ընդ ամ տիեզերք փորձութիւնք նե-
ղութեց վտանգի. քան զառաջին թագաւորացն. և ա-
ռաջ զոյն յառնէր առ այլովք դիցապաշտ մեհ-
նասէր թագաւորաց։ Մինայն Ճշմարիտ ուղղափառ-
հաւատք վարդապետք մերժեցան յիւրաքանչիւր ժո-
ղովրդոց, և զնոցա տեղիսն կալան մշակք սատանայի.
և ամ հաւատացելոց 'ի Քրիստոս հասանէին բազում նե-
ղութիւնք, և առ հասարակ ամ ժողովրդոցն լինէր
սուգ և տրտմութիւնք։ Զի կալան զեկեղեցիսն ամ
պաշտօնեայքն սատանայի, և հեռացան հովիւքն յիւ-
րաքանչիւր հօտից, և եղէն խաշինք ցրուեալք. զի
ոչ գոյր նոցա առաջնորդ, և ոչ մնաց տեղի աղօթից
հաւատացելոց ժողովրդոց։ Այլ զի մի՛ հրեշտակացն
սատանայի հաւանեսցին, նոքա 'ի բացատ յանյարկ
տեղիս՝ արտաքս և քաղաքաց և շինաց ասէին կալ
յաղօթս. և 'ի կատարել զաղօթսն իւրեանց՝ խնդրէ-
ին ուխտիւք յայ, զի փոխեսցէ զանցուսցէ զչար ժա-
մանակն, և դարձուսցէ զՃշմարիտ իւրաքանչիւր վե-
րակացուս յիւրաքանչիւր ժողովուրդսն, և յիւրեանց
վաստակս 'ի շինեալ եկեղեցիսն՝ ուստի մերժեցանն,
թերևս դարձ լիցի նոցա այսրէն։

Իսկ յայն յիշխանաց՝ որ ընդ սրբոյն Ներսէսի երթեալ էին յերկրէն Հայոց, զնոսա բազում դանձիւք լցեալ արձակէր, կաշառակուրծս կաշառաւէկս առնէր առ հասարակ՝ որ միայն անդ էին. և բազում դանձս ոսկւոյ և արծաթոյ, և ականց պատուական՝ նաց 'ի ձեռն նոցա՝ արքային առաքէր, իբրև այնու կամէր հաճել զմիտս Թագաւորին։ Զի ոչ գոյր չափ և ոչ թիւ, զի անհամար դանձս առաքէր արքային Հայոց. զրէր առ նա զիր ամբաստանութեան զսրբոյն Ներսիսէ, իբրև թէ սպան զորդի նորա։ Եւ արձակեաց ևս զպանդանդան զԱրշակունիսն Թագաւորին Հայոց, որ կային ևս 'ի կայսերական պաղատանն. զի են նոքա եղբօրորդիք արքային Արշակայ, զի միումն անունն Ճանաչէր Պնեալ, և միւսումն անունն Տիրիթ, ետ 'ի ձեռս սատրապացն Հայոց, և զնոսա զայս օրինակ անդուստ յուղարկէր։

ԳԼՈՒԽ Զ.

Ցաղագս եթէ զնարդ, իբրև աքսորեցաւ սուրբն Ներսէս և ընդեցաւ 'ի կղզին Յանապատն, թէ որպէս կամ զնարդ կերակրեցաւ, և կամ որպէս յայ եղեն աքանչելիք զամն ինն։

Զոր իբրև սրտմտեալ Թագաւորն Պաղէս յարոյց հալածանս 'ի վերայ եկեղեցեաց սրբոց ընդ ամ կողմանս իւրոյ իշխանութեանն, և զամ եպիսկոպոսս մեկնեաց Եհան յիւրաքանչիւր ժողովրդոց և ընդէց զնոսա յօտարութիւն, առաւելիւր նիւթեալ մեծաւ բարկութիւն 'ի վերայ սրբոյն Ներսէսի. վասն զի պատճառք մահուան միամօր որդւոյն սիրելոյ իւրոյ եղև նա, ապա չարապէս չարութիւն դառնութիւն մահուան կամէր վճարել զնա։ Որում մեծամեծքն և ամենայն խորհրդականք Թագաւորին չհաւանեալք չառնուին յանձն, այլ հաղիւ հաղիւ կարացին թափել 'ի մահուանէ։ Պա ետ հրաման ընդենուլ զնա 'ի կղզին

մի մեծ ովկիանոս ահագին ծովու, յանապատ յանջուր տեղի մի՝ ուր ոչ բոյս ինչ դալար, և ոչ արմատ ինչ, և ոչ այլ ինչ ամենևին՝ որ ինչ 'ի պէտս մարդկան լինիցի. բայց միայն քար և աւազ ապառաժ, և ոչ ճանապարհ ուրեք ընդ այն, և ոչ գնացք ինչ նաւաց։

Այսպա անցուցին զնա 'ի տեղին հրամայեալ, և ընդ նմա արս եւթանասուն. այլ արքն որք կէսքն եպիսկոպոս էին յայլոց քաղաքաց, կէսք կղերիկոսք յայլոց եկեղեցեաց։ Իսկ նա խնդայր և ուրախ էր ընդ այն, զի եհաս նմա կրել չարչարանս վասն անուան Յի՛սուսի Որդւոյն Աստուծոյ։ Եւ էին նորա այն որք ընդ նմայն աքսորեցան յիւրոցն՝ երկու. անուն միոյն Ասատոմ սարկաւագ, և երկրորդին՝ Տիրանամ. և այլքն եւթանասունքն որ ընդ նոսա, զորս ուստեք ուստեք ընդ նոսա ամացեալ 'ի նաւն՝ 'ի կղզին խաղացուցին։ Եւ գնաց մեկնեցաւ նաւն՝ որ զնոսայն տանէր, և ըստ հողմոյն յաջողութեամբ 'ի հնգետասան օր հասանէր 'ի հրամայեալ տեղին. և թափեաց զնոսա նաւն 'ի կղզին, և ինքն այսրէն դարձաւ։

Եւ յայնմ կղզւոջ ոչ գտանէր ոչ ջուր ըմպելոյ և ոչ դոյզն ինչ արմատ, զի անարմատ աւազ միայն էր. զի վասն այնորիկ իսկ տարեալ էր զնոսա անդր, զի սովամահ արասցէն զնոսա ըստ խստութեամբ թագաւորին հրամանին։ Եւ եղև իբրև եհաս նոցա յամել ամսօրեայ մի ժամանակս, որ տկարագոյնքն էին 'ի նոսա՝ սկսան նքողել ծարաւել նուաղել և ներգաւել դորսովքեալ 'ի քաղցոյ կամ 'ի ծարաւոյ։ Այսպա մխիթարել և քաջալերել սկսաւ զամենեսեան Կիրսէս, և ասէ. Պինդ կացէք, հաստատուն լերուք, և մի՛ երկչիք. զի այն՝ որ մեր Յի՛սուսն՝ որ հրամայեաց ծառոյն սաթեկայ բերել զնոսոյն պտուղ, և ընկալաւ զԱսահակ կենդանի զոհ, և օրհնեաց զՅակոբ 'ի պանդխտութեանն, և ապրեցոյց զՅովսէփ 'ի ծառայութենէն և տիրացոյց, հրամայեաց և մորենւոյն հրով տերևեալ ծաղկել, և օդոյն հրամայեաց քաղցրութեան հացին կերակրոյ 'ի վերուստ ցօղել, և զլորամարգին 'ի թռչնոց տալ ապրուստամբող և դառնացող ժողովրդեանն, և ինքն Յի՛սուս վեմ եղեալ՝ ընդ նոսա շրջէր յանապատին յանջրդին, և զքաղցրութեամբ ջուրցն 'ի ծարաւ նոցա մատուցա-

ներ , և խորհուրդ հանդերձելոցն՝ որ առ յապա լինելոցն էր՝ գուշակեր գաւազանաւն 'ի ձեռն Մովսէսի , վէմն խոցեալ՝ հոսեր նոցա ջուր , զնոսա անդ զառաջինն օրինակաւքն կեցուցանէր , և ինքն կերակրեաց 'ի սակաւ հացէ զժողովուրդն յանապատի անդ , և ըստ ծառոյն՝ որ զնոյն երեր՝ ինքն զնաչէն պրկեալ կախեալ խաչեցաւ , և օրինակաւն ըստ նմանութեան 'ի կողն խոցեցաւ , և Եհան մեզ անտի ջուր փրկութեան 'ի լուացումն սրբութեան ապաշխարութեան՝ յաղագս կենաց մերոց , և ինքն վասն մեր հաց եղև , և զարիւնն իւր ըմպել ետ մեզ , զի զմարմինն 'ի մարմինն խառնեսցէ և արիւնն յարիւն , զի զՅածութիւն յոգիս մեր միացուցեալ , զմեզ ընդ Աստուծոյն , և 'ի վախճանի զմեզ բնակիցս Յածութեան արասցէ . արդ որ այսչափ երախտիս առնէր մեզ , մինչև մեք անգամ բանս գոհացողութեան փոխարէն շնորհս ոչ հատուցանէաք նմա , իսկ արդ զիարդ վասն անուան նորա արժանի եղեալք սակաւիկ մի թշնամանաց՝ սովամահ ինչ կարծիցեք լինել։ Ոչ այդպէս . այլ հաւատով խնդրեսցուք , և տացի մեզ կերակուր։ Իսկ արդ նշա՞ն խընդրեմք , ոչ . այլ նշան թերահաւատից պիտոյ է , և առ զչարսն դարձուցանելոյ յուղղուն . այլ մեզ , զի տէր զպիտոյսն մեր և զօգտակարսն , և ըստ այնմ պատրաստէ զինչ և պիտոյ է մեզ։ Իսկ մեք ոչ այնպէս , որ քա՛ւ և մի՛ լեցի , որպէս ասացաւն . ասէ , "Զգ չար նշան խնդրէ ,,։ Իսկ մեզ կարևորքն առանց ուրոյն 'ի մարդկան աղանդէն չիք հնար լինել։ Իսկ տէրն կարող է և առանց կերակրոյ պահել զմեզ կենդանիս , և կարող է տալ կերակուր . և արդարացուցանել կարող է , և արժանիս առնել՝ վասն իւրոյ անուանն պատրաստել մեզ մեռանել . տալ մեզ զսովորական ընդունելութիւն քնութիւն մահուն , որ չերթայ ուրեք 'ի մարդկանէ , այլ պատճառս միայն առնէ զանուն իւր 'ի վերայ աներևոյթ մարմնոյն . մահէ , և իւրոյ արքայութեանն զմեզ բաղորդս բաժանորդս առնէ։ Կարող է և 'ի խաղաղութիւն վաղճանել , և առնել արժանիս արքայութիւն կարգացն։

Այս և այսպիսի և որ երթայր զհետ սորին՝ իբրև խօսեցաւ , արդ՝ ասէ՝ դիք ծունր ամենեքեան , զի

արժանի միայն լինցուք մարդասիրութենն Աստի։ Այլ 'ի դնել նոցա երիցս անգամ ծունր և կալ յաղօթս, և յարեաւ 'ի ծովու անդ հողմ սաստիկ, և սկսաւ ընկենուլ 'ի կղզի անդր ձուկն սաստիկ յոյժ, մինչև շեղջս շեղջս կուտեր 'ի ցամաքի կղզւոյն. և ընդ նմին փայտ սաստիկ յոյժ։ Իբրև հանին կուտեցին զփայտն, խորհէին թէ հուր պիտոյ է, որով զփայտն լուցցուք։ Յանկարծակի ինքնին լուցեալ փայտն հրով վառէր, և նոքա յարուցեալք գոհացեալ, զաղօթսն կատարելոյ՝ մատեան արկին 'ի խորովս, և բազմեցան և մատեան յուտել։ Այլ իբրև կերան յագեցան, և պէտք եղեալ ըմպելոյ ջուր՝ յոտն եկաց Տէրն Ներսէս, և մատուցեալ փորեաց զաւազն 'ի կղզւոջ, և բխեաց աղբեւր՝ ջուր քաղցր անոյշ, և անտի ըմպէին որք հանապազորդք էին 'ի կղզւոջն։

Յայնմ կղզւոջ զայս օրինակ կերակրեալ լինէին 'ի ծովէ անտի. և հանապազ մխիթարէր զնոսա Տէրն Ներսէս, և ասէր. Այսպէս յիշեցէք և 'ի մտի կալարուք զբանն Տն զոր ասաց, թէ «Խնդրեցէք զարքայութիւն Այ և զարդարութիւն նորա, և այն ամ տայցի և յաւելցի»։ Ցեսէք, եղբարք, զի ահաւասիկ թէրև հայր յորդիս մատուցեալ է առ մեզ Աստ՝ խրատել զմեզ, զի զմեզ պիտանիս արասցէ, և զանուանն քաջութեան ժառանգեցուսցէ մեզ, և զմեզ մեծաց վարձուց արժանիս արասցէ։ Զի զպատճառս սակաւիկ առաքինութեէ 'ի մէնջ խնդրէ. այնչափ միայն, զի սիրեսցուք զնա. և ապա զանթիւ զանչափ զանկշիռ զանհամեմատ բարեացն առնէ զբարերարութիւնս աքանչելեաց իւրոց. և ցուցանէ զբարիատուր զերախտապարգև հատուցմունս վասն իւրոյ մարդասիրութեանն։ Բանզի և զանձն իւր ոչ խնայեաց դնել 'ի վերայ մեր. այլ կերակուր և ըմպելի և ս եղև մեզ։

Այս այսպէս հանապազ հանդերձ եղբարքք գոհանալ և օրհնել զնոր Յս Աստ, զցայգ և զցերեկ կային 'ի պաշտաման Տն անդադար։ Արեգական մտանելոյ կային եղբարքն, և ապա տերունատուր կերակրոցն ուրախ լինէին, յընդհնուլ ալեացն 'ի պատրաստել զկերակուր։ Իսկ Տէրն Ներսէս յեւթն աւուրն 'ի կիրակէին հասեալ միայն, ապա ճաշակէր։

Մ.յլ զայս օրինակ համակ տայր նոցա զքաջարութիւնն՝ զոր Կերսէս ամս լինն, որ եղեն յայն կղզւոջ։

ԳԼՈՒԽ Է.

Յաղագս այ սքանչելեացն՝ որ եղեն 'ի Կերսէս և կամ 'ի Բարսիլիոս. և վասն նախանձուն Եւսեբի եպիսկոպոսի առ Բարսիլիոս։

Իսկ եպիսկոպոսն Կեսարու Եւսեբիոս յորժամ ետես զզարմանալիսն զնախ իջանել զաղաւնոյն՝ որ եկն 'ի յերկնից, և հանդչել նախ յերիցապետն Կեսարու՝ զոր Բարսիլիոս, 'ի դժկամակ միտս լինէր ընդ նմա. և տեսանէր զնա իբրև զօր հակառակորդ և զթշնամի։ Վասնզի հուչակ հարեալ էր ընդ երկիր՝ եամ. ասէին և պատմէին՝ թէ յորժամ ձեռնադրէին զոր կաթողիկոսն Կերսէս, էջ հանդեաւ 'ի նմանէ աղաւնոյ 'ի վերայ՝ նախ յերիցապետն 'ի զոր Բարսիլիոս. և ապա յարուցեալ նստաւ 'ի քահանայապետն Կերսէս։ Եւ այս հուչակ հարկանէր զնոցանէ. մանաւանդ յաշխարհն Դամրաց։ Մեծապէս թուէին մարդկանն սքանչելիքն՝ եամ. և՝ եամ մարդ պատուէին զոր Բարսիլիոս։ Մանաւանդ վասն սրբութիւն վարուցն նորա, և կարգացն ճշմարտութիւն, և բաղում խոնարհութիւն նորա, և վասն՝ ճծախօս ջերմեռանդն աղօթիցն նորա, և վասն վարուց կարգաց պարկեշտութիւնն. և կամ վասն աղքատասիրութիւնն և վասն տառապելասէր[1] վարուցն, և պատուիրանակատար միտակիր հանապազորդութիւն նորա, կամ վասն բազում դիտութիւնն, զի աղբեւր էր անպակաս իմաստութիւն. և վասն ուսուցիչ հաւատարիմ վարդապետութիւն նորա, զի փիլիսոփայական արուեստիւն խնոյր արկանէր հանապազ զեամ զուր բացեալ զբերանս հերետիկոսացն, և զհաւատս ճշմարիտ ամենասուրբ եր-

1 Յօրինակի միում փառասէր։

ղորդութեանն ամենեցուն հաստատէր։ Ա՛մն այսր ամի նայէին ընդ նա իբրև ընդ առաքեալ Քրիստի, իբրև զՀրեշտակ երկնաւոր. և ամ ոք վկայէր՝ թէ արժանի իսկ էր նա Հոգւոյն Այ։

Իսկ նա զանձն կարի 'ի խոնարհութիւն ունէր, և մնարժան համարէր, թէպէտ և ամ ոք վասն գիտութեան արուեստին կարօտէր առ նա գալ. մանաւանդ արտաքինքն իսկ ճարտարապետք փիլիսոփայիցն առ նա ընթանային վասն իւրեանց արուեստին։ Բ՛այլ նա զաւղումն դարձուցանէր 'ի պէսպէս յիւրաքանչիւր կարծեացն խոտորութիւն 'ի ճշմարտութենն հաւատս, երկրպագուս Քրիստի անթիւս մարդկան կացուցանէր։ Եւ ամ երկիր սկսան 'ի նա նայել, որպէս թէ անդուստ յերկնից 'ի վերուստ իջեալ էցէ. այնչափ՝ որպէս զի թէ կամիցի ոք պատմել, ոչ կարասցէ։ Բ՛այլ յորժամ խոժոռադէմ երեսօք տեսանէր զիւր եպիսկոպոսն ընդ ինքեանս՝ զն Բարսիլիոս, տեղի տայր նմա, թողոյր զքաղաքն, և գնայր նա անտի, ելեալ բնակէր մի 'ի շինացն՝ ուր և նմա պատշաճ էցէ կալ անդ։

Գ Լ Ո Ի Խ Ը.

Յաղագս թէ որպէս կայսրն Վաղէս հալածեալ զամ ուղղափառ հաւատացեալս. և կամ որպէս կամեցաւ յանդիմանութեան առնել կայսրն 'ի մէջ ճշմարտութեանն հաւատացելոց, և 'ի մէջ ձախող աղանդոյն արիանոսաց, և կամ որպէս աքանչելեացն տեսլեամբն սուրբն Բարսիլիոս կոչեցեալ 'ի պայքարն, և յաղթէր՝ այ զորութեն՝ ախոյենիցն առ եպիսկոպոսաւն Եւսեբիս. և թէ որպէս Եւսեբիոս վճարէր 'ի բանդին. և կամ որպէս Բարսեղ արձակեալ լինէր։

Ընդ այն ժամանակս անօրէն կայսրն Վաղէս մեծաւ բարկութիւն դատէր ընդդէմ ճշմարտութենն մշակացն. այս ինքն որ միանգամ զՀաւատն Քրիստի արժանապէս հաւատասցեն՝ թէ ճշմարիտ արդարև Որդի այ էցէ, և ծնունդ 'ի բնութենէն Հօրն այ։ Ա՛մն այ-

սորիկ կամէր հալածանս տանջանս չարչարանս միա-
հաղոյն[1] յարուցանել, և սաստիւ իշխանութիւն առ
ամենեսեան գրեալ և տալ հրաման։

Այս 'ի մի վայր եղեալ՝ խորհեցան մոլեկան արիա-
նոսացն աղանդոյն վարդապետք. զի ասէին, թող
ընդ նոսա պայքար յանդիմանութիւն հակառակութիւն
լիցի, արքայ. և որ կողմն յաղթեսցէ, յայտ լիցի. զի
մի՛ զնա բռնադատ, զբադատ ինչ երևեսցի յաղթու-
թիւնն։ Այս թագաւորն Ա աղէս զայս լուեալ խըն-
դալից լինէր. ընտրեաց իւր արս Ճարտարս և պատ-
րաստաբանս, զորս կարծէր դպիրս բանիբունս, որ ա-
նուանեալք էին եպիսկոպոսունս աղանդոյն արիանո-
սաց։ Այս յղեաց առ եպիսկոպոսն Լեսարու Այսե-
բիոս. և ժամ խնդրէր 'ի նոցանէ բանիցն քննութիւն,
զի 'ի հանդէս ածիցէ առ նա զնովաւ, և որ Ճշմա-
րիտն լիցէ՝ յայտնի երևեսցի։ Այս իբրև սահմանե-
ցաւ ժամադրութիւն, առեալ եպիսկոպոսն Այսեբիոս
զկղերն զամ, և 'ի մեծ հոգս մտանէր. ուստի՞ կար-
ծիցես բանիցն պատասխանիս պատրաստել. զի և բա-
նիւ ոչ ինչ կարի էր առաւել։ Այս հաստատեցաւ
այս բան 'ի խորհրդեանն, զի յղեսցեն հաւանեցուս-
ցեն զերանելին Բարսիլիոս, զի եկեսցէ նա։ Օ՛ի
նա, ասէ, կարող է բանիւ զօրութեն. նա մեծ է,
ասեն, 'ի նմա շնորհքն խափանել զնեղութիւն դա-
ւաՃանութեն սատանայի. զի խորհի նա 'ի վերայ սրբոյ
եկեղեցւոյ նորա, զոր ինքն արեամբն ստացաւ։

Գրեաց թուղթ աղաչանաց եպիսկոպոսն Այսե-
բիոս առ երիցապետն Բարսեղ, և մեծաւ պաղատա-
նօք որ ինչ վասն պատուին պաշտամանն. զի մի՛ դիցէ
ինչ 'ի մտի զառաջին եղեալ բանիցն դժտութիւն. այլ
վասն զի առ ՈՃ հաւատոց են[2] բանքն և քննութիւնքն,
վաղվաղակի փութասցի գալ առանց դանդաղանաց։
Արկին և կղերքն ամ ձեռնադիր աղաչանաց, զի մի՛
ինչ դանդաղեսցի գալ, այլ յարուցեալ փութանա-
կի երթիցէ։ Այս արս հաւատարիմս պատուականս
յղեցին վասն վաղվաղ գալոյ։

Այս այն ինչ արքն յուղի անգան, որ երթայինն

1 Ցերիս օրինակս միահաղոյն։ 2 Ցամ օրինակս հաւատոցդն բանքն։

ածել զնա անդր. արդ մինչ դեռ յուղն անգեալ էր թային արքն՝ էին 'ի Ճանապարհի, զոն Բարսիլիոս ուր էին՝ մինչ դեռ 'ի պաշտաման ոն կայր, անկաւ նմա քուն ծանր թանձրամած, և տեսանէր 'ի տեսլեան, զի այգի մի էր մեծ և վայելուչ, քաջաբեր լի պտղով. և խոզք երեք անգեալ էին յայգին, և մըտեալք 'ի ներքս 'ի յայգին՝ ապականէին զայգին և բրէին։ Պատառէին քաղում ունջս որթոյ, արմատաքի խլէին և զտաշտն գլխովին և զբաղուկ ընջովին, և մեծամեծ ապականութիս 'ի ներքս գործէին։ Յաւ մատուցեալ էին այգեգործքն, ջանային և ոչ կարէին հանել զինասակար խոզն յայգւոյ անտի։ Պպա զաղաղակ հարեալ գոչէին առ Բարսիլիոս, և ասէին. Ինթէ ոչ դու, Բարսիլիոս, եկեսցես, ոչ ոք կարէ հանել զխոզս յայգւոյ աստի, և ոչ մեծ ապականուիս դադարեսցէ. աՀապարեա եկ հասիր, զի տակաւին աւասիկ ինասս մեծամեծս առնեն։ Պպա մատուցեալ Բարսիլիոս հանէր զինասակարս զխոզսն յայգւոյ անտի, և կազմէր զնախատածն։

Յաւ զարթեաւ սքանչելին Բարսեղ, և զարմացեալ ընդ այն տեսիլն, էր մտախորհ. և խորհէր ընդ միտս իւր վասն տեսլեանն՝ թէ զինչ լցէ. և անդէն հասեալք մատուցանէին նմա զթուղթն առաքեալքն 'ի Կեսարիայ քաղաքէ Յուսեբի եպիսկոպոսի։ Պյլ երբև ընթերցաւ, խնդայր և ուրախ լինէր. զի գիտաց թէ յայ պատրաստեցաւ կոչել զնա ջատագով Ճշմարտութեն առ 'ի տալ պատասխանի։ Յարուցեալ փութանակի գնաց զՀետ կոչելեացն թղթին. և ջոգաւ առ եպիսկոպոսն Յուսեբիոս։ Յաւ երբև խորհեցան ընդ միմեանս զարժանն, ասաց Բարսիլիոս ցեպիսկոպոսն Յուսեբիոս, զի խնդրեսցէ 'ի կայսերէ իշխանութիւն՝ զոք յերիցանց տանել ընդ իւր։ Յաւ մտանէր Յուսեբիոս առ կայսրն, խնդրէր 'ի նմանէ և ասէր. Յրկուս ածէր ինձ ախոյեանս, թող եկեսցէ մի ոք ընդ իս յերիցանց իմոց։ Յաւ հարցանէր կայսրն ցարիանոս եպիսկոպոսն, և յանձին կալան նոքա Յուսեբի քանի՝ ածցէ ընկերս ընդ ինքեան, յորժամ գայցէ յատեանն։

1 Յերիս օրինակս ունի։

Իսկ իբրև ժամ ատենին հասանէր , առեալ կայ-
սերն զեպիսկոպոսն Եւսեբիոս , և ընդ նմա երանե-
լին Բասիլիոս երիցապետն , և երկու ախոյեանքն
հակառակութեան՝ որք 'ի կողմանէն կուսէ սատանայի
էին , այս ինքն արիանոսք չեպիսկոպոսքն , և մտին 'ի
բանից 'ի քննութիւն հակառակութիւն վասն ՏՆ մերոյ
Յեսի Քրիստի Որդւոյն Այ , եթէ իցէ ծնունդ և որդի
'ի բնութիւն Հօր Այ , եթէ ոչ : Այսպա Հոգւով սրբով
լցեալ լինէր երանելին Բասիլիոս , որ կայր զինեա-
գոյն եպիսկոպոսին Եւսեբի . և սա գրէր վկայուն
'ի գրոց Աւրարածոց 'ի սկզբանէ յօրինեալ և 'ի մար-
գարէից և Աւետարանաց և յամ ՅԾաշունչ գրոց . յայտ
առնէր և ցուցանէր , և զերկոսեան ախոյեանսն սա-
տանայի կարկեալս ըմբռնեալս ամենապարտեալս
հանդերձ թագաւորաւն կացուցանէր :

Այսպա նայեցաւ թագաւորն Ա աղէս ընդ եպիսկո-
պոսն , և ետես զի քրտնեալ էր՝ , սկսանէր խօսել և
ասէր . Այդ զի՞ է , զի զայդչափ հոսին 'ի քէն քրը-
տունքդ . զի 'ի բանս Ճշմարտութիւն քննութիւն վարձ-
կանագրչաւդ յաղթեցեր : Եւ պատասխանի Բասի-
լիոս թագաւորին և ասէր . Երկուս խոզս և մի էշ
վարեալ այնչափ ընդ երկար Ճանապարհ , և դու ա-
սես . Օ՞ի ես քրտնեալ այդչափ : Այսպա զղջացաւ թա-
գաւորն՝ թէ ընդէր զԲասիլիոսն հրամայեցին օժան-
դակ բնաւ Եւսեբի թողուլ 'ի նեղքս : Այսպա յոտն
կացեալ ամենով արիանոսքն ասացին ցթագաւորն ,
թէ ընդէր այս աշխատուի քննութեց են . այլ տիրա-
բար տուր հրաման . զի որք քո կամացդ ոչ լուիցեն ,
անկցին 'ի տաղնապ նեղուած : Եւ լուծեալ զատեանն
վՃարեցաւ :

Եւ ետ հրաման՝ զի զԵւսեբիոս արկանել 'ի բանդ ,
և ընդ նմա զբաղումս , և նեղուիթ 'ի վերայ ուղղա-
հաւատ որթոդոքսաց քրիստոնէից հասուցանէր . և
ետ հարկս 'ի վերայ եկեղեցեացն տուժիւք մեծաւ
ծանրութիւն տուգանօք : Յայնժամ 'ի դառն կապա-
նացն պատուհասէն մեռանէր եպիսկոպոսն Եւսե-
բիոս 'ի նեղքս 'ի բանդէն : Իսկ վասն սրբոյն Բասի-
զի ասէին ժողովուրդքն Կեսարու . Եթէ ոչ արձա-
կէք զդա 'ի բանդէդ , այրեմք զքաղաքս զամ : Յոր-

ժամ ամենեքեան միաձայն զայս աղաղակէին, Թո-
ղացոյց Թագաւորն, և արձակել հրամայեր զերանե-
լին Բարսիլիոս։

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս Թէ որպէս արարին զՍրն Բարսիլիոս եպիսկոպոս, կամ որ-
պէս եղեն յոյժ սքանչելիքն. կամ զնարդ հրամայեաց զՏամ գանձն
որ 'ի Քն հաւատացեալ էին ժողովուրդն՝ ժողովել, և նոքա խնդուք
բերին և տային 'ի դուրս վասն կենարարին մեծին այ. և կամ զի-
արդ խնդրեին ուխտիւք և խնդրուածովք 'ի վերայ իւրաքանչիւր եպիս-
կոպոսաց։

ԱՅՆ ժողովեցան Տամ եպիսկոպոսք իշխանութեն
Կեսարու, և ընտրեցին զՍրն Բարսիլիոս առնել արք-
եպիսկոպոս Կեսարու։ Այլ իբրև ժողովեալք էին
'ի միահամուռ հասարակ միաբան Տամ եպիսկոպոսք 'ի
ձեռնադրել զսուրբն Բարսեղ, էջ աղաւնին յերկնից
և հանգեաւ 'ի վերայ նորա, որպէս յառաջնումն
յառնելն զեպիսկոպոսապետն Դերսէս։ Այլ եղեն
զարմանալիք մեծապէս յաչս ամենեցուն. սկսան գո-
հանալ զմարդասիրէն Քրիստոս, զի որ յանձն իւր յայտ-
նեաց զնշանս աստուածութեն, զայն և ոչ 'ի ծառայիցն
և 'ի սրբոցն արդելոյր։ Այլ եկաց Բարսեղ յաթոռ
կաթողիկոսութեն Կեսարու։

Ամենաթագաւորն Ս աղէս նեղեր զքրիստոնէից ժո-
ղովուրդն. Օ՛ի, ասէ՝, որ քրիստոնեայ անուն յիշխա-
նութեն իմում կայցէ, մի՛ գոցի նորա արծաթ և ոս-
կի, զի տայցէ յարքունիս։ Այլ սկսան ժողովել 'ի զօ-
րաց 'ի զօրավարաց և 'ի քաղաքաց քաղաքաց երդ-
մամբ, զի որ զայն անունն ունիցին, մի՛ գոցի ոսկւոյ
կամ արծաթոյ զանակ առ ումեք. ապա եթէ առ
ումեք գոցի, մեռցի։ Ապա Տամ որ խնդութեբ բերէին
տային 'ի դուրս վասն անուանն Քրիստի, կամեցեալք
խնդութեբ կրել զպատուհաս։ Ապա ստիպել սկսան

և գործակալքն Թադաւորին ժողովել արծաթ և ոսկի 'ի ժողովրդոցն կեսարացւոց քաղաքին. ապա քաջալերել սկսաւ զնոսա երանելին Բարսիլիոս, զի խրիդամիտ սրտիւ բերցեն։ Ասկսաւ ասել ցնոսա այսպէս՝ Թէ Բերէք 'ի ձեռն իմ, ես լինիմ այդմ երաշխաւոր. զի նոյն ինքն ՏԻՆ միածին Որդին այ, վասն որոյ նա խրոխտացեալ է 'ի մարտս, սատակեսցի 'ի նմանէն։ Այլ դուք վասն ՏՆ ձերոյ զափշտակութիւն ընչից ձերոց խնդութիւնք ընկալարուք. զի ձեզ յերկինս պահի գանձն՝ որ ոչ անցանէ, այլ զի զայս գանձս ես տաց ձեզ դարձուցեալ ձեռն 'ի ձեռն 'ի հուպ ժամանակի։ Ապա ՏԱՄ ժողովուրդք քաղաքին Կեսարու եկին բերին 'ի մի վայր ժողովեցին որ մի անգամ ոսկի կամ արծաթ ուրուք գտաւ. լցին զեկեղեցի, և ածին զնշխանսն Թադաւորին զՀաւատարիմն. կրնքեցին զդուրս եկեղեցոյն։

Յետ այսորիկ ետ հրաման Թադաւորն Վաղէս կապել կրկին զեպիսկոպոսապետն Բարսեղ, արկանել 'ի բանտ 'ի նեղութիւն. սոյնպէս զՏԱՄ եպիսկոպոսունս ընդ ՏԱՄ քաղաքս։ Այլ ՏԱՄ ժողովուրդն յուխտս և 'ի խնդրուածս լինէին վասն քարկութեն հասելոյ, զի դադարեսցէ, և դարձ լիցի Ճշմարիտ հովուացն յիւրաքանչիւր տեղի և յիւրաքանչիւր ժողովուրդս։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Թէ զիարդ կոչեաց կայսրն Վաղէս զսոփէստէսն 'ի յանդիմանութիւն ընդդէմ Ճշմարտութեն, և Թէ զիարդ եռեռս սոփէստէսն զքաջանչելսն. տեսանելով զքաջութիւնն վկայիցն 'ի նեղքս 'ի վկայարանին. կամ զիարդ կայսրն Վաղէս սատակեցաւ նշանօքն եղելովք յայ. և կամ զիարդ խաղաղութիւն լինէր եկեղեցեացն այ։

Ապա խնդիր հրամայէր առնել Թադաւորն Վաղէս, զի տեսցէն զտցէն այր մի Ճարտար, որ կարողիցէ դնել գրով բանս դիմադարձութիւն ընդդէմ հա-

ւատոց քրիստոնէութեան։ Այս պատմեցին նմա, զի էր այր մի սոփեստէս Ճարտար 'ի քաղաքի միոջ։ Այս առաքեաց կայսրն առ նա մագիստրիանոսս, զի երթիցեն փուլթով և անզքաղապէս զայրն առ նա ածցեն. և առեալ ածին փուլթապէս։

Իբրև գնացեալ գայր օթևանս երկուս, դէպ եղև նոցա դիպել այլ քաղաքի միոջ. և արտաքոյ քաղաքին վկայանոց մի սուրբ տիկնոջն Թէկղի։ Իբրև պատահեաց այնմ, էջ սոփեստէս, և իւր վանս ունէր 'ի նեղբս 'ի վկայանոցի անդ. իսկ մագիստրիանոսքն ունէին վանս իւրեանց 'ի քաղաքին։ Այս իբրև կերաւ հաց սոփեստէսն, էարկ անկողնին, և փակեաց ըզդուրս վկայանոցին. և ինքն 'ի նիստ եղեալ 'ի վերայ անկողնին, կամէր լինել 'ի կողմն. մինչ դեռ արթուն էր, աչօք բացօք տեսանէր, զի յանկարծ բացան դրունք վկայանոցին, և եղև ժողով մեծ բազմութեամբ վկայիցն, որ երևեցան մեծապէս փառօք։ Այս եկանէր ընդ առաջ նոցա սուրբ տիկինն Թէկղէս զարդարեալ մեծապայծառ, զի նշոյլք որպէս 'ի լուսոյ հատանէին 'ի նմանէն. և առնէին միմեանց ողջոյն, և ասէր ցնոսա տիկինն Թէկղ՝ թէ Բարի՛ եկիք, սիրելիք բարեկամք, և վաստակաւորք Տ՚ռի։ Տուեալք միմեանց ողջոյն, արկեալք զիւրաքանչիւր զաթոռսն, նստէին կարգաւ։ Այս սկսանէին սուրբքն խօսել, և ասէին. Սուրբքն ՝ռն, որ չև էն հրաժարեալ յերկրէս, դեռ ևս աստէն 'ի նեղուն էն. էն որք 'ի կապանս էն, էն որք 'ի փիւղակէս էն, էն որք յաքսորս, և էն որք յայլ բռնութեան էն 'ի զրպարտութեան 'ի հարկս և 'ի խոշտանգանս չարչարանաց։ Այս մեք փուլթապէս ժողովեցաք, զի մի՛ անտեսութի՛ անփոյթ ա բասցուք նախանձախնդիր լինել ՝ռն հաւատացելոց։ Ա՝ ասն զի մանաւանդ բազում մշակք ՝ռն խափանեալ կան, և բազում անդք 'ի դերև ելին, և բազում այգիք խոպանացան. պարտ է մեզ զխափանիչս մշակացն զԱ՝ աղէս խափանել, զի ՝ամ մշակ 'ի գործ իւր կանխեսցէ։ Այս քաջ մշակն Բասիլիոս յիւրմէ գործոյն կայր խափանեալ։ Այրդ եկայք առաքեսցուք 'ի մէնջ երկուս, որք երթիցեն վՃարիցեն 'ի կենաց զչարագործն Ա՝ աղէս։ Այս միում անուն էր Ասրդիս 'ի

նոցանէ, և միւսումն Թէոդորոս. արձակէին զնոսա, դնէին ժամ և ասէին. 'Ի սոյն ժամ եկեսջիք դուք և մեք։ Եւ յարուցեալ գնացին և մեկնեցան։

Եւ զայս ամ լուեալ սոփեստէն, որ էր 'ի վկայանոցին, և տեսեալ զայս տեսիլ աչօք բացօք, և կայր զարմացեալ, և անքուն լինէր մինչև յառաւօտն ըզցայգն։ Եւ ընդ այդս այգոյն եկին հասին մագիստրիանոսքն, և ասեն ցսոփեստէն. Մի գնասցուք զձանապարհս։ Եւ խօթապատճառս լինէր, և ոչ կարէր 'ի տեղւոյն խաղալ։ Երբև սկսան նոքա ստիպել զնա, իսկ նա թալանայր, հանէր զոգին, ոգի զոգւով ածէր, և ոչ կարէր բանիցն տալ պատասխանի մինչև յերեկոյ։ Այսպա երբև երեկոյ եղև, թողին զնա մագիստրիանոսքն 'ի վկայանոցին, և գնացին 'ի քաղաքն 'ի վանս իւրեանց։ Եւ սոփէստէն փակէր զդուրս վկայանոցին, և 'ի կողմն եղեալ յիւրում տեղւոջն, յանկարծակի դարձեալ երևեցաւ նմա, զի բացան դրունքք վկայանոցին, եկին կուտեցան, և լի եղև վկայանոցն նոքիւն վկայիւք։ Եւ ելանէին միմեանց ընդառաջ մեծաւ ուրախութիւն, և տային միմեանց ողջոյն. ապա արկանէին զաթոռս իւրաքանչիւր կարգաւ յօրինեալ բոլորէին կարգէին 'ի նստել։ Այսպա գային սուրբքն Սարգիս և Թէոդորոս երկոքեան 'ի գործոյն՝ յոր առաքեալ էին, և մտանէին 'ի ժողովս սրբոցն։ Այսպա հայեցան բազմութիւն ժողովոյ վկայիցն, եթէ Ո՞րպէս յոր գործ երթեալ էիք՝ վճարեցէք։ Պատասխանի տուեալ ասէին. Թէ Նոր իսկ յորժամ 'ի ձէնջ գնացաք, սպանաք զթշնամին ճշմարտութեն զԱղէս. և 'ի սոյն ժամ առ ձեզ դարձեալ եկեալ եմք՝ աւասիկ առ ձեզ։ Եւ յարուցեալ գոհանային ամ բազմութիւն ժողովոյն զտնէ մերմէ Յոհ Աստեղ. և ինքեանք մեկնեցան յիւրաքանչիւր տեղիս։ Եւ յահի մեծի լինէր սոփեստէն մինչև յայդ յառաւօտն։

Այսպա երբև այդ եղև, եկին մագիստրիանոսքն, ասեն ցսոփեստէն. Մի գնասցուք առ կայսրն։ Նորա պատասխանի տուեալ, ասէ. Կայսրն մեռաւ, արդ մեք առ ո՞ երթիցուք։ Եւ բազում վիճումն 'ի մէջ եղեալ նոցա վասն այսր բանիս, և գրաւական եղեալ 'ի մէջ վասն այսր բանիս մինչև յերիս աւուրս։ Եթէ

ոչ, ասէ, հարցին աւար վաճառք, և քաղաքք յա-
փշտակեսցին, եւ՝ եթէ կայցէ նոյն կայսրն՝ գլխա-
տեցայց, զի իշխեցի զայս ճառել։ Այսպա թագաւոր տային
նմա մագիստրիանոսքն մինչև յերիս աւուրս. և յետ
երից աւուրցն ստուգեցաւ զբոյցն, զի մեռեալ էր
կայսրն։

Այսպա յետ այսորիկ արձակեցան ամ, որ միանգամ
ոք կայր 'ի պատիժս կամ յաքսորս. և դարձան ու-
րուք ուրուք որ միանգամ ինչք էին յափշտակեալք։
Այնպէս և զկեսարացւոցն հրաման ետուն տալ զիւ-
րաքանչիւր իրաց. և կոչեցեալ սրբոյն Բարսղի, զի
զիւրաքանչիւր առցէն, և ոչ կամէին հուպ լինել։ Զի
թէպէտ և ասէր ցնոսա Բարսեղ՝ եթէ ահաւասիկ
երաշխաւոր իմ թափեցաւ ձեզ, զի ասացի, թէ և
տաց ձեզ ձեռն 'ի ձեռն 'ի ձեռս ձեր։ Այլ ոչ ինչ կա-
մէին ունկնդիր լինել, այլ ասէին. Այդ 'ի գանձ ան
երթիցէ, որ դատեցաւ զդատաստանս մեր, և խըն-
դրեաց վրէժ ՝ի եկեղեցւոյ ուխտի իւրոյ։ Այլ ոչ ոք
'ի կեսարացւոց անտի հպեցաւ յարծաթ իւր, և ոչ
մի ոք. բայց թողին զայն 'ի գանձ եկեղեցւոյն։ Այսպա
էառ զայն արքեպիսկոպոսն, արար աւազանս մկրտուէ
ինքոյ տալոյ. և կան հաստատեալ աւազանքն արծա-
թիք 'ի տուն լուսարանին մինչև ցայսօր ժամանակի։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս դարձի իշխանացն անդրէն յերկիրն Հայոց, որք երթեալք
էին առ կայսրն Վաղէս, զի եկին դարձան առ տէրն իւրեանց Արշակ. և կամ ՝ի
ոչ ելեալ տրամեալ թագաւորին Արշակայ ընդ կայսրն, ՝ի ոչ ելանել
ինչ ՝ի նեասեաց ասպատակաւ կողմանց իշխանութեան թագաւո-
ր ութեան Յունաց։

Այսորիկ էն իշխանքն, որք չոգան 'ի թագաւո-
ր էն մեծէ Արշակայ 'ի Հայոց աշխարհէն առ կայսրն
Յունաց առ Վաղէս։ Ինքնին մեծ եպիսկոպոսա-

պետն Հայոց Ներսէս. և մեծ նահապետն Մամիկոնեան տոհմին, որում անուն Ա արդան կոչիւր. եղբայր սա մեծի ստրատելատին Հայոց որում Ա ատակն կոչէր. որ դայեակք և մնուցիչք էին Թագաւորին Արշակայ։ Այս ընդ նմա Մեհրեն նահապետն Ռշտունեաց, և Մեհառ նահապետն Գնձևացեաց, և Գարջայլ Մաղխազ նահապետն Խոռխոռունեաց, և Մուշկ նահապետն Սահառունեաց, և Գեմետ նահապետն Գնթունեաց, և Կիշկէն նահապետն Բագէնից, և Սուրիկ նահապետն Հրսիձորոյ, և Ա ղբիկէն նահապետն Հաբուժենից. սոքա չոգան դէսպանուելք'ի սէր միաբանութեան առ կայսրն Ա ղէս։ Իսկ Թագաւորն Ա ղէս արգել աքսորեաց զմեծ քահանայապետն Ներսէս, և փոխանակ սորա արձակեաց զեղբօրորդի զԹագաւորին Արշակայ զԳնել և զՏիրիթ. և գանձս բազումս և անթիւս վասն զմիտս հաճել Թագաւորին Արշակայ, 'ի ձեռս Ա արդանայ և որք ընդ նմա էին, առաքէր։ Այլ էին հասին դէսպանքն երթեալք 'ի կայսերէն առ Թագաւորն Հայոց մեծաց Արշակ. և մատուցանէին նմա զհրովարտակն կայսերն. և ընդ նմին գիր տրտնջելոյ և ամբաստանութեան։ Օ՛ի գրեալ էր կայսրն զսրբոյն Ներսիսէ առ Թագաւորն Հայոց Արշակ, թէ նա սպան զորդին իւր զմիամօր, վասն այսորիկ արգելաւ աստէն. զի մի մեղադիր ինչ լինիցիս, ընկալ և զպատանեակդ առաջի զարձակեալդ զերկոսեան զեղբօրորդիսդ Արշակայ, զԳնելն, և զՏիրիթն։ Ընդէին և զանթիւ կարասի գանձուցն առաջի Թագաւորին։

Իսկ Թագաւորն Արշակ, իբրև լուաւ և ետես զայս ամենայն, անչնորհ առնէր զտալիսն և զբերելիսն կարասոյն։ 'Ի ցասումն մեծապէս բարկութեամբ ընդ կայսերն նիւթեաց, եթէ զի՞արդ իշխեաց արգելուլ զայնպիսի այր զմեծ և զպատուական, զգլուխ և զվարդապետ զառաջնորդ աշխարհի և զԹագաւորութեան միոջ։ Զարինք բազումք, ասէ, 'ի վերայ կայսերն, և ձեր 'ի բերելդ. քարինք և մեր շատ կան 'ի Թափել զատամունս նորա 'ի տալն, և ձեր 'ի բերելդ. զմեր վատթարութիւս յո՛ տարայոյ. արդ այդմ երախտեացդ ես դարձուցանեմ։ Տայր հրաման Ա ատակայ իւ-

ռում զօրավարին զօր ժողովել, զգունդս վանդակել, ելանել հարկանել և աւար առնուլ զկողմանս Պամբրաց։ Իսկ զօրավարն սպարապետն Պասակ, վաղվաղակի զտուեալ հրամանս նորա կատարէր. զզօրս բազումս իբրև զերկերսոյր և զվաթսուն հազարաց 'ի մի վայր կուտէր. հարկանէր աւար առնոյր զկողմանս Պամբրաց մինչև 'ի քաղաքն յանկուրացւոց. զվեց ամ զմիմեանց զհետ աւերեր զաշխարհ սահմանացն Յունաց։ Յայն աւարաւ բազմաւ և պէսպէս մեծութիւն, բնութիւն սաստիւ մեծաւ թշնամութիւն ընդ կողմանս ընդ այնոսիկ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս Խաղայ եպիսկոպոսի բագրաւանդացւոյ, զոր էր ձեռնադրեալ և թողեալ էր Ներսէսի եռեղապահ յիւր տեղի. և թէ որպիսի այր էր, և կամ որչափ նշանք կամ զօրութիւնք որ 'ի նմանէն լինէին, կամ թէ որպէս կայր 'ի Հշմարտութեանն, և ոչ առնոյր ակն թագաւորին մեծի Արշակայ, և ընդդիմանայր ևս ընդդէմ նորա վասն անօրէնութիւն գործոց ինչ. կամ որպէս խնամ տանէր աղքատաց իբրև զեպիսկոպոսապետն Ներսէս։

Այս այս Խաղ բուն էր սա 'ի Կարին գաւառէ, 'ի գեղջէ Պարագայ. ձեռնասուն էր սա եպիսկոպոսապետին Ներսէսի, զառաջեաւ իւրով զսա էր մուցեալ։ Այլ իբրև 'ի միտս աջողակս եբեր, և յառաջադէմ եղև 'ի հաւատս, և հաւատարիմ յամ գործս գտաւ, իսկ իբրև յայնմ ևս առաւել 'ի պաշտօնն՝ զոր ունէր զսէրն ընդ եկեղեցին ՅՍ, ապա աղքատաց ևս տեսչութիւն 'ի սրբոյն Ներսէսէ սմա հաւատացաւ. իսկ յայնմ ևս առաւել զբարեխնամութիւն ցուցանէր։

Այսպա եպիսկոպոսապետն Ներսէս յորժամ երթայր յուղեղնացութիւնն յերկիրն Յունաց, ձեռնադրեաց զայս Խաղ յեպիսկոպոսուն Բագրաւանդայ և Արշարունեաց, եթող զսա իւր փոխանակ եռե-

զապահ, և գնաց։ Իսկ աշխարհ ամ Հայոց լեզուին, 'ի գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, տեղեաց տեղեաց մեծամեծք աշխարհակալք գաւառատեարք նահապետք մեծազգեացք և ամենայն ուխտ քահանայութեան, ժողովք միաբանական ժողովրդոցն, 'ի սուգ տխրութեան ընկղմեալ էին վասն իւրեանց հօտապետ գլխաւորին, զի հեռացաւ 'ի նոցանէ։ Իսկ 'զին Սադ եպիսկոպոսն առ հասարակ աշխարհի տայր հրամայն 'ի պահս և յաղօթս մնանել և 'ի խնդրուածս, զի դարձ լիցի սրբոյն Գերսէսի։ Այս զամ ժամանակս, որչափ և արգելաւ նա անդ, համակ խնդրեին պահօք ժողովուրդքն. և ամի իսկ Սադն առաջնորդեր նոցա, ոչ ինչ պակաս քան զիւրեանց բուն զհովուապետն Գերսէս, մինչև 'ի գալուստն նորա. մինչև կատարեաց ամ զաշխարհի խնդրուածս, և դարձաւ 'զին Գերսէս 'ի տեղի իւր։

Այնու ժամանակաւ Աբշակ արքայ Հայոց ոչ ինչ կարի 'ի Ճանապարհ այ գնացեալ լինէր. զի որչափ 'ի մատաղութենէն հասակէն ըստ ածային իմաստութենէն գնացեալ լինէր, նոյնչափ յաւագութենէն 'ի լկութենէ 'ի շաղաշատութենէ հատաւ[1]. զոր 'զ հովիւն Սադ բազում անգամ յանդիմանեալ կշտամբէր, ուրում ոչ ինչ անսացեալ լինէր։ Այնու ժամանակաւ շինեաց իւր արքային դաստակերտ մի 'ի հովիտն անուանեալ 'ի Կոդ գաւառի։ Այս ետ հրաման ընդ ամ գաւառս իշխանութեան իւրոյ, և հրամայեաց կարգել քարոզ ընդ ամ տեղիս աշխարհացն հրապարակէն իւրոյ. և ամ կողմանս գաւառաց իւրոց լի առներ հրամանաւն արքունի, զի եթէ ոք ումեք ինչ պարտիցի, եթէ ոք ուրուք ուստեք ինչ ինասեալ իցէ, կամ ոք ումեք ինչ դատ պարտիցի, ամենեքեան եկեսցեն 'ի դաստակերտն շինեսցին։ Եթէ արիւնահան ոք իցէ, կամ ինաս ուրուք ումեք արարեալ իցէ, կամ զկին ուրուք տարեալ իցէ, կամ պարտապան իցէ, կամ ոք զուրուք կարասի ունիցի, կամ ոք յումեքէ երկիւղած ինչ իցէ, և եկեսցէ յայն տեղի, դատ և իրաւունք մի լիցին։ Իսկ եթէ ոք ումեք ինչ

1 Ցամ օրինակս հաւաք։

պարտիցի և որում պարտիցին, եկեալ յայն տեղին՝ առանց դատի և իրաւանց կալցին, և՝ի դուրս տարցեն։

Իբրև եկ Հրաման յարքայէն, ժողովեցան այնուհետև յայն տեղի՝ամ գողք և աւազակք, արիւնահանք, սպանողք, սուտք և մարդեղողք, ինասակարք, դանձահատք, զրկողք, ստադատք, զրախօսք, գերփողք, յափշտակողք, ժլատք։ Բազում ինասս ինասս առնէին, և անդր անկանէին. բազում կանայք զարս թողուին, և անդր անկանէին. բազում արք զիւրեանց կանայս թողուին, և զայլոց կանայս առեալ՝ անդր անկանէին. բազում ծառայք զիւրեանց տերանց զգանձս ըմբռնեալ, փախուցեալք անդր անկանէին. բազում աւանդառուք զաւանդս լի զպահեստս բարձեալ, անդ անկանէին. գերփէին աւերէին զերկիրն՝ամ։ Օ՛ի թէպէտ և կարի յոյժ բազմացաւ աղաղակն, դատ վկայք, և իրաւունք ումեք յարքունուստ ոչ եղանէին։ Վասն այսորիկ՝ամ մարդ հառաչելով վայէին, և ասէին՝ի հաւանել բանիցն իւրեանց. այս բանք ըստ այսմ օրինակի պաշտէին, առ հասարակ ամենեցուն ասելով թէ իրաւունք մեռան, և վասն այսորիկ ոչ դատանէին. այլ թէ էր, և կորուսեալ էին, ուր և էր ջանայաք խնդրէաք գտանէաք։

Իսկ տեղին աւանանայր, քաղաքանայր. մեծացաւ բազմացաւ և ելից զհովիտն՝ամ։ Պպա տայր Հրաման արքայն Աբշակ դնել անուն դաստակերտին յիւրաքիչ անունն Աբշակաւան. և շինեցին և ամ ապա բանս արքունի։ Այլ յայնմ հետէ ոչ ինչ երկնչէին՝ի՝նէ ամենեքին. և՝ամ մարդ զրկեալ էր իրօքն այնոքիւք, և բազմաց կառաչ աղաղակի տրտնջելոյն յաճախեալ բազմանայր։ Վասն որոյ բազում մնգամ ընդդիմանայր նմա և յանդիմաններ՝ՊՕՍ Եպիսկոպոսն. մանաւանդ յորժամ ստիպէին զնա, թէ՝էկ ուղղեա սեղան յեկեղեցւոջն յաւանն յԱբշակաւանն։ Իսկ նա բազում անգամ կշտամբէր և յանդիմաններ զթագաւորն Աբշակ և զ՝ամ մեծամեծս և զիշխանս։ Բայց ես, ասէ, ետեղապահ եմ. և ոչ ինչ առանց այնորիկ, որ թողն զիս հայրն, ունիմ իշխանութիւն գործել ինչ։ Պպա կամեցեալ Աբշակ թագաւորն պատուաւ և ագահութիւնք կարասոյն մեքե-

նայիւ խաբել զնոր եպիսկոպոսն Յսադ, բազում ոսկի և բազում գանձս արծաթոյ, և բազում նժոյգս զարքունական ձիոյ՝ արքունի օձառովք, ոսկիվարաւանդ ապրդմոնի, տայր նմա. պատրել հաճել զմիտս նորա, յինքն յանգուցանել։ Իսկ նա զկարասին, զոր առնոյր յարքայէն, յանդիման նորա աղքատաց բաշխէր. և զյանդիմանութիւն ոչ ինչ թուլացուցանէր, մինչև հրամանն տայր հալածել զեպիսկոպոսն Յսադ 'ի քանակէ անտի։

Իսկ նա առ շրջել ընդ աշխարհն, կարդել և խրատել, ուսուցանել և դարմանել զաղքատսն, որպէս էր նմա յանձն արարեալ սրբոյն Գ՚Երսիսի, և իւր գնացեալ։ Բազում նշանք և արուեստք և զօրութիւնք բժշկութիւնք հիւանդաց լինէին 'ի ձեռս նորա. բազում յոյժ առնէր սքանչելիս մեծամեծս։ Բայց իբրև պաշտէր զաղքատսն, և սպառէր թափէր զամ յուրանս և զնորամանս և զմառանս գինւոյն, և զկաբասս ամ մառանացն տայր բաշխել աղքատացն, էր թայր յայլում աւուր տեսանէր լցեալ ինքնին իբրև 'ի հրամանէ այ. և դարձեալ օր ըստ օրէ մատակարարէր աղքատացն, և այնմ ստէպ ստէպ լցեալ լինէր։

Գ՚Այսպիսի սքանչելիք մեծամեծք լինէին 'ի ձեռն առնս այսորիկ. էր սա զարմանալի անուանի և հոյակապ 'ի մէջ ամ Հայոց. շրջէր խրատէր և ուսուցանէր զեկեղեցիս Հայոց ընդ ամ տեղիս իբրև զիւր վարդապետն զ՚Երսէս։ Բայց 'ի ժամանակեան միոջ եկին գողք, և գողացան զեղինս եկեղեցւոյն սրբոյ զՅսադայ եպիսկոպոսին, առին և գնացին։ Իսկ 'ի միում աւուր աչք կուրացեալ եղեն գողոցն, և ինքեանք յանիմաստս առ խարխափս եկին ածին 'ի դուրս սրբոյն Յսադայ զամ եղինսն։ Իսկ ինքն սուրբն Յսադ եղեալ տեսանէր զնոսա, և գոհանայր զնոնէ՝ որ այնչափ վերակացու և այցելու եղև հաւատացելոց իւրոց։ Կայր յաղօթս եպիսկոպոսն Յսադ, և բժշկէր զաչս գողոցն. և հրամանն տայր լուանալ զանձն նոցա, և զնէր ճաշ առաջի նոցա, և քաջ ուրախ առնէր զնոսա մեծապէս։ Գ՚այս օրհնէր զնոսա, և տայր նոցա զեղինսն՝ զոր իւրեանցն էր գողացեալ, և արձակէր զնոսա զիւրեանց ճանապարհն. և գնացին։

Լ.յսպէս բազում համբերութիւնս յամ գործս իւր ցուցանէր. և բազում առնէր նշանս և զքանչելիս։ Այլ էին նորա երկու դստերք. և ետ զմին Աբրկոյ ումեմն կին, և զմիսի աներոյն իւր՝ նա կալաւ զաթոռն Խաղայ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս որ ինչ իբրև դարձաւ սուրբ կաթուղիկոսն Ներսէս յերկրէն Յունաց, թէ որպէս կշտամբէր զարքայն. կամ որպէս լինէին նշանք ահագինք 'ի վերայ աւանին Արշակաւանի, և սատակեցան առ հասարակ յանկարծօրէն ամ բազմաւ մարդկան՝ որք յայնմ տեղւոջ էին։

Այլ իբրև սատակեցաւ կայսրն, դարձան ամ հովիւքն եպիսկոպոսքն՝ որք աքսորեալք էին, և կեցեալք էին յիւրաքանչիւր քաղաքս։ Յայնժամ դարձաւ և նոր կաթողիկոսն Ներսէս յանապատ 'ի կղզւոյ անդի, ուր էր զնոսա արգելեալ. և համաշխարհի էին ինդրուածք. միասնդամ աշխարհի ընորհեցաւ։ Այլ իբրև եկն յաշխարհն Հայոց, ընդ առաջ երթային նմա 'ի գաւառաց գաւառաց եպիսկոպոսք հանդերձ իւրաքանչիւր ժողովրդովք, և նախարարք ամ և ամ գաւառակալք։ Այլ բերէին առաջի նորա զիւրաքանչիւր հիւանդս, և բժշկէր զնոսա. ուր և բազում խակ և կարի յաճախեր գոհութիւն 'ի փառս այ, և ամ մարդիկն առ բազում գութ հովուապետին՝ համարէին զանձինս իւրեանց թէ ինքեանք իբրև զնոսա 'ի գերութէ դարձեալ իցեն։

Այլ առնէին ուրախութիւն բազում հոգևորս մեծաւ ցնծութիւնք։ Համաշխարհ ամ որք իւրաքանչիւր տն այ զեղեալ ուխտս կատարէին, որ 'ի վերայ հոգևոր գանձին հայրապետին՝ որ առաւնոցա. և կատարեաց նոցա զինդրուածս նոցա, և զորբութիւն արտառութիւն անձանցն սրտկեղ ցաւոցն սրտաբեկութիւնն, միասնդամ սիրով գթով վարդապետութիւնք հոգևոր հարքն

միութարեաց զամենեսեան։ Զմենեքեան 'ի դժնեայ տրտմութենէն զուարթացեալք, յուրախութիւն դառնային։ Զինքն իսկ Թագաւորն Զրշակ երթայր ընդառաջ նորա, մինչև 'ի կողմանս Զաքասերոյն, և անդի մեծաւ զուարթութիւն դարձան։ Զչ սկսան նորա գել և պայծառանալ վարք աշխարհի և կարգացն և օրինացն եկեղեցեացն։

Զյլ իբրև եկն հայրապետն Զերսէս 'ի Հայս, 'ի վերայ հասանէր իւրում Եռեղապահին սրբոյն Սադայ, զի էր կացեալ 'ի ճշմարտութիւն և յուղղութիւն, և գնացեալ էր զճանապարհս ոտն այ, և ոչ էր թիւրեալ յաջ կամ յահեակ, բազում գոհութիւնս մատուցանէր այ, զի զՍադ զհոգևոր որդեակն իւր եգիտ ըստ կամացն՝ որպէս ինքն կամէր. զնա անձկով տեսանէր։ Զյլ յորժամ լսէր 'ի Սադայ զնա զանձրէնութիւնն չարութիւնն ծուռ գնացիցն Թագաւորին, տրտմէր լայր ողբայր և կոծէր մեծամեծ հեծեծանօք. մանաւանդ վասն քաղաքին Զրշակաւանին, զի անօրէնութիւն և չարութիւն և յափշտակութիւն շինեցաւ բազում մեղօք։

Զպա ՝ոբ հայրապետն Զերսէս մտանէր առ Թագաւորն, խօսէր ընդ նմա և ասէր՝ եթէ ընդէ՞ր մոռացար զնո՞ր, և Թողեր զպատուիրանս նորա. զարաբիէն՝ որ զնա՞մ յոչընչէ արար, որ հայրն է որբոց և դատաւոր այրեաց, որ վասն մեր էջ յաղքատութիւս, որ ոչ Թողու զաղքատս 'ի ձեռանէ, այլ իւրով մարդասիրութիւն բուծանէ զնոսա, այլ ՝ոծ դատաւոր արդար և հզօր և երկայնամիտ՝ որ ամենայն տառապեալոց ունկնդիր է, և զարհամարհանս ուրուք 'ի յանձն ոչ առնու։ Զյ զի՞՝ոդ կամ ի՞նչ դու ըմբռնեցար արհամարհել զնորա զպատուիրանն. ո՞չ հայրն քո վասն այսր ամբարշտութիւն 'ի կորուստ մատնեցաւ։ Զրդդու տակաւին չյիշեցեր զնա, որ ոչն յիշեաց զմեղս հօրն քո, և ետ քեզ զտեղի ունել, այս ինքն զաթոռ և զթագ հօրն քո. և սկսար անօրինել առաջի ՝ոտն այ քո, և զամբարշտութիս և զանօրէնութիս և զանիրաւութիս կարի 'ի նմանութիւն սոդոմացւոցն՝ պարծանօք յայտնապէս պատմել։ Զյ երկիր առ հասարակ լան և վայեն զրկութիւնն զյափշտակութիւնն, որովք

դու կամեցար մեծանալ. և ոչ յաղէցոյց զքեզ մեծ և բազում թագաւորութեցն յղփութիւնն, զոր ետն քեզ ՝ի ամի ՝Պ։

Եւ զոր լուր ինձ զոր ասեմն քեզ, և արա զնա՝ զի մարթասցես շահել զանձն քո, և ապրեցուցանել զքեզ ՝ի բարկութենէն անտի այ, և մի թշուառական աշխարհս Հայոց յաղագս քո կորիցէ։ Եւ յլ ես տեսի տեսիլ, զի կորուստ և քանդումն յուշեալ խաղաղեալ գայ ՝ի վերայ կորստական աշխարհիս Հայոց այսոցիկ։ Եւ զոր հրաման տուր՝ ՝ի բաց քակել զտեղին զայն, և ցրուեա զմարդիկն՝ զոր ժողովեցեր, զի երթիցեն ցրուեսցին սփռեսցին յիւրաքանչիւր տեղիս, և երթիցեն տացեն իրաւունս ում զինչ և պարտիցին. զի մի դու ՝ի խորս չարեաց բարկութենն անգանիցիս կորիցես։ Եւ վասն մեղացն՝ զոր գործեցեր, հրաման տացուք ամ աշխարհի՝ ընդ քո ՝ի պահս և ՝ի խնդրուածս լինել, և մեք հանդերձ քեւ յապաշխարութիւն մտցուք. ո՛ գիտէ, թողու ամ զքո զայդ զանհնարին զմեղադ գործեալ։ Եթէ տեղւոյն ինչ կարի այդչափ ցանկացեալ ես, ես ինքն ինձէն զնա արդարութեամբ շինեցից, և շէն կալայց առաջի քո։

Իսկ թագաւորն ծաղր առնէր զբանսն կաթողիկոսին, և մկթայր զնորա զասացեալսն։ Իսկ նա միւսանգամ բարկացեալ, կրկնեալ ասէ. Գիտես, ո՛վ թագաւոր. վասն այսր ամի ասացեալ է կանխասացութենն այ բերանովք մարգարէիցն, եթէ «Վա՜յ որ շինէ զտուն իւր՝ և ոչ արդարութեամբ, և զվերնայարկս իւր՝ և ոչ իրաւամբք». եթէ «Յառակ առցին ողբքն, և ասասցեն՝ եթէ վայ որ ագահէսցէ զագահութիւն անձին իւրում, որ ոչ է իւր. զի եթէ տունք գեղեցիկք իցեն և մեծամեծք իցեն, սակայն յաւեր դարձցին. զի մի որ բնակիցէ ՝ի նոսա մարդ, այլ ճարակ հօտից լիցի, և դադարք գազանաց և որջք գազանաց և որջք բորենեաց և ճագարաց և աղուեսուց, բոյն խորդոց և ագռաւուց, և անդք սահմանակցաց. վասն այդորիկ աւերեսցին գործք ձեռաց քոց և մի շինեսցին, և միանգամայն սատակեսցին ամ անօրէնքն բնակեալքն ՝ի նմա. և եղիցին դադարք եղանց և ճարակք ցռոց, և աղուէսք մուտ և

ելս խաղասցեն յարկս նոցին. և մի շինեսցին, և մի
և-ս բնակեսցեն, մինչև ցյաւիտեան »։

Եւ զայս ամ խօսեցաւ Հայրապետն Ներսէս, և
գնացեալ 'ի Թագաւորին Եղեալ շրջէր ընդ գաւառս
գաւառս աշակերտութեն՝ ուղղել կարգել և հաս-
տատել զեկեղեցիսն յամ գաւառս Հայոց։ Եւ յետ
երից աւուրց անցանելոյ բանիցն ասացելոց 'ի վերայ,
որ խօսեցեալ եղեն 'ի բերանոյն երանելոյն Ներսէ-
սի, մատնեաց որ զդեղաքաղաքն զԱրշակաւանն 'ի
ձեռս հարուածոցն։ Եւ սկսաւ հատանել զոր չա-
րակերն իմն կոչեն, իսկ կեսքն ժանդ անուանեն. ե-
լաներ 'ի վերայ մարդկանն և անասնոցն։ Ոչ աւելի
եղև հարուածոցն 'ի վերայ նոցա քան զերիս աւուրս
յերկարեցաւ, զի անմարդեցաւ. քան զքսան հաղարք
սատակեցան երդք մարդկան, ոչ մնաց 'ի նոցանէ և
ոչ մի. զի առ հասարակ սատակեցան կոտորեցան յան-
կարծօրէն քանդեցան. զի միահաղոյն եկն սատակումն
'ի վերայ նոցա։

Եւ յետ այսորիկ ինքնին Թագաւորն Եղաներ 'ի
խնդիր հայրապետին Ներսէսի. և գտեալ՝ խնդրեր
'ի նմանէ, զի մատուցէ աղօթս վասն նորա, զի մի
դուցէ և նա սատակեսցի, քանզի կարի զարհուրեալ
էր։ Զայս խօսեալ սկսաներ եպիսկոպոսապետն Ներ-
սէս ընդ Թագաւորին, և ասէր. Զի այժմ յաշխարհս
հիս յայսմիկ, վասն զի արդարքն և մեղաւորքն զոյգ
հասարակ խառն են, վասն արդարոցն խնային մեղա-
ւորքն առ ժամանակ մի և ապրին, և յերկարին յաշ-
խարհիս վասն նոցա կենացն և նոքա 'ի պատճառս
նոցա։ Զի որոմն սերմանեալ թշնամւոյն 'ի վերայ
որ բուսոյն սերմանն ցորենոյն, ընդ նմին զոյգ հաս-
ռակ բուսեալ են. խնային վասն ցորենոյն սրբութե-
և բոյս աղտեղութեն որոմին. զի մի դուցէ մինչ զո-
ւրոմին քաղահան արարեալ խլիցեն, խլեցի ընդ նմա
և ցորեանն։ Զ՝ասն այնորիկ առ ժամանակս վայելեն
'ի դարմանոյ ցորենոյն և որոմն ընդ նմին 'ի ցօղս և
յանձրևս և յոռոգմունս, և 'ի ջերմութիս խարա-
կեալ և 'ի հեշտ արևս արեգականն։ Զ՝այսպէս այս
լինի մինչև 'ի ժամանակս հնձոց, մինչև եկեսցէ ժա-
մանակն յորժամ հնձեսցի ցորեան արմտեացն. զայն

'ի շուրմարանս ազգայութեան ժողովեսցին, և զորոմն յայրումն յաւիտենական հրոյն. որ է ինքն հունձք կատարած ժամանակաց, յորժամ Որդին այ եկեալ հասանիցէ, և տացէ հրաման երկնաւոր մշակացն ընդ նմա ելիցեալս 'ի վերուստ՝ 'ի գերեզմանացն հնձել զամ ենջեցեալսն յարուցեալս։

Որդ այնուհետև ընդդրութեան առնիցէ. զարդարսն նման ցորենոյ ընդ ինքեան յարքայութիւն իւր ընդունիցի, և զմեղաւորսն որոման նմանեալս՝ յանչէջ 'ի յաւիտենական 'ի հուրն հրամայիցէ արկանել։ Որդ այժմ ժամանակն հնձոց չև եւս էր, դու կանուխ քաղահան որոմանն 'ի ցորենոյն արարեր, և կանուխ զորոմն 'ի մի վայր առանց ցորենոյն ժողովեցեր. վասն այդորիկ յայնժամ կանխեաց հուրն, անինայ յարձակեցաւ այրել, զամ որոմն 'ի մի վայր ժողովեալս 'ի միում վայրի գտեալս միահաղոյն վաղճանեաց։ Այլ այր դու, տես զանձն քո, զի մի և դու կորիցես, և աշխարհս վասն քո։ Իսկ թագաւորն 'ի գուձս հաւեալ, մեծաւ աղաչանօք և բազում աղօթիւքերօք աղաչէր թագաւորն՝ հաշտել ընդ նմա. և եդ ուխտ, զի այլ ոչ եւս երբեք անցցէ զբանիւք նորա։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս Հայր մարգպետին, յորժամ եկն էջ 'ի գաւառն Ցարօնոյ՝ եթէ զնարդ եկն եւ 'ի տեղի ազօթիցն Աշտիշատ, կամ զնարդ դատապարտեալ գնաց անտի յերբոյ բերանոյն 'ի խօսիցն. կամ զնարդ անկեալ, մահուն պարտ եղեալ. ատակեցաւ 'ի Շաւասպայ արծրունեաց։

Այր էր մարգպետն Հայր այր չար և ժանտաբարոյութիւք անօրէն և անիրաւ քան զառաջին Հայր անուն մարգպետն։ Սա կոտորեաց զամ ազգս նախարարացն 'ի ժամանակս թագաւորութեան Տիրանայ արքայի. և սոյնպէս առ թագաւորութեան Աբշակայ՝

և ա՛ր քան զառաջինն գործել էր առ Ամ մարդ։ Արդ ելանէր սա շրջէր ընդ մարդպետութիւնն իւր. ապա եկն էջ Հայր մարդպետ 'ի գաւառն Տարօնոյ ընդ իւր գեւղն տեսանել։

Օ այնու ժամանակաւ սուրբն Ներսէս շրջէր ընդ իւր ձեռական իշխանութենն. զի հնգետասան գաւառ զայն ձեռական իշխանութե՛ն ունէին իբրև սեպհական 'ի ինքն, առանձին առաջագի նոցա էր կարգեալ։ Եւ յայն գաւառ գլխաւոր գաւառք այս էին Աղբայրատ, Դարանաղէ, Նկեղեաց, Տարօն, Բրզնունիք, Ծոփք, և որ ընդ մէջ նոցա և որ շուրջ զնոքօք։ Նէն էջ և Հայրն մարդպետ զիւրով իշխանութեամբն շրջել. ապա եկն և առ կաթողիկոսն Ներսէս յառաջին տեղին, ուր նախ էր զեկեղեցին շինեալ 'ի Գրիգորէ, և զվկայարանն սրբոցն զվկայիցն. և անդ զյիշատակս սրբոցն կատարէր։ Ապա դէպ եղև անցանել Հայր մարդպետին առ տեղօքն, ցանկացաւ ելանել 'ի առ տեղիսն Աշտիշատու կալ յաղօթս, և առնուլ ողջոյն 'ի սրբոյ եպիսկոպոսապետէն Ներսէսէ։ Ապա իբրև կային յաղօթս, ետուն ողջոյն. հրաման տայր առ հայրապետն Ներսէս, եկեալոցն ճաշ պատրաստել։ Եւ մինչ դեռ նոքա պատրաստէին ինչ ըստ նմա արժանի աւագօրէն սպաս, նա ելանէր յեպիսկոպոսական կայենէն յապարանից մինչև 'ի վկայարանս սրբոցն. 'ի մեծ և 'ի գեղեցիկ հրապարակին զերթևեկս առեալ շրջէր, զՁեմն առեալ։ Ապա տեսանէր զգեղեցկութի՛ վայրացն, զնիստ շքեղուտ 'ի բարձաւանդակ տեղեացն և զնայեացն 'ի խոնարհ, զի կարի վայելուչ էր տեղին. և չարակնեաց։

Ապա եմուտ բազմեցաւ յուտել և ըմպել։ Իսկ յորժամ արբեցաւ սիսաղակեցաւ, սկսաւ նեբքինին խօսել բանս հպարտս և ամբարտաւանս յարբեալեաց՝ դնէր թշնամանս Տրդատայ արքայի, 'ի մեռեալս և կենդանեացն 'ի կեանս, ազգի և տակի և տոհմի արշակունեաց թագաւորացն Հայոց։ Օ իմ՛արդ, ասէ, զայսպիսի տեղիս կանանցահանդերձ մարդկան տրւեալ է, և ոչ արանց։ Եւ զոբ տեղեօքն քամահեալ արհամարհէր, և ասէր՝ եթէ զայս տեղիս 'ի բաց քակեմք, զի աստ պարտ է շինել զապարանս արքունի։

Լու թէ ես Հայր մարդպետ կենդանի իցեմ և առ թագաւորաւն հասից, ասէ, որ ինչ ասա իցէ, զայն 'ի բաց փոխեցցիս. և որ ասա իցէն, ասէ, ինոսա հանից, և զտեղիս՝ արքունի սենեակ կազմեցցիս։

Իսկ սուրբ եպիսկոպոսապետն յորժամ լսէր, և ասէ՝ եթէ որ մեր Յ՞ա Լ՞ա, որ ընտրեաց նախ զայս տեղի՝ դնել զանուն իւր ասա, որոյ անունն առ հաստակ ընդ ամ տեղիս փառաւորեալ է Հարքն և որ Հոգոյն հանդերձ, որ պատուիրեաց մի ամենևին յայլոյ ինչ ակն դնել կամ ցանգալ. իսկ որք ժլատեալք 'ի նորա նուէրսն բերէն աչս, և այնմ ցանկան, վասն այսորիկ նա մի հասցէ առ այն՝ որով սպառնացաւն, այլ խափան լիցի իւր յառաջև նմա բաղում մակարդ մեղացն իւրոց գործելոց։ Այսպա գնայր մարդպետն Հայր 'ի՞որ տեղեացն, և էջ յափն գետոյն հոսանացն Եփրատու, հովիտսն Թանձրախուռն անտառին, 'ի գետախառնուածն երկուց գետոցն, 'ի Թաւուրթ խարձիցն մամխեացն, որ 'ի տեղւոջն 'ի հնոցն իմն շինած քաղաք՝ զոր շինեալ Սանատրուկ արքայի, որում անուն տեղւոյն Ա՞ծուրբ կոչի։

Ա՞րդ իբրև եկն եհաս յայն տեղի, ապա յուզեցաւ դատաստան բարկութեամբ 'ի՞նկ 'ի վերայ անօրէնն Հայրի, և իւրոց գործոցն և բանիցն խօսելոյ։ Այսպա մատնեցաւ նա 'ի ձեռս առն միոյ, որոյ անուն Շաւասպ կոչէր, մնացորդ ազգին արծրունեաց։ Ա՞ինչդեռ նստէր նա 'ի կառս, և երթայր զՀանապարհն, եկն Շաւասպն։ Սկսեալ պատմել մարդպետին սուտ 'ի քմաց իւրոց, և ասէ. Ա՞րջ մի տեսի սպիտակ իբրև զձիւն։ Նա հրապուրեաց զմարդպետն իջանել 'ի կառաց անտի, և հեծանել 'ի նժուգի. և մտեալ պառակէին մայրեացն։ Իսկ իբրև ընդ թաւուրթն անկանէին, զինի եղեալ սակաւ մի Շաւասպն յետսադոյն մնացեալ, յետոյ յառաջնետիւ հարկաներ զմէջ ներքինւոյն Հայրի. անդէն թափ հանեալ գնեան, և անդ յերկիր անդեալ սատակեցաւ։ Նա առն այ ասացեալքն հուպ ընդ հուպ վաղվաղակի կատարեցաւ. զի ամենևին բան 'ի գետին ոչ անկանէր առն այ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

*Յաղագս անօրէնութեան Թագաւորին Արշակայ, թէ որպէս եսպան զորդի եղբօր իւրոյ, որում անուն Գնել, ի քսանութենէ ջրութենէն Տիրիթայ. կամ որպէս յանդիմանեալ եղև յառնէն ՅՍ ի Ներսիսէ, կամ որպէս զմեւս ևս եղբօրորդին Տիրիթ. կամ որպէս զկինն Գնելոյ արար իւր կին. կամ որպէս էած իւր կին ի Յունաց զՈղիմպին, կամ որպէս երեցն Մրջնանիին մահուան դեղո

թագաւորն Աբրակ, մինչև հաստատէին 'ի միտս թագաւորին զիւրեանց ասացեալն։

Այլ ոխացեալ թագաւորն ընդ պատանեկին Պնելոյ, և բազում անգամ հալածական առնէր զնա. և նիւթեալ լինէր նենգութիւն բազում ժամանակս։ Այլ զնաւասարդաց ժամանակօքն առնէր խորհուրդ թագաւորն Աբրակ, կոչել առ ինքն զպատանեակին Պնել և սպանանել։ Այլ առաքէր զՀ արդան զեղբայր սպարապետին զնահապետ ազգին մամիկոնեան տոհմին, զի մեծաւ երդմամբ և նենգութիւն կոչել կաբասցէ, զի մի խորհուրդն յայտնեսցի. դուցէ փախիցէ և ապրիցի. այլ զի պատրանօք և հրապուրանօք ածիցէ մինչև 'ի տեղին մահուն։ Այս էր բանակ թագաւորին 'ի Շահապիվանի 'ի բուն բանակի տեղին Աբրակունեացն 'ի Նեղքոյ Սիւնեացն և 'ի վերայ առպարիսացն։ Այս առաքեալ զՀ արդանն, զմեծ նահապետն յաղքայէն Աբրակայ, 'Եկն Եգիպտ զպատանեակն Պնել 'ի մօտաւոր տեղւոջն, այս ինքն 'ի գեւղն Աղաւիտոց անուանեալ։ Մեծաւ ուխտիւ և բազում պատրանօք զպատանեակն Պնել հանդերձ իւրով կնաւն և դրամքն հաւանեցուցանէր երթալ հասանել 'ի բանակն արքունի. իբրև այն թէ 'ի մեծարանս ինչ զնա կոչիցէ թագաւորն, բազում խնդանօք տարեալ հասուցանէր՝ եթէ թագաւորն Աբրակ ոչ կամեցեալ զտօնս նաւասարդաց առանց քո անցուցանել, զի հաճեալ և քաղցրացեալ է ընդ քեզ, վասն զի ըստ բանից չարախօսացն ոչ ինչ դտաւ 'ի քեզ չարուի. և եհաս ինքն 'ի վերայ, զի զուր այժմ ատէր զքեզ՝ որ 'ի նմանէն մեծ սիրոյ արժանի ես։

Այլ չուեաց ՝ամ կազմութիւն իւրով Պնել, երթեալ հասանէր 'ի բանակն արքունի զգիշերն ՝ամ բազում փութով տագնապաւ։ Զ՝ ամն զի վաղիւն հասելոյ առաւօտուն օրն լուսանայր կիւրակէն։ Այս յայնմ աւուր տօն դիպեցաւ յիշատակի մեծին Յովհաննու, որ 'ի Գրիգորէ և 'ի Տրդատայ յաւանին Բագաւանին կարգեալ էր։ Այլ յայնմ յիշատակ աշխարհաքնակք մարդկան՝ որ ժողովեալն էին, և բազում եպիսկոպոսք՝ որ յայլոց գաւառաց. և ապա մեծ եպիսկոպոսապետն Ներսէս փոխանակ իւր յղեաց

զիւր աթոռակիցն զԼսադ, և զիւր արքիդիակոնն Եպիսկոպոսին՝ որում անուն Մուրիկ կոչէր. զի երթիցեն նոքա, պէտք զինչ և իցեն ժողովոյն՝ ընդ նորա վճարեսցեն։ Այլ ինքն անդէն մնաց յարքունական բանակին, զի զնոյն հաղորդութեն և անդ կատարեցեն։ Այլ յայնմ գիշերի ցայգապաշտօն մեծ եղև 'ի բանակին առ կաթողիկոսին։

Իսկ իբրև առաւօտն ծագեաց, հասանէր վաշտն Գնելոյ 'ի բանակն արքունի. և մինչ Գնեալն արքունական բանակին լինէր միջամուխ, ազդ լինէր թագաւորին եկն նորա։ Ապա ելանէր հրամանն յարքունուստ, արտաքս ունել և տանել սպանանել։ Այլ մինչ դեռ գայր նա ընդ բանակամէջն, և էր հեծեալ յերիվարին իւրում, իբրև մերձ եղև 'ի հրապարակն արքունի, և անդ 'ի յարքունուստ հասանէին բազում սպասաւորք վառեալք սուսերաւորք նիզակաւորք վաղրաւորք սակրաւորք սունաւորք և սպարակիրք հետևակք, որք մատուցեալք բուռն հարեալք ընկենուին յերիվարէ անտի զպատանեակն Գնել. և ձեռն յետս կապէին զնա, և առեալ գնային 'ի տեղի կառափելոյն։ Այլ քանզի կին նորա եկեալ էր ընդ նմա ժանուաւ, 'ի նմին 'ի նորին վաշտու էր ընդ առն իւրում։ Իսկ իբրև տեսանէր թէ կալան զայր իւր և կապեցին, վաղվաղակի ընթացաւ յեկեղեցախորանն ժողովուրդն, ուր պաշտօն մարդկան բանակին առ ՅԾ կատարէր, մինչ դեռ առաւօտին աղօթքն մատչէին. և անդ Եղերսէս մեծ եպիսկոպոսապետն։ Իսկ կինն հասեալ առ արքեպիսկոպոսապետն, գոյժ արկանէր նմա զիւրոյ առնն տարապարտ կորուստն, ՀՐՉեալ մեծաձայն. Ո՛ աղ հասիր, ասէ, դեռ զամուսինն իմ զուր առանց ՀՐատու և յանցանաց խողխողեն։ Իսկ նորա խափանեալ զպաշտօնն, ընթանայր 'ի խորանն արքունի. հասեալ 'ի դրացն 'ի ներքս առ թագաւորն անգամեր։ Իսկ թագաւորն իբրև տեսաներ զմեծ քահանայապետն, գխտացեալ զբարեխօսութիւն համոզելոյն վասն առնն մահուանն զի մի մեռցի, յայնժամ թագաւորն զիւր սամոյրսն զգլխոցն ածեալ, 'ի փոյթ կնջանն մտեալ, զիւր դէմն երեսացն ծածկէր, քնոյ պատՀառ եղեալ՝ զի զնորա բանսն մի լուիցէ։

Իսկ ՝ի՞ն Ներսէս մատուցեալ բուռն հարկանէր զթագաւորէն. խօսէր ընդ նմա, և ասէր. Թագաւոր, յուշ լիցի քեզ քո տէրն՝ որ վասն մերոյ սիրոյ խոնարհեցաւ յիւրմէ ՝ի բնական բարձրութենէն, և եղև եղբայր ծառայութեամ մերոյ անարժանութեանս. ոչ վասն այլ երկի, այլ զի լիցի վարդապետ սիրոյ. զի մեք խնայելով ՝ի միմեանս, նայեցեալ յածեղէն վարդապետն, զմիմեանս սիրեսցուք երկեղիւ. զի մի միմեանց ՝ի՞նասել իշխեսցուք։ Իսկ եթէ դու ՝ի քո եղբայր և ՝ի ծառայակիցն և յընկերակիցն և ՝ի հարազատն ոչ խնայեսցես, որ կամաքն եղբայրացեալ է մեզ տէրն՝ ՝ի քեզ ոչ խնայեսցէ։ Զ՝ի նա մեզ այսպէս ասաց. "Որ ձեզ լսէ, ինձ լսէ. և որ զձեզ ընդունի, զիս ընդունի. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ"։ Եւ որ այժմ դեռ մեք ընդ քեզ խօսի, լուր Վ՝ռեի, զի մի կորիցես դու. գուցէ անկեալ ՝ի թագաւորութենէդ քումմէ, կենդանւոյն միայն շրջիցես, և ոչ ոք քեզ օգնիցէ։ Այլ այժմ լուր Վ՝ռեի, և խնայեա յանձն քո, մի հեղուլ զարիւն եղբօր քո հարազատի՝ սպանանել զարդարն ՝ի տարապարտուց յանկնայ։

Իսկ թագաւորն սալացեալ, ոչ ինչ լսէր. զերեսն վտաւատօքն ծածկեալ՝ ոչ բանայր, և ոչ կամէր առնել բանիցն պատասխանի. այլ ընկողմեալ պատեալ ծածկեալ կայր ՝ի գահոյսն, զի և շարժել անգամ ոչ տղէր։ Իսկ մինչ դեռ նա զայս և այսպիսի բանս ողբոյ ընդ թագաւորին խօսէր, գայր արտաքուստ դահճապետն Նրազմակ մտանէր ՝ի խորանն արքունի, սկսանէր պատմել՝ զի ՝ի գլուխ հանի կատարեցի, ասէ, զՅամ զՀրամանս արքունի. առի գնացի զՎռեի, տարայ մինչև յորմ Սիւսին սպանի, և անդէն թաղեցի։

Այսպա խօսել սկսանէր ՝ի՞ն Ներսէս, և ասէր. Աբ դարձ իսկ երբև օձի քարբի, զի խնու զականջս իւր՝ զի մի լուիցէ նա զձայն թովչի ճարտարի, և մի առցէ զչէզ ՝ի դեղատուէ իմաստնոյ, սոյն օրինակ և դու խցեր զականջս, և կափուցեր զլսելիս, զի մի լուիցես զօգտակարս բարբառոյ զՅաճեղէն բանիցն խրատուն. այլ զգաղանաց առեալ զբարուցս, սկսար լինել մարդախանձ։ Զ՝ ասն այնորիկ որ ՝ի վերայ նոցա

ասացաւ , լեցի այն 'ի վերայ քո . որպէս ասէն . « Ոչ փչրեսցէ զատամունս նոցա 'ի բերանս նոցա , և զժաւնիս առիւծուց խորտակեաց ՝ որ ,, : Ա ամն զի ընդդէմ դարձար հրամանին Աստի՝ ամն քո , վասն այնորիկ անարգ լինջիր դու իբրև զջուր հեղեալ . և 'ի լարեալ զեղան սորա՝ տկարասջիր : Այս կործանումն՝ որ բեռրանով մարգարէին ածի 'ի վերայ ձեր , ընդդէմ ազգիդ Ասշակունեաց զյետին բաժակն , արբջիք արբեսջիք և կործանեսջիք , և այլ մի՛ ևս կանգնեսջիք : Այս անսպառ ժամանակին հրոյն սպառնալիք հասանիցեն ձեզ 'ի տունս գալստեանն . և անկջիք 'ի խաւարն , և մի՛ ևս տեսջիք զարև փառաց Որդւոյն այ : Ասյ դու , Ասշակ , փոխանակ զի զգործս Կայէնի գործեցեր , զանէծս Կայէնի զգեցջիր . անկջիր կենդանւոյն 'ի Թագաւորութեդ քումմէ , և չարչարեսցիս առաւել քան զՏիրան զՀայրն քո , և դառն մահուամբ զկեանս քո յերկրէս մեծ նեղութեբ վճարեսջիր :

Այս զայս եմ խօսեցեալ ընդ Թագաւորին քահանայապետին մեծին Ելեսէի , գնաց 'ի Թագաւորէն , և այլ ոչ դարձաւ անդրէն յայն բանակ : Իսկ զպատանեակն Գնել առնուին զնային մօտ 'ի Սիւան արքունի , և անդէն կառափէին 'ի սարակ լերինն . որում տեղւոյն Լսին անուանեալ է , մօտ յորմածս արգելոցացն որսոյն երիոցն , ընդդէմ մուրտաստանին աղբերացն բազմոցացն արքունի , յանդիման բանակետեղ բնին :

Պպա հրաման եղև յարքայէն . Ամենայն մարդիկն որ իցեն 'ի բանակին , մեծ և փոքր առ հասարակ , մի՛ ոք իշխեսցէ ելթալ . այլ՝ եմ ոք առ հասարակ երթիցեն դիցեն աշխար կոծոց , և լացցեն զԳնել մեծ սեպուհն արշակունի զսպանեալն : Իսկ ինքն Թագաւորն գնացեալ 'ի լալին , նստեալ լայր զեղբօրորդին իւր , զոր ինքն եսպան : Երթեալ նստեր մօտ առ դին , լայր ինքն , և տայր հրաման՝ կոծ մեծ և աշխար դնել շուրջ զսպանելով դիակամբն : Իսկ կինն սպանելոյն Փառանձեմն զՀանդերձն պատառեալ , զգէսս արձակեալ , մերկատիտ 'ի մէջ աշխարանին կոծէր . ձայն արկանելով ՀՀեր , յողբս արտասուաց յաղիողորմ գուժի առ հասարակ զամենեսեան լացուցանէր : Իսկ

թագաւորն Աշշակ 'ի լալիսն տեսանէր զկինն սպա-
նելոյն, տուփեր և ակն դնէր՝ առնուլ զնա իւր կնութեամբ։
Իսկ այն որ զնենգութիւն քսութեաց նիւթեաց, և
գաւով 'ի վերայ իւրոյ հարազատին սպանութիւն կա-
տարեաց, վասն նորին կնոջն արար զայն. զի մեծա-
պէս սիրով հարեալ էր 'ի նմա։ Օ՜ Տիրիթն ասեմ,
որ յառաջագոյն հարեալ 'ի կնոջն յայնմիկ, վասն ո-
րոյ զնենգութիւն սպանութեանցն թագաւորաւն գոր-
ծեաց։ Իսկ մինչ դեռ 'ի նմին կոծն սաստկացեալ էր,
Տիրիթն սկսանէր ժայժ չունելոյ տուփանացն։ Պատ-
գամ յղեր առ կին մեռելոյն. ասէ՝ զի մի կարի զանձն
քո աշխատ առներ այդչափ, զի այր բարի ես եմ. քան
զնա. ես սիրեցի զքեզ, վասն այսորիկ մատնեցի զնա
'ի մահ, զի զքեզ առեալ ինձ կնութեամբ։ Բ՜ոդ մինչ դեռ
կոծ մոլութեանն զդիակամբն ջայլեին, զայսպիսի պատ-
գամս առաքէր Տիրիթն։ Խողոք բառնայր՝ թէ լուա-
լուք ամենեքեան, զի մահ առն իմոյ վասն իմ եղև.
զի որ ինձ ակն էդ վասն իմ, զայրն իմ ետ սպանա-
նել։ Օ՜ հեր փեսէր, ՀՀեր ընդ կոծելն։
Բ՜պա իբրև մեծ իրքն համարձակ յայտնեցան 'ի
ամենեցուն, և 'ի ձայնարկունքն ամ եղև նա
մայր ողբոցն, և ձայնարկունքն ամ 'ի ձայն ողբոցն
սկսան նուագել զիրսն տրփանացն Տիրիթայ, զակն
դնելն, զքսութիւն, զՀնարս մահու նիւթել, զսպա-
նումն, ձայնիւքն մինչոցն 'ի վերայ սպանելոյն 'ի մէջ
կոծոյն բարբառէին գեղգեղեալ խանդաղատութեամբ։
'Ի նուաձել իւրեանց ձայնիցն, իրքն յայտնեալ հրա-
չակ հարկաներ։ Օ՜ որ իբրև լուաւ թագաւորն Աշ-
շակ, և եհաս 'ի վերայ իրացն, զարմացեալ լինէր
արմանայր ընդարմանայր, ստրջացեալ 'ի միտ առնոյր
զիրսն։ Բ՜պա խօսել սկսանէր թագաւորն, ծափս ըղ-
ծափի հարեալ մեծաւ զղջմամբ ընդ իրսն՝ զոր գոր-
ծեաց, ասէ. Վ՜ ան զի 'ի կնոջն Գտնելոյ զանարժան
սիրով հարաւ Տիրիթն, առ այնմ զչարիսն նիւթեաց
զքսութիւն, զմահուն գոռութիւն զուր և տարապարտ.
և զմեզ ևս արդար արեանն շաղախեաց վասն իւրոյ
պղծութեանն. զեղբայրն իւր ետ կորուսանել, և զան-
հնարին չարիսն և զանեծս՝ որ ոչ անցանեն՝ ետ մեզ
ժառանգել։

Այս իբրև հասանէր Թագաւորն յիրացն հաստատութեան 'ի վերայ, և Ճշգրտէր զերսն, խլեալ անասայր բանին առ ժամանակ մի։ Իսկ իբրև զմեռեալն ծածկեցին անդէն 'ի տեղւոջն՝ յորում սպանաւն, և աւուրքն հարուստ անցին 'ի վերայ իրացն գործելոց, պատգամ յղէր Տիրիթն առ Թագաւորն։ Կամ լիցի, ասէ, քեզ արքայի, զի հրաման տացես՝ զփառանձեմ կին Գնելոյ Թող առից լինձ կնութեան։ Օր իբրև լուեալ արքային, ասէ. Արդ հաստատ գիտեմ զոր լուայն թէ ստոյգ է. վասն կնոջն իւրոյ եղև մահն Գնելոյ։ Եւ անդէն արքայն մահ խորհէր, սպանանել զՏիրիթ ևս փոխանակ ընդ մահուն Գնելոյ։ Օր իբրև լուաւ Տիրիթ, զահի հարեալ յարքայէն՝ գիշերի փախստական լինէր։ Այս ազգ լինէր Թագաւորին Արշակայ փախուստն Տիրիթայ, տայր հրաման Թագաւորն Արշակ աղատագունդ բանակին զհետ լինել Տիրիթայն. զի իբրև հասցեն նմա, անդէն 'ի տեղւոջն սպանցեն։ Բազումք և քաջք զհետ լինէին փախուցելոյն Տիրիթայ. ապա երթեալ հասանէին 'ի գաւառին Բասենոյ 'ի մէջ մայրեացն. 'ի տեղւոջն՝ յորում հասանէին, անդէն զՏիրիթն սպանանէին։

Եւ յետ այսորիկ էառ իւր Արշակ զկինն սպանելոյն զփառանձեմն։ Եւ որչափ սիրէր արքայն Արշակ զկինն, նոյնչափ ատեաց կինն զարքայն Արշակ. ասելով թէ թաւ է մարմնով, և թուխ է գունով։ Այս իբրև կինն 'ի նա ոչ յանգոյց զմիտս իւր, առաքեաց արքայն Արշակ յերկիրն Յունաց, և խնդրեաց էած անտի կին 'ի կայսերական տոհմէն աղջաւ, զի անուն էր նորա Ողոմպի։ Եւ ուժգին սիրով սիրեաց զնա, և նախանձուկս արկանէր նովաւ առաջին կնոջն. և կինն Փառանձեմ ոխացաւ ընդ Ողոմպին, և խնդրէր սպանանել զնա։ Բայց ծնաւ ապա Փառանձեմ թագաւորին ուստր մի, և կոչեցին զանուն նորա Պապ, և մնուցին զնա, և 'ի չափ հասուցին։ Եւ իբրև ջերթափեաց, և եղև հուժկու, ետուն զնա պանդանդ 'ի դուռն կայսերն յերկիրն Յունաց։

Իսկ Փառանձեմն 'ի մեծ նախանձու և ոխութիւն գնայր ընդ Ողոմպինոյն, և խնդրէր սպանանել զնա

դեղովք։ Իբրև ոչ ինչ հնարս մեքենայից էկարէր գտանել, վասն զի անձինն իւրում կարի զգուշ կայր, մանաւանդ 'ի կերակրոց և յըմպելեաց, բայց զիւրոց նաժշտացն կերակուրս արարեալ և կամ զնոցին պարզեալ զդինի Ճաշակէր. և եթէ ոչ ինչ գտանէին հնարք դեղել զնա մահուան դեղոքն, ապա դրան երէց ումն արքունի՝ որ էր 'ի ժամանակին յայն, որում անուն Մրջևանիկ, Մ.ըշամունեաց տեղեացն 'ի նահանգէն Տարօն գաւառէն, զնա 'ի բանտ արկանէր Փառանձեմն անօրէնն։ Օ՝անարժանս զանկատար զանջնջելի զչարեացն մեղացն չմոռացական տանջանացն կատարեաց զգործն զանարժանս զանտես զանլուր, այս ինքն ընդ կենաց դեղն զդեղ մահուն խառնելով. որ ուրեք երբեք այսպիսի գործք յումեքէ 'ի վերայ երկրի ոչ գործեցան։ Ի՝նդ տերունական ընդ՞ որ ընդ՞ ճշմարտական մարմինն ընդ հացն օրինաց խառնէին զդեղն սատակման. երէցն, Մրջևանիկ անուն, տալով յեկեղեցւոջն Ղազմպիայ տիկնոջն ընձեռել զմահուն գործ, և սպանանէր։ Ի՝ստ չարեացն կատարելոց զՓառանձեմայն՝ ամ չարեաք լցեալ ըզկամն կատարէր. և յանօրէնն Փառանձեմայն պարզև առեալ էերկցուն զդեւն՝ ուստի իսկ ինքն էր 'ի նահանգէն Տարօն գաւառէն, որում անուն Գոմ. կունք կոչին։

Մ.յլ՞ որ կաթողիկոսն Ներսէս այլ ոչ ևս յաւել տեսանել զերեսս Թագաւորին Մ.ըշակայ մինչև յօրն նորին կորստեան. այլ փոխանակ Ներսէսի զՁունակ ումն անուն, և կացուցին փոխանակ նորա զլուսաբրիստոնէուէն. և էր ստրուկ 'ի ստրկաց արքունի։ Մ.պա հրաման տայր Թագաւորն՝ կոչել զամ եպիսկոպոս Հայոց աշխարհին, զի եկեսցեն ձեռնադրեսցեն զՁունակն 'ի կաթողիկոսութիւն Հայոց։ Այ՝ ոչ մի ոք ոչ հաւանեաց գալ. բայց միայն Մ.ղձնեաց և Կորդուաց եպիսկոպոսք եկին, և զՁունակն ձեռնադրեցին կաթուղիկոսութիւն ըստ հրամանի Թագաւորին։ Այ՝ էր Ձունակն այր զգօն, և ոչ ինչ ունէր լեզու յանդիմանութիւն կամ խրատու, այլ հաւանեալ էր Թագաւորին զինչ և նա գործիցէ։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Յաղագս թէ որպէս կամ զնարդ կոչեցեալ եղև Արշակ արքայ Հայոց 'ի Շապհոյ արքայէ Պարսից, կամ զնարդ մեծարեցաւ 'ի նմանէն մեծապէս. կամ զնարդ Վասակ մամիկոնեան սպարապետն Հայոց սպանանէր զսորակալ ասպատանին արքային Պարսից. կամ թէ զնարդ Արշակ արքայ աւետարանաւն երդուեալ արքային Պարսից, ուխտէր նմա, կամ թէ զնարդ ատեաց յետոյ և փախեաւ. կամ թէ զնարդ արք եւթանասուն զոյ պաշտօնեայսն կոտորէր արքային Պարսից վասն նորա։

Յայնմ ժամանակի կոչէր առ ինքն Շապուհ արքային Պարսից զԹագաւորն Հայոց զԱրշակ. և մեծարեցաւ 'ի նմանէ բազում պատուով և մեծաւ փառօք, բազում գանձու ոսկւով և արծաթով՝ եմ մեծութիւն թագաւորութեան։ Այլ իբրև զեղբայր որպէս զորդի գրգեալ եղև 'ի նմանէ, և երկրորդական զմեծ տունն տայր նմա յատրպատական աշխարհին. և 'ի միասին 'ի միում տախտի գահուն 'ի ժամ ուրախութեանն բազմէին, զմիագոյն զմիանշան զհամահանդերձ զարդու։ Այլ զմիօրինակ զթագն օր ըստ օրէ ինքեան և նմա թագաւորն Պարսից զարդ պատրաստէր. զոյգ երկոքին 'ի միասին որպէս զեղբարս հարազատս անբաժինս յղփացեալք էին 'ի միում ուրախութիւն, և յանսպատում ուրախութիւն ուրախ լինէին։

Այսպէս եղև դէպ օր մի յաւուրց, եկն Եմուտ թագաւորն Հայոց Արշակ շրջել զասպաստանաւ միով զարքային Պարսից. իսկ ախոռապետն արքային Պարսից նստէր 'ի նեղքս 'ի տան ասպաստանին։ Իբրև տեսանէր զթագաւորն, ոչ ինչ առ լուս կալեալ մեծարեաց զնա, և ոչ ինչ շուքս զնէր նմա. այլ և անարգանս ևս զնէր թշնամանաց, ասելով 'ի պարսկերէն լեզու՝ թէ այծից Հայոց արքայ, եկ նիստ 'ի խրձան խոտոյ 'ի վերայ։ Օ որ բանս իբրև լսէր սպարապետն զօրավարն Հայոց մեծաց, որում Վասակն կոչէր, 'ի մամիկոնեան տոհմէն, մեծաւ բարկութիւն և բազում

սրտմտութիւն բարկանայր. 'ի վերս առեալ զսուսերն, զոր ընդ մէջն ունէր, հարեալ անդէն 'ի տեղւոջն զախոռապետն արքային Պարսից գլխատէր 'ի նեղս յաստղաստանի անդ։ Զ. Ի ոչ կարաց լսել և ժոյժ ունել զիւրոյ թագաւորին զանարգանս. զիւր մահն ա ռաջի եդեալ լաւ հաշուէր բաղում անգամ, քան զնոն իւրոյ լսել զվատթարութիւն թշնամանս։ Իբրև 'ի Պարսից աշխարհի էին, յայլոց 'ի տեղի և 'ի նոցուն հրապարակի աներկիւղ և անկասկած յանկարծօրէն զայպիսի զգործ կարաց գործել։ Իսկ թագաւորն Պարսից յորժամ զայս լսէր, բաղում շնորհս ունէր զօրավարին Ա՝ասակայ, ընդ քաջասրտութենն զարմացեալ և ընդ բաղում աներկիւղութենն։ Զ՝ բաղում պարգևաց և պատուոյ արժանի առնէր, ըզքաջութիւն և զտիրասիրութիւնն գովեալ։ Ա՝ ամն այնր իրաց մեծաւ սիրով սիրէր զնա, և ըստ արժանի իւրում պատուէր զնա. մեծարէր զնա՝մ աւուրս հաշտութիւն և խաղաղութենն, որ 'ի մէջ նոցա էր։

Ա՝պա մինչ դեռ անդէն էս էր արքայն Հայոց առ արքային Պարսից, և մեծ սէր էր 'ի մէջ նոցա և մեծ խաղաղութիւն, երկնչելով երկեաւ թագաւորն Պարսից Շ՝ապուհ, եթէ գուցէ ստեսցէ սիրոյն նորա Ա՝ր շակ արքայ Հայոց, և լիցի միաբան ընդ կայսերն Յունաց, և կամ կողաքակ ինչ լիցի 'ի նմանէ։ Զ՝ ոչ հաւատայր նմա, թէ պահեսցէ առ նա զմտերմութիւն սիրոյն, և կացցէ յուխտին միաբանութիւն ընդ նմա։ Ա՝ ամն այսորիկ երդումն պահանջէր 'ի նմանէն, մինչև կարի ստիպեալ բռնադատեաց զնա. Հաւանեաց, ասէ, և երդուիր ինձ յօրէնս քո, զի մի ստեսցես ինձ։ Իսկ իբրև կարի բռնադատեցաւ և 'ի նեղ անգաւ և շտապեալ ստիպեցաւ, ետուն հրաման ածել զերիցունս եկեղեցւոյն Տիսպոնի քաղաքի, որում անուն գլխաւորին Մ՝արի. և բերին զաւետարանն Տ՝ր, և տայր երդումն արքայն Պարսից Շ՝ապուհ արքային Հայոց Ա՝րշակայ՝ երդնուլ յաստուածեան աւետարանն, զի այլ մի ևս ստեսցէ նմա. այլ կացցէ յուխտի նորա, և պահեսցէ զդաշինս նորա։ Զ՝ վասն զի պատգամաւոր իրացս այսոցիկ էր տանուտէրն Նահապետն մամիկոնեան տոհմին երէց

եղբայր Վասակայ սպարապետին, որում անուն Վարդան կոչէր, մեծապէս արքայ Շապուհ յակն առեալ սիրէր զնա։ Իսկ իւր եղբայրն Վասակ զօրավարն Հայոց նախանձ բերէր ընդ երիցու եղբօրն իւրում ընդ Վարդանայ։ Կամեցաւ խանգարել առնել՝ ի մէջ Աղշակայ Թագաւորին Հայոց, և փախչել. այլ ասէր Շապուհ. Թէ ձեր սրտի մտօք էր տուեալ զերդումն՝ զիաւրդ կարէր ըստ հաւանութեանն ելանել երդմանցն և կամ փախչել։ Այլ, ասէ, գիտեմ զի կախարդութեամբ խաբեցէք զիս. և որ ունի զօրէնսն ձեր, զնա սիրեցէք. և նենգուցէք նմա խորհրդակից եղեալ, յինէն փախուցէք։ Այս կամիք դուք զտէրութեան Աղշակունեաց՝ ի վերայ ձեր, և զնոյն խնդրեսջիք։

Այս երդնու Շապուհ արքայ յարեգակն և՝ ի ջուր և՝ ի կրակ, եթէ՝ ոչ միում մարդոյ, որ յայդմ օրէնս քրիստոնէութեան է, ոչ տամ ապրել. և հրաման տայր զամենեսեան տանել սպանանել։ Այս տանէին զգլխաւորսն նոցա զՎարի երեց, և զայլ երիցունսն և զսարկաւագունսն, աւելի քան զեւթանասուն այր. ՝ի մի դուք զամենեսեան զնոսա փողոտէին։ Այս զաւետարանն՝ եթ՝ յոր երդուաւ Թագաւորն Աղշակ՝ կապէր պատէր երկաթի սարեօք, և իւրով մատանեաւ կնքեալ, ՝ի գանձատան հրամայէր. և տայր հրաման պահել զգուշութեամբ։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Յաղագս թէ զնարդ յուզեաց Շապուհ արքայ Պարսից՝ ի վերայ քրիստոնէութեան։

Այլ՝ ի ժամուն յայնմիկ, յորում սպանաւ երէցն Վարին հանդերձ եւթանասնօքն, յարոյց հալածանս մեծ Շապուհ արքայն քրիստոնէութեան հաւատոյ. հարկօք և պէսպէս վշտօք նեղէր զնոսա և հարուածովք բաղում։ Այս յետ այսորիկ հրաման տայր ընդ

ամ տեղիս իշխանութեանէ իւրոյ, թէ որ միանգամ զանուն քրիստոնէութեանէ ունիցի յիշխանութեան իմում, զամ մարդ միանգամայն հանցեն ընդ սուր սատակեսցեն. զի մի գտցի յիշխանութեանէ իմում, որ քրիստոնեայ անուն անուանեսցէ զանձն իւր։ Այսպա բեւրս բիւրուց կոտորէին, և հազարս հազարաց. զի այնպէս տուաւ հրաման 'ի Թագաւորէն, զի ամենեքին քրիստոնեայ անուն 'ի սահմանս նորա մի գտցի։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս Վարդանայ մահուն 'ի Թագաւորէն Արշակայ, նենգութեամբ իւրոյ Եղբօրն Վասակայ սպարապետին։

Իսկ Վարդանն, մամիկոնեան տոհմին տանուտէրն, գայր հասանէր հրեշտակութեամբ յարքայէն Պարսից առ արքայն Հայոց Արշակ. և մատուցանէր զհրովարտակն առաջի նորա։ Այս պատմէր նմա 'ի նմանէ բանս խաղաղութեան և զհաշտութեան, և զերդմանցն հաստատութեան։ Այս տայր պատգամ, թէ որ ինչ եղևն, այն ահա թողեալ լիցի ինքան. բայց դու յայսմ հետէ կաց յուխտին բանի, և մի անցաներ ըստ բան երդմանցն քում օրինաց՝ յոր երդուար։ Այսպա թէ ոչ, դու գիտես, և քո օրէնքն որում ստեան։ Իսկ Արշակ Թագաւորն սիրով ունէր և սիրով լսէր պատգամն, և հաւանէր զասացելոցն։ Այս խաղաղութեան արձակէր զմեծ նահապետն 'ի տուն իւր, զի երթիցէ հանդիցէ յաշխատութենէն յերկայն Ճանապարհէն. և գնաց։

Այս յորժամ եկն նահապետն Վարդան առ Արշակ, ոչ դիպեցաւ անդ կրսեր եղբայր նորին Վասակ առ արքայի։ Այսպա յետ այսորիկ եկն Վասակն, և զերդուէր զԹագաւորն ընդ իւրում եղբօրն երիցու, ասելով՝ թէ Վարդան է որ մատնէ զքեզ Թագաւորին Պարսից, և կամի կորուսանել զքեզ. եթէ ոչ

աճապարեսցես վաղագոյն սպանցես զնա, զու կորընչ-
չես և աշխարհս Հայոց։ Այլ և կին թագաւորին
և զ գրգռէր զթագաւորն սովին բանիւք, և զբանս
զորավարին Ասակայ հաւատարիմ առնէր նմա։
Ասն զի ունէր նա զոխն զայն ընդ Արդանայ, զի
նենգութեամբ և դաւով և մեծաւ երդմամբ սա այս
Արդան կոչեաց զ Հնէն զայրն նորա. յորժամ սպա-
նանէր զնա թագաւորն Արշակ։ Իսկ կինն զնոյն ո-
խութիս պահէր նմա, վասն այնորիկ աւելի և գրգ-
գռէր կինն թագաւորին 'ի վերայ նորա. մինչ զի և
զօր գումարեցին 'ի վերայ Ասդանայ, զի երթեալք
սպանցեն զնա. նա և ինքն ինչ իւր եղբայր Ասակ
երթայր 'ի վերայ նորա։

Այլ երթեալ գտանէին զնա յիւրում գաւառին
'ի Տայս, յիւր ամուր բերդին՝ որում անուն Լրա-
խանի կոչի։ Իբրև տեսին զգունդն թէ Ասակ է,
ոչ ինչ երկեան և ոչ զգուշացան կամ կասկածեցին.
համարեցան զզօրն եղբօրն՝ թէ խաղաղութիւն է էին
նորա, մինչ ի՛ջին առ խորանին դուրս, զի էր հարեալ
զխորանն 'ի ձոր յունջ բերդին։ Այլ մարդիկ զօրայն
Ասակայ էին ամենեքեան 'ի ծածուկ վառեալք և 'ի
վերայ ագուցեալք հանդերձ։ Այլ մինչ դեռ նա լուա-
նայր զգլուխ իւր մերկանդամ, հասանէին սուսերօք
բաղում մարդիկ, և խոցոտէին զնա մինչ դեռ նա
կայր խոնարհեալ՝ զի արկցէն ջուր 'ի վերայ նորա։
Այլ ոչ ոք տայր ժամանել յառնել, զի անդէն 'ի կո-
ղի սպանանէին զնա։

Այլ կինն նորա յղի էր, և հասեալ էին աւուրք
ծննդեան իւրոյ։ Այ՝ինչ դեռ 'ի վեր 'ի բերդին նստէր
'ի գահոյս իւրում, եղև գոյժ սաստիկ. իսկ նա իբրև
զձայն գուժոյն լսէր, վազէր 'ի գահոյից անտի։ Այլ
ընդ վազելն ծնանէր զմանուկն։ Այլ կոչէին զանուն
մանկանն յանուն հօր իւրոյ Ասդան։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս թէ զնարդ անմոռութիւն գնայր 'ի սպանութիւն նախարարացն յանինայ Արշակ արքայ Հայոց։

Այլ ահա 'ի ժամանակին՝ յորժամ մերժեցաւ յարքունական բանակէն՝ որ եպիսկոպոսապետն Լեր-սէս, և ոչ ոք գոյր ընդդիմացեալ Թագաւորին՝ որ տայր նմա զյանդիմանութիւն զնարատն, այնուհետև ըստ կամաց չարութեան իւրոյ գնացեալ լինէր նա. և զբազումս 'ի նախարարացն կոտորեաց, զբազումն աղ-գատ արարեալ անՀիտեաց, և զբազմաց տունս հա-տանէր յարքունիս։ Բայց զտոհմն կամարականացն՝ որ էին գաւառաց տեարք, Շիրակայ և Արշարու-նեաց, ազգատ[1] առնէր. և զգաւառսն ունէր յոստան։

Բայց յազգէն յայնմանէ մանկիկ մի փոքրիկ, ա-նուն Սպանդարատ, Թագուցեալ ապրեցուցանէր սպարապետն զօրավարն Հայոց Վասակ, որ յետոյ լի-նէր ժառանգ աշխարհին։ Թագաւորն Արշակ հրա-ման տայր՝ յԱրշարունեաց գաւառին շինել իւր բերդ մի ամուր, Արտագերս անուն։ Այս զգաւառն յու-տեստ 'ի պատրաստութիւն համբարաց թողոյր բերդին, վասն զի կարի ամուր էր բերդն այն։

ԳԼՈՒԽ Ի.

Յաղագս թէ զնարդ պատերազմ սատկացեալ էր 'ի մէջ Յունացն և Պարսից, և թէ զնարդ Արշակ արքայ Հայոց զօրավիգն լինէր Թագա-ւորին Պարսից, և հանէր ընդ սուր զզօրսն Յունաց. կամ զնարդ դա-ւաՀանութիւն սիւնւոյն Անդուկայ փախստական լինէր արքային Պարսից։

Այլ զառաջինն իբրև փախեաւ Թագաւորն Արշակ յարքայէն Շապհոյ, և անարգեաց զնա յետ երդ-մանցն իւրոց, զառաջինն Շապուհ արքայն Պարսից

1 Յամ օրինակս ազգս առնէր։

ոչ ինչ խստութիւն ջանացաւ ընդ նմա. վասն զի մարտ դէռ բազում սաստկացեալ էր 'ի մէջ իւր և 'ի մէջ Թագաւորին Յունաց։ Եւ իբրև հաղքան զհաղ յաւել լինել պատերազմ, իսկ Թագաւորն Հայոց Աբշակ զառաջինն ընդ միտս իւր մեծամտեալ էր, և նայէր տեսանել՝ թէ ով 'ի նոցանէն կոչեսցէ զնա 'ի Թիկունս օգնականութիւն յաղագս գործոյ պատերազմին։ Այն ունէր, երթալ կամելով յօժարութիւն 'ի Թիկունս կայսերն Յունաց. իսկ նոքա ոչ կոչեցին զնա, և ոչ շուք ինչ եդին նմա և ոչ մեծարանս։

Իսկ Թագաւորն Պարսից Շապուհ յղեր առ նա հրեշտակս խաղաղութիւն. յուշ՝ առնէր նմա զառաջին երդումն, ասելով՝ եթէ կամ լիցի եղբօր զի եկեսցես օգնեսցես 'ի գործ պատերազմիս, զի 'ի Թիկունս հասցես քո զնդաւդ։ Այսչ. Լոեալ դու 'ի մեր կոյս լինիս, գիտեմք զի մեր լինելոց է յաղթութիւն։ Այսպա յորժամ զայս լսէր Աբշակ արքայ Հայոց, մեծաւ ուրախութիւն կամեցաւ երթալ 'ի Թիկունս օգնականութիւն, զօրավիճն լինել Շապհոյ Թագաւորին Պարսից։ Այսպա տայր հրաման Թագաւորն Աբշակ Վասակայ իւրում սպարապետին, գունդ գումարել՝ զօրս պատրաստել։ Եւ նա վաղվաղակի կատարէր զհրամանս Թագաւորին. չորեքհարիւր հազար զօր կուռ վառեալք, որ ընտիրք և պատերազմողք էին, լի արութիւն արուեստաց նահատակուէն։ Նիզակաւորք, սուսերաւորք, աղեղնաւորք անվրէպք կորովիք, վաղրաւորք, սակրաւորք, որք ոչ գիտէին զերկեւղ զանգիտելոյ յարանց յախոյանց. համակ հեծելազօրք զրահաւոր պատենազէնք, սաղաւարտաւորք, դրօշաւորք, կազմ նշանաւորք բազմաձայն փողարօքն։

Խաղաց գնաց Թագաւորն Աբշակ բազմակոյտ նախարարօքն, չուեաց ընդ Աղձնիս ընդ իւր Իշխանութիւնն. չոգաւ Թափեցաւ յերկիրն արուաստանի դէմ յանդիման մրճինացւոց քաղաքին, որ էրն տեղի Ճակատուն պատերազմին։ Այսպա երթեալ տեսանէին զժամադիր արարեալ միմեանց վասն իրաց պատերազմին կողմանցն երկոցունց։ Իսկ զօրքն Յունաց հասեալք, մածեալք բանակեալք էին իբրև զաւազ

առ ամէն ծովու բազմութիւնք։ Իսկ զորքն Պարսից չուէին հասեալ 'ի ժամադիր տեղի պատերազմին։ Իսկ զորքն արքային Հայոց կանուխ քան զՊարսն 'ի տեղի ճակատուն հասանէին, և զտեղի առեալ կայ-ին։ Այլ տապել սկսան զորքն Հայոց ընդ իւրեանց նիստ խափանածոյն. և ոչ առնուին յանձն մնալ կամ անսալ զորացն Պարսից, այլ կամեցան յարձակել դէմ մեր հասանել 'ի վերայ Թագաւորին։ Յոմնաց ինքեանք առանց Պարսից զորացն, անձամբք վճարել զգործ պատերազմին։ Այս այր ամ զորացն Հայոց ինքնա-կամք իւրաքանչիւր արձակ արձակ խաղային. և ա-ռաւել զորավարն նոցին Վասակ քան զամ զորսն եէ և եել առնէր, կապակոտոր լինէր, չմնայր հաւանու-թեան մինչև զորքն Պարսից եկեսցեն, այլ զի միայն ինքեամբք վճարեսցեն զգործ պատերազմին։

Այս միահամուռ զորքն Հայոց անկանէին առաջի և խնդրէին յիւրեանց Թագաւորէն Արշակայ, զի մի պահեսցէ զնոսա մինչև եկեսցէ արքայն Պարսից Շապուհ. այլ վասն որոյ իրիք եկեալ իցեն, վաղագոյն նոցա զպատերազմն առ յանդիման արարեալ համար ձակեսցէ յարձակել քան զանսալն յօտար աշխարհին. առաւել մղձկէին, զի լաւ հաշուէին զմեռանելն ա-ռաւել քան զյամելն յօտար աշխարհին։ Այս Թոյլ տայր նոցա Թագաւորն Արշակ, և յանդիմանէր նո-ցա զգործ պատերազմին։ Այս կարգէր կազմէր պատ-րաստէր զամ զզորսն Հայոց Վասակ զորավարն տպա-րապետն Հայոց մեծաց։ Վասրէր զինէր ժամակալ լինէր Վասակ. հանդերձ ամ պատերազմող զորօքն այրայրատեան գնդաւն եկանէր 'ի վերայ բա-նակին։ Այս հասարակ ընդ սուր հանեալ կոտորէին, այնպէս զի ոչ ապրեցուցանէին 'ի նոցանէ և ոչ զմի։ Այս առնուին զկապուտ զաւար յոմնական զորուցն, զի ոչ գոյր չափ կամ Թիւ որչափ լցան գանձօք. և անհամար կարասեաւ մեծաւ աւարացն յղփացան։

Այս յետ այսորիկ զտեղի ունէր արքայն Հայոց հան-դերձ իւրովք զորօքն, մինչև գայր հասանէր Շապուհ արքայն Պարսից ամ անթիւ և անչափ զորօքն Պարսից։ Իբրև եկն ետես զքաջութիւն գործոյն հայ-աստան զորացն, զի զճակատ մղեալ, զպատերազմ

յարդարեալ, զյաղթութիւն կազմեալ և զգործ վճարեալ, կայր զարմացեալ մեծապէս. և պատուէր զԱրշակ աղբայ Հայոց մեծապէս, և զամենայն մեծամեծս Հայոց. սոյնպէս և զսպարապետն Հայոց զՎասակ։

Այսպա խօսեալ սկսանէր Թագաւորն Պարսից Շապուհ ընդ զորս իւր՝ թէ զինչ պարգևս բարեաց, կամ զինչ հատուցումն կարեմք մեք հատուցանել աղբայիս Հայոց Արշակայ, զի զայսպիսի գործ գործեաց, կամ զայսպիսի քաջութիւն արարեալ, կամ զայսպիսի թշնամիս եհար և զայսպիսի պատերազմ մղեաց, կամ այսպիսի ճակատու յաղթեաց և զայսպիսի անուն ստացաւ մեզ։ Օ՛ի եթէ մեք լեալ էաք, ամ Արեաց զոքք հանդերձ այսպիսի աջողութիւն գայր 'ի ձեռն, քաջ թէ զոյգ հասարակ այսպիսի գործ 'ի միասին կարէաք գործել. արդ Հայոց աղբայ իւրով զօրութեամբն ընդ մեր նահատակեալ, զայսչափ քաջութիւս արար, զոր ոչ ոք կարէ առնել ամենևին։ Արդ զորպիսի՞ հատուցումն բարեաց կարասցուք մեք առնել նմա։ Այս այսպիսի անգեալ էր 'ի խորհուրդս, թէ զինչ այն ինչ իցէ զոր տայցեմ ես նմա։ Այսպա տայ ինն պատասխանի նախարարքն իւր Շապհոյ աղբայինն Պարսից, և ասէն ցնա՝ թէ զինչ և կամիս, իւ կամիս, կարող ես հաճել զնա. ոսկի քո շատ և արծաթ կերպաս և մարգարիտ, զինչ և միանգամ դու կամիս ընդունել նմա, տուր նմա։ Այսպա տայր պատասխանի Շապուհ Թագաւորն Պարսից իւրոց իշխանացն, և ասէ. Արդ ոչ եթէ սէր ինչ է, զոր դուքդ ասացէք. այլ եկայք, անքակ սէր արասցուք մեք ընդ Արշակայ աղբայինն Հայոց, զի մինչև յաւիտեան անբաժին լիցի նա 'ի մէնք։ Տացեմ զդուստր իմ կնութիւն Արշակայ աղբայի Հայոց, և տաց նմա տուն մեծ. զի յորժամ գնասցէ 'ի Հայոց գալ առ մեզ, այնպէս տացուք նմա տուն, զի 'ի Հայոց մինչև 'ի Տիզբոն մինչև առ մեզ համակ յիւրում տան ագցի, մինչև առ մեզ եկեսցէ։ Թագաւորին զայս արասցուք. իսկ զօրավարին Վասակայ կամ այլոց մեծամեծացն և զօրավարացն տացուք ոսկի և արծաթ, կերպաս և մարգարիտ։ Այս հաճեցան մեծամեծքն և խորհրդակիցք Թագաւորին Պարսից ընդ այս խորհուրդ. և հաս-

տատեին զատացեալսն՝ թէ արժան է զայդ առնել։
Իսկ Թագաւորն Պարսից Շապուհ մեծաւ ստիպով ստիպէր զԹագաւորն Հայոց զԱ.ըշակ, զի առցէ զնասցէ զնա ընդ ինքեան յԱ.սորեստան, զի անդ մեծափառ պատուով և փեսայութիւն մեծարեսցէ զնա։ Իսկ Ա.ըշակ և ՝ամ զօրք իւր տաղտապէին՝ երթալ զհեռի Ճանապարհն. զի ՝ամ ոք յանձնիւր տուն յիւրաքանչիւր տեղի զօրէն բարուց Հայաստան մարդկան անձկացեալ էին։ Այլ եղև իբրև ՝ի վերայ հասանէր իրացն Ա.նդովկ նահապետն Սիւնեաց գաւառին, եթէ Շապուհ Թագաւորն Պարսից կամի տալ ըզդուստր ՝իւր կնութիւն Ա.ըշակայ Թագաւորին Հայոց, մեծապէս երկեաւ, և բախեցաւ նորա կասկած մտացն իւրոց։ Զի եդ ՝ի մտի իւրում՝ թէ յորժամ առցէ Ա.ըշակ կին իւր զդուստր Թագաւորին Պարսից, յայտ է այնուհետև՝ թէ անարգի դուստր նորա։ Վասն զի Փառանձեմ դուստր Ա.նդովկայ, որ էր կին լեալ Պնելոյ, ՝ի ժամանակի անդ էր կին Ա.ըշակայ Թագաւորին Հայոց. կասկածէր նա՝ թէ գուցէ յոր ժամ այլ առցէ, զնորայն անարգեսցէ։

Ա.նկանէր այնուհետև Ա.նդովկ ՝ի հնարս հնարել, և ՝ի ծուփս խորհրդոց, գտանել պատՃառս՝ զի ո՛ գէտ կարասցէ ցրուել զսէրն մեծ, որ էր անկեալ ՝ի մէջ Թագաւորացն երկոցունց։ Նախ բազում ոսկի զօրավարին Հայոց Վասակայ Ա.նդովկն մատուցանէր. սոյնպէս և զամենայն մեծամեծսն կաշառէր, զի հնարեսցի քակել զմեծ սէրն, որ ի ցեն ՝ի մէջ Թագաւորացն երկոցունց։ Այլ ՝ամ մեծամեծքն ձեռն յանձին հարկանէին, առեալ ոսկւոյն կաշառաք խաւարեցան։ Ա.պա զմի ոմն յաւագաց Թագաւորին Պարսից ՝ի նեղքին ՝ի բուն խորհրդականացն ՝ի բանի իւրում առնէր Ա.նդովկն զհնարաւորութիւնն, զնենգաւորութիւն դաւաՃանութիւն մեքենայութիւն, զի բանս արկցէ ընդ Թագաւորին Պարսից ընդ Շապուհ և ընդ Ա.ըշակ։ Այլ տայր նմա Ա.նդոյկ ոսկի բազում և անհամար, և դնէր բանս ՝ի բերան, զի իբրև կերպարանս գուշակի արասցէ ասել ցարքայ Ա.ըշակ, թէ

1 Յերկուս օրինակս պաղպաղէին։

ապրեցո զանձն քո, զի Ճշգրիտ խորհուրդ խորհեալ է Թագաւորին Պարսից ունել զքեզ և սպանանել։ Եւ յորժամ դու զայս ասասցես, ասէ, և զմեզ հրամայեսջիր կոչել 'ի խորհուրդն. և զքո բանս աւագանին հաստատեն։

Ապա դայր մտանէր խորհրդակից արքային Պարսից առ արքայն Հայոց. խօսել սկսանէր ընդ նմա զբանս 'ի բերան եդեալ Անդուկային չարագործի, և ասէր՝ Թէ արքայդ Հայոց Արշակ, ապրեցո զանձն քո. զի խորհուրդ խորհեալ է Թագաւորին Պարսից Շապհոյ ունել զքեզ և սպանանել։ Կայր հիացեալ և զարմացեալ արքայն Արշակ ընդ բանսն ընդ այնոսիկ, և ասէ. 'Ի մեծի վաստակոցն իմոց 'ի վերայ այս հատուցումն 'ի նոցանէն։ Ապա հրաման տայր կոչել զառաջեաւ իւրով արքայ Արշակ զամ զմեծամեծս իւր, և զամ խորհրդակիցս իւր, զվասակ սպարապետն, և զՆդովկն զսներ իւր, և որ միանգամ էին նախարարքն. և պատմէր նոցա զոր միանգամ լուաւ ինքն 'ի պարսկէ անտի։ Ապա և նոքա ընդ մի բերան ասէին ընդ նմա, Թէ մեք զայդ վաղ լուաք, զքեզ չիշխեցաք ասել. այլ իրքդ այդ հաստատ են։ Բայց արդ, արքայ, գիտեա տես զիարդ ապրեցուսցես զանձն քո և զմեզ։ Ապա արքայ Արշակ բազում պարգևս գանձուց ոսկւոյ և արծաթոյ տայր պարսկին այնմիկ, որ ասաց նմա զբանս զայսոսիկ։ Եւ ինքեանք կազմեցան պատրաստեցան. խորհուրդ խորհեցաւ Արշակ Թագաւորն Հայոց, և յառնէին 'ի գիշերի որ միանգամ մարդ էր 'ի բանակին Հայոց. հեծան 'ի ձիս, և փախեան։ Եւ առ ետեղ Թողին զխորանս և զգզվրանս զկահ և զկարասի և զկազմած իւրեանց, և զբանակին իւրեանց, և գնացին գաղտուկ. և ոչ ոք 'ի բանակէն Պարսից գիտացին զայն մինչ ցայգ ցառաւօտն։

Եւ իբրև եղև ժամ այգորելի առ Թագաւորն Պարսից, և ամ Թագաւորք և իշխանք մեծամեծք իւր այգորեալ գային արքային Պարսից, բայց միայն ոչ ուրեք 'ի մէջ երևէր Թագաւորն Հայոց Արշակ հանդերձ իւրովք մեծամեծօքն։ Ապա տայր հրաման Շապուհ Թագաւորն Պարսից իւրոցն, երթեալ տե-

սանել՝ թէ զինչ իրք ի ցեղն 'ի բանակին Հայոց Թագաւորին Աշոտայ, զի այնչափ ժամն յամեաց գալ յայդորել Թագաւորին Պարսից Շապհոյ։ Այսպա երթեալ տեսանէին, զի Թափուր կայր բանակն առանց մարդոյ. զի Թողեալ էր իւրեանց զխորանս և զվրանս և զհովանոցս և զսրահակս և զգահոյս և զանկողինս և զկահ և զկազմածս և զկարասի իւրեանց, և զգանձս իւրեանց անգամ. բայց միայն զզէնս իւրեանց որ բարձեալ էին ընդ ինքեանս, և գնացեալք։ Այս որք չոգան 'ի բանակն, գայլն զանն պատմէին Շապհոյ արքային Պարսից։ Այս իբրև լուաւ Շապուհ արքայն Պարսից, քանզի այր իմաստուն էր, գիտացեալ 'ի կարծիս իմաստութեանէ իւրոյ զիրան՝ որ ինչ է զլեն, անդէն ասաց՝ թէ այն փախուստ Թագաւորին Հայոց յիմոց աստի եղեալ է. զի 'ի մէնջ 'ի մերմէ 'ի դրանէ աստի էին, ասէ, որք փախուցին զայրն զայն զԱշոտ։ Այսպա իւրոց աւագացն 'ի մեծամեծացն դեսպան ձիով զբազումս յղէր զհետ Թագաւորին Հայոց, հանդերձ երդմամբ 'ի սէր միաբանութեանէ և յանդիմանութեանէ. զի դարձցին և զչարախօսութեանէ զբանս 'ի մէջ ածեալ կշտամբիցեն։ Այս ոչ կամեցաւ արքայն Հայոց ունկնդիր լինել բանիցն պատգամաւորացն Թագաւորին Պարսից Շապհոյ, և ոչ դարձաւ այլ անդրէն յերկիրն Պարսից։ Այսպա յայն օրէ հետէ և անդր յուզեցաւ պատերազմ գրգռութեանէ մարտից Ճակատուց 'ի մէջ Թագաւորին Հայոց Աշոտայ և 'ի մէջ Թագաւորին Պարսից Շապհոյ ամս աւելի քան զերեսուն։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս թէ զինչդ եղև պատերազմ ընդ Շապուհ Թագաւորն Պարսից և ընդ Արշակ Թագաւորն Հայոց զառաջինն, կամ զինչդ յաղթեր Արշակ արքայ Հայոց։

Այս ամն ուրեմն, յետ գնալոյն փախչելոյն արքային Հայոց Արշակայ'ի Թագաւորէն Պարսից Շապհոյ, լուր լինէր Թագաւորն Պարսից'ի Թշնամուէ. և խօսէր համակ ողոքով, և աղաչէր զԱրշակ արքայ Հայոց՝ սիրով հաշտ և միաբան կալ ընդ նմա յուխտի խաղաղութեան։ Այ ամն զի'ի մեծ վտանգ շտապի էր Թագաւորն Պարսից ստէպ ստէպ յանդգնադար պատերազմացն'ի Թագաւորաց անտի Յունաց։ Իսկ Արշակ արքայ Հայոց ոչ ինչ կամէր անսալ նմա, և ոչ հուպ ինչ լինել'ի նա. և յղեալ դեսպանս, և ոչ ինչ տալ պատարագս ընձայից, և ոչ հուպ ինչ կամ մօտ լինել'ի նա բնաւին. և զանունն անգամ նոցա ոչ կամէր լսել։ Իսկ Թագաւորն Պարսից ստէպ ստէպ յղէր պատարագս առ նա, առաքէր դեսպանս։ Եւ ինքն հեպՃեպ կուռէր ընդ Թագաւորսն Յունաց։

Այլ իբրև եղև խաղաղութի'ի մէջ Թագաւորացն Յունաց և'ի մէջ Թագաւորին Պարսից Շապհոյ, ուխտից նամակ գրեալ և կնքեալ տայր Թագաւորն Յունաց Թագաւորին Պարսից։ Եւ գրեալ էր յուխտից նամակին այսպէս. Ասէ՝ տուս քեզ, ասէ, զԱծրին քաղաք՝ որ է յարուեստանի, և զՄիջագետս Աստրոց, և մէջաշխարհին Հայոց՝ ձեռնթափ եմ, ասէ, թէ կարասցես յաղթել նոցա և արկանել'ի ծառայութի, ես'ի թիկունս ոչ եկից նոցա։ Արդ'ի նեղուրեանն անգեալ Թագաւորն Յունաց, և'ի նեղին վշտի՝ զայս ձև օրինակի բանիցն կնքէր մուրհակ, և տայր Թագաւորին Պարսից. և ապա Ճողոպրէր'ի նմանէ։

Այլ իբրև եղև խաղաղութի'ի մէջ Թագաւորին Յունաց և'ի մէջ Թագաւորին Պարսից, այնուհետև կազմէր զզօրս իւր Թագաւորն Պարսից Շա-

պուհ, և խաղաց 'ի վերայ Աբշակայ արքային Հայոց մարտի պատերազմաւ։ Իսկ սահմանապահքն Թագաւորին Հայոց, որ նստէին 'ի Պանձակ Աստրպատականի, վաղ ազդ առնէին նմա զիրսն մինչև հասեալ էր նա 'ի սահմանս Աստրպատականի։ Այս իբրև զայն զգայր Թագաւորն Հայոց Աբշակ, հրաման տայր Վասակայ իւրում սպարապետին կազմել զՇամ զզօրս իւր, և հասանել 'ի դիմի հարկանել Թագաւորին Պարսից Շապհոյ։ Այս արագ ժողովել 'ի մի վայր, հանդէս առնէր Վասակ սպարապետն Շամ զօրաց Հայոց. և գտան հեծելազօր սպառազէնք կուռ վառեալք նիզակաւորք համակ վաթսուն բեւր, միասիրտք միաբան միամիտք։ Այլ հանդերձ նոքօք յաղաջ խաղայր սպարապետն Հայոց Վասակ հասանէր, բախեալ 'ի դիմի հարկանէր Թագաւորին Պարսից։ Այլ հասարակ զօրսն Շամ հարկանէին 'ի սուր սուսերի իւրեանց. և միաձի Ճողոպրեալ արքային Պարսից Շապուհ փախչէր։ Այրքա հասանէին, գերէին, այրացուցանէր առնէին առ հասարակ զերկիրն Պարսից. և ինքեանք կային ունէին զՃակատուն տեղի, այս ինքն զսահմանս Պարսից պահէին։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաղագս յետ այսորիկ որ ընդ երիս տեղի եղև Ճակատն յերկրին Հայոց ընդ զօրսն Պարսից, թէ զիարդ նշան յաղթութեն յայսմ ևս Հայոց կանգնէր։

Յայնմ ժամանակի Թագաւորն Պարսից Շապուհ ժողովեաց զզօրս իւր անթիւ և անհամար իբրև զաւազ առ ափն ծովու. և փիղս բազումս, զի ոչ գոյր նոցա թիւ։ Ընդ երիս բաժանեալ զզօրսն, երկուց գնդացն զԱնդիկան և զՀազարաւուխտ զօրագլուխս կացուցանէր. և միւմ գնդին ինքնին Թագաւորն լինէր զօրագլուխ։ Այլ հրաման տայր Թա-

գաւառն զօրացն՝ ընդ երիս տեղիս խաղալ մտանել արշաւել յաշխարհն Հայոց։ Եպա այս բանք վաղագոյն ազգ լինէին առ Թագաւորն Հայոց Եռշակ, և առ զօրավարն նոցին Վասակ. ապա և սոքա բազում զօր յաշխարհէ Ժողովէցին, զի ոչ գայր համար բազմութեն։ Այլ թէ բեւր աճապարեցին, սակայն զօրքն Պարսից արշաւէին յերկիրն Հայոց, և ընդ երիս առ պատակէին։

Եպա Թագաւորն Եռշակ և զիւր զօրն բաժանէր ընդ երիս. և տայր զմի գունդն Վասակայ սպարապետին. և զերկրորդ գունդն 'ի ձեռն Բագասի եղբօր նորին, որ 'ի գործ արուեստ քաջ էր անհնարին, բայց 'ի գործ իմաստութեան բախած էր. և զմիւս գունդն իսկ Թագաւորն Եռշակ առնոյր։ Այլ տայր հրաման՝ յառաջ խաղալ պատրաստել, առ դիպան պատահել զօրացն Պարսից։ Եպա գայր սպարապետն Վասակ, գտանէր զառաջին առաջն զօրացն Պարսից զՀազարաւուխտն, զի հասեալ էին 'ի գաւառն Վանանդայ, 'ի տեղւոջն՝ որ անուանեալ կոչէր Յորևեալ. և բախէր ընդդէմ զօրացն Պարսից մարտիւ պատերազմաւ։ 'Ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից, դարձան 'ի փախուստ, ցրուեցան սփռեցան։ Հասանէր զօրավարն Վասակ, արկանէր ըզզօրսն ետ փախստէիցն Պարսից. ոչ ապրեցուցանէին և ոչ զմի, և Թափեցին աւար բազում և զփիղսն։

'Ի նմին ամսեան 'ի նմին շաբաթու 'ի նմին աւուր հասանէր Բագոս, հանդերձ զօրօք՝ որ ընդ իւրև էին. գտանէր զառաջ երկրորդ զօրացն Պարսից և զՀնդիկան զօրագլուխ նոցա, զի հասեալ մածեալ բանակէին 'ի վերայ ձկնատենիցն Եռեստեայ։ Եպա վաղ զգացին զօրքն Պարսից զհասանել Բագոսին, և պատրաստեցան 'ի մարտ պատերազմի ընդդէմ զօրացն Հայոց։ Եպա հասանէր Բագոսն ետ գնդաւն. ընդդէմ յարձակէին Ճակատուն Պարսից, անդէն հարկանէին սատակէին զետ առ հասարակ զզօրսն Պարսից, և գլխովին զՀնդիկան սպանանէին։ Եպա գիպէր Բագոսն գնդին փղացն, և տեսանէր զմի 'ի փղաց անդի մեծապէս զարդարեալ, և զարքունական նշանս 'ի վերայ արձակեալ։ Համարեցաւ զԹագա-

ւորն 'ի փղին յայնմիկ. ելջաներ յերիւարէն, հանեալ զսուսերն իւր յարձակեր 'ի վերայ փղին. զէն վերայոյց, եմուտ 'ի նեղբոյ փղին, հարկանէր զնէրտս փղին, և անդէն ընկէնոյր զփիղն 'ի վերայ անձին իւրոյ, և սատակէին երկոքեան. զի ոչ ժամաներ ելանել ներքուստ 'ի փղէն։ Յայնմ Ճակատու, բայց միայն զի մեռաւ զօրագլուխ զօրացն Բագոսն, այլ 'ի Պարսից զօրացն ոչ ապրեցուցանէին յայնցանէ և ոչ մի։

Իսկ 'ի նոցն ամի 'ի նմին շաբաթի 'ի նմին իսկ աւուր, քանզ՝ 'ի մի օր [1] եղեն Ճակատքն երեքեան, արդ հասաներ Թագաւորն Ալշակ, հանդերձ զօրօքն՝ որ ընդ իւրն էին. զտաներ զինքնին Թագաւորն Շապուհ, զի հասեալ մածեալ բանակէին 'ի գաւառն Բասենոյ 'ի տեղւոյն՝ որ անուանեալ կոչի Ոսխա [2]։ Ալպա անկաներ գիշերի աղքայն Ալշակ 'ի վերայ բանակին Պարսից, և անդէն ընդ սուր հաներ զամենեսեան. բայց միայն միաձի մաղապուր Ճողոպրեր Թագաւորն Շապուհ, փախուցեալ անկաներ յաշխարհն Պարսից։ Ալպա յայնմ ժամանակի յերիցուսնց գնդացն մի մեանց դիպէին աւետաւորքն յաղթութեցն. բայց 'ի Բագոսէ, զի մեռաւ միայն 'ի միում Ճակատուն, այլ և ոչ մի 'ի նոցանէն ոչ ծախէին. յայ եղև մեծ աղաղութիւն յաղթութեն։ Այլ սոքա 'ի կողմանս Պարսից ասպատակէին, և հարկանէին մինչև 'ի կողմանս՝ որ կոչին Խարտիզան։ Այլ լցան գանձիւք բազմօք և զինու և զարդու և բազում աւարաւ և անչափ մեծութիւք, և հարստացան անցին ըստ չափ։

1 Յամ օրինակս փան պմի օր։ 2 Յերկուս օրինակս Ոխոս։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս Մերուժանայ արծրունոյ, որ ապստամբեաց յարքայէն Հայոց Արշակայ, և անկաւ առ Թագաւորն Պարսից Շապուհ, և առաւել գրգռէր զպատերազմունսն. և թէ զիարդ ուրացաւ յայ, և կամ զիարդ եղև խոչընդակն և խոչտն երկրին Հայոց մինչև յապայ:

ՅաՏՆՄ ժամանակի ապստամբեաց յարքայէն Հայոց մի ոմն 'ի նախարարաց մեծամեծացն, Մ'երուժան անուն արծրունի. և չոգաւ եկաց առաջի Թագաւորին Պարսից Շապհոյ, և դնէր ընդ նմա ուխտ երդմամբ, զի յաւիտեան ծառայ լիցի նմա: Դ'այխ ուրացաւ 'ի կենացն իւրոց, զոր յաՀծն ունէր. զի եթող զօրէնս քրիստոնէութեան, և խոստովան եղև վասն անձին իւրոյ՝ թէ չեմ քրիստոնեայ. և կալաւ զօրէնս մաղդեզանցն, այսինքն զմոգուցն. եպագ երկիր արեգական և կրակի, և խոստովան եղև՝ թէ ՀաՀ այն էն, զոր Թագաւորն Պարսից պաշտէ: Դ'ադ ուխտ ընդ Շապհոյ արքայէն Պարսից յայնմ հետէ. �եի ինչ և կարասցէ յաղթել Շապուհ Հայոց, և ունել զաշխարհն, և ինձ դարձ՝ լիցի յիմ աշխարհն և յիմ տունն, նախ ես՝ ասէ՝ շինեցից ատրուշան յիմումբ տանն սեպհականին, այս ինքն տուն կրակին պաշտելոյ: Դ'ու կեանս և մահ դներ ընդ նոսա, խոստացեալ բանիւք և արդեամբք: Դ'ու զզօրսն Պարսից պատրաստէին առաւել ևս քան զառաջինն, և առաջնորդ ունէին զչարագործն Մ'երուժանն, ասպատակել յաշխարհն Հայոց: Յանկարծօրէն այրացաւեր զերկիրն Հայոց առնէին առաջնորդ Մ'երուժանաւ. զոր սայլին 'ի կոխումն փղաց, և զկանայս ընդ ցից սայլեց հանէին. առնուին կոտորէին զամ բնակիչսն վերնագաւառացն Հայոց:

Մ'ինչ դեռ Թագաւորն Մ'ուրշակ 'ի կողմանսն ստորին գաւառացն Մ'ենգեղ տան էր յուտեստ, զմիջնաշխարհն քանդեալ բրեալ զօրքն Պարսից ապականէին: Մ'ստ զօրաժողով լիներ Ս ասակ զօրավարն Հայոց, և որ հասին 'ի ժամանակի՝ անդ 'ի ձեռն նո-

ցա տան հաղար հեծեալ ընդէր ընդէր և քաջ այրեանի, կամ զինու և բաղում պատրաստութեամբ. և հանդերձ նոքօք խաղայր, 'ի կիրթ ձգեալ հասանէր զօրացն Պարսից։ Իսկ երբև զգացին զօրավարքն զօրացց Թագաւորին Պարսից՝ եթէ զօրաժողով է 'ի վերայ նոցա զօրավարն Հայոց Վասակ, զմնացորդս աշխարհին գերփեցին գերեցին առին և փախեան յաշխարհն իւրեանց Ճեպով տագնապաւ։ Այսպա զհետ կրթէր Վասակ մամիկոնեան, և երթայր հասանէր նոցա. չուէին 'ի սահմանս Արտաշատականին։ Իսկ զօրքն Թագաւորին Պարսից թողին զգերին, և փախստական լինէին հանդերձ Մերուժանաւն։ Այս Թափէր անչափ և անթիւ զամ զառեալ գերութիւն, և դառնային խաղաղութեամբ առ Թագաւորն Արշակ։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Յաղագս Մերուժանայ, թէ զիարդ ապստամբէր և գրգռէր զԹագաւորն Պարսից Շապուհ, և առնէր պատերազմ. և թէ զիարդ լինէր առաջնորդ Թագաւորին Պարսից Շապհոյ, և ածէր հէն յաշխարհն հայաստանի. և կամ զիարդ գերէր զոսկերս արշակունեաց. կամ զիարդ զօրավարն Վասակ Թափեաց զգերեալսն և յաղթեաց թշնամւոյն։

Այս յետ այսորիկ Մերուժան վատանշան գրգռէր զԹագաւորն Պարսից զՇապուհն 'ի վերայ Թագաւորին Արշակայ մեծաւ բարկութեամբ։ Այս զօրաժողով լինէր Թագաւորն Պարսից Շապուհ. և լրտեսս արձակէր, դիտել զարքայն Հայոց զԱրշակ։ Այս մինչ նա դեռ զգուշացեալ Արշակ արքայն Հայոց հանդերձ իւրովք զօրօքն զատրպատական սահմանօքն, զի անդ սպասէր զօրացն Պարսից, նոցա առաջնորդ կալեալ զՄերուժանն՝ ընդ այլ կաթել ասպատակ յաշխարհն Հայոց առնէին։ Օ՛յ ընդ Աղձնիս և ընդ Ծորփս մեծ, ընդ Անգեղ տունն և ընդ գաւառն Անձտայ ընդ Ծորփս Շահունոց, ընդ Մզուր

գաւառն և ընդ Պարանաղէ, ընդ Նկեղեաց, զկողմանս այնց գաւառացն Շապուհ Թագաւորն Պարսից հանդերձ անթիւ զօրօքն ասպատակել հեղեալ ծաւալեր բազմութիւն իբրև զջուրս բազումս։

Այրացաւեր առնէին, և զանթիւ մարդիկ արկանէին 'ի սուր սուսերի իւրեանց. զկանայս և զմանկտի հանէին ընդ ցից սայլից, զկէսս զոր 'ի նեբքոյ կամացն արկեալ կասուին։ Նա զարանց բազմութիւնս տային 'ի կոխումն փղաց. և զառանց Թուոյ զմատաղ մանկտոյն, զայն 'ի գերուէ վարէին. և զբազում ամուրս քանդէին, և զբերդս աւերէին զամուրս։ Նա առին աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ էր 'ի գաւառին Աղձնեաց յիշխանութիւն բդեշխին. քառասուն հազար երդ, զայն նոյնհետայն 'ի գերութիւն խաղացուցին. և ինքեանք 'ի Նոտիս մեծ արշաւեցին։ Նա անդ էին բերդք, զոր առին. և էր, զոր ոչ կարացին առնուլ։ Նա գային պահ արկանէին շուրջ զԱնգեղ զամուր բերդաւն, որ է Յանկեղ տանն գաւառին. զի անդ էին բազում Հայոց Թագաւորացն գերեզմանք շիրմացն արանցն արշակունեաց. բազում գանձք մթերեալ մնացեալ կային 'ի նախնեացն 'ի հնոց ժամանակաց հետէ։ Զուան պահ արկին զբերդաւն. ապա իբրև ոչ կարէին առնուլ վասն ամրութեան տեղւոյն, Թոզուին և գնային։ Նա զբազում բերդօք զանց առնէին, զի ոչ կարէին մարտընչել ընդ ամուրսն. բայց միայն մատնեցաւ 'ի ձեռս նոցա ամուր բերդն Անի 'ի Պարանաղեաց գաւառին անդ, զի չարագործն Պերուժանն հնարաւորութեամբ մեքենայիր ամուր բերդին այնմիկ։ Նշանէին 'ի վեր, և կործանէին զպարիսպ նորա, և իջուցանէին անթիւ գանձս 'ի բերդէն։ Նա բանային զգերեզմանս զառաջին Թագաւորացն Հայոց զարանց քաջաց զարշակունոյ, և խաղացուցանէին 'ի գերուէ զոսկերս Թագաւորացն. բայց միայն զգերեզման շիրմին Սանատրկոյ արքային ոչ կարացին բանալ վասն անհեղեղ սկայագործ հաստաշինած ձարտարագործ արարածոցն։ Նպա գնացեալք անտի 'ի բաց մերժէին, ընդ այլ դիմեալ՝ առպատակս կապէին, ընդ կողմանսն Դասէնոյ յառաջ խաղային և ինքեանք, կամէին 'ի Թիկանցն կուսէ ան-

կանել հասանել՝ի վերայ զօրացն Թագաւորին Հայոց։
Այս մինչ դեռ այս ամ լինէր, գուժկան հասա-
նէր առ Թագաւորն Արշակ, և ասէն նմա. Դու ա-
ւադիկ առաջոյ սպասես Թշնամեացն, նստիս յԱտրը-
պատականի. իսկ Թշնամիքն զՄիկամիքն անկեալ կո-
տորեցին զաշխարհս. և արդ դիմեալ գան՝ի վերայ
քո։ Այս իբրև զայս լսէին Թագաւորն Հայոց Արշակ
և զօրավարն նորին Վասակ, հանդէս առնէին
զօրացն իւրեանց։ Այլ գտան՝ի ժամանակին անդ
ընդ ձեռամբն զօրավարին Վասակայ արք գործոց իբ-
րև վաթսուն հազար, ընտիրք և պատերազմողք. որ
միամիտք և միասիրտք էին միաբանութեամբ գործոցն պա-
տերազմին, հասանել մարտնչել՝ի վերայ որդւոց և կա-
նանց իւրեանց, և՝ի վերայ աշխարհին գնել զանձինս
իւրեանց մինչև՝ի մահ և՝ի վերայ աշխարհին գաւա-
ռացն բնակութեամբ, հասանել մարտնչել՝ի վերայ եկե-
ղեցեացն իւրեանց, ՝ի վերայ ուխտին պաշտամանն
սրբոյ եկեղեցեաց իւրեանց, ՝ի վերայ հաւատոց ուխ-
տին անուան Այ իւրեանց, փոխանակ բնակ տերանց
իւրեանց արշակունեաց։ Զ՝ի անգամ ոսկերքն Թա-
գաւորացն մեռելոց և բազում ժողովուրդք խլեալք
յիւրաքանչիւր տեղեաց, փոփոխեցան յօտարութիւն։
Այս Վասակ սպարապետն հանդերձ վաթսուն
հազարաւք յառաջ խաղայր, դարձեալ ընդ կրուկ Թա-
գաւորն զՄիգաւորն Արշակ յամուր տեղւոջ ուրեմն
յերկրին Վարաց, հանդերձ սպասաւորաւքն։ Այլ ինքն
գայր հասանէր՝ի միջնաշխարհն Հայոց՝ի գաւառն
Այրարատու. և հասանէր գտանէր զզօրսն Պար-
սից, զի հասեալ մածեալ էին բազմութիւն իբրև զա-
ւազ առ ափն ծովու, բանակեալ զգաւառաւն այրայ-
ատեան։ Այս հասեալ Վասակ հանդերձ զնդաւն՝
որ ընդ իւրն էին, անկանէր՝ի վերայ բանակին Թա-
գաւորին Պարսից՝ի գիշերի յեղակարծումն ժամա-
նակի։ Այլ անդէն առ հասարակ ընդ սուր հանէին
զզօրսն ամ Պարսից. բայց միայն Թագաւորն միաձի
ձողոպրեալ մաղապուր փախչէր։ Զ՝հետ հալածէին
զմնացեալսն փախուցեալսն արտաքոյ իւրեանց սահ-
մանացն, և Թափէին՝ի նոցանէ աւար բազում և ան-
թիւ, զի ոչ գոյր նոցա չափ համարոյ։ Այլ առ հա-

սարակ արկանէին զնոսա 'ի սուր սուսերի իւրեանց, և Թափէին 'ի նոցանէն զոսկերս Թագաւորացն իւրեանց, զոր պարսիկք խաղացուցեալ տանէին 'ի գերուն յաշխարհն Պարսից։ Զ 'ի ասէին ըստ իւրեանց հեԹանոսուԹեն ըստ օրինացն, Թէ վասն այսորիկ բարձեալ տանիմք զոսկերս Թագաւորացն Հայոց յաշխարհն մեր, զի փառք Թագաւորացն և բախտքն և քաջուԹիւն աշխարհիս աստի գնացեալ ընդ ոսկերս Թագաւորացն յաշխարհն մեր եկեսցեն։ Այսպա Թափեր Ս ասակ զգերուն ամ զՀայաստան աշխարհին. և զոսկերս Թագաւորացն Հայոց, զորս Թափեաց Ս ասակ, հանեալ Թաղեցին յամուր 'ի գեւղն՝ որ Աղձքն անուանին, յԱյրարատ գաւառին՝ որ կայն 'ի խինձս 'ի գոգս 'ի ծոցս յանձուկս 'ի դժուարս լերինն մեծի, զոր Արագածն կոչեն։ Այս ինքեանք փոյԹ արարեալ զաշխարհ նուաճել, յարդարել կարգել յօրինել շինել զամ զգերուԹիս յաւերածոյն և այրեցածոյն։ Բայց յայնմ նուագի ևս ապրեր Մերուժանն չարագործն, փախուցեալ ընդ արքային Պարսից։ Այս յայնմ հետէ պահ ունէին իւրեանց աշխարհին. արքայն Արշակ հանդերձ զօրավարաւն Ս ասակաւ յերկոսին դուրս սահմանացն զգուշանային մինչև զամ աւուրս կենդանուԹե իւրեանց։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Յաղագս Թէ զնարդ արշաւեաց արքայն Արշակ յերկիրն Պարսից, և քանդէր և հարկանէր զբանակն Շապհոյ արքային 'ի Թաւրէշ։

Այսպա զօրաժողով լինէր Արշակ արքայ Հայոց, և կուտէր առ ինքն զօրս բազումս իբրև զաւազ բազմուԹեամբ, և խաղայր 'ի վերայ աշխարհին Պարսից։ Այսպա առնոյր Ս ասակ զգունդն Հայոց, և զՀոնան հանդերձ Անանաքն կոչել յօգնականուԹի, և հասանէր դիմէր յօգնականուԹի ԹագաւորուԹեն Հայոց

'ի վերայ Պարսից։ Բ.յլ Թագաւորն Պարսից հանդերձ ամ իւրովք զօրաքն 'ի ժամանակի անդ յայնմիկ քանզի և նա խաղացեալ գայր 'ի վերայ Հայաստան երկրին ընդդէմ սոցա, ապա սոքա փութացեալք հասանէին յԱ.տրպատական. և գտանէին զբանակն արքային Պարսից 'ի Թաւրէշ բանակեալ։

Հասանէր Ա ասակ սպարապետն հանդերձ քսան բիւրուքն, անկանէր 'ի վերայ բանակին Պարսից։ Մ'իաձի Ճողոպրեալ Թագաւորն փախչէր, և առնուին յաւարի զամ կարաւանն Պարսից. և զամ զօրն Պարսից բազմութենն կոտորեցին, և աւին աւար բազում 'ի բանակէն, զի ոչ գոյր նոցա թիւ։ Ա.սպատակ տուեալ առնուին զամ ատրպայական երկիրն. քանդեալ բրէին զերկիրն, մինչև 'ի հիմանց կործանէին. և խաղացուցանէին զգերութիւն երկրին քան զաստեղս բազմութիւն։ Այս զամ զայր երկրին հանէին ընդ սուր. և ինքեանք զգուշացեալք սահմանաց երկրին իւրեանց, պահ արկեալ պահէին մեծաւ զգուշութիւն։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Յաղագս Վնայ պարսկի, և չորեքհարիւր հազարացն՝ որ եկեալ էին 'ի վերայ Հայոց, և նկուն լինէին 'ի զօրացն Հայոց։

Ա.յն գումարեաց Թագաւորն Պարսից Շ ապուհ զԱ լին 'ի վերայ արքային Հայոց Ա.րշակայ չորեքհարիւր հազարաւ։ Ա.պա գայր ելանէր Ա լին, ասպատակ սփռէր ընդ ամ երկիրն սահմանացն Հայոց։ Այս ապա իբրև գիտացեալ Թագաւորն Հայոց Ա.րշակ, հասանէին 'ի վերայ զօրացն Պարսից. կոտորեալ առ հասարակ ընդ սուր հանէր զամենայն զօրն Պարսից, և զմնացեալսն փախստական առնէր մինչև 'ի կողմանս սահմանացն Պարսից։ Ասատակէին զնոսա, և ինքեանք դարձեալ ունէին զՃակատուն տեղի։

ԳԼՈՒԽ ԻԷ.

Յաղագս զօրավարին Պարսից Անդիկանայ, որ քառասուն բիւրուն հաս-
սանէր՝ աւար առնուլ զերկիրն Հայոց. Թէ զիարդ Վասակ սպարա-
պետն Հայոց ելանէր ընդ առաջ նորա երկոտասան բիւրու. հարկա-
նէր զնա և զզօրս նորա։

ԱՅՆ յետ այսորիկ առաքէր արքայն Պարսից 'ի վերայ արքային Հայոց զունդ կազմեալ պատրաս-
տեալ արս ընդիրս պատերազմողս իւր և զքառասուն բիւր, գալ առնուլ այրել աւերել զերկիրն հայաս-
տան, և Անդկան զօրագլուխ նոցա. զայր հասանէր ասպատակ առնէր յերկիրն Հայոց։ Այլ զայր հա-
սանէր ընդ առաջ նորա Վասակ մամիկոնեան սպա-
րապետն Հայոց երկոտասան բիւրուք. հարկանէր սա-
տակէր զնա և զզօրս նորա, Թափէր զզարդ նոցա, և
ոչ ապրեցուցանէր մի 'ի նոցանէ և ոչ մի. և ինքն
կայր քաջութիւն ունելով զՀակատուն տեղի։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Յաղագս Հազարաւուխտոյն՝ որ էր մի 'ի նախարարացն Պարսից, զոր
առաքեաց Շապուհ արքայ ութսուն բիւրօք՝ հարկանել զերկիրն Հայ-
ոց. եթէ զիարդ Վասակ էլ ընդ առաջ նորա մետասան հազարաւ,
հարկանէր սատակէր զնա և զզօրս նորա 'ի սահմանս Աղձնեաց։

ԱՅԿՆ եհաս Հազարաւուխտ 'ի զօրացն Պարսից, գալ այրեացաւեր առնել, 'ի հիմանց տապալել զեր-
կիրն Հայոց։ Այլ զիմեալ ընդ երկիրն Աղձնեաց, կամեցաւ ծաւալել ընդ երկիրն Հայոց և ընդ ամ-
սահմանս նոցա։ Այլ ելանէր Վասակ ընդ առաջ նորա հանդերձ մետասան հազարաւ. հարկանէր սա-
տակէր, և զզօրսն զմնացեալսն և զփախստականսն արկանէր յերկիրն Պարսից. և զՀազարաւուխտն ան-
դէն սպանանէր։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Յաղագս Դմաւունդ Վսեմականոյ, որ ինքնսուն բիւրուն տապրիկ զօրքն՝ զոր առաքեաց 'ի վերայ Արշակայ արքային Հայոց Շապուհ արքայն Պարսից։ Ապա ելանէր Վասակ զօրավարն Հայոց, հարկանէր զնա և զզօրս նորա։

Զգան գայր հասանէր 'ի Կաւռոսականի տոհմէն Դմաւունդ Վսեմական, հանդերձ ինքնսուն բիւրուն՝ որ առաքեալ էին 'ի Շապհոյ արքայէն Պարսից յերկիրն Հայոց, տալ ընդ նոսա մարտ պատերազմի։ Զպա կազմեցան պատրաստեցան զօրքն երկրին Հայոց, և Վասակ զօրավար նոցա. ելին պատերազմել 'ի դիմի հարկանել նոցա։ Զպա 'ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից յերեսաց նոցա, դարձան 'ի փախուստ։ Հասանէր Վասակ, կոտորէր սպանանէր հարկանէր 'ի նոցանէն, զի և մի ոչ ապրեցուցանէր. և զՎսեմականն 'ի մէջ զօրացն սպանանէր։ Զու սինլքորքն[1] արտաքոյ իւրեանց սահմանացն հալածեալ տանէին։

ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս Վահրիճայ, որ ջորեքհարիւր բիւրուն գայր հասանէր, տայր պատերազմ ընդ Արշակայ արքային. և զնարդ մատնեցաւ 'ի ձեռս Վասակայ զօրավարին Հայոց եմ զօրքն հանդերձ։

Զգան գայր հասանէր Վահրիճ 'ի Վահրիճայ, և զօրքն Պարսից ջորեքհարիւր բիւրուն առաքեալ 'ի Շապհոյ արքայէն 'ի վերայ հայաստան աշխարհին, աւար առնուլ և կորուսանել զերկիրն զօրացն Թագաւորութեանն Հայոց. և գայլին հասանէին 'ի տեղին, որ կոչին Մախազեան։ Զպա քառասուն հազա-

1 'Ի ջորս օրինակս «ինքնորդն»։

ըաւ Ելանէր Վասակ զօրավարն ընդդէմ նոցա. հաղ-
կանէր սատակէր զզօրս նոցա, սպանանէր զՎահրիճն,
և կոտորէր զզօրսն Պարսից, և ոչ Թողոյր 'ի նոցանէ
և ոչ մի. և զգուշանայր զսահմանօք երկրին իւրոյ։

ԳԼՈՒԽ ԼԱ.

Յաղագս Գումանդ Շապհոյ, որ մեծաւ պարծանօք պարծեալ առաջի արքային Պարսից Շապհոյ, և առեալ ածէր 'ի վերայ աշխարհին Հայոց ինն հարիւր հազար զօրս. և կամ զնարդ նկուն լինէին, չարաչար մերժեալ լինէին յաշխարհէն Հայոց։

Այս եղև յետ այսորիկ գայր հասանէր Գումանդ Շապուհ, առաքեալ 'ի Շապուհոյ արքայէ Պարսից ինն հարիւր հազարաւ, պարծեցեալ առաջի Թագաւորին։ Այս զնացեալ, գայր հասանէր յաշխարհն Հայոց. և առաջնորդ ունէր 'ի ձեռին զԱերուժանն վատանշան, որ էր յԱրծրունեաց տոհմէն յերկրէն Հայոց։ Այլա գայր հասանէր, և զեղծ գտանէր ըղ-սահմանապահսն՝ որք պահէին զսահմանս Հայոց։ Այլա լցան սփռեցան ծաւալեցան ընդ ամ երկիրն Հայոց, աւար առնուլ քանդել աւերել զերկիրն ամ Հայոց աշխարհին։ Այլա կազմէր պատրաստէր Վասակ զօրավարն Հայոց, հասանէր անկանէր 'ի վերայ արքայազնդին. և նախ զԳումանդ Շապուհն սպանանէր։ Այս ապա ընդ ցիրն ասպատակ սփռեալ հայացիքն, զամ զօրսն Պարսից կոտորեալ, անմի արարեալ սպառեցին։ Բայց միայն չարագործն Աերուժանն միաձի ձողոպրեալ, փախչէր անկանէր յերկիրն Պարսից։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Յաղագս Դեհկան Նահապետի, որ առաքեցաւ 'ի Շապհոյ արքայէ Պարսից 'ի վերայ Արշակայ Հայոց արքային՝ զորոք բազմաք. ապա հասանէր սատակէր զնոսա զորավարն Հայոց Վասակ։

Յետ այսր ամի Շ ապուհ արքայն Պարսից զորաժողով լինէր, և կուտէր զորս անչափս և անթիւ և անհամար իբրև զաւազ ծովու, և կուռ վառեալ՝ որք նիզակ 'ի ձեռն առնուին, չորեքհարիւր բեւր զորս բազումս։ Այլ զԴեհկան նահապետ, որ տոհմիկ իսկ էր ազգաւ տոհմին զորավարացն Հայոց՝ այս ինքն մամիկոնենից, առաքէր զնա Թագաւորն Պարսից Շ ապուհ յերկիրն Հայոց 'ի վերայ Արշակայ արքային Հայոց։

Դայր հասանէր 'ի սահմանս երկրին Հայոց. ապա և զՀայացիսն ոչ ինչ ծուլացեալ 'ի քուն գտանէր, այլ կազմ պատրաստք կային նմին գործոյ Ճակատուն պատերազմի։ Այլ զորավարն Վասակ ելանէր ընդ առաջ նոցա եւթանասուն հազարաւ. հարկանէր սատակէր զզորսն ամ Պարսից, սպանանէր զիւր զազգային զԴեհկան նահապետն, և զմնացեալսն առաջի իւր տանէր փախստական ձիահալածք արարեալք։ Բայց Մերուժանն արծրունի փախուցեալ ապրէր, որ առաջնորդէր նոցա։

ԳԼՈՒԽ ԼԳ.

Յաղագս Սուրէնայ Պահլաւի, որ եկն և նա զորոք բազմաք. և սա ևս նկուն լինէր իբրև զառաջինն։

Ապա կրկնէր լինէր զորաժողով Շ ապուհ արքայ Պարսից, կազմէր պատրաստէր գունդս բազումս զորացն և փիղս անթիւս, զորս ընդիրս և պատերազմողս. և Սուրէն Պահլաւ, որ ազգակից իսկ էր Արշակայ Թագաւորին Հայոց, և Մերուժանն առաջ

նորդ նոցա. և արձակեաց 'ի վերայ նոցա։ Եպա քան-
զի և Վասակ զօրավարն Հայոց խաղաց գնաց ընդ
առաջ նոցա երեսուն հազարաւ, հարկանէր 'ի դիմի
զՎուրէն և սպանանէր, և զզօրսն կոտորեաց. բայց
Մերուժան փախչէր։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Յաղագս Ապական Վսեմականի, զի եկն և նա յայս պատերազմս, և
նմա ձախողեցաւ որպէս առաջնոցն։

Իսկ յետ Սուրենայ եկն Վսեմական. գայր հա-
սանէր անչափ բազմութիւն և անթիւ զօրք, և Մե-
րուժան առաջնորդ առաքեալ 'ի Շապհոյ արքայէն
Պարսից 'ի գործ պատերազմի 'ի վերայ երկրին Հայ-
ոց։ Եպա առաքեցաւ ընդ առաջ նորա Վասակ սպա-
րապետ զօրավարն Հայոց. հարկանէր սատակէր զՎ-
սականն Վսեմական հանդերձ զօրքն, և զմին 'ի նո-
ցանէն ոչ ապրեցուցանէր։ Բայց միայն փախչէր չա-
րագործն Մերուժան։

ԳԼՈՒԽ ԼԵ.

Յաղագս Զրկայ Նուիրակապետի, որ առաքեցաւ 'ի Շապհոյ արքայէն
'ի վերայ Հայոց բազում զօրք 'ի պատերազմ, և սատակեցաւ իբրև
զառաջինսն։

Յետ այսորիկ Զրկն Նուիրակապետն զկնր արձա-
կեաց Շապուհ արքայ Պարսից, մղել զպատերազմ
Հայոց. և զՄերուժանն առաջնորդ ընդ նոսա առ-
նէր։ Եւ գումարէր գումարտակ բազում իբրև զա-
ւազ ծովու բազմութիւն. և գային հասանէին յերկիրն
Հայոց։ Եպա ելանէր 'ի դիմի հարկանէր նոցա Վա-
սակ զօրավարն Հայոց. Զրկն սպանանէր, և զզօրսն

զկիսն կոտորէր, և զկիսն առաջի իւրեանց փախստական առնէին։ Բայց անդամ ևս ոչ կարէին 'ի բուռն արկանել զՄերուժանն։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Յաղագս Սուրենայ պարսկի, որ յետ Զբկայն ևս եկն 'ի պատերազմն. և նա 'ի բուռն անկեալ Վասակայ, հանգերձ իւրովք զօրօքն սատակեցաւ։

Եւ եղև յետ մահուն Զբկայ, Սուրէն պարսիկ խաղաց 'ի Թագաւորէն Պարսից Շապհոյ. վաթսուն բիւրու եկն եհաս, տալ պատերազմ ընդ Թագաւորին Հայոց Բրշակայ. և առաջնորդ ունէր զՄերուժանն։ Բայց Ժողովեաց զնմա զօրս նախարարացն Վասակ սպարապետն Հայոց. եկանէր գիշերի անկանէր 'ի նեղքս 'ի զակիշն 'ի հետիոտս, սուսերա'ի ձեռն տասն հազարաւ ընտիր ընտիր արամբք։ Բռ հատարակ կոտորէին հարկանէին և սատակէին զզօրսն Պարսից. և ձերբակալ առնէին զՍուրէն պարսիկ, և ածէին զնա առ արքայն Բրշակ։ Բայց հրաման տայր քարակոշկոճ առնել զնա։ Բայց Մերուժանն ապրէր փախստեայ։

ԳԼՈՒԽ ԼԷ.

Յաղագս Հրեշշումայ, որ առաքեցաւ յարքայէն Պարսից 'ի վերայ Հայոց ինքնասուն բիւրու. և այն անդամ ևս նշան յաղթութեան Հայոց կանկնէր։

Եւ Հրեշշողումն արձակէր 'ի պատերազմ 'ի վերայ աշխարհին Հայոց։ Զի և սա իսկ 'ի նմին յաղագէ Թագաւորին Հայոց ազգական էր, այլ բանիւ Շապհոյ արքայի գայր հասանէր հանդերձ զօրօք ինքնասուն բիւրուն, տալ պատերազմ ընդ Հայաստանեայսն։

Այս կարգեր կազմեր պատրաստեր Վասակ զօրավարն Հայոց զամ զգունդս զօրացն, և դիմեաց 'ի վերայ նոցա մարտիւ պատերազմաւ։ Փախստականս տանէին զնոսա, արկեալ առաջի իւրեանց. և Հրեշ շողումն և Մերուժանն փախչէին։

ԳԼՈՒԽ ԼԸ.

Յաղագս Աղանայողայն, որ ջորեքհարեւր բիւրաւ գայր հասանէր 'ի Թագաւորէն Պարսից՝ տալ պատերազմ ընդ արքային Հայոց, եթէ զի արդ նեղեալ պարտեցաւ 'ի ձեռն Վասակայ։

Իսկ Աղանայողանն, որ Պահլաւն էր 'ի տոհմէն արշակունեաց, որ նա խրոխտացեալ առաջի Շապհոյ Թագաւորին Պարսից, և գնայր գայր հասանէր 'ի սահմանս Հայոց։ Այս այս վաղագոյն ազգ լինէր Թագաւորին Հայոց Արշակայ. սոյնպէս և սա զիւր զօրքն կազմէր 'ի ձեռն Վասակայ իւրոյ սպարապետին։ Այլ զամ նախարարսն Հայոց ընդ նմա գումարեալ, գայր հասանէր ընդ առաջ զօրացն Պարսից. հարկանէր կոտորէր զամենեսեան առ հասարակ. և զմնացեալսն փախստեայս առնէին յերկիրն Պարսից. և ինքեանք զգուշանային սահմանացն իւրեանց։

ԳԼՈՒԽ ԼԹ.

Յաղագս Բոյեկան մեծ նախարարին Պարսից, որ եկն և սա քառասուն բիւրաւ. զոր հարկանէր ընկէր սպարապետն Հայոց Վասակ։

Յետ այսորիկ Բոյեկան մեծ նախարար Պարսից, և քառասուն բեւր ընդ նմա, գային հասանէին յԱտրպատական. կամէին ասպատակ առնել յերկիրն Հայոց։ Այս զառաջեօք անգանէր Վասակ իւրով հայաստան գնդաւն, հարկանէր զզօրսն ՝ամ Պարսից, և զԲոյեկանն սպանանէր 'ի Ծաւրէժն։ Այլ այրեր

մեղ զսպարանս Թագաւորին Պարսից. և զտեալ մեղ զսպատակեր Թագաւորին Պարսից, նեստաձիգ է. զեալ՝ նեստալից առներ։ Բայց միայն փախչեր Մերուժանն ընդ նոսա եկեալ։

ԳԼՈՒԽ Խ.

Յաղագս Վաչականայ, որ եկն 'ի Հայս ուԹևատան բիւրուն, և կամեր առնուլ զՀայս. ապա և զնա վանեաց սպարապետն Հայոց և զզօրս նորա։

ՎԱՉԱԿԱՆ ոմն 'ի նախարարացն Պարսից արշաւեր յերկիրն Հայաստան, հանդերձ ուԹևատան բիւրօք։ Բայց ժողովեր զօրավարն Հայոց Վասակ զամ զզօրսն Հայոց. և Թողեր զԹագաւորն Բրշակ յամուրս բերդին Դարիւնաց, և ինքն զօրավարն Հայոց Վասակ խաղայր անկաներ հանդերձ զօրքն Հայոց զանակաւն Վաչականայ։ Սպանաներ զՎաչականն, և կոտորեր զանակն Պարսից. բայց միայն ապրեր սակաւուք փախուցեալ Մերուժանն, եկեալ առաջնորդ նոցա։

ԳԼՈՒԽ ԽԱ.

Յաղագս Մշկանայ և երեսուն և հինգ բիւրուն, որ արշաւեր յերկիրն Հայոց, եԹէ զնա՛ր կոտորեալ եղև 'ի Վասակայ և 'ի զօրաց Հայոց։

ԵՒ Մշկան ոմն անուն, մի 'ի նախարարացն Պարսից, և նա եկեալ ուղղեր ճակատս ընդ Թագաւորին Բրշակայ։ Բայց զօրավարն Հայոց Վասակ ճակատեր զզօրսն Հայոց ընդդէմ նոցա. և դէմ յանդիմանն մեծաւ բռնութեամբ միմեանց յարձակէին։ Եւ յաղԹահարեր զզօրսն Պարսից գունդն Հայաստան. սատակէին, և ոչ մի 'ի նոցանէն ոչ ապրեցուցաներ.

և յականէ յանուանէ զՄՇկանն սպանանէին, և ՄԵ-
րուժանն փախչէր։

ԳԼՈՒԽ ԽԲ.

Յաղագս Մարուճանայ և վաթսուն բիւրուն, թէ զնարդ եկեալք 'ի
վերայ Թագաւորին Արշակայ, կամ զնարդ հարկանէր սատակէր զնո-
սա Վասակ սպարապետն։

ՄԱՐՈՒՃ անուն մեծ նախարար գայր Մարտնչէր
ընդ երկիրն Հայոց։ Այսպա հանդերձ զօրօքն վաթ-
սուն բիւրուն գայր հասանէր միջամբոխ [1] լինէր յեր-
կիրն Հայոց. և առաջնորդ 'ի ձեռին ունէր զՄԵ-
րուժանն արծրունի։ Այսպա և սպատահէր պատերազ-
մաւ Վասակ ՀԱՄ զօրօքն Հայոց. հարկանէր սատա-
կէր զզօրսն Պարսից կորուսանէր, և զՄարուճանն
սպանանէր։ Բայց միայն փախչէր ՄԵրուժանն։

ԳԼՈՒԽ ԽԳ.

Յաղագս զինդակապետին, որ ինսուն բիւրով եկն 'ի վերայ Հայոց
Թագաւորին. ապա հասանէր սատակէր 'ի մեծ հարուածս զզօրսն Պար-
սից Վասակ զօրավարն։

ԶԻՆԴԿԱՊԵՏ ոմն, զօրագլուխ զօրացն Թագա-
ւորին Պարսից, հանդերձ ինսուն բիւրուն գայր հա-
սանէր 'ի սահմանս Այրպատականի։ Այսպա կանխէր
և ելանէր ընդ առաջ նոցա Վասակ զօրավարն Հայ-
ոց. անկանէր 'ի գիշերի 'ի վերայ զակշին պարսկաց,
և հանէր ընդ սուր առ հասարակ զամենեսեան, և
սպանանէր զզինդկապետն 'ի մէջ բանակին։ Բայց մի-
այն Ճողպրեաւ ապրէր ՄԵրուժանն վատանշան։

1 Յերկուս օրինակս միջամուխ լինէր։

ԳԼՈՒԽ ԽԴ.

Յաղագս արքայորդւոյն Պապայ. թէ զնարդ յայտնի էին գնքն 'ի նմա, և հանդերձ նոքօք գործէր զպղծութիւն։

ՊԱՊ որդին Աւրշակայ ծնաւ 'ի մօրէն Փառանձեմայ սիւնւոյ, որ էր լեալ կին Պնեղոյն. զոր ասպան արքայն Աւրշակ, և առ զկին նորա Փառանձեմ իւր կին, և ծնաւ 'ի նմանէ որդի՝ որ կոչեցաւն Պապ։ Այս եղև իբրև ծնաւ զնա մայրն իւր, քանզի անօրէն մարդ էր և ամենևին յոյժ ոչ երկնչէր, նուիրեաց զնա դիւաց. և զնակեցին դևք բազումք 'ի մանուկն, և վարէին զնա ըստ կամայ իւրեանց։ Մնաւ և աճեաց, և գործէր զմեղս. զպոռնկութիւն, զպղծութիւն արուագիտութիւն և զանամնագիտութիւն, և զաղբալի գարշութիւն. բայց կարի զարուագիտութիւն։ Դարձեալ ինքն իգանայր այլոց, և այսպէս մընկեալ թաւալեալ էր։

Այս երբեմն իբրև զգաց մայր նորա զարուագիտութիւնն, և ոչ կարացեալ համբերել պարսաւանացն վատանուանութենն, ասէ ցսենեկապան որդւոյն իւրոյ, թէ յորժամ նա խնդրեսցէ 'ի պղծութիւն զարսն՝ ընդ որ սովորն է անկանել, դուք զիս 'ի ներքս կոչեսջիք։ Յորժամ պատանեակն Պապ ինքն ընդ անկողին մտեալ՝ խնդրեր զարսն 'ի պղծուն, եմուտ մայր նորա և նստաւ զառաջեաւ նորա՝ իւր որդւոյն։ Սկսաւ ձչել վայել պատանեակն, և ասէ ցմայր իւր. Յարիցես գնասցես 'ի բաց, զի մեռանիմ խորովիմ կսկծիմ պայթիմ, թէ ոչ յարիցես գնասցես 'ի տանէս։ Ասէ մայրն ասէ, թէ ոչ գնացեալ ելից 'ի տանէ աստի։ Ասէ նա հաղ քան զհաղ ձչէր, բազմացուցանէր զվայելն։ Ասէ մայրն նայեցեալ տեսանէր աչօք իւրովք օձք սպիտակք, զի պատեալք էին զգահոյիցն ոտամբք, և ձապատէին 'ի վերայ պատանեկին Պապայ, մինչ դեռ ընդողմանեալ էր նա. կայր 'ի մահիճն, վայէր և խնդրէր զպատանեակն ընդ որ սովորն էր գիտանալ։ Ասէ մայրն գիտացեալ յիշեաց զայն, որոց 'ի ծննդեանն նուիրեաց զորդին իւր. գի-

տաց թէ նոքա էն, որ 'ի կերպարանս օձիցն Ճապա-
տէին զորդւոցն իւրով. յարտասուս հարեալ, ասաց.
Վա՜յ ինձ, որդեակ իմ. զի քեզ տաղնապ էր, և ես
ոչ գիտէի։ Յարուցեալ գնաց եթող զտեղին, կա-
տարել զպէտս ցանկութեն։ Եւ այսպէս դիւաք վա-
րեալ, յայսպիսի գործս զա՜մ աւուրս կենաց իւրոց
ըմբռնեալ Պասն որդին Երշակայ, մինչ եհաս 'ի
թագաւորութիւն, մինչև 'ի մահ իւր։

ԳԼՈՒԽ ԽԵ.

Յաղագս Սակստան անդերձապետի, որ առաքեցաւ 'ի Շապհոյ թա-
գաւորէն Պարսից չորեքհարեւր հազարաւ, և փախոյց ևս զնա Վասակ
զօրավարն Հայոց։

Երգ յետ այսորիկ ժողովեաց թագաւորն Պար-
սից Շապուհ զզօրս իւր, և հազարս չորեքհարեւր.
և Սակստան անդերձապետ զօրագլուխ նոցա։ Երգ
խաղացին գնացին 'ի կողմանս Հայոց. եկին ծաւա-
լեցան Ճակատեցան ընդ թագաւորութեն Հայոց Երշ-
ակայ։ Երգ 'ի մի վայր եկեալք ա՜մ մեծամեծք նա-
խարարացն Հայոց, խորհուրդ խորհեին. քանզի ոչ
առնուին յանձն երբէք, թէ թագաւորն Երշակ մտ-
ցէ ընդ նոսա 'ի պատերազմ։ Երգ զօրավարն Վա-
սակ, հանդերձ ա՜մ մեծամեծքն և նախարարքն
ա՜մ Հայոց մեծաց, հարկանէր սատակէր զա՜մ զօրսն
Պարսից։ Եւ սպանանէր Սակստան անդերձապետն.
բայց միայն ապրէր Մերուժանն արծրունի փախու-
ցեալ։

ԳԼՈՒԽ ԽԶ.

Յաղագս Շապուհան տակառապետին, որ նկն հինգ հարեւր բիւրուն 'ի վերայ աշխարհին Հայոց. ապա և զնոսա հարկանէին ստակէին զոլքն Հայոց։

ՇԱՊՈՒՀԱՆ տակառապետն գայր հասանէր հինգ հարիւր բիւրուն 'ի վերայ աշխարհին Հայոց, և կամէր մտանել յաշխարհն Հայոց։ Ապա կազմեալ պատրաստեալ գունդն զօրաց Թագաւորին Հայոց, և Վասակ զօրավարն Հայոց, ելանէր 'ի դիմի հարկանէր զօրացն Պարսից։ Հարկանէին կոտորէին զզօրսն Պարսից, և սպանանէին զՇապուհան տակառապետն պարսկաց։ Բայց միայն փախչէր Մերուժանն, ապրեալ լինէր։

ԳԼՈՒԽ ԽԷ.

Յաղագս Մոգաց հանդերձապետին՝ որ գայր հասանէր ուԹուտասն բիւրուն, տալ ճակատ ընդ Թագաւորին Հայոց. և սա կործանէր լբրև զառաջինն։

Ապա և Մոգաց անդերձապետն գայր հասանէր ուԹուտասն բիւրու, տալ ճակատս ընդ Թագաւորին Հայոց Արշակայ։ Ապա զնային հասանէին 'ի մի վայր ամ զօրքն Հայաստան երկրին և Վասակ զօրավարն սպարապետն, որ էր դայեակ Թագաւորին Հայոց Արշակայ։ ԼցԹէ կարի շատ աճապարեալ հասանէին, այնչափ ժամանեցին՝ մինչև 'ի Մաղխազան կարացին հասանել։ Լու անդ ընդ միմեանս գունդն երկոքեան բախէին. 'ի պարտուԹի մատնեցան զօրքն Պարսից, փախստական լինէին յերեսաց Վասակայ զօրավարին և ամ զօրացն Հայոց։ Լու սպանանէին անդ զՄոգաց անդերձապետն, և զզօրսն անմի արարեալ. բայց միայն Մերուժանն 'ի տաճիկ ձի նստեալ փախչէր։

ԳԼՈՒԽ ԽԸ.

Յաղագս համբարակապետին, որ ինքնուն բիւրուն եկեալ մարտնչէր ընդ զօրս Թագաւորին Հայոց. և սատակեցաւ 'ի Սաղամաս 'ի զօրացն Հայոց, և 'ի զօրավարէն Վասակայ։

Այս համբարակապետն Թագաւորին Պարսից, և սա գայր հասանէր 'ի գաւառն Կորճէից 'ի Սաղամաս հանդերձ ինքնուն բիւրօք։ Եւ զակիշ ածեալ յամուր տեղւոջ միոջ, կամէր կռուել ընդ Թագաւորին Հայոց ընդ Արշակայ։ Այլա գայր զօրավարն Հայոց, հանդերձ տասն հազարաւ զինու ընտիր զօրու. և դարանամուտ լինէր ընդ կողմանս բանակին, և 'ի գիշերին անկանէր 'ի զակիշն։ Եւ զամենեսեան ընդ սուր հանէին առ հասարակ, և ոչ մի ոչ ապրեցուցանէին. բայց միայն Մերուժանն արտաքոյ գընդին դիպեալ, փախչէր։

ԳԼՈՒԽ ԽԹ.

Յաղագս Մռիկանայ՝ որ քառասուն բիւրօք եկն կռուել ընդ Թագաւորին Հայոց, և 'ի Վասակէ և 'ի զօրացն Հայոց սատակեցաւ։

Այս Մռիկան ոմն մեծ զօրագլուխն Պարսից քառասուն բիւրօք գայր հասանէր 'ի մարտ պատերազմի ընդ Արշակայ արքային Հայոց։ Այլա և զօրքն Հայոց խրոխտացեալ հանդերձ իւրեանց զօրավարաւն Վասակաւ, գազանաբար առիւծաբար դէմ ընդդէմ յարձակէին. և անդէն սատակէին զզօրսն Պարսից, և սպանանէին զՄռիկանն։ Բայց Մերուժանն և այն անգամ փախչէր։

ԳԼՈՒԽ Ծ.

Յաղագս քակելոյ և քայքայելոյ Թագաւորութեան Հայոց, թէ որպէս ապստամբելոյն բազումք 'ի նախարարացն Հայոց, և ձեռս եառուն 'ի Շապուհ արքայն Պարսից. և թէ զիարդ հատ ցրուեցան այսր անդր, և նուաղեաց Թագաւորութիւն Հայոց։

Զ ԵՐԵՍՈՒՆ և զչորս ամս եւուն պատերազմ երկիրս Հայոց ընդ Թագաւորին Պարսից, և յետ այնորիկ ձանձրացան պարտեցան լքան աշխատեցան երկոքին կողմանքն։ Այլ սկսան սորսորել գնալ 'ի բանակէն Հայոց Թագաւորին. Թողին զիւրեանց արքայն Աշոչակ։ Բայց նախ այսմ գնալոյ սկիզբն առնէին մեծամեծ աւազանին։ Ղախ բդեաշխն Աղձնեաց, և Նոշիրական[1] բդեաշխն, և Մահկեր տանն, և Ղիհորական, և Դասսընտրէին, և Ամ նախարարութիւն Աղձնեաց, և զորն և տունն տոհմին Աղձնեաց կողմանն ապստամբեցին յարքայէն Հայոց Աշոչակայ, և չոգան կացին առաջի արքային պարսկաց Շապհոյ. և պարիսպ ածէին 'ի Հայոց կուսէ՝ որ Զորայն կոչէն, դրունս դնէին. և զատուցին զիւրեանց աշխարհն 'ի Հայոց։

Այլ յետ սորա Դուդարաց[2] բդեաշխն, և յետ սորա Զորայ գաւառին տէրն, և Կողբայ գաւառին տէրն, և ընդ նոսա Դարդմանաձորոյ տէրն։ Այլ որք մնացին 'ի նոսա կողմն այնր ձեռին, որ շուրջ էին զնոքօք, միահաղոյն ապստամբեցին 'ի Թագաւորէն Հայոց Աշոչակայ. և չոգան գնացին առաջի կացին Թագաւորին Պարսից Շապհոյ։ Ապստամբեցին յԱշոչակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Աշնակայ, և ամուր գաւառն Ցմորեաց, և ամուր աշխարհն Կորդեաց. ապա և տէր գաւառին Կորդուաց չոգաւ եկայ առաջի Թագաւորին Պարսից։

Յետ այսորիկ ապստամբեաց 'ի Թագաւորէն Հայ-

1 Յերկուս օրինակս Նորշիրական։

2 Յօրինակի միում Գոդոբեաց, և յայլում Գոռդոբեաց։

ոց և ձեռին իշխանութեն տանն Հայոց Թագաւորին, որ էր զատրպայական աշխարհաւն, յետս եկաց 'ի Թագաւորէն Հայոց ամուր աշխարհն Պարաց. յետս եկաց յարքայէն Հայոց և աշխարհն Կաղզից. եթող զարքայն Հայոց և գնաց Պաղամուտ տէրն Ընձտեայ, և ընդ նմա իշխանն մեծի Ծոփից. և գնացին առ Թագաւորն Յունաց։ Մինչնաշխարհն մնացեալքն յերկուացան յարքայէն, և ոչ կամէին լսել Թագաւորին իւրեանց, ոչ մի ինչ իրս՝ զոր նա կամէր։ Եւ գձձեցաւ Թագաւորութեն մեծապէս։

Եւ Վահան եղբայր Վասակայ սպարապետին, 'ի մամիկոնեան 'ի տոհմէն, անկաւ 'ի բանս հրապուրեցաց նա 'ի Երուժանայ արծրունոյ քեռորդւոյ իւրոյ։ Եւ սա ապստամբեաց յԱրշակայ յարքայէն Հայոց, և չոգաւ եկաց առաջի Թագաւորին Պարսից Շապհոյ։ Եւ հաձեաց զմիտս նորա, և նախ ուրացաւ նա 'ի կենաց իւրոց՝ զոր 'ի Քրիստոն ունէր, և յանձն առ պաշտել զօրէնս մոգութեն. այս ինքն երկիր պագանել կրակի և ջրոյ և արեգական, և ուրանալ զօրէնս քրիստոնէութեն՝ յորում ծնեալն էր։ Եւ եղև նա ըստ մտի Թագաւորին Պարսից. և մատուցանէր ևս ամբաստան գրգռութիւն զարքայէն Հայոց Արշակայ, և զիւրմէ տանուտեառնէն Վասակայ. և յիշեցուցանէր ևս նմա զմահն Վարդանայ, թէ յաղագս քո մեռաւ։ Եւ եղև նա այնուհետև սիրելի Շապհոյ արքային, և ետ նա կին Վահանայ զՎրմիզդուխտ քոյր իւր. և շնորհեաց նմա բարձ և զպատիւ՝ որ նոցուն լեալ էր նախնեաց, և մտերիմ փեսայ արար զնա իւր Թագաւորն. և 'ի մէջ զօրաց իւրոց շքեղացոյց զնա, և խոստացաւ նմա կեանս մեծամեծս առնել։ Իսկ Թիւն Հայոց պակասեաց յայսմ հետէ և յապա։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս թէ զնարդ միաբան համարէն աշխարհաւորէն՝ որ միանգամ մնացեալք յաշխարհին՝ Ժողովէին առ Ներսէս կաթողիկոսն Հայոց. և զբողոք հարկանէին առաջի նորա, և ձեռնթափ լինէին, և թողէն 'ի ձեռաց զեւրեանց Թագաւորն Արշակ։

Զ.ՊԱ Ժողովեցան մարդիկ ամ աշխարհին իշխանութեն Թագաւորութեն Հայոց. և եկին առ մեծ եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս, մեծամեծք նախարարք կուսակալք կողմակալք գաւառատեարք գործակալք և դասապետք շինականաց. 'ի մի վայր եկեալ Ժողովեցան, խօսեալ սկսան ընդ Ներսիսի և ասեն. Դու տեր, քեզէն գիտես, զի այս երեսուն ամ է Թագաւորին մերոյ Արշակայ, զի ոչ մի ամ մեզ հանդիստ ոչ եղև 'ի պատերազմէ. և համակ սրով և սուսերօք և 'ի սլաքս և 'ի տեգս նիզակաց զքրտունս երեսաց մերոց ընջեցաք։ Դու արդ ոչ կարեմք այսմ զժոյժ[1] ունել, և ոչ այլ կարեմք տալ ճակատս. զի լաւ է մեզ՝ թէ ծառայեսցուք մեք Թագաւորին Պարսից որպէս ընկերքն մեր արարին, զի թողին զնա և գնացին առ Թագաւորն Պարսից. և մեք սոյնպէս առնելոց եմք, զի ոչ այլ ևս կարեմք կռուել։ Եթէ պէտ իցէ Թագաւորին Արշակայ կռուել ընդ Շապհոյ, Վասակաւ և Մնդուկաւ աներաւ իւրով տացէ պատերազմ. այլ յայսմիկ Հայոց աշխարհէս և ոչ մի այր ոչ ոք է երթալոց 'ի Թիկունս օգնականութեան նորա։ Եմա եթէ պէտ իցէ, տացէ պատերազմ, թէ պէտ մի. մեր Թողեալ զնա՝ մեզ չէ փոյթ։

Իսկ ՝ծերն Ներսէս խօսէր ընդ նոսա որպէս օրէն էր, եթէ տեսէք և քաջ զմտաւ ածէք, և յիշեցէք զբանն՝ որ պատուիրանին միաբանութիւն որպէս պատուիրեացն ծառայից՝ հնազանդ կալ տերանց իւրեանց։ Զի ամենեքեան դուք աւագիկ կայք և վկայէք, մնա-

1 Յօրինակի միում զոյժ ունել, յայլում ոյժ ունել, և 'ի միւս այլ յոյժ ունել։

ւանդ զի ամենեքեան դուք կեցեալ էք յաղագէդ արշակունոյ. ոմանք 'ի ձէնջ դաւառատեարք լեալք 'ի նոցանէն, և ոմանք մեծամեծք աշխարհաց, ոմանք աւագ աւագ աւանաց գեղից և գանձուց տեարք լեալ էք, և պէսպէս դաստակերտացն։ Զի թէպէտ և առ արարիչն ՀԱԾ յանցաւոր իցեն պեղծ ազգն արշակունեաց, սակայն զձեզ կեցուցեալ զամենեսեան և յաղագոյ թօթափեալ է, զոմն գործով, զոմն պատուով, զոմն իշխանութիւն, զոմն գործակալութիւն։ Զի թէպէտ և առ ՀԱԾ մեղաւոր է Արշակ արքայ, և պարտական է տոկոսեաց արարչին իւրոյ՝ առ 'ի տալնել նմա վրէժս, սակայն ՀԱԾ վասն բաղումս և անչափ մարդասիրութիւն իւրոյ՝ խնայեաց 'ի նա, և վասն նորա 'ի ձեզ։

Այս դուք աւադիկ կամիք անկանել հեթանոսաց 'ի ծառայութիւն, և կորուսանել զկեանս ձեր յայլ, և մերժել զքնակ տեարսն ձեր՝ զորս տուեալ է ձեզ յայլ, և օտար տերանց ծառայեալ, և նոցին անհաւատ կրօնիցն ցանկալ։ Բայց լաւ լիցի ձեզ զնոյն սիրել և յանձն առնուլ, և նմին հաւանել, և մերժել յանձանց ձերոց զարարչապաշտ թագաւորն։ Զի թէ բեւր չար իցէ Արշակ, սակայն ՀԱԾապաշտ է. և եթէ մեղաւոր ևս իցէ, սակայն թագաւոր ձեր է. որպէս և դուքդ ասացէք առաջի իմ, թէ այսչափ ամք են՝ զի մարտեայք ևս 'ի վերայ անձանց ձերոց և հոգւոց, 'ի վերայ աշխարհի, 'ի վերայ կանանց և որդւոց ձերոց։ Այս որ մեծն է քան զՀԱՄ, 'ի վերայ եկեղեցեաց ձերոց, 'ի վերայ ուխտի հաւատոց ձերոց, զոր ունիմք 'ի Տէր մեր Յիսուս. և համակ Տէր ետ ձեզ յաղթուն անուան իւրոյ։ Այս արդ կամիք փոխանակ Տէրն ա-բարչին ձերոյ՝ ծառայել ձեզ անհաւատ մոգութիւն անօրինացն և նոցուն պաշտօնէիցն, 'ի թողուլ նախ զարարիչն մեր և զնորուն պատուիրանս՝ զոր պատուիրեաց ձեզ, միամիտ կալ առ տեարսն մարմնաւորս՝ զորս նորայն արարեալ է. դուցէ բարկացեալ Տէր հաւատ ձեր, և խլիցէ զձեզ արմատաքի, և մատնեսցէ զձեզ հեթանոսացն 'ի չար ծառայութիւն սարկութիւնն մինչև յաւիտեան, և ոչ երբեք բարձցի լուծն ծառայութիւն 'ի ձէնջ։ Այս բողոքէք դուք առ Տէր, և նա ոչ լսիցէ

ձեզ. վասն զի անձամբ անկանիք դուք 'ի ծառայութիւն հեթանոս տերանց և անաւծ անգէտ մարդկան, 'ի ձեռս հեթանոս արանց տերանց խոտասրտաց. և բազում չարի դիպեալ ելանիցէ առաջի ձեր, և ոչ կարիցէք Ճողոպրել յայնմանէ։

Իսկ նոքա, որ միանգամ էին 'ի մի վայր ժողովեալ, զաղաղակ հարկանէին. քարոզ կարդացեալ՝ միմեանց ձայն առնէին, շփոթէին ամբոխէին, և ասէին. Հա՛ սա գնատցուք, ասէն, սփռեցարուք յիւրաքանչիւր տեղիս. զի այդմ բանից մեք ինչ ոչ կամիմք լսել։ Սփռեցան յիւրաքանչիւր տունս իւրեանց։

ԳԼՈՒԽ ԾԲ.

Յաղագս Հապէհոյ արքայի, թէ զնարդ յայնմ ժամանակի լուեցոյց զպատերազմ տալ ընդ Արշակայ Հայոց թագաւորին, և մեղմեխանօք առ ինքն կոչէր 'ի հաշտութիւն։

Ապա Շապուհ արքայ Պարսից մեծաւ աղաչանօք և պատարագօք և հրովարտակօք և սիրով զԱրշակ առ ինքն կոչէր, զի յայնմ հետէ արասցէն 'ի մէջ իւրեանց սէր և խաղաղութիւն և բարեկամութիւն մեծ։ Իսկ Արշակ արքայ թէպէտ պատերազմ կամէր տալ, այլ ոչ կամէին յանձն առնուլ այսմիկ՝ամ զօրքն աշխարհին Հայոց։ Այս թէ կամաւ կամաւ՝ թէ ոչ կամաւ, սակայն եդ սիրտ՝ խոնարհութիւն հրովարտակս առ Շապուհ արքայ Պարսից, որպէս վայելէ ծառայի առ տէր իւր, տալ։ Եւ առաքէր յիւրմէ նմա պատարագս հաշտութեան։

ԳԼՈՒԽ ԾԳ.

Յաղագս կոչելոյն կրկին անգամ Հապուհ արքայի զԱրշակ արքայ Հայոց. և նորա երթալոյն, և միահաղոյն կորնչելոյն նորա։

Այլ յետ այսորիկ դարձեալ առաքեաց առ Արշակ արքայ Հայոց Շապուհ արքայ Պարսից, և ասէ. Իսկ եթէ հաճ եմք ես և դու ընդ միմեանս, եկ տեսցուք զմիմեանս. և յայսմ հետէ իբրև զհայր և զորդի լիցուք ընդ միմեանս։ Այլ թէ ոչ տեսանիս դու զիս, ինդրեսս զպատերազմ 'ի մէջ իմ և 'ի մէջ քո։ Իսկ Արշակ խնդրէր հաւատարիմ երդումն ուխտիւ 'ի նմանէն, զի յայսմ հետէ անկասկած երթիցէ առ նա։ Այլ նա ետ բերել՝ ըստ օրինացն հաւատարիմ երդմանց թագաւորութենն Պարսից՝ աղ, կնքել վարազ նկարագիր մատանեաւ, և յղեաց։ Զի թէ իցէ և զայն երդման ևս զհետ ոչ եկեսցէ, ապա կազմ լիցի տալ Ճակատս պատերազմի 'ի մէջ իւրեանց։

Իսկ զայն ևս յորժամ տեսին և լուան ՅԱՄ մարդիկն երկրին Հայոց, ստիպեցին բռնաբռնեցին[1] զիւրեանց թագաւորն զԱրշակ և շտապեցին, զի յարիցէ գնասցէ երթիցէ յանդիման լիցի թագաւորին Պարսից Շապհոյ։ Յայնմ հետէ, թէ կամաւ կամաւ՝ և թէ՝ ոչ կամաւ, յարեաւ թագաւորն Հայոց Արշակ, առ ընդ իւր զզօրավարն սպարապետն Հայոց զԳայեանն իւր, խաղաց գնաց յերկրին Հայոց յերկիրն Պարսից առ Շապուհ արքայ Պարսից. ջոգաւ յանդիման եղև թագաւորին Պարսից Շապհոյ։ Իբրև տեսին զնոսա, արկին զերկոսեանն զարքայն Արշակ և զսպարապետն Վասակ, և պահէին զնոսա արձակ 'ի մէջ ազատագունդ փուշտիպան զօրացն։ Այլ կոչեաց արքայ Շապուհ զարքայ Արշակ, և իբրև զծառայ իւր պատուհասեաց զնա. և նա յանցաւոր և մահապարտ զանձն իւր առ նա համարեցաւ։ Դարձեալ անդրէն 'ի նոյն գունդ փուշտիպանաց ետուն զԱրշակ արքայ 'ի պահեստ։

1 Յօրինակի միում Բռնապէբռնեցին։

ԳԼՈՒԽ ԾԴ.

Յաղագս թէ որպէս զդիւթսն և զքաւդեայսն հարցեալ Շապհոյ՝ փորձէր զմիտս Արշակայ, և ասայր զնա յԱնուշ բերդն, և կամ զվասակ սպարապետն Հայոց չարամտհ հրամայէր առնել։

Ապա կոչեաց թագաւորն Պարսից Շապուհ զդիւթսն և զաստեղագէտսն և զքաւդեայսն. խօսէր ընդ նոսա և ասէր՝ եթէ ես բազում անգամ կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց, և նա համակ անարգեաց զիս։ Այս եդի ընդ նմա ուխտ խաղաղութեան, և երդուաւ ինձ յիւրեանց օրէնս քրիստոնէութեն՝ի գլխաւորութի այնմ, զոր աւետարանն կոչեն. նախ այն երդմանն ստեաց։ Այս նմա բեւր բարիս խորհեցայ որպէս հայր որդւոյ կատարել նմա, և նա ինձ չար ընդ բարւոյ հատոյց։ Իսկ ես կոչեցի զերիցուսն եկեղեցոյն Ցիսփոնի քաղաքի, և կարծեցի թէ նոքա նենգութիւն ինչ ետուն նմա զերդումն և ետուն ինձ ստել։ Այս պատուհասեալ զնոսա որպէս զմահապարտս, իսկ ասաց ցիս Մարի երէց գլխաւորն նոցա. ասէին՝ թէ մեք արդարութիւն տուաք նմա զերդումն. բայց եթէ նա ստեաց, նոյն աւետարանն ածէ զնա առ ոտս ձեր։ Այս ես նոցա ոչ լուայ. և ետու հրաման՝ եւթանասուն զնոսա՝ի մի գուբ փողոտել, և զուսումնակիցս նոցա հանել ընդ սուր։ Օ աւետարանն՝ յոր երդուաւ Արշակ արքայ, որ է գլխաւորութի ուսմանց նոցա քրիստոնէութեն, կապեցի շղթայիւք. և կայ՝ի գանձի իմում։ Բայց բանքն Մարեայ երիցոյ ուշ եղեն ինձ. և յիշեցի զի ասէր՝ թէ մի՛ սպանաներ զմեզ, այլ ես գիտեմ՝ զի նոյն աւետարանն ածէ զԱրշակ արքայ՝ի ծունկս քո։ Հաւասիկ բանք արդարութի կատարեցան, զոր ասէրն։ Բայց Արշակ արքայ Հայոց այս երեսուն ամ է Արեաց՝ զի ետուն ընդ նմա ձակատս, և յաղթել և ոչ մի ամ ոչ կարացաք. և ելեալ է եկեալ ոտիւք իւրովք։ Բայց թէ գիտէի՝ թէ յայսմ հետէ կայցէ յուխտին իմում և՝ի հնազանդութեն բարեաւ ուխտիւ, մեծապէս մե-

ծարանօք արձակէի զնա խաղաղութեամբ յիւր աշխարհն։

Իսկ քաւղեայքն ետուն նմա պատասխանի և ասեն. Լսող մեզ այսօր, և վաղիւն պատասխանի արասցուք քեզ։ Իսկ 'ի վաղիւ անդր ժողովեցան եկին առ քաւղեայքն և աստեղագէտքն, և ասեն ցարքայն. Բ.յժմ զի եկեալ է առ քեզ Թագաւորն Հայոց Բ.ըշակ, զիարդ խօսի ընդ քեզ, կամ զինչ ձայն ածէ, կամ զիարդ ունի զանձն։ Բ.սէ արքայն. Իբրև զմի 'ի ծառայիցն իմոց համարի զինքն, հող ոտից իմոց ջանայ լինել։ Բ.սեն նոքա. Բ.ա արա զոր ասեմքս քեզ. պահեա դու զնոսա աստէն, և առաքեա դու դեսպանս յերկիրն Հայոց, և տուր բերել անտի հող 'ի սահմանացն Հայոց իբրև բեռինս երկուս, և կահոյր մի ջուր։ Եւ հրաման տացես հարկանել զկէս խորանի յատակ 'ի բերեալ հողոյն Հայոց. և առցես քեզէն զձեռանէ արքային Հայոց Բ.ըշակայ, և տարցես նախ յայն տեղ՝ որ բնակ իսկ էցէ հողն, և հարցցես զնա բանս։ Եւ դարձեալ առցես դու զձեռանէ նորա, և տարցես 'ի հայատակն 'ի հարեալ հողոյն. և լուիցես դու բանս 'ի նմանէ, և ապա գիտասցես դու՝ եթէ կայ յուխտի քո և պահէ զդաշինս քո թէ ոչ յետ արձակելոյ քո զնա 'ի Հայս։ Բ.պա թէ 'ի վերայ հայ հողոյն խիստ ինչ բարբառեսցի, գիտասջիր՝ զի որ օր հասանէ յերկիրն Հայոց, զնոյն ձայն ածէ ընդ քեզ, և զնոյն պատերազմ նորոգէ ընդ քեզ, ըստ նոյն ձակատս և զնոյն թշնամութիւն յուզէ։

Բ.պա Թագաւորն Պարսից, քանզի զայս լուեալ 'ի քաւղէիցն, տաճիկ ուղղուք արձակէ 'ի Հայս արս զհողոյ և զջրոյ, զի եկեսցեն բարձցեն նմա զհմայսն։ Եւ ընդ սակաւ աւուրս եկին բերին զայն ինչ, զորմէ յղեացն։ Բ.պա հրաման տայր Թագաւորն Շ ապուհ, զկէս յատակին իւրոյ խորանին հարկանել 'ի բերեալ հողոյն Հայոց, և զջուրն ցանել 'ի վերայ նորա. և զկէսն 'ի նոյն հողն զիւրոյ բնակուն երկրին Թողուլ։ Եւ ետ ածել զԲ.ըշակ արքայ Հայոց զառաջեւ իւրով, և զայլ մարդիկն 'ի բաց հրամայեաց կացուցանել. և զձեռանէ առեալ՝ շրջէր ՀԵմելով։ Եւ երթևեկս առեալ ընդ խորանն, ասէ ցնա յորժամ 'ի

պարսիկ 'ի հողոյն 'ի վերայ ձեմկին՝ թէ ընդէր եղեր իմ թշնամի, Աստուծոյ զի ես որպէս զորդի սիրեցի զքեզ, և կամեցայ տալ քեզ զդուստր իմ 'ի կնութիւն, և որդի ինձ առնել զքեզ. իսկ դու խստացար ընդ իս, և քովք կամաց՝ առանց իմոց կամաց՝ եղեր ընդ իս թշնամի. և այս լի երեսուն ամ է, զի պատերազմեցար ընդ իս։

Իսկ Աստուծոյ արքայ, թէ մեղայ քեզ և յանցեայ. զի ես եկի և կոտորեցի, և յաղթեցի թշնամեաց քոց. և ակն ունէի 'ի քէն պարգև կենաց, և թշնամիք իմ հրապուրեցին զիս, և արկին երկիւղուկս 'ի քէն, և փախուցին 'ի քէն։ Այլ երդումն իմ, զոր երդուայ քեզ, յառաջ ածին զիս. և եկի աւասիկ առաջի քո։ Այլ աւասիկ ծառայ քո 'ի ձեռս քո կամ. զինչ և պէտք է քեզ, արա զիս, զինչ և կամ իցէ. սպան զիս, զի ես ծառայ քո առ քեզ կարի յանցաւոր եմ, մահապարտ եմ։

Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ նորա, շրջէր ձեմելով, 'ի չքմեղս առեալ զնա ածէր 'ի հայակողմն 'ի հողն հարեալ յատակն։ Իսկ իբրև յայն տեղի հասանէր, և զհայ զհողն կոխէր, մեծամեծս ըմբոստացեալ հպարտացեալ՝ այլ ձայն շրջէր. սկսանէր խօսել և ասել. 'Ի բաց կաց յինէն ծառայ չարագործ տիրացեալ տերանցն քոց. այլ ոչ թողից ըզքեզ և որդւոց քոց զվրէժ նախնեաց իմոց, և զմահն Աստուծոյ արքայի։ Զի այժմիկ ձեր ծառայից ըզմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է. բայց ոչ թողից, եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ[1]։

Իսկ դարձեալ առնոյր զձեռանէ, դարձեալ տանէր յայն հող Պարսից. ապա աշխարէր զասացեալսն, խոնարհէր բուռն հարկանէր զոտից նորա, մեծապէս ապաշխարելով զղջմամբ զասացեալ բանսն։ Իսկ յորժամ առեալ զձեռանէ զնա տանել 'ի հայ հողն, և խստագոյն քան զառաջինսն բարբառէր. իսկ դարձեալ միւսանգամ հանէր յայնմ հողոյն, բանիւք յապաշխարութիւն դառնայր։ Յայգուէ և երեկոյն այնպէս շատ փորձ փորձեաց զնա. զի իբրև 'ի վերայ հա-

1 Յերկուս օրինակս Էջիրէ։

ըեալ հողոյն տանէր, խստացեալ ամբարտաւանէր. իսկ 'ի վերայ բուն գեմնոյն յատակին՝ և կայր, 'ի զղջումն դառնայր։

Իսկ իբրև երեկոյ եղև ժամ ընթրեաց Թագաւորին Պարսից, քանզի սովորութիւն էր Հայոց Թագաւորին բազմական անդէն ընդ նմին առ նմա 'ի նորին տախտին արկանել բազմական, օրէնք էին՝ զի Թագաւորն Պարսից և Թագաւորն Հայոց 'ի միում տախտի բազմէին 'ի միում գահոյս։ Իսկ այն օր նախ զտող բազմականացն Թագաւորացն, որ անդն էին, զամենեցունց կարգեցին. հուսկ յետոյ զկնի ամենեցունց 'ի նեղքոյ բոլորին զԱ.ըշակայ բազմականն առնէին, ուր զհայ հողն յատակն հարեալ էր։ Նախ ամենեքեան իբրև բազմեցան յիւրաքանչիւր չափու, յետոյ ածէին բազմեցուցանէին զաղքայն Ա.ըշակ։ Ա.ըդ եկաց բազմեալ ուռուցեալ վայր մի. իսկ յոտն եկաց, ասէ ցԹագաւորն Շ ապուհ. Իմ այդ տեղն, ուր դուդ ես բազմեալ. յոտն կաց այդի, Թող ես այդը բազմեցայց, զի տեղի ազգի մերոյ այդ լեալ է. ապա եԹէ յաշխարհն իմ հասից, մեծամեծ վրէժս խնդրեցից 'ի քէն։

Ապա տայր հրաման Շ ապուհ արքայ Պարսից, բերել շղթայս և արկանել 'ի պարանոցն Ա.ըշակայ և յոտս և 'ի ձեռս նորա երկաԹս, և խաղացուցանել զնա 'ի յԱ.նդմըշն՝ զոր Ա.նուշ բերդն կոչէն, և պընդեալ զնա մինչև անդէն մեռցի։ Այս եղև 'ի վաղիւ անդր ետ հրաման Շ ապուհ արքայ, ածել զառաջեաւ իւր զԱ ասակ մամիկոնեան զզօրավարն սպարապետն Հայոց մեծաց. սկսաւ պատուհասել զնա, քանզի էր Ա ասակ անձամբ փոքրիկ, ասէ ցնա արքայն Պարսից Շ ապուհ. Ա.ղուէս, դու էիր խանդարիչ՝ որ այսչափ աշխատ արարեր զմեզ. դու ես այն՝ որ կոտորեցեր զԱ.րիս այսչափ ամս, և զի՞ դործեաս. զմահ աղուեսու սպանիցդ քեզ։ Իսկ վասակ տուեալ պատասխանի, ասէ. Ա.յժմ քո տեսեալ զիս անձամբս փոքրիկ, ոչ առեր զչափ մեծութեան իմոյ. զի ցայժմ ես քեզ առեւծ էի, և արդ աղուէս։ Այց մինչ ես Ա ասակն էի, ես սկայ էի. մի ոտնս 'ի միոյ լերին կայր՝ և միւս ոտնս իմ 'ի միոյ լերին կայր. յոր-

ժամ յաջ ոտնս յենուի, զաջ լեառն ընդ գետին տա-
նէի. յորժամ 'ի ձախ ոտնն յենուի, զձախ լեառն
ընդ գետին տանէի։ Այսպա հարցանէր Թագաւորն
Պարսից Շապուհ և ասէ. աղէ՝ տուր ինձ գիտել,
ո՞վ են լերինքն այնոքիկ՝ զորս դուն ընդ ոտնջ տա-
նէիր։ Նա ասէ Ա՝ասակ. Լերինքն երկուք, մի դու
էիր, և մի Թագաւորն Յունաց։ Այն մինչ տուեալ
էր ինձ՝ այ, զքեզ ընդ գետին տանէի և զԹագաւորն
Յունաց, մինչև օրհնութիւն հօրն մերոյ 'Ներսէսի
հանդուցեալ էր 'ի վերայ մեր, և՝ այ զմեզ 'ի ձեռա-
նէ չէր թողեալ. մինչև զնորա բանն արարաք, և խրատ
նորա եկաց առ մեզ, գիտացաք տալ քեզ խրատ.
մինչև մեզէն աչօք բացաք անկաք 'ի խորխորատ։ Այդ
զինչ և կամիս, արա։ Այսպա ետ հրաման Թագաւորն
Պարսից մորթել զզօրավարն Հայոց Ա՝ասակ, և ըզ-
մորթն հանել և ընուլ խոտով, և տանել ընդ նոյն
բերդ յԱ՝նդմրչն՝ որ ԱՅուշն կոչէն. ուր արգելին իսկ
զԹագաւորն Արշակ։

Գ ԼՈՒԽ ԾԵ.

Յաղագս գերութեանն և հարուածոյն աշխարհին Հայոց և աւերա-
ծոյն, և գերութենն տանելոյն 'ի Պարս. և չարտահայ լինելոյ տիկնոջն
Փառանձեմայ. և քաղաքացն Հայոց աւերելոյ, և հիմանց աշխարհին
տապալելոյ։

Այսպա արձակեաց արքայն Պարսից Շապուհ 'ի
վերայ աշխարհին Հայոց երկուս ոմանս Յիշխանաց
անտի իւրոց, միումն Օ՝իկ անուն և միումն Կարէն,
հինգ հարեւր բիւրով. զի եկեսցեն բրեսցեն քան-
դեսցեն զաշխարհն Հայոց։ Նա եկին հասին 'ի վե-
րայ երկրին Հայոց։ Այսպա իբրև ետես տիկին աշխար-
հին Հայոց կինն Արշակայ Թագաւորին Հայոց Փա-
ռանձեմ զզօրս Թագաւորին Պարսից, եթէ եկին
լցին զաշխարհս Հայոց, առեալ ընդ իւր մարդիկ իբ-
րև մետասան հազար ազատս ընտիրս սպառազէնս

պատերազմողս, և հանդերձ նոքաք դիմեաց եմուտ 'ի բերդն Բրտագերից՝ որ 'ի յերկրին արշակունեաց՝ յերեսաց զօրացն Պարսից։ Բպա եկին հասին ՝ամ զօրքն Պարսից, շուրջ զբերդաւն նստէին, պահ արկանէին. պատեցին պաշարեցին։ Իսկ նոքա 'ի ներքս ամրացեալք, յուսային 'ի տեղւոյն ամրութիւն. և նոքա լակիշ ածեալ, նստէին արտաքուստ շուրջ զձորօքն։ Եւ նստան շուրջ զբերդաւն ամիսք երեքտասան, և առնուլ զբերդն ոչ կարացին, զի կարի ամուր էր տեղին։ Բւերեցին քանդեցին զերկիրն ՝ամ. ելանէին առնուին աւար զերկիրն ՝ամ, շուրջ 'ի գաւառացն և յաշխարհացն ածէին զգերի մարդկանն և զանանոյ 'ի լակիշն իւրեանց. այլուստ բերէին համբարս, և ուտէին. և զբերդն պաշարեալ պահէին։

Իսկ Պապ որդին Բրշակայ ոչ դիպեցաւ անդ 'ի Հայոց աշխարհին, զի առ Թագաւորն Յունաց դիպեցաւ։ Օ 'ի Թէպէտ և զայս ՝ամ լուան ազատագունդ բանակն Հայոց, չոգան իւրեանց խնդրել Թիկունս օգնականութիւն. և էր նոցա զօրագլուխ Մուշեղ որդին Վասակայ սպարապետին։ Եւ չոգան նոքա առ իւրեանց աղբայորդին. մինչ դեռ նոքա ընդ Թագաւորին Յունաց խօսէին, հաւանեցուցանէին զնոսա Թիկունք լինել իւրեանց։ Իսկ յերկիրն Հայոց ստէպ առաքէին դեսպանս առ տիկին աշխարհին առ Փառանձեմ, զի ժուժկալ լինիցի բերդին, և մի ձեռս տացէ 'ի պարսիկս։ Եւ դեսպանս ստէպ ստէպ յորդւոյ նորա 'ի Պապայ զմիմեանց զկնի 'ի շաբաթու շաբաթու եկեալ հասանէին. և գաղտ ընդ գաղտնի դուռն ուրեմն մեքենաւորութիւբ 'ի բերդն մտանէին, տային քաջալերս տիկնոջն. և յերկարեաց 'ի բերդին ամիսս երեքտասան պաշարումն։ Բյլ որք գային և երթային, ստէպ ստէպ գային՝ թէ պինդ կաց, զի հասեալ է Պապ որդի քո և գունդ կայսերական 'ի Թիկունս օգնականութիւն։ Եւ յերկարեաց խրախոյսն որ հասանէր, զի ասէին. Վայրիկ մի և սակաւիկ մի և կալցիս ժոյժ, և ահա հասեալ է օգնականութիւն։

Եւ եղև յետ չորեքտասաներորդ ամսեանն հարուածոց՝ որ յայ հասին 'ի վերայ գաղթականին բերդնորդեացն, զի մահ անկաւ 'ի վերայ նոցա՝ որք 'ի բեր-

դին էին, զի 'ի ոնսէ հասին պատուհասք։ Բ.աջի տիկնոջն Փառանձեմայ ուտէին և ըմպէին և ուրախ լինէին որք էին 'ի տաճարին. յանկարծակի 'ի միում ժամու հարիւր այր, և 'ի միւսում երկերիւր, և էր՝ զի հինգ հարիւր այր մեռան 'ի բազմականին՝ յորժամ բազմեալ կային. և օր ըստ օրէ սատակէին։ Յորժամ սկսան, զամս մի ոչ յերկարեաց՝ զի սատակեցան առ հասարակ. զի էին արք իբրև մեռանան հազար, և կանայք իբրև վեց հազար. զի ամս մի ոչ կացին, զի ամենեքեան՝ որ էին 'ի բերդին՝ առ հասարակ սատակեցան։

Բայց մնաց 'ի բերդին Փառանձեմ տիկին, երկու նաժշտօք։ Բ.պա եկն Եմուտ գաղտ 'ի ներս 'ի բերդն Հայր մարդպետ նեռքինին, և Թշնամանեաց զտիկինն մեծապէս իբրև զոզ մի։ Սկսաւ զնել Թշնամանս աղգին արշակունեաց, զի վատախորհուրդք են վատանշանք, կորուսին զաշխարհս Լս. իբաւի անց ընդ ձեզ այդ, և այլ զի անցցէ։ Նէ գաղտուկ, և փախեաւ։ Իսկ տիկինն Փառանձեմ իբրև ետես՝ Եթէ միայն մնացի, եթաց զդուռն բերդին, և Թողացոյց զօրսն Պարսից մտանել 'ի բերդն։ Նա եկին կալան զտիկինն, և իջուցին 'ի բերդէն։ Նշանեցին 'ի բերդն 'ի վեր զօրավարն Պարսից, գերեցին զգանձս Թագաւորին Հայոց, որ կային 'ի բերդին. և սկսան կրել իջուցանել զամ գանձն, որ կայր 'ի բերդին։ Օ լինն տիւ և զլինն գիշեր համակ իջուցին զոր գտին Բ.ուտարագերսն բերդին, հանդերձ տիկնաւն խաղացուցին։

Նա յետ այսորիկ եկին 'ի քաղաքն մեծ Բ.ուտաշատ, և առին զնա, և կործանեցին զպարիսպ նորա. առին անառի զգանձս մեթերեալ՝ որ կային, և գերեցին զամենայն քաղաքն։ Նա խաղացուցին 'ի Բ.ուտաշատ 'ի քաղաքէ ինն հազար տուն երդ Հրեայս. զոր ածեալն էր գերի Տիգրանայ արքայի արշակունւոյ յերկրէն պաղեստինացւոց. և քառասուն երդ Հայ, զոր Բ.ուտաշատ քաղաքէ խաղացուցին։ Նա զամ շինուած քաղաքին հրձիգ արարին զփայտակերսն, և զքարակերսն քանդեցին. զպարիսպն ըստ նմին օրինակի և զամ շինուած քաղաքին մինչև 'ի հիմունսն

ապականեցին, և ոչ թողին մի, և ոչ թողին բնաւ քար 'ի քարի վերայ. անմարդի և թափուր յամ բնակչաց իւրոց կացուցանէին։

Եւ եղև յորժամ ածին ժողովեցին զամ զգերին զքաղաքին 'ի մի վայր, և անցուցին ըստ Ցափերն կամուրջ, և առնէին համար գերւոյն, 'ի մէջ շերտափակ զօրացն պատէին, ասեն զօրագլուխքն Պարսից ց Օուիթ երէց քաղաքին Բրտաշատու. Եկեալ 'ի միջոյ գերւոյդ, երթ գնա դու յո պէտք է քեզ։ Եւ ոչ առնոյր զայս յանձն երէցն Օուիթն, այլ ասէր. Յո զնաչնդ տանիք, և զհովիւս տարայք. զի ոչ է մարթ հովուի թողուլ զնաչն իւր, այլ պարտ է հովուի դնել զանձն 'ի վերայ ոչխարին իւրոյ։ Եւ զայս ասացեալ եմուտ 'ի գերուէին, և խաղաց 'ի գերուէ ընդ իւրում ժողովրդեանն յերկիրն Պարսից։

Բռնուին և զվ աղարշապատ քաղաք. քանդէին բրէին զքաղաքն 'ի հիմանց տապալէին, և խաղացուցանէին յայնմ ևս քաղաքէ ինն և տասն երդս հազար։ Ընդ ամ քաղաքս ոչ թողին ամենևին շինած. զի զամ տապալէին, քակեալ քանդէին. և ընդ ամ երկիրն ասպատակ սփռեալ՝ զամ այր 'ի չափ հասեալ կոտորէին, զկանայս և զորդիս 'ի գերուէն վարէին. և զբերդս ամ թագաւորին Հայոց կալան, և լցեալ բազում ամբարօք՝ բերդակալս թողուին։ Բռնուին և զմեծ քաղաքն զԱրուանդաշատ, և խաղացուցանէին անտի երդս քսան հազար Հայ, և երդս երեսուն հազար Հրեայ. և զքաղաքն 'ի հիմանց տապալեալ բրեալ յատակէին։ Բայց առնուին և զքաղաքն Բագրևանդայ Օարեհաւան, և խաղացուցանէին անտի հինգ հազար երդ Հայ, և ութ հազար երդ Հրեայ. և զքաղաքն 'ի հիմանց տապալէին յատակէին։ Բռնուին և զքաղաքն մեծ Օարիշատ՝ որ էր 'ի գաւառին Յազոհովտի, չորեքտասան հազար երդ Հրեայ, և տասն հազար երդ Հայս. և զնա 'ի հիմանց քանդեալ ապականէին։ Բռին և զամուր քաղաքն Վան, որ է 'ի գաւառին Տոզբայ. և հրձիգ արարեալ, քակէին զհիմունս նորա. և խաղացուցանէին անտի երդս հինգ հազար Հայ, և ութ և տասն հազար երդս Հրեայս։

Օ այս ՝ամ բազմութիւն Հրէից, զոր գերեցին տարան յերկրէն Հայոց, ածեալ էր յերկրէն պաղեստինացւոց մեծի թագաւորին Հայոց Տիգրանայ 'ի ժամանակին՝ յորժամ գերեաց նա և ած 'ի Հայս զքահանայապետն Հրէից զՀիւրկանոս զառաջին ժամանակաւ։ Այս էած մեծ արքայն Տիգրան զամենայն զՀրէուութիւն զայն բնակեցոյց 'ի քաղաքն Հայոց յիւրում դարուն 'ի ժամանակին։ Իսկ յայսմ ժամանակի աւերեցին զքաղաքն, և գերեցին զենակեալսն անդ. և զամ երկիրն Հայոց և զամ գաւառն ընդ նմին գերեալ, խաղացուցեալ[1] և զայլ գերուին գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, փորի փորի, զաշխարհի աշխարհի, ածին ժողովեցին 'ի քաղաքն Այսճաւան. զի անդ էր զօրաժողով իւրեանց զօրացն։ Այլ առին և զնա քանդեցին. անտի երդս Հայս երկուս հազարս, և Հրեայ երդս վեշտասան հազարս անտի խաղացուցին գնացուցին ամ գերութեամբն հանդերձ։ Այս անդէն յերկիրն Հայոց ոստիկանս թողին և վերակացուս, 'ի ծառայութիւն մատնել[2] զմնացորդս երկրին. և ինքեանք զտիկինն Փառանձեմ առեալ, հանդերձ գանձիւքն և բազմութեամբ գերեաքն յերկիրն Պարսից խաղացուցանէին. և գնացեալք երթային տանէին հասուցանէին յերկիրն Պարսից առ Շապուհ արքայն Պարսից։

Այս եղև իբրև չորան տարան զտիկինն Փառանձեմ յերկիրն Պարսից, և զայլ ամ գերուին Հայոց և զգանձն կալան առաջի թագաւորին և զտիկինն Փառանձեմ, շնորհ մեծ ունէր թագաւորն Պարսից իւրոց զօրավարացն։ Այս իբրև կամեցաւ թագաւորն Պարսից Շապուհ թշնամանս առնել ազգին աշխարհին Հայոց և թագաւորութեան, եւ հրաման ժողովել զամ զզօրս իւր և զմեծամեծս իւր և զփոքունս և զամ մարդիկ աշխարհին իւրոյ՝ որ ինքն իշխէր, և 'ի մէջ ամբոխին ածել զտիկինն Հայոց զՓառանձեմն։ Այս հրամայեաց 'ի հրապարակին իմն առնել հրապոյրս մեքենայից, որով հրամայեաց զկինն արկանել, և արձակել տիկնոջն Փառանձեմայ 'ի

1 Յերիս օրինակս Խաղացեալ։ 2 'Ի չորս օրինակս Մատնել։

խառնակութիւն պոռնկութիւնն անասնական պղծութիւնն։ Ա.յսպէս սատակեցին զտիկինն զՊառանձեմ։ Իսկ զայլ գերին զամ տարան քնակեցուցին, որ յԱ.սորեստան, որ յերկրին խուժաստանի։

ԳԼՈՒԽ ԾԶ.

Յաղագս վկայութեան Զուիթայ երիցու յերկրին Պարսից։

Ա.ՊԱ իբրև չոգան տարան յերկիրն Պարսից զամենայն գերութիւն Հայոց, և զՕ.ուիթ երէց Ա.ըտաշատ քաղաքի ունէին կապանօք առաջի Թագաւորին Պարսից Շ.ապհոյ։ Եւ նայեր Թագաւորն Պարսից Շ.ապուհ, և տեսանէր զերէցն Օ.ուիթ այր բարձր և անձնեայ, և 'ի տիոց մանուկ. և հեր գէր խոյն ալևորեալ էին, այլ մուրուքն դեռ տակաւին սեաւ ևս կային։ Ա.ստա յորժամ զառաջինն խօսել սկսաւ, ասէ. Եթէ տեսանէք զառնդ զայդր զաբուութիւն. քանզի յայտ է, 'ի հերաց այտի երևի՝ թէ կախարդ է. զի հերքն սպիտակ են, և մուրուքն սեաւ։ Իսկ երիցուն տուեալ պատասխանի, ասէ. Ով քեզ պէտ իցէ, այլ զինչ կամիս խօսել և առնել՝ խօսեաց. այլ վասն այդորիկ գիտեա, զի յիրաւունս սպիտակացեալ են նախ հերքս. զի բաղում աւուրքք երէց են, գոնեա՛ հնգետասան ամաք. քան զմուրուս նախաբոյս են։ Իսկ Թագաւորն հրաման տայր մինչև 'ի վաղիւն պահել զնա. իսկ 'ի վաղիւն հրաման տայր ածել 'ի հրապարակն շղթայիւք։ Եւ ելին ոստիկանք արքունի հարցանել, եթէ իցէ՝ յանձն առցէ պաշտել զօրէնս մոգութեան, ոչ մեռցի։ Իսկ նա ոչ առնոյր յանձն. այլ կամեցեալ մեռանել խնդութիւ վասն այ, երթեալ 'ի տեղն մահուան, և աղաչեաց զվերակացուս իւրոյ մահուանն, զի թողացուցցեն նմա սակաւ մի կալ յաղօթս։ Եւ մատուցեալ յառաջադոյն, եդ ծունր և ասէ.

ԳԼՈՒԽ ԾԷ.

Աղօթք 'ի ժամ մահուն Զուիթայ։

Ա՛ՐԱՐԻՉ մեր, որ արարեր զերկինս և զերկիր և զծով յոչընչէ, և ստեղծեր զմեզ 'ի հողոյ. և զհողեղէնս այսպէս իմաստունս բանաւորս և կենդանիս արարեր։ Եւ շնորհեցեր մեզ զգիտուն քո, զոր ցուցեր ազգաց որդւոց մարդկան'ի ձեռն սրբոց քոց մարգարէիցն կարապետացն քոց. և դու քեզէն եկիր ի՝ջեր մարդացար երևեցար յերկրի, և ընդ մարդկան շրջեցար. և զկատարեալ իմաստութիւդ քո շնորհեցեր արարածոց քոց, զոր Ա՛ռաքելովքն քարոզեցեր քոց ստացուածոց յաշխարհի։ Եւ վարդապետօքն սրբովք, զորս եդիր 'ի քում յեկեղեցւոջ լուսաւորս, զամենեսեան իմաստնացուցեր։ Եւ զնս, զայր զանարժան, արժանի արարեր քում ծառայութեդ. և պատրաստեցեր զնս տառապեալս մնանել և ուսանել ընդ ձեռօք քո սրբոյ և մեծի և քո քահանայապետին Կերսիսի՝ քո պաշտօնէին, և 'ի ձեռաց նորա առնուլ զձեռնադրութիւն երիցութիւն, և 'ի ձեռաց նորա զնս նուիրեալ քեզ 'ի քահանայութիւն։ Եւ յայնմ աշտիճանէ պատրաստեցեր ըմպել զվկայութեան բաժակն փրկութիւն, զոր ըմբելով զանուն տն կարդացից. զաղօթս իմ ես տն տաց առաջի ամ ժողովրդոց նորա։ Ընդ որում քեզ փառք և զօրութիւն և իշխանութիւն միածնի Որդւոյ քո սիրելւոյ Յսի Քրսի, և կենդանարար Հոգւոյդ քում սրբոյ, յառաջ քան զամ յաւիտեանս այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ եթէ զայս ամ ասաց, բազում մարդիկ ամբոխի ժողովեալ էին. ասացին զամէնն։ Ապա զայրացեալք վերակացուք սպանողութենն, թէ ընդէր այն չափ երկար թողացուցին նմա խօսել, ապա տաղնապաւ 'ի տեղի մահուն հասուցանէին։ Իսկ նա մեծաւ խնդութիւ կարկառեալ զպարանոցն, վճարէր 'ի սուսերէն։

ԳԼՈՒԽ ԾԸ.

Յաղագս գալոյն Շապհոյ Թագաւորին Պարսից յԵրկիրն Հայոց, և միանգամայն սատակել զմնացեալս երկրին. և բիւր չարեացն, զոր կրեցին։

Այն յետ այսորիկ խաղաց գնաց Թագաւորն Պարսից Շապուհ ամ իշխանութեանն զորաց իւրոց, և չոգաւ ել յԵրկիրն Հայոց. և առաջնորդ ունէր ընդ իւր զԱհան 'ի Մամիկոնեան տոհմէն, և զԵրուժան յԱրծրունեաց տոհմէն։ Այս հասեալ ասպատակէին յԵրկիրն Հայոց, և առնուին զամ գերին 'ի մի վայր ժողովեցին։ Այս բազումք 'ի նախարարացն Հայոց Թողուին զկանայս իւրեանց և զորդիս և զընտանիս, և փախեան ընդ այս ընդ այն գնացին։ Իսկ զամ կանայս նախարարացն Հայոց, զոր Թողին և փախեանն, ասպատակն ժողովէր. և ածին զնոսա առ Շապուհ արքայ Պարսից։

Իբրև էր բանակն Շապհոյ Թագաւորին Պարսից 'ի գաւառն Բագրեւանդայ յաւերս քաղաքին Օարեհաւանի, զոր յառաջնումն եկեալք զորքն Պարսից աւերեցին, և ածին ժողովեցին առաջի Թագաւորին Պարսից զամ գերին մնացորդաց աշխարհին Հայոց, ապա հրաման տայր Թագաւորն Պարսից Շապուհ, զամ այր 'ի չափ հասեալ կոխան արարեալ փղաց, և զամ զկին և զմանուկ հանել ընդ ցից սայլից։ Հազարք հազարաց և բիւրք բիւրուց սպանին, զի ոչ գոյր Թիւ կամ համար սպանելոցն. և զկանայս ազատացն և նախարարացն զփախուցեալոցն հրաման տայր ածել յասպարէզն՝ որ էր 'ի Օարեհաւան քաղաքի։ Այս հրաման տայր հոլանել զամ ազատ կանանին, և նստուցանել աստի անտի ասպարէսին. և ինքն Շապուհ արքայ հեծեալ 'ի ձի, շաւակի անցանէր առ կանանոնն. և որ յակն գային, մի մի 'ի նոցանէ պղծեալ 'ի խառնակութեան տանէր առ ինքն։ Վասնզի մեծ յասպարէսն հարեալ էր խորանն, յոր առեալ մտանէր գործել զանօրէնութեան. և այն

պէս զբաղում աւուրս առնէր զայն ընդ կանայսն։ Եւ զազգն Միւնեաց տոհմին զամ զայր 'ի չափ հասեալ կոտորեցին, և զկանայս սպանին. և զամ մանր մանկտիսն նեղբինիս հրամայէր առնել, և խաղացուցանել յերկիրն Պարսից։ Եւ առնէր զայս ամենայն վասն վրիժուցն Ինդուկայ, որ եղև պատերազմ ընդ Ներսեհ արքայ Պարսից։

Եւ տայր հրաման Շապուհ արքայն Պարսից զամուր ամուր տեղիսն Հայոց բերդս շինել, հրամայեաց և բերդակալս կացուցանել։ Եւ զազատ կանանին անդէն 'ի բերդեանն բաշխէր և թողոյր. զի եթէ ոչ արք նոցա եկեսցեն նմա 'ի ծառայութիւն, սպանցեն զկանայս նոցա բերդակալքն՝ առ որս եթող զնոսա։ Եւ եթող յաշխարհին զՕյիկն և զԱրիէնն, զնոցա իշխանս զօրաք բազմաք. և զիշխանութիւն ինացորդացն էտ 'ի ձեռս Վահանայ և Մերուժանայ, և ինքն գնաց յԱտրպայական։

ԳԼՈՒԽ ԾԹ.

Յաղագս թէ իբրև մնացին Վահան և Մերուժան, թէ զինչ շատ չարիս գործեցին ընդ երկիրս Հայոց. և կամ զիարդ սատակեցան Վահան և կինն իւր յիւրեանց որդւոյն։

Եղնուհեցեի Վահանն մամիկոնեան և Մերուժանն արծրունի, սոքա երկոքեան արք պիղծք անօրէնք էին, ապստամբեալք էին յուխտէ ճշմարտութենէն, և զանաստուածն Մազդեզանց աղանդն յանձն առեալ պաշտէին, սկսան այնուհետև յերկրին Հայոց աւերել զեկեղեցիս՝ զտեղիս աղօթից քրիստոնէից յամ կողմանս Հայոց՝ գաւառաց գաւառաց և կողմանց կողմանց։ Եւ նեղէին զբազում մարդիկ՝ զոր 'ի բուռն արկանէին, թողուլ զմաշտութիւն և 'ի պաշտօն դառնալ Մազդեզանցն։ Եւ յետ այսորիկ տային հրաման Վահանն և Մերուժանն, զամ կա-

նայս փախուցեալոցն զնախարարացն՝ որ Թողինն և զնա-
ցինն, տային հրաման 'ի բերդեանն զի նեղեսցեն զնո-
սա՝ դարձուցանել յօրէնս Մաղդեզանց. եԹէ ոչ առ-
նուցուն յանձն, սատակեսցեն զամենեսեան չարա-
չար։ Այլ բերդակալեանն յորժամ զայն հրաման ըն-
կալան, ամ ոք ո՛ ոք առ ուժեք էին՝ նեղեցին զնոսա
ըստ հրամանին տուեալոյ։ Մինչև իբրև ոչ մի ոք յանձն
առնուին ուրանալ 'ի քրիստոնէութենէն, չարամահ
սպանանէին զամենեսեան յամենայն 'ի բերդն՝ յորս
տուեալ էր զնոսա անդ։

Իսկ Վահանայ էր քոյրաԹիւ 'ի մամիկոնեան տոհ-
մէն, քոյր Վարդանայ, Համազասպուհի[1]. և էր նա
կին Գարեգնի տեառնն Մշտունեաց գաւառին։
Օսա եԹող և փախեաւ Գարեգին այր իւր 'ի ժա-
մանակին, յորում եկն Շապուհ արքայ Պարսից
յերկիրն Հայոց. իսկ զտիկինն Մշտունեաց 'ի միջ-
նաբերդն Վան բերդի, որ էր քաղաքն 'ի Ցոսբ գա-
ւառին։ Իսկ անօրէնն Վահան և Մերուժանն հրա-
ման տային բերդակալին՝ զի նեղեսցէ զկինն. եԹէ
ոչ առցէ յանձն զօրէնս Մաղդեզանցն, տայր հրա-
ման կախել զբարձր աշտարակէն և սպանանել։ Իբ-
րև ոչ առնոյր յանձն Համազասպուհի պահել զօ-
րէնս Մաղդեզանցն, հանէին 'ի բարձր աշտարակն՝
որ կայր 'ի վերայ բարձր գահոյն քարին, որ հային
'ի կողմն ծովակին 'ի գետոյ կուսէ. և մերկացուցին
զնա իբրև 'ի մօրէ. և արկեալ կապ զոտիցն, գլխի-
վայր կախեցին զնա զբարձուէն կուսէ. և այնպէս մե-
ռաւ 'ի կախաղանին։ Այլ էր նա սպիտակ մարմնով,
և պայծառ տեսանելոյն. կայր կախեալ յերևոյԹ
տեսիլ նշանակի, և փաղփաղէր մարմինն 'ի բարձուէն
զոր օրինակ ձիւն սպիտակութեան. և բազում մար-
դիկ ժողովէին տեսանել օր ըստ օրէ, զի իբրև սքան-
չելի ինչ երևէր յաշխարհին։ Յայս տեսիլ տիկնոջն
Համազասպուհեայ՝ էառ կին մի դայեակն նորին,
ագաւ նա պարէգօտ մի՝ զոր անակիւղս[2] կոչեն, և
էած գօտի ընդ մէջ իւր. և կայր առ բարձր գահոյն
քարին 'ի ներքոյ աշտարակին՝ զորմէ կախեալ էր

1 Յամ օրինակս Հ Համազասպուհի։ 2 Յերիս օրինակս անկիւղս։

զսանն իւր, մինչև կողոպտեցաւ՝ամ մարմինք դիոցն։ Այս որչափ 'ի վայր վայրէին[1] ոսկերքն, նա յիւր ծոցն ժողովէր բովանդակ զնամ զոսկերս սանին. և առեալ գնաց յիւրսն։

Այս այնչափ չար էին արքն երկոքին, զի անդամ իւրեանց ումեք ոչ ողորմէին. այլ անխնայութեամբ դատէին զօտարս և զիւրեանց ընդանիս։ Աստրուշանս շինէին 'ի բազում տեղիս, և զմարդիկ հնազանդէին օրինացն Մազդեզանց. և բազում յիւրեանց սեփհականսն շինէին ատրուշանս, և զորդիս և զազգայինս իւրեանց տային յուսումն Մազդեզանցն։ Այպա որդի մի Վահանայ, անուն Սամուէլ, էհար սատակեաց զՎահան զհայրն իւր, և զՈրմիզդուխտ զմայրն իւր՝ զքոյր Շապհոյ Պարսից թագաւորին. և ինքն փախստական ընկեր յերկիրն Հայաստեաց։

1 'Ի միում օրինակի 'ի վայր վարէին։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԲՈՒՔԸՆՏԵԱՑ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ
ԶՈՐ ԱՍԵԼՈՑ ԵՄ ԿԱՐԳԵԼ, ԶԴՊՐՈՒԹԻՒՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ
ԿԱՆՈՆ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ ՄԱՏԵՆԻՑ

Ա. Յաղագս Թագաւորելոյ Պապայ յերկրին Յունաց, և գալոյ 'ի Հայս, և յինքն ունելոյ զաշխարհն. և կամ որ միանգամ գործեաց որպէս յաջողեցաւ։

Բ. Յաղագս Մուշեղայ զօրավարին Հայոց՝ թէ որպէս անկաւ 'ի վերայ բանակին Շապհոյ Թագաւորին Պարսից, և եհար զնոսա 'ի հարուածս անհնարինս, մինչ զի միաձի Շապուհ Ճողոպրէր։

Գ. Յաղագս Հայր մարդպետի, թէ որպէս սպանանել հրամայեաց Թագաւորն Պապ։

Դ. Յաղագս դարձեալ պատերազմին, որ եղև 'ի Բագաւանի յաւանին 'ի Բագրաւանդ գաւառին ընդ Պապ Թագաւորին Հայոց և ընդ զօրսն Պարսից։

Ե. Յաղագս միւսոյ պատերազմին ընդ Հայս և ընդ Պարս 'ի Գանձակ Ատրպայականի. ևս վասն գուշակութեան Ուռնայրի, զի յայնմ և յաղթութի լինէր Հայոց։

Զ. Յաղագս Դղակայ մարդպետի, որ կացուցին սահմանակալ. և նա խորհրդակից եղեալ Պարսից Թագաւորին, թէ որպէս խոստանայր մատնել զարքայն Հայոց. և վասն մահուն Դղակայ 'ի Պապայ արքայէ։

Է. Յաղագս մահուն Արշակայ Թագաւորին Հայոց, թէ զիարդ մեռաւ յերկիրն խուժաստանի յԱնուշ բերդի ինքնին ձեռօք, և Դրստամատն լինէր պատճառք մահու նորա։

Ը. Յաղագս թէ զիարդ լուեաց պատերազմ 'ի կողմանցն Պարսից. ապա սկսաւ սպարապետն Մուշեղ ոգորել ընդ այնոսիկ, որք միանգամ ապստամբեցին 'ի Թագաւորէն Հայոց. զբաղումս կոյս կոյս հարկանէր մեծաւ պատերազմաւ, նախ յաղագս տան արքային Հայոց՝ որ յԱտրպայականին էր։

Թ. Յաղագս Նոշիրականի։

Ժ. Յաղագս Կորդուաց և Կորդեաց և Տմորեաց։

ԺԱ. Յաղագս Մարաց։
ԺԲ. Յաղագս Արծխեաց։
ԺԳ. Յաղագս Աղուանից։
ԺԴ. Յաղագս Կասբից։
ԺԵ. Յաղագս Վրաց։
ԺԶ. Յաղագս գաւառին Աղձնեաց։
ԺԷ. Յաղագս մեծաց Ծոփաց։
ԺԸ. Յաղագս Անգեղ տանն։
ԺԹ. Յաղագս գաւառին Անձտայ։
Ի. Յաղագս Մուշեղի սպարապետին Հայոց։
ԻԱ. Յաղագս եպիսկոպոսապետին Հայոց Ներսիսի, թէ որպիսի այր, կամ զինչ շատ գործեաց սքանչելիս։
ԻԲ. Յաղագս թագաւորին Պապայ, թէ զիարդ էր դիւաք, կամ որպէս անօրէն։
ԻԳ. Յաղագս յանդիմանութեն սրբոյն Ներսէսի, զի հանապազ թշնամի էր թագաւորին Պապայ վասն մեղաց։
ԻԴ. Յաղագս մահուն մեծի եպիսկոպոսապետին Ներսիսի 'ի թագաւորէն Պապայ, որպէս կամ զիարդ սպանաւ 'ի նմանէ։
ԻԵ. Յաղագս տեսլեանն, որ երևեցաւ արանցն սրբոց Շաղիտայի և Եփիփանու, մինչդեռ նստէին 'ի լերինն։
ԻԶ. Յաղագս Շաղիտայի սրբոյ։
ԻԷ. Յաղագս Եփիփանու սրբոյ։
ԻԸ. Յաղագս մեծամեծ նշանաց սքանչելեացն՝ որ երևեցաւ յայ 'ի Մամբրեա յետ գնալոյն անտի Եպիփանու։
ԻԹ. Յաղագս Յուսկայ՝ որ էր 'ի տոհմէն Աղբիանոս եպիսկոպոսի, զոր կացոյց փոխանակ Ներսիսի թագաւորն Պապ յիւրոց կամաց, առանց մեծի եպիսկոպոսապետին Կեսարու. և վասն այնորիկ յայնմ հետէ բարձաւ իշխանութիւն հայրապետացն Հայոց զեպիսկոպոսս ձեռնադրել։
Լ. Յաղագս սգոյն՝ որ սգային զհայրապետն Ներսէս, և լինէին զնմանէ կաթոգին։
ԼԱ. Յաղագս թէ որպէս զկնի մեռանելոյն հայրապետին Ներսիսի, թէ որպէս 'ի նախանձ մտեալ տապալեաց թագաւորն Պապ զամ զեղեալսն կրօնսն կանոնիցն, որ ինչ միանգամ եղան 'ի Ներսիսէ առ կենդանութիւն նորա 'ի նմանէ։
ԼԲ. Յաղագս թագաւորին Պապայ, թէ որպէս խոտորեցաւ 'ի թագաւորէն Յունաց, կամ որպէս սպանաւ 'ի զօրագլխացն Յունաց։
ԼԳ. Յաղագս որ ինչ խորհեցան իշխանքն Հայոց. ապա անցին կացին լուռ։
ԼԴ. Յաղագս թագաւորելոյն Վարազդատայ 'ի վերայ երկրին Հայոց յետ Պապայ։
ԼԵ. Յաղագս թէ որպէս 'ի բանս չարախորհուրդս և անմիտ

մարդկան եկեալ Թագաւորն Վարազդատ, և զզօրաւարն Հայոց զՄուշեղ սպանանէր։

ԼԶ. Յաղագս անմտութեան կարծեացն ընդանեացն Մուշեղի և այլ մարդկան։

ԼԷ. Յաղագս գալոյն Մանուէլի 'ի գերութենէն Պարսից, և խնդրելոյ զվրէժն Մուշեղայ, և հալածելոյ զԹագաւորն զՎարազդատ յերկրէն Հայոց։

ԼԸ. Յաղագս թէ զիարդ սպարապետն Հայոց Մանուէլ հանդերձ ամ աշխարհաւն ձեռս ետ 'ի Թագաւորն Պարսից, և մարզպան և աշխարհակալ աշխարհին Հայոց ած զառաջինն 'ի Թագաւորէն Պարսից զՍուրէն, և մեծաւ պարգևօք մեծարեցաւ 'ի նմանէն. կամ որպէս խորամանկութիւն Երուժանայ արծրունւոյ եղև ապրստամբութեն, և պատերազմունք յուզեցան։

ԼԹ. Յաղագս Գումանդ Շապհոյ, զի առաքեցաւ 'ի Թագաւորէն Պարսից տալ պատերազմ ընդ Հայս, և սատակեցաւ 'ի Մանուէլէ զօրքք իւրովք հանդերձ։

Խ. Յաղագս Վարազայ, թէ որպէս կամ զիարդ առաքեցաւ 'ի Թագաւորէն Պարսից, և սատակեցաւ 'ի Մանուէլէ իբրև զառաջինն։

ԽԱ. Յաղագս Մռկանայ, որ առաքեաց դարձեալ Թագաւորն Պարսից 'ի վերայ երկրին Հայոց և 'ի վերայ Մանուէլի զօրքք բազմաք, և սատակեցաւ 'ի Մանուէլէ իբրև զառաջինն։

ԽԲ. Յաղագս խաղաղութեան Հայոց ամս եւթն։

ԽԳ. Յաղագս Երուժանայ արծրունւոյ, որ հանդերձ զօրքն Պարսից եկն 'ի վերայ Մանուէլի, և սատակեցաւ 'ի նմանէ։

ԽԴ. Յաղագս թէ զիարդ Թագաւորեցոյց Մանուէլ մեծ սպարապետն զմանուկն Արշակ. ապա և ինքն Մանուէլ մահու մեռանէր։

ԲՈՒՋԱՆԴԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆՔ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐՔ ՄԱՏԵՆԻՑ ՏԱՆ ՈՐԴԻՈՑՆ ԹՈՐԳՈՄԵԱՆ ԻՇԽԱՆԻՆ ՀԱՅՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս Թագաւորելոյ Պապայ յերկրին Յունաց, և գալոյ 'ի Հայս, և յինքն ունելոյ զաշխարհ իւր. և կամ որ ինչ միանգամ գործեաց, և յաջողեցաւ նմա։

Զոր յետ այսր ամի Մուշեղ որդի Վասակայ ժողովեաց զամենայն ազատագունդ մարդկանն մնացելոյն՝ որ միանգամ մնացեալ էին, և չոգաւ հանդերձ նոքօք առ Թագաւորն յունաց։ Եւ եցոյց ըզպաղատանս աշխարհին Հայոց, և զամ անցս տառապանաց՝ որ անցեալ էր ընդ նոսա, և խնդրեաց 'ի կայսերէն զՊապ զորդի Արշակայ Թագաւոր 'ի վերայ Հայոց աշխարհին։ Մեծ Թագաւորն Յունաց Թագաւորեցոյց զՊապ զորդին Արշակայ 'ի վերայ աշխարհին Հայոց, որպէս և խնդրեաց նա 'ի նմանէ. և մեծապէս թիկունք լինէր արքային Յունաց, և զՏերենտ անուն ստրատելատն և զԱզէ ոմն կոմս արձակէին ընդ արքային Պապայ յերկիրն Հայոց վեց հարիւր բիւրու։

Եւ եկին հասին 'ի սահմանս Հայոց. և Մուշեղ լինէր զօրավար սպարապետ Հայոց փոխանակ Վասակայ հօր իւրոյ։ Եւ գային 'ի մի վայր ժողովէին ամ ցրուեալք փախուցեալք թագուցեալք, որ էին յերկրին Հայոց. գային և 'ի մի վայր բովանդակէին, և լինէին 'ի խնդիր սրբոյն մեծի հայրապետին Ներսէսի թագաւորն և ամ մարդիկ աշխարհին Հայոց, մեծամեծք գաւառակալք և գաւառատեարք։ Ոչք եկեալք ժողովեալք, զկաթողիկոսն զմեծն Ներսէս խնդրէին. զի գիտէին թէ նա կարող է աղօթս առնել, և խնդրել յայ վասն շինութեան ամ աշխարհին Հայոց, և փրկել 'ի թշնամեացն. և դարձեալ զի՛նչ և խնդրեր յայ, տայր ածնման. և միւս ևս, զի իմաստութեամբ ինն կարէր սոցա զօգտակար խրատն մատուցանել։ Վասն այսորիկ ոչ էթէ փոքր ինչ էր խնդիրն այնպիսւոյն առն լինել, որ կարէր նոցա զօգուտ խրատու իմաստութեան շնորհել, և ըստ ժամանակին դիպացն պատահելոյ՝ միտս օգտակարս դնել, որովք զձմանապարհս՝ որ կայրն առաջի՝ գնալ մարթասցեն։

Այսպա ինքն թագաւորն Պապ երթայր հասանէր գտանէր զեպիսկոպոսապետն Ներսէս հանդերձ աւագայնովն Հայոց. աղաչէր զնա, զի հայր Հայոց ամ օգտի խրատու առաջնորդ՝ և խնդրեսցէ ևս վասն նոցա։ Այսպա մեծաւ ջանիւ հազիւ հաւանեցուցին զնա երթալնմա ընդ նոսա 'ի բանակն արքունի. զի յաւուրց ժամանակին 'ի մահուանէն Վնեալոյ մինչև յայն ժամանակն թագաւորութեն Պապայ ոչ էր երթեալ նա 'ի բանակն արքունի։ Այսպա յայնմ ժամանակի մեծաւ աղաչանօք տարան զնա 'ի բանակն արքունի ընդ ինքեանս. և նա էր նոցա վերակացու և խրատատու, կարգիչ և առաջնորդ. և հանապազ խնդրէր վասն նոցա յայ։ Եւ էր իմաստութեամբ իրաց առաջնորդ, և հանապազ կցորդ հոգւոյ և բարձիչ վշտաց աղօթիւք իւրովք. և յամենայնի ամիւ երբեք հայր երևեալ։

Այսպա կարգէր կազմէր յօրինէր Մուշեղ սպարապետ զամ զգունդս Հայոց զօրացն, և առնէր հանդէս ամ զօրացն գնդին՝ որ հասին 'ի ձեռս նոր տասն հազար։ Եւ ածէր զամ հանդէսն կարգեալս և պատ-

բաստեալս վառեալս 'ի պատերազմ, զգրօշս փողփո-
ղեալս և նշանս արձակեալս. և յուցանէր զհանդէս
զօրացն Հայոց սպարապետն Հայոց Մուշեղ առաջի
իւրեանց Թագաւորին Պապայ, և մեծի քահանայա-
պետին Ներսէսի, և առաջի Տերենտի և Գէլի զօ-
րագլխացն Յունաց։ Եւ մեծ շնորհակալութիւն առ-
նէր նմա Թագաւորն Պապ Հայոց, և մեծամեծ
պարգևս շնորհէր զօրավարին Մուշեղի. և սոյնպէս
զօրագլուխքն Հոռոմոց շնորհակալ լինէին նմա։
Սոյնպէս և եպիսկոպոսապետն Ներսէս օրհնէր զզ-
րավարն Մուշեղ, և ասէր. Տէր Աստուած օրհնեսցէ զքեզ,
և յաջողեսցէ քեզ, և տացէ քեզ զյաղթութիւն շնորհս
զամաւուրս կենաց քոց. 'ի ձեռն քո և 'ի ձեռն ազ-
գի քո փրկեսցէ զերկիրս Հայոց մինչև յաւիտեան։

Այսպէս զօրավարն Հայոց Մուշեղ գունդ կազմեաց
պատրաստեաց, և յառաջեաց հանդերձ Հայոց գէն-
դասն. առաջապահ անցանէր առաջի Թագաւորին
Պապայ և զօրացն Յունաց կայսերական գնդիւն։
Այսպէս 'ի Դարանաղեաց գաւառին լինեալ յարձա-
կեցաւ Մուշեղն։ Իբրև գայր [1] առաջապահն հասա-
նէր 'ի միջնաշխարհն Հայոց, սպանանէր Մուշեղ
զզօրագլուխն Պարսից զԱրէնն և Օ ին, և զամ
զզօրսն արկանէր 'ի սուր սուսերի իւրոյ, և ոչ մի զոք
ապրեցուցանէր։ Եւ մինչև 'ի բուն 'ի սահմանսն 'ի
Դանձակ Աստրպատականի զերկիրն յիւր վտարեալ,
բռնացեալ ունէր։

Եւ եկն եմուտ Թագաւորն Պապ յերկիրն Հայոց,
և Թագաւորեաց 'ի վերն. և Թափեաց յինքն զա-
մուր ամուր բերդիցն, զոր կալեալ էր պարսկացն. և
բերդն Դարօնից, որ է յերկին Կոգայ, ուր կային
գանձք արշակունեացն սաստիկ յոյժ։ Բանդի դի-
պեցան մոերիմք բերդակալքն. զի Թէպէտ 'ի ժա-
մանակէն՝ իբրև տարան զԹագաւորն Հայոց զԱրշակ
'ի Պարսս՝ յայնմ հետէ ժամանակէ մարտեան ընդ
բերդին ընդ այնմիկ պարսիկք, և ոչ կարացին առ-
նուլ, մինչև եկն Պապ Թագաւորն յերկիրն Հայոց.
զի պահեցաւ գանձն և եհաս ամբողջ 'ի Պապ Թա-

1 'Ի ջրոս օրինակս Մուշեղն իբրեւ գայլ։

գաւորն մինչև եկն։ Եւ զօրն Յունաց յԱնդ և 'ի Խախիշն ընդ ամ երկիրն Հայոց բաշխեին ընդ ամ գաւառսն. բայց միայն Մերուժանն չարագործ փախ. չեր միաձի։

Իսկ Մուշեղ զօրավարն Հայաստանեաց շրջեր ընդ երկիրն, և աւերեր զատրուշանսն Մազդեզանցն։ Իսկ զՄազդեզունսն, որ միանգամ 'ի բուռն արկին, զամենեսեան տայր հրամայն սպարապետն Մուշեղ ունել և հրով խորովել։ Եւ բազում բերդակալս բերդացն չարամահս առնէին, և զբազում պատուաւոր տեարս՝ որ պատուականք էին առաջի Թագաւորին Պարսից՝ ուներ ձերբակալս Մուշեղ, և տայր մոր. թել և ընուլ խոտով և կանգնել 'ի վէր պարսպացն։ Ընդ բազում տեղիս զայս առներ 'ի վրէժս հօրն իւ. րոյ Վասակայ։

Եւ՝ շինէին զամ աւերեալսն 'ի Թշնամեացն, և զե. կեղեցիսն նորոգէցին. և Թագաւորութիւն հաղ քան զհաղ նորոգեր, և իրք ժամանակին հաղ քան զհաղ յառաջադէմ աջողէին։ Եւ նոքն Ներսէս իմաստուն հայրապետն առաջնորդեր և լուսաւորեր, խրատեր և կարգեր և շիներ աղքատաց հանգիստ, ոչ և ինքն 'ի քնէ իսկ սովոր էր. և զվարս Թագաւորութեան իսկ յօրիներ ամենաբարի կրօնիւք, ոչ և տեսեալ էր իւր առ հնոքն Թագաւորքն։ Եւ առաւել զկարգս եկե. ղեցւոյ պաշտամանն եպիսկոպոսաց երիցանց և սար. կաւագաց, և շինուածս եկեղեցւոյ և վկայանոցաց զանն նորոգեաց ուսոյց և յարդարեաց։

Օ օրավարն Հայոց Մուշեղ զգունդ իւր կազմեր, և երթայր 'ի սահմանսն՝ կալանդ, զգուշացեալ ըզ սահմանաքն երկրին իւրոյ՝ պահել զիւր աշխարհն հրամանաւ իւրոյ Թագաւորին Պապայ։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս զօրավարին Մուշեղայ Հայոց, թէ որպէս անկաւ 'ի վէր բանակին Շապհոյ Թագաւորին Պարսից, և եհար զնա 'ի հարուածս անհնարինս, մինչ զի միաձի Շապուհ ՃՈՂՈՊՐԵՐ։

Զգաս Մուշեղ որդի Վասակայ, տարատեսլական Հայոց մեծաց, ընդրեաց իւր արս ընտիրս միամիտս ազատս ազգայինս քառասուն հազար, միաբանս միակամս, և կազմեաց զնա ձիով և թոշակաւ և զինու. և առեալ զնա ընդ իւր, երթալ նստել 'ի սահմանս Արտաշատացւոյ, և պահել զաշխարհն Հայոց։ Այսպէս յայնմ ժամանակի կազմեաց պատրաստեցաւ Շապուհ արքայ Պարսից ամ կազմուք զօրովք իւրովք, եկն եհաս յերկիրն Արտայականի. և Մերուժանն առաջնորդ գնդին բանակի նր, և բուն բանակն ուրեմն Թագաւորին 'ի Ծաւրեշն բնակեալ էին։

Այս հասանէր սպարապետն զօրավարն Հայոց Մուշեղ, անկանէր 'ի վէր բանակին քառասուն հազարաւ, և անդէն ձեռն 'ի գործ արարեալ կոտորէր։ Այսպէս միաձի մաղապուր Թագաւորն Պարսից Շապուհ ՃՈՂՈՊՐԵԱԼ փախչէր. և զամ կարևան բանակին առհասարակ ընդ սուր հանէր Մուշեղ հանդերձ զօրօքն Հայոց։ Օ՛ի զբազումն կոտորէին, և զբազումն յաւագանոյն Պարսից ձերբակալս առնէին, և առնուին զգանձս Թագաւորին Պարսից յաւարի. և ըմբռնէին զտիկնանց տիկինն հանդերձ այլովք կանամբքն։ Այս զամ մաշկաւարզան 'ի բուռն արկանէր Մուշեղ սպարապետն, և զամ աւադանին՝ արս իբրև վեց հարիւր՝ հրամայէր մորթել զօրավարն Հայոց Մուշեղ, և ընուլ խոտով. և տայր բերել առ Պապ արքայն Հայոց։ Ընէր զայս 'ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ։

Դայց զկանայսն Շապհոյ Թագաւորին Պարսից ոչ ումեք ինչ թոյլ տայր Մուշեղ զօրավարն Հայոց անարգել ինչ զնա ումեք. այլ ժանաւարս տայր նց կազմել ամենեցուն, և հանեալ արձակէր զամենեսեան զհետ առն նց Շապհոյ արքայի։ Այս 'ի պարս

կացն ընդ նոս արձակէր, զի երթիցեն առ Շապուհ թագաւորն Պարսից ողջս և անարատս։ Իսկ թագաւորն Պարսից զարմացեալ ընդ բարերարութիւնն Ս՝ուշեղի և ընդ քաջութիւնն և ընդ ազատութիւնն, զի ոչ արար ինչ նմա յաղագս կանանցն թշնամանս։ Այս էր 'ի ժամանակին յայնմիկ երիվարն Ս՝ուշեղի, Ճերմակ ձի մի. իսկ թագաւորն Պարսից Շապուհ յորժամ առնոյր գինի 'ի մատուանն ըմպել, յորժամ ուրախութիւն իւրոյ խրախուէս առնէր զօրացն իւրոց, ասէր. Ճերմակաձին գինի արբցէ։ Այս ետ նկարել զտաշտ 'ի պատկեր զՍ՝ուշեղ Ճերմակաւն. և 'ի ժամ ուրախութեն իւրոյ դնէր զտաշտն առաջի իւր, և յիշէր հանապազ զնոյն բանս ասելով թէ Ճերմակաձին գինի արբցէ։

Ա՛յլ մուշեղ և ամ զօրքն Հայոց անչափ առին զաւար 'ի բանակէն Պարսից, և անչափ լցան գանձօք և ստացուածովք. և բազում աւարամանն Պապայ պահէին թագաւորին իւրեանց. և զօրացն Հայոց՝ որ անդէն առ թագաւորին Պապայ էին մնացեալ՝ հանին աւարամանն, և զօրավարացն Յունաց՝ որ էին առ թագաւորին Հայոց. սոյնպէս և ամ զօրացն տային բաշխիչ 'ի մեծամեծ աւարացն ածելոցն։ Ա՛յլ իբրև դարձան զօրքն Հայոց յաշխարհն իւրեանց, բազումք 'ի զօրացն Հայոց ամբաստանէին առ թագաւորին Պապայ զՍ՝ուշեղէ զսպարապետն, թէ ընդէ՞ր արձակեաց զկանայս թագաւորին Պարսից զթշնամւոյն մերոյ։ Այս թագաւորին Հայոց Պապայ վո՛ւ այսր իրաց ոչ ինչ սակաւ լինէր թշնամութիւն ընդ Ս՝ուշեղի մինչև 'ի բազում ժամանակս։

Գ. ԼՈՒԽ Գ.

Յաղագս Հայր մարդպետին, եթէ որպէս սպանանէ Հրամայեաց Թագաւորն Պապ։

Ապա պատմեցաւ Թագաւորին Պապայ յաղագս օրերացն՝[1] զոր եդ Հայր մարդպետն տիկնոջն Փառանձեմայ, մօր Թագաւորին Պապայ, Թշնամանս ձաղանաց 'ի բերդարգել պաշարմանն. զի իբրև զբոզ մի, այնպէս Թշնամանեաց զնա 'ի ժամանակի՝ իբրև եմուտ անդր գաղտուկ, և եդ անարգանս տիկնոջն, և եկն եալ անտի և փախեաւ. Եւ զայս ամ զրոյց Թագաւորին։ Ապա մինչդեռ մարդպետն Հայր զիւրով իշխանութեամբ շրջէր յերկրին Տարօնոյ, և Մուշեղ սպարապետն Հայոց էր 'ի նմին գաւառին յիւրում բերդին՝ որում Ողական կոչէն, որ կայ 'ի վերայ գետոյն Եփրատայ, եկն Եհաս մի դեսպան յարքայէն Պապայ առ զօրավարն Հայոց Մուշեղ. և ունէր առ նա հրովարտակ, և գրեալ էր 'ի հրովարտակին անդր հրաման առ նա, զի չարամահ սատակեսցէ զՀայր մարդպետն։ Եւ նա իբրև զայս հրամանս ընկալեալ 'ի ձեռն առնոյր, յղէր առ մարդպետն Հայր դաւով, և մեծարանաց պատճառանաւ առ ինքն կոչէր յՈղական. և էին աւուրք ձմերայնոյ, և սաստկացեալ կցեալ էր գետն Եփրատ։ Ապա կոչեալ եղև առ նա Հայր մարդպետն իբրև 'ի պատիւ մեծարանաց. եկն եմուտ մարդպետն 'ի բերդն յՈղական։ Եւ հրաման զօրավարն Մուշեղ զօրականացն ունել զնա, և մերկանալ իբրև 'ի մօրէ, և կապել ըզձեռս նր 'ի ներքոյ ծնկաց նր, և իջուցանել զնա 'ի գետն, և դնել 'ի վերայ սառինն կցելոյ գետոյն. և սատակեցաւ անդէն։ Եւ եղև 'ի վաղիւ անդր չոգան տեսին, զի ուղիղ գլխոյն 'ի ցրտոյն վայրեալ 'ի բաց իջեալ թափեալ էր ընդ քիթս նորա։ Եւ փոխանակ 'ի նորա տեղի Հայրուէ մարդպետուէն զԱրզղակ ոմն անուն, որ յաւուրս Աբշակայ Թագաւորին

1 Յօրինակի միում օրինացն։

կամ Տիրանայ հօր նոր գամու միջ լեալ նոյն գործ մարդպետութեան։

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս գալեալ պատերազմին, որ եղև ի Բագաւան յաւանին Բագրաւանդ գաւառին ընդ Պապ Թագաւորն Հայոց և ընդ զօրսն Պարսից։

Այն յետ այսորիկ Թագաւորն Պարսից կրկներ լիներ զօրաժողով ամուժով և ամ զօրութիւն իւրով. խաղայր գնայր ամ զօրքն իւրովք հասաներ յաշխարհն Այրարատեանի։ Եւ ինքն անդր դադարեր սակաւուք, և զամ զօրացն զբազմութիւն առաքեր ի վր Թագաւորին Պապայ ի պատերազմ։ Եւ եկեալ զօրքն Պարսից ասպատակ առնէին և ի միջնաշխարհն Հայոց. ապա և Թագաւորն Հայոց Պապ զօրաժողով առնել հրամայեր ի Բագաւանն։ Եւ զօրքն Յունաց, որ էին յԱրմանդին ի Բախշանն [1], ի մի վայր ժողովեցան առ Թագաւորն Պապ, և ածին փոս զբանակաւն իւրեանց մօտ ի լեառնն ի Ալպատ մերձ ի գետն Եւփրատ, և կազմեալ պատրաստեալ կային գործոյ Ճակատուն։

Այսպա զօրավարն սպարապետն Հայոց Մուշեղ ժողովեր զամ զօրսն Հայոց աւելի ևս քան զընտսուն հազար, և կազմէին պատրաստութիւն։ Իսկ իբրև զօրահատոյցն առներ Շապուհ Պարսից Թագաւորն զզօրս իւր ի վր աշխարհին Հայոց և ի վր զօրացն Յունաց. Ուռնայր արքայ Աղուանից անդ էր առ Թագաւորին Պարսից։ Այսպա յառաջ կայր և խընդրեր պարգևս Ուռնայր ի Շապհոյ արքայէն Պարսից, և ասէր՝ Թէ կամ լիցի քեզ, արանց քաջ [2], զի և ինձ պարգև հրաման տացես, զի Հայոց գնդին Պապայ արքային ես ինձէն ելից իմով գնդովս նահատակ։ Զի Աղբեաց գնդին պատեհ է դիպան ելանել

1 Յամ օրինակս ի Բաղչանն։ 2 Յամ օրինակս արանց քաջաց։

զօրայն Յունաց, իսկ ես իմով գնդաւս Հայոց իշ-
խանացն ելից։ Եւ Շ ապուհ Թագաւորն հաճեցաւ,
և շնորհ կալաւ, և հրամայեաց։ Բայց Մերուժա-
նայ արծրունւոյ պատասխանի տուեալ Ուռնայրի,
ասաց. Աստ արկեր զգաղիւ գիրկս. բայց թէ ժողո-
վել կարիցես, մեծ զարմանք իցեն։ Եւ գաղտուկ
խորհրդով զայս գուշակութիւն Մերուժանն 'ի ձեռն
հրեշտակի առ Մուշեղ զօրավարն Հայոց հասուցա-
նէր՝ թէ գիտեա և պատրաստեաց, Մուշեղ. զի մե-
ծաւ պարծանօք պարգև խնդրեալ է զձեզ Ուռնայրի
արքային Աղուանից. արդ գիտես զինչ գործիցես։

Բայց մինչ դեռ խօսեցեալ գային զօրքն Պարսից
'ի վր Հայոց, և Ուռնայր արքայ Աղուանից իւրով
գնդաւն ընդ նմա, խօսէր Թագաւորն Աղուանից ընդ
այնոսիկ՝ որ ընդ իւրն էին. ասէր. Յանձն լիցի ձեզ,
յիշելով 'ի ժամանակի՝ երբև ձերբակալ արասցուք
զզօրսն Յունաց, զբազումս 'ի նոցանէն ապրեցուսջիք.
զի կալեալս կապեալս տարցուք յաղթանս [1] 'ի գործ
կաւագործութիւն գաղատոս որմաշէնս պիտոյից մերոց
քաղաքաց ապարանից և այլոց պիտոյից։ Ա.յլ երբև
եկին հասին մերձեցան 'ի միմեանս գունդքն երկո-
քեան Յունացն և Պարսիցն, և հանդերձեալք խառ-
նել ընդ միմեանս, ինքնին Թագաւորն Հայոց Պապ
վառեցաւ կազմեցաւ պատրաստեցաւ, և կամեցաւ 'ի
ճակատ ելանել։ Այս չառնոյր զայն նմա յանձն Տե-
րէնտն զօրավարն Յունաց, թէ 'ի ճակատ մտցէ. այլ
ասէ. Թագաւորն Յունաց զմեզ վա՞ր քո յղեաց, եթէ
երթայք ինա պահեցէք. արդ իցէ՝ թէ քեզ դէպ ինչ
տայցէ, մեք զմեր թագաւորն որո՞վ երեսաց տեսա-
նեմք, կամ զի՞նչ տայցեմք նմա պատասխանի եթէ
իցէ՝ և մեք աստի առանց քո ապրեսցուք և առ մեր
թագաւորն հասանեմք, և լինիցիմք այնուհետև գրէ
խապարտք առաջի մերոյ թագաւորին։ Ա.յլ արա
դու, արքայ, զոր մեք ասեմք քեզ. առ դու զեպիս-
կոպոսապետդ Հայոց զԱ.ներսէս, և եկ նիստ 'ի վր
Ա.պատ լերինն յամուր և յանկասկած տեղւոջ, և
՝որ արքեպիսկոպոսապետն Ա.ներսէս արասցէ աղօթս

1 Յօրինակի միւմ ;Աղուանս։

և խնդրեսցէ 'ի նմանէ, զի նոր տացէ մեզ զյաղթութիւն։ Եւ 'ի բարձուէն նայեսցիս, և տեսջիր զջան վաստակոց պատերազմին մերոյ զքաջութիւն և զվատութիւն, զոր առաջի քո գործեսցեն։

Այսպէս Թադաւորն Պարսից հաւանեցաւ բանիցս այսոցիկ. առ ընդ իւր զմեծ քահանայապետն Ներսէս, և ելանէր նստեր 'ի վերայ նպատակաւոր լերինն. և ամ զօրքն Յունաց և Հայոց իջանէին 'ի տեղի պատերազմին։ Այսպէս եկն և զօրավարն սպարապետն Հայոց Մուշեղ, և եբեր զնշանսն իւր և զգէնն առ Ներսէս եպիսկոպոսապետն, զի օրհնեսցէ զնա, և իջցէ 'ի պատերազմ։ Եւ 'ի ժամանակին յայնմիկ յիշեաց Թադաւորն Պարսից զՀին զրոյցսն, և ասէ. Յիշեցի ես զայն, զի բարեկամէ Մուշեղն Թադաւորին Պարսից Շապհոյ։ Ո՞չ այդ այն Մուշեղն է, որ արձակեաց զնշանսս Թադաւորին Պարսից Շապհոյ հանդերձ ժանուարօք և վաշտականօքն. և լուեալ ևս է իմ, թէ 'ի պարսիկս խօսի. արդ մի մոցէ դա 'ի Ճակատ։

Այսպէս զօրավարն Հայոց Մուշեղ բարեխօս առնէր առ Թադաւորն Պարսից զմեծ քահանայապետն Ներսէս։ Իսկ Թադաւորն Պարսից ասէ ցեպիսկոպոսապետն Ներսէս, թէ մի լինիր դու բարեխօս. զի իբրև իջանէ, 'ի զօրսն Պարսից անկանի։ Իսկ նա ևս քան զևս յաՃախէր մատուցանել զբարեխօսութիւնն։ Իսկ Թադաւորն, քանզի բանիւ ինչ ոչ անցանէր զնոր 'ի ժամանակին յայնմիկ, ասէ ցՆերսէս. Կամք քո կատարեսցին։ Բայց նախ երդումն տուր յաջ քո, զի մեզ մի ստեսցէ, և ապա արձակեսջիր 'ի պատերազմ։ Այսպէս կոչէն զՄուշեղ զառաջեաւ արքային, և եկն եպագ երկիր արքային. և մատուցեալ բուռն հարկանէր զաջոյ եպիսկոպոսապետին Ներսէսի, և երդնոյր։ Այսպէս և 'ի Թադաւորին Պարսից ձեռն արկանէր, երդնոյր և ասէր՝ թէ կեցից և մեռայց 'ի վերայ քո որպէս նախնիքն իմ 'ի վերայ նախնեացն քոց, որպէս և հայրն իմ 'ի վերայ հօրն քո Արշակայ, սոյնպէս և ես 'ի վերայ քո. բայց միայն չարախօսացն ունկն մի դնիցես։

Այսպէս օրհներ զնա քահանայապետն Հայոց Ներ-

սէս բազում օրհնութիւն։ Եպա Թադաւորն Հայոց Պապ զերիվարն զիւր և զիւր նիզակն հրամայեաց մատուցանել առն քաջի զօրավարին Մուշեղի. այլ նա ոչ առ. Իմոնն, ասէ, գործեցէք. ապա դու, արքայ, զինչ և տացես՝ 'ի ձեռս քո եմ։ Եւ զիւր նշանն և զզէնն մատուցանէր առ Ներսէս, զի օրհնեսցէ։ Եւ հեծանէր իւրով գնդաւն հանդերձ, և զամ ՃԱ կատն Հայոց յարդարեալ յաջմէ զօրացն Յունաց, յաջումն Թեւի նա խաղայր յառաջ։

Իսկ Թադաւորն Պապ և եպիսկոպոսապետն Ներսէս զիւր սէս կային 'ի վերայ Ապատ լերինն. և ելն Ներսէս զբազուկն հանապազատարածս համբարձեալ յերկինս, խնդրէր 'ի նոսէ՝ զի անխայեսցէ զոր 'ի յուխտ իւր և 'ի նոր եկեղեցիս իւր, զոր պատուական արեամբն իւրով ստացաւ. և մի՛ տալ զժողովուրդսն 'ի ձեռս անաւծ հեթանոսաց, զի մի՛ երբեք ասիցեն 'ի հեթանոսս՝ Թէ ուր է աստ նոցա։ Եւ մինչ դեռ նա զաղօթսն մատուցանէր առ աստ, խաղացեալ Ճակատեալ իբրև զհուր ամ զօրքն Հայոց ընդդէմ զօրացն Պարսից, իսկ գունդն մուշեղեան յառաջեալ քան զայլ գունդսն՝ յառաջամուխ տագնապեալ երթային. մինչ զի նայէր Թադաւորն և տեսանէր զի ըստ ակն անգանէին, մինչ զի ոչ երևէին Թադաւորին նշանքն Մուշեղի։ Իսկ իբրև չերևեալ սկսան նշանքն, աղաղակել սկսաւ Թադաւորն Պապ առ Ներսէս և ասէ. Դու խլեցեր այրեցեր զիս. զի ասացի ես քանս, մի՛ յղեր զայրն զայն 'ի գործ պատերազմիս. ահա 'ի զօրսն Պարսից անկաւ, և արդ մեծամեծ ինաս գործեաց։ Եւ ասէ եպիսկոպոսապետն Ներսէս. Մի՛, արքայ, մի՛ կարծեր. զի ոչ ստէ մեզ այրն այն. այլ տեսցես քեզէն զքաջութիւն նորա, զոր գործեսցէ ծառայ քո առաջի քո։

Իսկ Թադաւորն Պապ կարի ստիպէր առ եպիսկոպոսապետն Ներսէս ասել՝ Թէ ստէպ կաց յաղօթս և աղաչեա զնոր մինչ դեռ խառնուրդքս են։ Իսկ իբրև կարի ձանձրացոյց, ասէ եպիսկոպոսապետն Ներսէս ցԹադաւորն Պապ. Եթէ իցէ՝ ուղղեսցես զսիրտ քո առ նոր, զԹասցէ 'ի վերայ քո և 'ի վերայ աշխարհիս. և իցէ՝ Թէ սրբեսցես զքեզ 'ի պղծութէ զոր-

ծոց քոց, ընկալցի և ոչ թողցէ 'ի ձեռաց զքեզ, և
ոչ մատնեսցէ զքեզ 'ի ձեռն թշնամեացն քոց։ Իսկ
ես ո՞վ եմ, զի աղաչես դու զիս, իբրև եթէ ես այր
մի տառապեալ կարիցեմ հակառակ ընդդէմ կա-
մացն՝ զոր ինչ կամիցի առնել ՝ուծ՝ առնել առ նա ա-
զօթս, զի այնու շրջիցեմ զկամն նորա։ Այլ այն՝ որ
արար զամ յոչընչէ, և ունի զտիեզերս 'ի ձեռին իւ-
րում և զամ բնակիչս նորա իբրև զմարախ, որ չա-
փեաց զերկինս թզաւ և զերկիրս ՝ամ քլաւ իւրով, որ
եդ զլերինս 'ի կշիռս և եբարձ զդաշտս կշռորդաք, որ
գիտաց զիմաստուն ՝հօր իւրոյ և եղև նմա խորհրդ-
դակից, որ ընդ ՝հօրն առնէ զամ վՀիռ դատաստա-
նաց, դեռ այժմ իսկ զարևելս և զմուտս, զՀիւսիսսի
և զՀարաւ եդեալ 'ի կշիռս, և դեռ զկշիռսն 'ի վեր
ունի. և ըստ մի մի ծանրութեանն, յոր կողմ հակեսցէ
կշիռն մեզացն, ըստ այնմ և դատի զարարածս իւր։
Զի նա գիտէ զչափ արարածոց իւրոց գործոց, և
ըստ արժանի գործոց իւրեանց հատուցանէ նոցա. զի
դեռ այժմիկ ժամանակ է կշտամբութեանն և ժամանակ
յանդիմանութեանն և ժամանակ դատելոյ. զի դեռ աւա-
դիկ յայսմ ժամու ոչ մարդ ընդ մարդկան Ճակա-
տեալ պատերազմին, այլ դատաւորն դատաւորաց
յարեաւ դատել զերկիր։ Մարդ դեռ յայսմ ժամուս
ժամանակս դատաստանաց է, ո՞վ է որ կարէ իշխել
բանալ զբերան իւր առաջի նորա յայսմ ժամանակիս
և կամ ո՞վ է որ գիտէ զմիտս ՝ան, զի և խրատտու ևս
լինիցի նմա. զի ՝ամ ինչ 'ի նմանէն և 'ի նոյն և նովաւ
՝ամ. նմա փառք յաւիտեանս։ Զի թէ ըստ գործոց
մեզաց մերոց հատուցանէ մեզ ՝որ, մեզ ընդդէմ կա-
մաց նորա մի՛ լիցի երթալ, և խնդրել ինչ 'ի նմանէ.
այլ ասել՝ եթէ «Յերաւունս անցուցեր դու զայս ՝ամ
ընդ մեզ. արդար ես դու ՝որ, և ՝ամ գործք քո Ճշմա-
րիտ են։ Ճանապարհք քո ուղիղ են, և ՝ամ դա-
տաստանք քո ուղիղ են։ Զի զդատաստան արդա-
րութեանն ածեր 'ի վերայ մեր, ըստ ՝ամի զոր ինչ ածեր
'ի վերայ մեր. զի արդարութեամբ և յիրաւի ածեր 'ի
վերայ մեր վասն մեզաց մերոց։ Զի անօրինեցաք և
յանցեաք և ապստամբեցաք մեք 'ի քէն. մեղաք յամի
և պատուիրանայ քոց ոչ անսացաք։ Ոչ պահեցաք և

ոչ արարաք որպէս պատուիրեցեր մեզ, զի բարի գրա-
ցուք մեք 'ի քէն. արդ զե՞մ՝ զոր արարեր և զոր ինչ
ածեր 'ի վերայ մեր՝ արդար դատաստանաւ արարեր.
զի դատաստանք քո քաղցր են։ Արդ մի՛ մատներ ըզ-
մեզ 'ի սպառ վա՛ռ անուան քո, փրկեա զմեզ վա՛ռ սքան-
չելեաց քոց, և փառաւոր արա զանուն քո, ո՛ր. զի
մի՛ երբեք ամաչեսցին ոյք յուսացեալ լինին 'ի քեզ։
Ամաչեցեալ լցին բռնութիւնք նոցա, և ա՛մ զօրութիւնք
նոցա խորտակեսցին. ծանիցեն զի դու ես ո՛ր ա՛ծ մի-
այն, որ փառաւորեալդ ես 'ի վերայ ա՛մ տիեզերաց»։
Եւ յա՛մի ամենևին քո միայնոյ կատարեսցին կամք
քո ամենազօր, որ հզօրդ ես և կարող և արդար յա՛մի,
և սիրես ողորմել նեղելոց և տագնապելոց։ Օ՛գուտ
տուն մեր դու գիտես, ո՛ր, և պատրաստել մեզ որպէս
և քեզ հաճոյ իցէ. զի եթէ իցէ մեզ օգուտ նեղու-
թիւք, յաճախեա մեզ. և եթէ հաճոյ է առաջի քո
ողորմութի՛ն, ընդունեա մեզ։ Զ՛ի որպէս իցեն կամք
ո՛ն յերկինս, սոյնպէս և կատարեսցէ. և որով գաւա-
զանաւ կամիցիս խրատել, 'ի ձեռդ քո եմք յա՛մ ժամ։
Վա՛ւաւեա, ո՛ր, զանօրէնութի՛ս զմեզս և զյանցանս
ծառայից քոց. զի ո՞վ իցէ այն մարդն, որ ոչ յանցա-
նիցէ կամ մեղանչիցէ առաջի քո. զի ոչ ոք իցէ արդ-
դար 'ի վերայ երկրի, և ոչ ոք է մինչև 'ի մի։ Զ՛ի
դու միայն ես, որ առանց մեղացդ ես. և քո միայն
արդարութի՛ն, որ արարեր զմեզ յոչընչէ, և ածեր զմեզ
յայս կենդանութի՛ն, և ցուցեր մեզ ճանապարհս կե-
նաց և փրկութի՛ն, և զհողս այսպէս իմաստունս և խօ-
սունս արարեր. և եղեր ընդ մեր փրկանք, զի անմա-
հութի՛ն վիճակին հասուսցես զմեզ։ Յիշեա զեկեղե-
ցի քո՝ զոր քո՝ որ արեամբդ ստացար, զի մի՛ զնուի-
րեալսն քեզ 'ի ձեռս շանց մատներ[1]. այլ յամենայնի
է ողորմութի՛ն քո, դարձցի սրտմտութի՛ն քարկուե՛ քո
յուխտե՛ քումմէ, և փրկեա զեկեղեցի քո, ո՛ր ա՛ծ մեր։

Արդ մինչ դեռ կայր 'ի վերայ լերինն, զայս և այս
պիսի և որ ինչ նման է այս բանից՝ աւելի և բազում
քան զսոյն խօսեցաւ, մինչ դեռ կայր առ նմա Թա-
դաւորն Պաղ 'ի վերայ լերինն. բազում և ազգի ազ-

1 Յորինակի միւսմ մոպնեսցէս։

գի և պէսպէս աղօթս մատուցանէր մինչև ցերեկոյն և 'ի մտանել արեգականն, մինչև վաղՃանեցաւ Ճա-կատն։

Ա.յլ 'ի պատերազմին օգնական այ հասանէր 'ի վերայ Յունացն, և Հայաստան գնդին լինէր յաղ-թութիւն, և 'ի պարտութիւն մատնեցաւ գունդն Պարս-կից, դարձան 'ի փախուստ, ցրուեցան սփռեցան դաշ-տաց՝ լերանց բարձանց՝ խորոց ձորոց։ Ա.յս զհետ նո-ցա լինէին զօրքն Յունաց և Հայոց. հասանէին, ըզ-մեծ և զփոքր առ հասարակ սատակէին. բայց սա-կաւք 'ի բաղմաց քաջաձիք փախստեայք լինէին։ Ա-յս զհետ լինէին փախստէիցն զօրքն Հայոց, և մինչև 'ի Գանձակ յԱ.տրպայական 'ի սահմանս Հայոց հա-լածէին զզօրսն Պարսից. ընդ փախուցեալսն զբա-զումն սատակէին զՃանապարհայն։ Եւ Մուշեղ սպա-ռապետն Հայոց հարկանէր զզօրսն Պարսից 'ի հա-ռուածս անհնարինս. սպաս արարեալ և դիպէր գլն-դին Ա.ղուանից, և առ հասարակ զամ զզօրսն սատա-կէր։ Եւ հասանէր Ալուանայրի արքային Ա.ղուանից 'ի փախստեանն, և նիզակաբնաւն 'ի կառափն մա-տուցեալ ծեծէր բազում, ասելով թէ այդմ չնորհս կալ[1], զի այր թագաւոր ես, և թագ ունիս. ես ոչ սպանից զայր թագաւոր, թէ կարի նեղ հասցէ ինձ։ Եւ ուրթ հեծելով թոյլ ետ նմա փախչել երթալ դը-նալ յաշխարհն Ա.ղուանից։

Ա.յլ յորժամ դարձան ամ զօրքն Հայոց, ոչ գոյր չափ գլխանոցն ախոյեանից՝ զոր բերեալ էր առաջի թագաւորին Հայոց Պապայ զօրավարն Հայոց Մու-շեղ։ Այնպէս ըստ իւրաքանչիւր չափու ամ նախա-բարքն և մեծամեծքն և բովանդակ ամ զօրքն. և եղև մեծ յաղթութիւն յերկրին Հայոց, և 'ի մէջ զօրացն Յու-նաց։ Այնպէս լցան բազում աւարաւ գանձուցն զի-նու և զարդու, ոսկւով և արծաթով և բազում կա-բասեաւ, ձիովք և ջորեօք և ուղտօք, զոր ինչ թա-փեցին. զի ոչ գոյր թիւ կամ չափ, այլ կարի բազում էր յոյժ։

Բայց ապա ամբաստան լինէին քսսութիւնք առ մեծ

1 Ցամ օրինակս ընդհակալ։

թագաւորն Պապայ զզօրավարէն Մուշեղի, և ասէ՝ ինն՝ թէ գիտեա, արքայ, զի մեծաւ նենգութիւն է ընդ քեզ, և քեզ մահու սպասէ. զի զքո թշնամին համակ արձակէ, զի զբազումս բազումանգամ՝ի բուռն արկեալ՝ սովոր է արձակել զթշնամին. զի զԱռնայր արքայ արձակեալ, թոյլ ետ ապրելոյ՝ի բուռն արկեալ զհակառակորդս քո։ Այս վասն այսր իրաց բազումանգամ լինէր գժտութիւն թագաւորին Պապայ ընդ զօրավարին Մուշեղի. և բազումանգամ յանդիմանէր զնա վասն այսր իրաց։ Իսկ զօրավարն Մուշեղ տայր պատասխանի թագաւորին Պապայ, և ասէր՝ եթէ զիմ զընդերսն զամենեսեան ես կոտորեցի. իսկ որ թագս ունէին՝ նոքա իմ ընդերքք չէին, այլ քո. եկեա ցես՝ ոմն ես զիմն սպանի, դու զքոյսն. այլ իմ յայր թագաւոր ոչ ձգեալ ձեռն երբէք որ թագ ունի, և ոչ ձգեմ, և մի՛ այլ ձգել լիցի։ Այթէ կամիս սպանանել զիս, սպան. այլ ես, եթէ գայ ինձ՝ի ձեռն երբէք այր թագաւոր՝ ոմն էկն բազումանգամ, ես ոչ սպանանեմ զայր թագաւոր՝ որ գամ՝ի թագ ունի, եթէ ոք իսկ զիս սպանցէ։

Թագաւորն Պապ իբրև լսէր զբանս զայս, յարատասուս հարեալ, և յարուցեալ՝ի գահոյիցն, բուռն հարկանէր զՄուշեղէ. արկանէր զնովաւ գիրկս, և լայր՝ի վերայ պարանոցին Մուշեղի, և ասէ. Մահապարտ են այնոքիկ՝ որ իշխեն խօսել չարութիւն զՄուշեղէ, զառնէ քաջէ և զպատուականէ։ Օ՛ի այր՝ որ ազգաւ պատուական է իբրև զմեզ, և նախնիքն դորա իբրև զնախնիսն մեր, և թողեալ նախնեացն դորա զթագաւորութիւն Ռէնաց աշխարհին, եկեալք առ մեզ նախնիքն՝՝ի նախնեացն մերոց՝ի վերայ կեցեալք և մեռեալք են, և հայր սորա՝ի վերայ հօրն իմոյ մեռաւ, և սա միամտութիւք մինչև՝ի մահ վաստակեալ է, և բազումանգամ ՝՝ած ետ մեզ յաղթութիւն յաղօթս և՝ի խնդրուածս հօր մերոյ աքանչելոյն Գերսիսի, ՝՝ի ձեռն դորա շնորհեցաւ բազում խաղաղութիւն, զիարդ ասեն ցիս զայս բանս եթէ Մուշեղ քեզ մահու սպասէ. սա աւասիկ այր իրաւախորհ է, զի յօտար տեարսն վասն բարեկամութեան ինայեաց, զիարդ դա՝ի բնակ տեարս ձեռն ձգէր։

Յայնմ ժամանակի բազում պարգևս և պատիւս և բազում գեղեցան զօրավարին Մուշեղի Պասն շնորհէր։

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս միւսոյ պատերազմին Հայոց ընդ Պարս 'ի Գանձակ Ատրպատականի. և վասն գուշակութեան Ուռնայրի, զի յայնմ ևս յաղթութիւն լինէր Հայոց գնդին։

Ապա լինէր գուշակ Մուշեղի Ուռնայր արքայ Աղուանից, յորոյ առ նա հրեշտակ և տայր նմա տեղեկութիւն. ասէր. Մեծ շնորհակալութիւն ունիմ փոխանակ զի ոչ սպաներ դու զիս. և ահ ահ զիս 'ի ձեռս քո, և դու անխայեցեր. զայս սէր քո ոչ մոռացայց մինչև խցեմ ես։ Այլ գուշակեալ իմ քեզ, զի Հապուհ Թագաւորն Պարսից ամ զօրաք իւրովք կազմի գալ անկանել յանպատրաստից եկն 'ի վերայ քո։ Ապա ստրատն Յունաց կազմեաց զօրս իւր՝ որ ընդ իւրով ձեռամբ էին, և խաղացոյց տանել գնալ 'ի սահմանս Հայոց 'ի Գանձակէ կուսէ յատրպայական տանէ։ Այոյնպէս և Մուշեղ սպարապետն գումարեաց 'ի մի վայր զզօրսն ամ Հայոց. և էին կուռ վառեալք ինչսուն հազարք ընդիրք նիզակ 'ի ձեռն. Թող զսպարակիրս։ Այլ սոքա վաղագոյն ըստ գուշակութեն աՀապարեցին հասին յիւրեանց սահմանն, բայց միայն Թագաւորն մնաց անդէն 'ի Հայոց աշխարհին։ Այլ եպիսկոպոսապետն Եղերսէս անդէն մնայր յաշխարհին, և խնդրուածս առնէր ընդ ամ աշխարհին. հրամայէր վե զօրացն որ էին 'ի պատերազմին։

Իսկ Թագաւորն Պարսից Հապուհ գայր հասանէր ամ զօրքն իւրովք 'ի տեղի պատերազմին, և դրտանէր զզօրսն Յունացն և զգունդն Հայոց, զի կազմեալ պատրաստեալ էին 'ի գործ պատերազմին։ Այլ լինէին խառնուրդք Ճակատուն. 'ի պարտութեէ մատնեցան զօրքն Պարսից։ Մանաւանդ գունդք նիզակաւորացն յարձակեալք մոլեգնեալք, քաջուք զա-

խոյեանս 'ի վերուստ յերիվարացն յերկիր կործանէ-
ին յանդիման Թագաւորին Պարսից Շապհոյ. և
ընդ ընկենուլն խրախոյս բառնային աղաղակելով՝ մ
զոլքն պատերազմիկք Հայոց համակ, զայս բանս ա-
սելով եթէ առ Արշակ քաջ։ Օ՛ի զա՞մ ախոյեանսն,
զոր 'ի Ճակատուն յայն սպանանէին, նմա նուիրէին
իւրեանց առաջի Թագաւորին Արշակայ. զի զա՞մ զոր
սպանանէին, ասէին. Արշակայ Թագաւորին մերոյ
զոհ լիջիր։ Եւ յորժամ Հայոց ազատանոյն ախոյե-
նացն նիզակաւորացն ռազմարարեալ յարձակեալ,
զզօրսն Պարսից նիզակաւորքն առեալ ընդ ենուին,
ասէին 'ի խրախուսելն. Ա՛ռ արշակ քաջ։ Իսկ յոր-
ժամ զենեալ դլխատէին զախոյեանսն՝ ասէին. Ար-
շակայ զոհ լիջիր։

Եւ լեգէոն զօրուն բազմութեն, այս ինքն Յու-
նաց զօրացն սպարակիրն, սոյնպէս և Հայոց սպարա-
կիրն զթիկունս ունէր զօրացն Հայոց, վահանք փա-
կեալք զինքեամբք՝ իբրև զամուր քաղաք ինչ 'ի թիկ-
կանց լինիցի։ Յորժամ տարածանէին ինչ զօրքն Պար-
սից զզօրսն Յունաց և կամ զգունդ նիզակաւորացն
Հայոց, 'ի լեգէոն վահանաւորացն Յունաց կամ 'ի
սպարակիրն Հայոց իբրև 'ի բերդ մտեալ հանգչէին։
Իսկ յորժամ ոգի առեալ սակաւ մի, և անդուստ
ելեալ յարձակէին, անթիւս 'ի զօրացն Պարսից ըն-
կէցեալ առաջի իւրեանց ոտից սատակեալս դլխա-
տէին. խրախուսելով 'ի նոյն բանս՝ Ա՛ռ Արշակ Թագա-
ւորն իւրեանց, անչափս և անթիւս 'ի զօրացն Պար-
սից կոտորեցին։ Եւ յորժամ դարձեալ սակաւիկ մի
ինչ յաղթահարէին զնո՞ զօրքն Պարսից, և նոքա իբրև
'ի բերդ ամուր դիմէին 'ի լեգէոն 'ի զօրսն վահանա-
ւորս, և նոցա բացեալ զվահանսն՝ զնո՞ 'ի մէջ առեալ
փակէին։ Եւ յայնմ աւուր հարկանէին սատակէին
զզօրսն Պարսից զօրքն Յունաց, և Տերէնտն ստրա-
տելատ նոցա, և գունդքն Հայոց և Մուշեղ սպա-
ռապետ նոցա։ Եւ սակաւուք փախչէր Շապուհ Թա-
գաւորն Պարսից 'ի պատերազմէ անտի. և նոցա սահ-
մանապահս կացուցանէին, և ինքեանք առ իւրեանց
Թագաւորն Պապ դառնային մեծաւ անուամբ, և
բարի աւարաւ, և հոյակապ շքեղութիւ։

Ա՛յլ Շ ապուհ Թագաւորն յորժամ յաշխարհն իշխանութեն իւրոյ հասանէր, զարմացեալ ընդ քաջութի գնդին կուսոյն որ դիպեցաւ նմա, և ասէր՝ եթէ զարմացեալ եմ ես զոր ինչ տեսի. զի իմ 'ի մանկութէ իմմէ համակ 'ի Ճակատու և 'ի կռիւ մըտեալ եմ, և բազում ամք են՝ զի հասի 'ի Թագաւորութի, և առանց կռուոյ ամ չեմ լեալ. բայց իմ ջերմ կռիւ զայս էր տեսեալ, որ այս անգամն դիպեցաւ ինձ։ Օ՛ի յորժամ Հայոց նիզակաւորքն առաջի կարգէին, այսպէս յարձակէին որպէս զլեառն մի բարձր և կամ որպէս զաշտարակ մի հաստաբեստ հզօր և անշարժ. և յորժամ մեք մեռ սակաւ մի շարժէաք, նոքա 'ի լեգէոն Հռոմոց ապաստան լինէին. և նոցա զվահանափակսն բացեալ, զնոսա իբրև 'ի քաղաքորմ պարապաւոր ամրացեալ ընդունէին։ Այլ անտի սակաւիկ մի ոգի առեալ, դարձեալ ելեալք մարտնչէին, մինչև անմի զգօրսն Ա՛ռանց առնէին։ Այլ միւս ևս՝ որ ընդ այս եմ զարմացեալ ես, ընդ մտերմութի միամտութէն Հայաստան գնդին ընդ տիրասիրութէն։ Օ՛ի այնչափ ամք են՝ զի տէրն նոցա Ա՛ռշակ կորուսեալ է 'ի նոցանէն, և նոքա 'ի պատերազմին 'ի նա խրախուսէին։ Այլ յորժամ զախոյեանսն ընկէնուին, համակ ասէին՝ թէ առ Ա՛ռշակ, և նա չէր 'ի մէջ նոցա, և նոքա առ գութ տիրասիրութէն՝ զոր առ քնակ տէրն իւրեանց ունէին, զնամ ախոյեանսն՝ զոր սպանանէին՝ նմա նուիրէին։ Այլ կամ մոլեկան գունդն մուշեղեան, զի ինձ այսպէս թուէր՝ եթէ հուր բոց 'ի գընդէն ելանիցէր և 'ի նշանացն, իբրև 'ի հուր հրդեհի այնպէս անցանէր ընդ գունդն որպէս բոց ընդ եղէգն։ Այլ այսչափ ժամանակք են՝ զի Ա՛ռշակ տէրն նոցա 'ի նոցանէն կորուսեալ է, զի Յանդիշն բերդի կայ յերկրին խուժաստանի, և նոքա առ գութն համարէին՝ թէ 'ի գլուխ նոցա նա իբրև թագաւոր կայցէ, և կամ ընդ նոսա արդեւք 'ի մէջ գնդին կայցէ 'ի գլուխ Ճակատուն պատերազմին, և նոքա առ նմա առնիցեն պաշտօն յանդիմանն նորա։ Ա՛յլ ասէր, երանի՛ որ Հայոց գնդին տէր լցէ, այնպիսի տիրասէր և միաբան միամիտ զօրացն։

Գ Լ Ո Ւ Խ Զ.

Յաղագս Դղակայ մարդպետի՝ զոր կացուցին սահմանակալ, և նա խորհրդակից եղեալ Պարսից Թագաւորին, թէ որպէս խոստանայր մատնել զաշքայն Հայոց. և վասն մահուն Դղակայ 'ի Պապայ աշքայէ։

Զ.ՊԱ Տերէնդ զօրավարն զօրացն Յունաց և Մուշեղ զօրավար զօրացն Հայոց զԴղակ մարդպետ, որ անուանեալ կոչէր ըստ գործոյն՝ հայր Թագաւորին, Թողին զնա սահմանապահ 'ի Դանձակ՝ որ էր սահման ընդ Պարս և ընդ Հայս։ Այս մնաց առ նմա Երեսուն հազար ընտիր ընտիրք, նիզակաւորք կուռ վառեալք պատեգէնք[1] և զրահաւորք կազմ ամենայնիւ։ Այս Տերէնդն և Մուշեղ ամ զօրաք, որ էին ընդ նոսա, գնացին յաշխարհն առ Թագաւորն Պապ։ Իսկ մարդպետն Դղակ, յղեր հրեշտակս խորհրդով առ Շապուհ աշքայն Պարսից, և խոստանայր մատնել 'ի ձեռս նորա զԹագաւորն Հայոց Պապ, և զզօրաւարն Յունաց զՏերէնտն, և զզօրավարն Հայոց զՄուշեղ, և առնոյր 'ի նմանէ դանձս պարգևաց սաստիկ յոյժ։ Բայց այլ մեծամեծ նախարարքք, որ էին առ նմա, գաղտ ազդ առնէին Թագաւորին Պապայ, Դնելն՝ տեր գաւառին անձևացեաց, և այլք որ էին անդ մնացեալ։

Զ.պա Թագաւորն Պապ յղեաց դեսպանս առ մարդպետն Դղակ, Թէ զօրքդ՝ որ են ընդ ձեռամբ քով՝ գումարեա զայդ. Դնելոյ անձևացւոյ յանձն արասցես, և վաղ եկեսցես. զի պիտոյ է ինձ յղել զքեզ առ Թագաւորն Պարսից Շապուհ, զի ես մտից նմա 'ի ծառայութիւն։ Զ.պա յորժամ լսէր մարդպետն Դղակ, մեծապէս խնդացեալ՝ ասէր ընդ միտս իւր, Թէ արդ դիւրին ինձ զկամս իմ կատարել, զոր խոստացայն Թագաւորին Պարսից Շապհոյ, յորժամ դուրս գտի իրացս յապահով յանհոգս առնել բանիւք զՊապ, և յանկարծօրէն յանպատրաստից արշ-

1 Յօրինակի մուսմ պապէնապէնք։

կանել զԹագաւորն Պարսից զգլխով նորա։ Եւ ինքն զուարճացեալ, լինէր խօսնակից 'ի մէջ Թագաւորացն երկոցունց. դեսպան ձիով վաղ հասուցանէր 'ի գաւառն Աւրայրատու 'ի մեծ 'ի գեւղն ընջին արքունի, որում Աւրդեանն կոչէն, առ Թագաւորն Հայոց Պապ. և զայր յանդիման լինէր Թագաւորին։ Մեծապէս մեծարեցաւ 'ի նմանէն. և 'ի ժամ ընթրեացն հրաման ետ արքայն Պապ, տանել պատմուճան ազուցանել մարգպետին Ղազակայ. և ազուցին նմա դրաստս և վարտիս։ Եւ էր հանդերձն անհեղեղ մեծութիւն. զի խորշ զխորշիւ իջանէր, մինչ զի ոչ կարէր հանդերձել զանձն իւր, զի պատեաց զնա մեծութիւն հանդերձին։ Եւ ազուցեալ զպատմուճանն մեծ, էած զգօտին ընդ մէջ իւր՝ զորմէ Թուրն կախէր. և սուսեր ընդ մէջ ածեալ, և խորշ 'ի գօտւոյ դրատիցն իջեալ, զԹուրն և զսուսերն ծածկէր։ Իսկ զվարտիսն զգեցեալ, և մոյկս ազուցեալ, և զնրանն յազդեր կապեալ, և 'ի վերայ նրանէն խորշն 'ի վարտեացն իջեալ անկեալ 'ի վերայ նրանէն՝ ծածկեալ մինչև 'ի սրունսն և ոչ ինչ իմացաւ Ղազակ թէ այն մեծութիւն հանդերձին չարոյ նորա իցէ այն։ Իսկ յինն ժամ աւուրն կոչեցին զՂազակն, և ասէն. Կոչէն զքեզ յընթրիս 'ի նեղքս յարքունիս։ Իսկ յորժամ մուծին 'ի փող տանցն՝ յորում արքայն էր, և էր փողն ընդ երկար, բազում երդս լոյսիջոցս էր Թողեալ, և տանէին զնա ընդ այն, կայր շուրջ սպարակիրն փակեալ սակրաւորքն, և զերդս ամ լուսոյն ծածկէին։ Ապա մտեալ շուրջ զնովաւ 'ի տեղւոջն ձգձգէին զնա սպարակիրքն։ Իսկ նա թէպէտ տանէր ձեռն 'ի զէն 'ի խորշխորշան հանդերձիցն պատատելոցն՝ զոր էր զգեցեալ, ոչ զմի զէն ոչ կարաց գտանել։

Ապա զի էր ինքն Ղազակն այր մեծ և անձնեայ, քաջ հարուստ ոսկերօք, սակայն ասպարակիր մարդկանն պատեցին զնովաւ, և բարձին զնա վերըմբարձ. և տանէին զնա մինչև 'ի դուրս տաճարին արքունի։ Իսկ իբրև ետես Թագաւորն՝ Թէ անդր տանին, ասէ. Ա՛յ այսր. մի՛ այսր, այլ մուծէք զդա 'ի տուն պատմուճակացն։ Դանղի 'ի փողին զօրք սպարա-

կրացն մուծին զնա 'ի նեղքս 'ի տունն պատմուճա-
կացն կապեալ ձեռս յետս, այս ինքն ուր թագաւ-
քունի դնէին. և անդէն խօսել սկսաւ Դղակն և ա-
սէ. Ա՛յսացէք ցաղքայ, գոգէք. ես այս մահու արժա-
նի էի, բայց քեզ արժան էր զիս 'ի հրապարակի սպա-
նանել, և ոչ 'ի տան թագաւոր սպանանել, և զքո թագաւ-
որեամբ շաղախել։ Եւ զայս միայն ժամանեաց ա-
սել. և անդէն 'ի վանն պատմուճակացն փողոտեցին
զնա, և հատին զգլուխ նորա, և հանին հարին 'ի նի-
զակի, և կանկնեցին 'ի հրապարակին աղքունի։

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս մահուան Արշակայ թագաւորին Հայոց, թէ զնարդ մեռաւ յերկրին խուժաստանի Յանդմըշն բերդին ինք ինքեամբ ձեռօք, և Դրստամատն էր պատճառք մահուն։

Ա՛յլ յայնմ ժամանակի դեռ տակաւին ևս կայր կենդանի Ա՛րշակ աղքայ Հայոց յերկրին իշխանութեն թագաւորութենն Պարսից 'ի կողմանս խուժաստանի Յանդմըշն բերդին. այս ինքն որ անուն Ա՛նյուշն բերդն կոչէն։ Եւ զայնու ժամանակաւ խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ Հայս. զի արշակունին թագաւորն Վրուշանաց, որ նստեր 'ի Բաղնս քաղաքի, նա յարոյց տալ պատերազմ ընդ սասանակա-նին Շապհու և թագաւորին Պարսից։ Եւ Շապուհ թագաւորն զամ զզօրսն Պարսից գումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, և զորս միանգամ ածեալ էր գերութիւն յերկրէն Հայոց զամ այլևՀի գումարեալ խաղացոյց ընդ ինքեան. և զնեղքինին անգամ թագաւորին Հայոց Ա՛րշակայ տանէր ընդ ինքեան 'ի գործ պատերազմին։

Եւ էր նեղքինի մի Հայոց թագաւորին Ա՛րշակայ, ոստիկան հաւատարիմ լեալ, նեղքինի սիրելի մեծի իշխանութեն և մեծի պատուի, և անուն Դրաստա-

մասն։ Իսկ իբրև եղև պատերազմ ընդ Թագաւորին Վրուշանաց և ընդ Թագաւորին Պարսից, չարաչար տարածէին զզօրսն Պարսից զօրքն Վրուշանաց, և զբազումս կոտորեցին 'ի զօրացն Պարսից զօրքն Վրուշանաց, և զբազումս ձերբակալ արարին, և զկէս փախստականս հալածական առնէին։ Իսկ Դրստամատն նեղբինին, որ յամս Տիրանայ Թագաւորին Հայոց և Աբշակայ որդւոյ նորա Թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին, և ամ բերդացն արքունի՝ որ 'ի կողմանս յայնս. սոյնպէս և յերկրին Օրոտից 'ի Ինաբեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովաւ, և բարձ նորա 'ի վերս քան զամ նախարարացն։ Այս քանզի այս գործակալութիւն և մարդպետութիւն, որում հայրն կոչէին նեղբինեաց՝ գործ լեալ էր 'ի բնէ ժամանակաց 'ի Թագաւորութենն արշակունոյ, և զայս Դրստամատն նեղբինի զիշխանն զԱնգեղ տանն գերեալ տարեալ էր յերկրէն Պարսից 'ի ժամանակին՝ յորժամ կալան զԱբշակ արքայն Հայոց։

Այս այս Դրստամատ էր յայնմ Ճակատու, յորում վատթարեցին Վրուշանքն զՇապուհ արքայն Պարսից։ Այս Դրստամատ գործեաց անհնարին քաջութիւն այնչափ կռուաւ ևս 'ի վերայ Շապհոյ արքայի, և ապրեցոյց զնա 'ի մահուանէ. և բազումն 'ի Վրուշանաց անտի կոտորեաց, և զբազում զախոյանից զգլուխս բերէր զառաջեաւ։ Այս զՇապուհ Թագաւորն Պարսից փրկէր 'ի նեղութենէն պատերազմին Թշնամեաց անտի, ուր արգելին զնա 'ի խուռն պատերազմին 'ի զօրաց անտի։ Իսկ իբրև եղև յորժամ դարձաւ Շապուհ Թագաւորն Պարսից յերկիրն Աղորեատանի, և մեծ շնորհակալութիւն առնէր նեղբինեայն Դրստամատայն վասն փրկոյն, և ասէր ցնա Շապուհ Թագաւորն Պարսից. խնդրեա դու ինչ յինէն. զինչ և խնդրեսցես, տաց քեզ և ոչ արգելից։ Այս ասէ Դրստամատ ցԹագաւորն. Ինձ 'ի քէն այլ ինչ ոչ պիտի, բայց տուր ինձ հրաման, զի երթայց տեսից զընակ տէրն իմ զԱբշակ արքայ Հայոց։ Այս առ մի օր, իբրև ես երթայց առ նա, հրաման տուր՝ արձակել զնա 'ի կապանացն, և ես իշխե-

ցից լուանալ զգլուխ նորա և օծանել, և ազուցա-
նել նմա պատմուճան, և արկանել նմա բազմականս,
և դնել առաջի նորա խորտիկս, և տալ նմա գինի,
և ուրախ առնել զնա արուեստականաւքն մի օր Ճիշդ։
Եւ ասէ Թագաւորն Ճ՝ ապուհ. Խիստ են խընդ-
բուածքդ, զոր խնդրեցերդ. զի յաւուրց ժամանա-
կաց՝ յորմէ Թագաւորութիւս Պարսից կանգնեալ է,
և բերդն այն Ն՚նչուշ բերդ կոչեցեալ է, չիք ոք մարդ
եղեալ՝ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցանել
Թագաւորաց զոր յայնմ բերդի եղեալ զոք է Թա-
գաւորաց, յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի զոք
եղեալ է, Թող Թէ զնա զայր Թագաւոր և զիմ ըն-
կեր կապեալ եղեալ յայնմ բերդի զՀակառակորդն.
քան մինչ աշխատ արարեր զմեզ, և դու աւադիկ
զանձն՝ի մահ եգիր և յիշեցուցեր զՆ՚նչուշն, որ ոչ
էին լեալ երբէք օրէնք Թագաւորութեան Ն՚բեաց՝ի
սկզբանէ։ Ն՚այց զի վասն՝ քո մեծ վաստակք են առ
իս, զոր ինչ խնդրեցերն՝ երԹ՝ տուեալ լիցի քեզ. բայց
քեզ արժան էր զօգուտ քո անձինդ խնդրել կամ աշ-
խարհս կամ գաւառս կամ գանձս։ Ն՚այց յորժամ
դու զայդ խնդրեցեր, անցեալ լիցիս զօրինաւք Ն՚բեաց
Թագաւորութեանս. երԹ, տուեալ լիցի քեզ որ ինչ
յինէնս խնդրեցեր փոխանակաց քոց։

Եւ ետ նմա փուշտիպան մի հաւատարիմ. և հրա-
վարտակ՝ արքունի մատանեաւն, զի գնացեալ երԹիւ
ցէ նա՝ի բերդն Յ՚նդմիջն, և զիարդ և կամք իցէ նո-
րա, զոր օրինակ և խնդրեացն՝ արասցէ կապելոյն Ն՚բ-
շակայ, որ յառաջ Թագաւորեալն էր՝ի Հայս։ Եւ
չոգաւ Պրաստամատն հանդերձ փշտիպանաւն և հրա-
վարտակաւն արքունի Ն՚նուշ բերդն, և ետես զտէրն
բնակ. և արձակեաց զՆ՚բշակ՝ի կապանացն երկա-
Թեաց՝ի ձեռակապացն և յոտիցն երկաԹոց և յան-
բոց պարանոցէն շղԹայիցն սարեացն. և լուաց զգլ-
լուխ նորա, և լոգացոյց զանձն նորա։ Եւ ազոյց նմա
պատմուճան աղնիւ. և էարկ նմա բազմականս, և
բազմեցոյց զնա. և եդ առաջի նորա ընԹրիս ըստ օ-
րինաց Թագաւորաց, և եդ առաջի նորա գինի որ-
պէս օրէն էր Թագաւորացն. սԹափեաց զնա, և մին-
Թարեաց, և ուրախ առնէր զնա գուսանաւք։

Այլ 'ի ժամ աղանդեր մատուցանելոյ՝ եդին առաջի նորա միրգ, խնձոր և վարունգ և ամիճ, զի կերիցէ. և եդին դանակ նմա, որպէս զի հատցէ և կերիցէ զնարդ և կամեսցի։ Այլ Դրաստամատ մեծապէս ուրախ առնէր զնա. կայր յոտն, և մխիթարէր զնա։ Իսկ յորժամ արբեցաւ, և գինին եկն զակամբ նորա, արբեցաւ հպարտացաւ և ասէ. Վա՜յ ինձ Աբշակայ. այսպէս [1] և այս, և յայսմ չափու և այս անցք անցին ընդ իս։ Այլ զայս ասացեալ, զդանակն՝ զոր ունէր 'ի ձեռին, որով զմիրգն կամ զամիճն կամէր ուտել, եհար 'ի սրտի իւրում. և անդէն սատակեցաւ, և մեռաւ անդէն 'ի նմին ժամուն մինչ դեռ կայր 'ի բազմականին։ Իսկ յորժամ զայն ետես Դրաստամատն, յարձակեցաւ եհան 'ի նմանէ զնոյն դանակ, և եհար յիւրում կշռին. և անդէն մեռաւ և նա 'ի նմին ժամուն յայնմ։

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս թէ զնարդ լուեաց պատերազմն 'ի կողմանցն Պարսից, ապա սկսաւ սպարապետն Մուշեղ ոգորել ընդ այնոսիկ՝ որք միանգամ ապստամբեցին 'ի Թագաւորէն Հայոց. զբազում կոյս կոյս հարկանէր մեծաւ պատերազմաւ, նախ վասն տան Թագաւորին Հայոց՝ որ յԱՄՐՊԱՅԱԿԱՆՆ էր։

Զգան իբրև դադարեաց պատերազմն 'ի կողմանցն Պարսից, և յապահովեցան իրք ճակատուն յայնմ կողմանէ, և այնուհետև սկսանէր սպարապետն Հայոց Մուշեղ հարկանէր զայնոսիկ՝ որք ապստամբ եղեն 'ի Թագաւորութենէն արշակունեաց։ Նախ հարկանէր զտուն Թագաւորին Հայոց, որ յԱՄՐՊԱՅԱԿԱՆՆԻՆ էր. զամ երկիրն գաւառացն Ամրպատճացն աւերէր, և առնոյր գերէր բազում գերութիւն 'ի նո-

1 Յամ օրինակս Աբշակայ. այս էս և այս։

ցանէ. և զմնացորդսն նուաճէր և 'ի հարկի կացուցանէր, և առնոյր զբազումս պանդանդս 'ի նոցանէ։

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս Նոշիրականի։

ՀԱՐԿԱՆԷՐ Մուշեղ զապստամբս Նոշիրական աշխարհին, որ ապստամբեցին յարքայէն Հայոց. առնոյր աւերէր գերէր, և 'ի մնացորդացն առնոյր պանդանդս. և զընակիչս երկրին 'ի հարկի ծառայութիւն կացուցանէր։

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագս Կորդուաց Կորդեաց և Ցմորեաց։

ՀԱՐԿԱՆԷՐ Մուշեղ սպարապետն և զայս գաւառս ապստամբեալս յարքայէն Հայոց, զԿորդուս և զԿորդիս և զՑմորիս. առնոյր գերէր և աւերէր, դնէր հարկ մնացորդացն, և առնոյր պանդանդս։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս Ծարաց։

Եւ զկողմանսն Մարաց, քանզի և նոքա ապըստամբեցին յարքայէն Հայոց, հարկանէր զնոսա մեծապէս. և գերէր զբազումս 'ի նոցանէն, և մնացորդացն դնէր հարկս, և առնոյր պանդանդս։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս Արձխայ։

ԻԱՐԿԱՆԷՐ զերկիրն Արձախայ մեծաւ պատերազմաւ, գերէր զբազումս 'ի նոցանէն. և զմնացորդացն առնոյր պանդանդս, և զմնացեալսն 'ի հարկի կացուցանէր։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս Աղուանից։

ԱՌՆԷՐ պատերազմ ընդ երկիրն Աղուանից. հարկանէր զնոսա 'ի հարուածս անհնարինս։ Եւ թափէր 'ի նոցանէ բազում գաւառս, զոր հատեալ էր նոքա 'ի նոցանէն. զԼուտի, զՇակաշէն և զՁորն Գարդմանայ, զԼոռեթ և այլ որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառք։ Եւ զԼուր գետ՝ որպէս և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին. և 'ի գլխաւորացն բազումս սպանանէին. և զմնացորդսն 'ի հարկի կացուցանէին, և պանդանդս 'ի նոցանէ առնուին։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս Կասբից։

ԱՊԱ խնդրէր զվրէժն մեծապէս սպարապետն Մուշեղ յերկրէն Պարսից և 'ի Փայտակարան քաղաքէ, փոխանակ զի և նոքա նշկահեցին ստեցին արքային Հայոց։ Հասեալ, զբազումս 'ի նոցանէ գլխով պատուհաս առնէր սպարապետն զօրավարն Մուշեղ. զբազումս 'ի նոցանէ գերէր, և զմնացորդսն 'ի հար-

կի կացուցանէր. և առնոյր պանդանդս 'ի նոցանէն, և անդ ոստիկանս վերակացուս Թողոյր։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս Վրաց։

ԱՅՆ խաղայր սպարապետն Մուշեղ 'ի վերայ Վրաց արքային, և նեղէր զնա մեծապէս. և հարկանէր զերկիրն, և վանէր զամ աշխարհն Վրաց. և հանէր ընդ սուր զամ ազատս և զազգս նախնարարացն, զոր եգիտ։ Օ փառաւազեանսն հրաման տայր սպարապետն Մուշեղ հանել 'ի խաչ 'ի մէջ աշխարհին Վրաց. և զզեաշխին Գուգարաց, որ յառաջն ծառայէր Թագաւորին Հայոց և ապստամբեաց, կալեալ գլխատէր. և զազգն որձակոտոր առնէր, և ըզկանայսն և զդստերսն 'ի գերութիւն վարէին։ Այն օրինակ և որ միանգամ 'ի կողմանն յայն էին նախարարքն, և 'ի Թագաւորէն Հայոց եղեն ապստամբ, զամենեսեան գլխատէր. և Թափէր զամ գաւառն, և առնոյր պանդանդս, և զմնացեալսն 'ի հարկի կացուցանէր։ Այս զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց և ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր, այնուհետև յինքն վտարեալ դառնայր անտի։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս Թագաւորին Աղձնեաց։

ԳԱՌՆԱՅՐ ապա զօրավարն Մուշեղ յերկիրն Աղձնեաց, և հարկանէր զերկիրն 'ի մեծ 'ի հարուածս. զի և նոքա ապստամբեալ էին յարքային Հայոց։ Զերբակալ արարեալ զզեաշխին Աղձնեաց, առնին կոտորեցին զկանայս, և զորդիս նոցա 'ի գերուն վա-

ըեցին. և զմնացեալսն 'ի հարկի կացուցանէր, և վերակացուս և ոստիկանս յերկրին Աղձնեաց Թողուին։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Յաղագս մեծի Ծովայ։

Այս անտի 'ի Ծովս մեծ արշաւեցին. և նոքա էին ապստամբեալ։ Հարկանէր զերկիրն գաւառին Մուշեղ մեծի Ծովայ, և զազգն հանէր ընդ սուր. և առնոյր պանդխտդս, և զազգն 'ի հարկի կացուցանէր։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս Անդեղ տանն։

Հարկանէր և յԱնդեղ տունն զբազումս, և հանէր ընդ սուր։ Բայց աշխարհն զի ոստան արքունի լեալ էր վաղ վաղ, բնակիչք գաւառին և ինքեանք կային 'ի հարկի ծառայութեան։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս գաւառին Անձտայ։

Այս 'ի գաւառն Անձտայ արշաւէր, և հարկանէր Մուշեղ զկողմանս գաւառացն այնոցիկ՝ որ շուրջ էին զնովաւ. քանզի և նոքա ապստամբեցին 'ի Թագաւորութենէն արշակունեաց։ Հանէր ընդ սուր ըստեարս գաւառին. առնոյր պանտանդս, և նուաճէր. 'ի հարկի ծառայութեան Թագաւորին Հայոց Պապայ զամենեսեան առ հասարակ կացուցանէր։

ԳԼՈՒԽ Ի.

Յաղագս Մուշեղի սպարապետին Հայոց։

Այլ քաջն զօրավարն սպարապետն Հայոց լի էր քինիւ մեծաւ և բազում նախանձու զամ աւուրս կենաց իւրոց, և միամտութիւն և արդար վաստակով ջանայր հանապազ և վաստակէր 'ի վերայ թագաւորութեան Հայոց աշխարհին։ Օտիւ և զգիշեր կայր յաշխատութեան. ջանայր և ձգնէր կալ 'ի ձակատու պատերազմին, և ոչ թողայր բնաւ ամենևին և ոչ քան զկորի մի գետին 'ի սահմանաց երկրին Հայոց ուրեք վտարել. 'ի վերայ աշխարհին կեալ, և 'ի մեռանել 'ի վերայ անուանն քաջութեան, 'ի վերայ բնակ տերանց, և 'ի վերայ բնակչաց աշխարհին, 'ի վերայ քրիստոնէութեան հաւատոյ, 'ի վերայ հաւատացեալ յաճ և 'ի քո մկրտեալ ժողովրդոց, 'ի վերայ եկեղեցեաց, և 'ի վերայ նուիրեալ սպասուց, 'ի վերայ վկայարանացն Քրիստի, 'ի վերայ ուխտի այ, 'ի վերայ քերց և եղբարց, 'ի վերայ մերձաւորաց տոհմին, 'ի վերայ բարեկաց բարեկիր բարեկամաց հանապազ կայր զօրավարն Մուշեղ 'ի նահատակութեան պատերազմին, զանձն փոխանակ առնել աշխարհին. և յանձն իւր անխայէր 'ի մեռանել, զամ աւուրս կենաց իւրոց առաջի իւրոց բնակ տերանցն արշակունեաց վաստակէր։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս եպիսկոպոսապետին Ղերսէսի, թէ որպիսի այր էր, կամ զինչ գործէր։

Այլ եպիսկոպոսապետն Հայոց Ղերսէս շինէր զամ աւերեալսն երկրին Հայոց. յանձն առնէր և միխիթարէր, դարմանէր և տեսուչ լինէր ամ աղքատաց. և զօրկունս և զաղքատս հանգուցանէր։ Այլ շինէր զեկեղեցիս ընդ ամ տեղիս, և զամ կործա-

նեալսն կանկնէր. և զամ կարգսն տապալեալ ուղղէր և նորոգէր։ Շինէր և հաստատէր, խրատէր և յանդիմանէր. բազում առնէր նշանս և զօրութիւնս մեծամեծս և բազում բժշկութիւս սքանչելեաց։ Այս յօրինսն սաստէր մեծապէս. և զոր օրհնէր, օրհնէր[1]. և զոր անիծանէր, անիծեալ լինէին։ Այս բազմացոյց զկարգս պաշտօնէից յամ տեղիս իշխանութեն 'ի սահմանացն Հայոց, և յամ գաւառս կացոյց տեսուչս եպիսկոպոսս. և հանապազ զգուշանայր տեսչութեն իւրոյ և իշխանութե, որչափ եկաց նա ժամանակս։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաղագս Թադաւորին Պապայ, թէ զնա՞դ էր լի դիւօք կամ որպէս վարէրն։

Այլ Թադաւորն Պապ, զի մինչ դեռ տղայիկ այն մինչ ծնեալ էր 'ի մօրէ իւրմէ՝ յայնժամ ձօնեաց զնա դիւաց անօրէն մայրն Փառանձեմ, և վասն այնորիկ լի էր դիւօք 'ի տղայութէ իւրմէ։ Վասն զի հանապազ զկամն դիւաց առնէր, վասն այսորիկ և զբժշկութի իսկ ոչ կամէր գտանել. զի հանապազ վարժէր զանձն իւր դիւօք, և կախարդանօք երևէին դևքն 'ի նմա. և ամ մարդ զդևսն 'ի նմա աչօք բացօք տեսանէին։ Օ՛ի յորժամ մարդիկ հանապազօր յայդորել ելեալ մտանէին, տեսանէին՝ զի յօձից կերպարանս ելանէին 'ի ծոցոյն Պապայ Թադաւորին, և պատէին զուսօք նորա. և ամենեքեան ոչք տեսանէին զնա, երկնչէին 'ի նմանէ և հուպ երթալ։ Իսկ նա պատասխանի տայր մարդկանն ասելով թէ մի՛ երկչնչիք, զի սոքա իմ են. և ամ մարդ յամ ժամ տեսանէին զայսպիսի մինչ կերպարանս 'ի նմա։

Օ՛ի բազում համբաւքք դիւաց համբարեալ էին 'ի նմա. և յամ ժամ ամենայն մարդոյ երևէր այս, որք գամ մի զԹադաւորն տեսանէին. բայց յորժամ Հայրապետն Լերսէս մտանէր առաջի նոր կամ՝ եր եպիսկոպոսն Լսադ, դևքն չերևեալ անտերևոյթ լինէին։

1 Յամ օրինակս և զոր օրհնէր և զոր անիծանէր։

Այս էր Թագաւորն Պապ 'ի պղծութեան թաւալեալ. երբեմն այլոց էգ եղեալ, տայր զինքն 'ի խառնակութիւն. և երբեմն զայլս էգ արարեալ, զարուսն խառնակեալ պղծէր. և երբեմն ընդ անասունս խառնակէր։ Այս այսպէս գիւաք վարեալ, որք 'ի նմանէ էին բնակեալ զամ աւուրս կենաց իւրոց։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս յանդիմանութեան սրբոյն Ներսէսի, զի հանապազ թշնամի էր Թագաւորին Պապայ վասն մեղաց նորա։

Այլ սուրբն Ներսէս եպիսկոպոսապետն Հայոց հանապազօր ընդդիմացեալ Թագաւորին Պապայ, կշտամբէր և յանդիմանէր մեծաւ վկայութեամբ. և վասն չարեաց նորա բազմաց ոչ համարձակէր նմա զսեամն եկեղեցւոյն կոխել, և ոչ մտանել նմա 'ի ներքս։ Հանապազ կշտամբեալ յանդիմանէր և խրատէր, զի գոցէ զանձն իւր 'ի կորստենէ գործոց իւրոց. և հանապազ խօսէր ընդ նմա, զի փոյթ արասցէ ապաշխարութեան։ Դնէր առաջի նորա վկայութիւս 'ի գրոց, ահ արկանելով յաւիտենական դատաստանացն պատժովք՝ գալ 'ի զգաստութիւն և 'ի լաւանալ, և յառաջդիմութեան արդարութեան կարգացն և գործոցն սրբութեան փոյթ առնել։

Իսկ Թագաւորն Պապ լսելոյ նմա ոչ լսէր. այլ և ընդդիմացեալ ևս մեծաւ թշնամանաւք, և մահու սպասէր նմա, և կամէր սպանանել զնա յայտնի. բայց 'ի Թագաւորէն Յունաց յայտնի և անարգել անգամ բանիւք չէշէր, և ոչ սակաւ մի համարձակել 'ի նա, թող թէ մահու աղագաւ։ Նա և իւր իսկ աշխարհի մարդիկն և զօրքն ամ չառնուին, յանձն զայսպիսի ինչ առնել. այր՝ զորմէ ամ մարդիկ աշխարհին Հայոց կախեալ կային զնմանէ վասն արդար գործոցն, սրբութեան գնացիցն յաշխարհի, խաղաղութեան մեծի առաջնորդութեանն, նա և վասն յայտնի նշանագործութեանն սքանչելեացն՝ զոր առնէր, իբրև յերկ-

նաւոր հրեշտակ այնպէս նայէին ամ մարդ։ Այս թագաւորն ոխացեալ էր ընդ նմա, և խնդրէր սպանանել զնա. այլ յայտնի զայս և բանիւք ճառել ոչ իշխէր, թէ ոչ՝ իւր զօրքն սպանանէին զնա։ Օ՛ի այնպէս ամ մարդ ապաստանեալ էին յաղօթս նորա, և սիրէին զնա առ հասարակ մեծամեծք և փոքունք, պատուականք և անարգք, ազատք և շինականք միանգամայն։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Յաղագս մահու սրբոյն մեծի քահանայապետին Ներսէսի 'ի Թագաւորէն Պապայ, թէ որպէս կամ զնարդ սպանաւ 'ի նմանէ։

Այլ թագաւորն Պապ յամ ժամ էր թշնամի մեծի քահանայապետին վասն յանդիմանութեան մեղայ իւրոց ջարեաց՝ զոր գործէրն, և յանդիմանեալ լինէր յառնէն այ 'ի Ներսիսէ հանապազ։ Ոչ զգաստանալ կամէր և ոչ դալ յուղղութի, և ոչ համբերել կարէր հանապազորդ նախատանացն յանդիմանչին. էարկ 'ի միտս սպանանել զմեծ քահանայապետն այ զ՝Ներսէս։ Իբրև յայտնի զայս ոչ մարթէր նմա առնել, կեղծաւորել կերպարանէր իբրև այն եթէ յուղղութիւն ինչ եկեալ է. աղաչէր զքահանայապետն այ տալ նմա ապաշխարութի։ Այս կոչեցաւ յապարանս իւր 'ի Լսակ աւանի Յ՝կեղեաց գաւառի. ապար նմա ընթրիս, աղաչէաց զայրն այ բազմել նմա յարքունական գահոյսն, և իբրև այնու թէ սրբեսցի նա 'ի չարեաց անտի իւրոց, և ինքն այնուհետև յայտմ հետէ յապաշխարութի մտցէ։

Լսկ իբրև զառաջինն բազմեցոյց, ինքնին թագաւորն յոտն կացեալ հոլանեալ, 'ի մէջ գետին անցեալ, անապակ մատուցանէր առնն այ՝Ներսիսի յընթրիս անդ, և դեղ մահու ընդ կոտինդն խառնեալ մատուցանէր նմա։ Այս յորժամ ըմբէր զաւաժակն զայն՝ իմացեալ անդէն, խօսել սկսաւ և ասէ. Օրհնեալ է

ՏԸ ՏԱԾ ՄԵՐ, ՈՐ ԱՐԺԱՆԻ ԱՐԱՐ ՁԵՍ ԸՄՊԵԼ ԶԵԱԺԱԿՍ ՁԱՅՍ, ԵՒ ՀԱՍԱՆԵԼ ՄԱՀՈՒՍ՝ ՈՐ ՎԱՆ ՏՆՆ Է, ՈՐՈՒՄ ԵՒ ՅԱՆԿԱՑԵԱԼ ԷԻ 'Ի ՄԱՆԿՈՒԹԷ ԽՄԻՆ։ ԱՆԴ ԶԵԱԺԱԿՍ ՓՐԿՈՒԹԵ ԸՆԿԱԼՅՍ, ԵՒ ԶԱՆՈՒՆ ՏՆՆ ԿԱՐԴԱՑԻՑ, ԶԻ ԵՒ ԵՍ ՀԱՒԱՍԱՐԵՑԻՑ ՀԱՍԱՆԵԼ 'Ի ՄԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵ ՍՐԲՈՅՆ 'Ի ԼՈՅՍ։ ԱՅԼ ՔԵԶ, ՈՎ ԹԱԳԱՒՈՐ, ԱՐԺԱՆ ԷՐ ԻԲՐԵՒ ԶՍՐԸ ԹԱԳԱՒՈՐ ՅԱՅՍՆԻ ՀՐԱՄԱՆ ՏԱԼ ԵՒ ՍՊԱՆԱՆԵԼ. ԶԻ ՈՎ ԷՐ՝ ՈՐ ԱՐԳԵԼՈՅՐ ԶՔԵԶ, ԿԱՄ ՈՎ ԷՐ՝ ՈՐ ՊԱՀԷՐ ԶՁԵՌՆ ՔՈ'Ի ԳՈՐԾՈՅ, ԶՈՐ ԻՆՉ ԿԱՄԷԻՐ ԳՈՐԾԵԼ։ ԱՅՍ, ՏԸ, ԹՈՂ ՍՈՅԱ ԶՍՐՍ ԳՈՐԾՍ՝ ԶՈՐ ԻՆՉ ԳՈՐԾԵՑԻՆ ՅԻՍ. ԵՒ ԸՆԿԱԼ ԶՀՈԳԻ ԾԱՌԱՅԻՍ ՔՈ, ՈՐ ՀԱՆԿՈՒՑԻՉԴ ԵՍ ՏԱՄ ԱՇԽԱՏԵԼՈՅ. ԵՒ ԿԱՏԱՐԻՉ ՏԱՄ ԲԱՐՈՒԹԵՑ,

ԱՅՍ ԵՒ ԱՅՍՊԻՍԻ, ԵՒ ՈՐ ԻՆՉ ՆՄԱՆ ԵՆ ԱՅՍՊԻՍԻ ԲԱՆՔ, ԽՈՍԵՑԱՒ. ԵՒ ՅԱՐՈՒՑԵԱԼ ԳՆԱՑ 'Ի ՎԱՆՍ ԻՒՐ։ ԵՒ ԶՀԵՏ ԳՆԱՑԻՆ ՆՈՐԱ 'Ի ՏԱՃԱՐԷՆ ԱՂՔՈՒՆԻ ՏԱՄ ՄԵԾԱՄԵԾՔՆ ՆԱԽԱՐԱՐՔՆ ՀԱՅՈՑ, ԵՒ ՄՈՒՇԵՂ ՍՊԱԲԱՊԵՏՆ ՀԱՅՈՑ, ԵՒ ՀԱՅՐ ՄԱՐԴԱՊԵՏ. ԵՒ ՏԱՄ ՈՐ ՄԻՍԼԱՄԱՄ ԷԻՆ ԱՆԴ, ՄՈԼԻՆ ԸՆԴ ՆՄԱ 'Ի ՎԱՆՍ ՆՈՐԱ։ ԵՒ ԻԲՐԵՒ ԵՄՈՒԱ 'Ի ՎԱՆՍ ԻՒՐ, ՎԵՐԱՑՈՒՑԵԱԼ ԶՊԱՐԵԳՕՍՍ ԻՒՐ՝ 'Ի ՎԵՐԱՅ ՍՐՏԻՆ ՅՈՒՑԱՆԵՐ ԿԱՊՈՒՏԱԿԵԱԼ ՔԱՆ ԶՀԱՓ ՆԿԱՆԱԿԻ ՄԻՈՅ։ ԻՍԿ ՄԵԾԱՄԵԾՔ ՆԱԽԱՐԱՐԱՑՆ ՄԱՏՈՒՑԱՆԷԻՆ ՆՄԱ ԹԻՒՐԱԿԷՍ ԵՒ ԱՆԴԵՂԵԱՅՍ ՎԱՆՍ ԱՊՐԵԼՈՅ. ԻՍԿ ՆԱ ՈՉ ԿԱՄԵՑԵԱԼ ԶՍՅՆ 'Ի ԲԱՑ ՄԵՐԺԷՐ, ԱՅԼ ԱՍԷ. ՄԵԾԱՊԷՍ ԵՂԼ ԻՆՁ ԲԱՐԻ, ԶԻ ԵՀԱՍ ԻՆՁ ՄԵՌԱՆԵԼ ՎԱՆՍ ԶԳՈՒՇՈՒԹԵ ՊԱՏՈՒԻՐԱՆԱՑՆ ՎՐՆԵի։ ԵՒ ՔԱՆԶԻ ԴՈՒՔ ՁԵՂԷՆ ԳԻՏԷՔ, ԶԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍԷԻ ԸՆԴ ՁԵՎ՝ ԶՈՐ ԻՆՉ ԽՕՍԷԻ, ԱՐԺԱՆ ԷՐ ԻՆՁ ՀՐԱՊԱՐԱԿԱՒ ՄԵՌԱՆԵԼ 'Ի ՁԷՆՋ, ԶԻ ԱՅՆՄ[1] ԻՍԿ ՅԱՆԿԱՑԵԱԼ ԷԻ. ԲԱՅՑ ԲԱՐՈՒՔ ԵԼ ԻՆՁ ՎԻՃԱԿԷՆ ԸՆԴ ԸՆՏԻՐՍ, ԵՒ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՆՆ ԻՄ ՀԱՃՈՅ ԵՂԵՒ ԻՆՁ։ ՕՐՀՆԵՑԻՑ ԶՏԸՐ, ՈՐ ԱՅՍ ՄԱՍԷՆ ՎԻՃԱԿԻ ԺԱՌԱՆԳՈՒԹԵ ԱՊՐԵՑՈՅՑ ԶԻՍ. ԵՒ ՄԵԾԱՊԷՍ ԽՆԴՈՒԹԻՆ Է ԻՆՁ, ԶԻ ՎԱՂՎԱՂԱԿԻ ԼՈՒԾԱՅՑ ԵՍ ՅԱՆՕՐԷՆ ԵՒ ՅԱՄԲԱՐԻՇՏ ԱՇԽԱՐՀԷ ԱՍՏԻ ՅԱՅՍՄԱՆԷ։ ԵՒ ԲԱՂՈՒՄ ԻՆՉ ԽՕՍԵՑԱՒ ԸՆԴ ՆՈՍԱ, ԵՒ ԶԳՈՒՇԱՑՈՅՑ ՁՆՈՍԱ. ԵՒ ԱՂԱՉԵԱՑ ԶԱՄԵՆԵՍԻՆ ԶԳՈՒՇԱՆԱԼ ԱՆՃԱՆՑ, ԵՒ ՊԱՀԵԼ ԶՊԱՏՈՒԻՐԱՆՍ ՏՆՆ։

1 'Ի ՀՈՐՍ ՕՐԻՆԱԿԱՆ ԱՅԺՄ։

Եւ յետ այսորիկ սկսաւ զարիւնն գունդ գունդ 'ի ներքուստ ընդ բերանն արտաքս հոսել իբրև զերկուս ժամս։ Եւ յետ այսորիկ յարուցեալ եկաց յաղօթս. եդեալ ծունր, խնդրեր զթողութիւն 'ի վերայ սպանողին իւրոյ։ Ապա յետ այսորիկ յիշեր յաղօթս իւր զամ մարդս, զմերձաւորս և զհեռաւորս, զանարգս և զպատուականս. և զայնոսիկ անգամ, զորս երբեք ոչ ճանաչէր զնոսա, յիշեր յաղօթս իւր։ Եւ յետ աղօթիցն կատարելոյ համբարձեալ զձեռս իւր և զաչս իւր ընդ երկինս, ասաց. Տէր Յ՚Ն՚Ռ՚, ընկալ զհոգի իմ։ Եւ զայս ասացեալ, արձակեաց զոգի։ Եւ առեալ զմարմին սրբոյն Կիրսէսի զառնն ՅՍ պաշտօնեայք եկեղեցւոյն, և Փաւստոս եպիսկոպոս, և պաշտօնէիցն գլխաւոր՝ Տրդատ և Մուշեղ սպարապետն և Հայր մարդպետ, և ամ ազատագունդ բանակն արքունի, բարձին յաւանէն 'ի Խախ գեղջէ՝ ուր գործն կատարեցաւ, տարան 'ի Թիլն յաւանն յիւր գեւղն։ Հանդերձ սաղմոսիւք և օրհնութիւք, կանթեղիւք վառելովք և մեծապաշտմամբք և բազում յիշատակօք զնոքն յուղարկեցին։ Բայց մինչ էր ծածկեալ զմարմին սրբոյն, ինքն Թագաւորն Պապ երթեալ պատեաց և թաղեաց 'ի մարտիրոսական 'ի բնակութիւնն. բայց Թագաւորն Պապ 'ի չքմեղս լինելով՝ չլուելոյն առնէր, իբրև թէ իւր չիցէ գործեալ զայն։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Յաղագս տեսլեանն՝ որ երևեցաւ արանցն սրբոց անապատաւորաց, Հաղիտայ և Եպիփանու, մինչ գեռ նստէին 'ի լերինն։

Արդ երկու կրօնաւորքն անապատաւորքն մինչ գեռ նստէին 'ի լերինն, անուն միում Հաղիտա, և էր սա ազգաւ ասորի, և նստէր Արեւծ լերինն, և միումն անուն Եպիփան, և էր սա ազգաւ Յոյն, և նստէր սա 'ի մեծի լերինն 'ի տեղի դիցն՝ զոր կոչէն

սԹոռ Ղնահտայ[1], և էին սոքա երկոքին լեալ աշակերտք սրբոյն Դանիէլի մեծի՝ զոր վերագոյնն յիշեցաք, և մինչ դեռ յիւրաքանչիւր լերին նստէին սոքա, 'ի ժամու՝ յորում մեռաւ Ներսէս, տեսանէին սոքա յիւրաքանչիւր լեառնէ աջք բացաք 'ի տուընջեան ժամու զայրն այ զ'Ներսէս իբրև յամպս յափշտակեալս։ Զ'ի հրեշտակք այ տանէին զնա 'ի վեր, և գունդք գունդք գային նմա առաջի։ Իբրև տեսին զայս տեսիլ անապատաւորքն, զարմացեալք ընդ գործն ընդ այնս. բայց Շաղիտայն՝ որ էրն յԱՂՇեւճ լերինն՝ քանզի էր մնուտ այր, գիտաց եԹէ հանգուցեալ է՝ երն 'Ներսէս, և այն ոգիք նորա երևին նմա. բայց Նպլիսան եղ 'ի մոի իւրում, Թէ մարմնով իցէ յափշտակեալ զնա։ Այսպա յարեան յիւրաքանչիւր լեառնէ ընԹացեալք փուԹով մինչև յԱկեղեաց գաւառ, եկին քննեցին տեսին զի կատարեալ էր՝ որ հայրապետն 'Ներսէս. և եկին մինչև 'ի Թիլոյ գեւղն, և տեսին զտեղին՝ յորում եղեալ էր զնա, և դիպեալք միմեանց արքն հաւատարիմք պատմէին միմեանց զոր ինչ տեսին՝ առաջի ժողովրդոյն։ Բայց էին արքն այն հրեշտակակրօնք, յանապատին մնեալք և կեցեալք. զի և կարօղք էին նշանս առնել մեծամեծս, և ամենեցուն գիտելի և ծանօԹք էին գործք նոցա։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Յաղագս սրբոյն Շաղիտայի։

ՇԱՂԻՏԱՅՍ, այր՝ որ, էր լեալ աշակերտ մեծին Դանիէլի. և 'ի տղայութենէ իւրմէ մնեալ էր համակ յանապատս, և ընդ անապատաւորս խոտաճաշակ լեալ էր։ Այլ յետ հանգստեան սրբոյն 'Ներսիսի գնաց ջոգաւ 'ի գաւառն Կորդուաց, և առնէր նշանս և սքանչելիս, և ընակէր 'ի մէջ առիւծուց.

1 Յամ՝ օրինակս Նահապայ։

աւելի քան զքսան առեւծ հանապազ շրջէին ընդ նմա հանապազորդեալք։ Եւ զի լինէր՝ զի յորժամ ցաւ ինչ ցաւէր գազանացն, գայլին շուրջ պատէին գնոսվաւ, և ձգձգէին զՇ աղիտայն, և նշանաւ առնէին խնդրել զբժշկութիւն։ Եւ էր երբեմն՝ զի առեւծ մի մեծ, և էր ելեալ եղէգն ընդ թաթուլ բազկին առիւծոյն, և եկն առեւծն առ սուրբն Շ աղիտայն 'ի լեառնն՝ յորում նստէր. և զօրէն մարդոյ 'ի վեր առեալ զթաթուէն՝ ցուցանէր նմա զվէրն, նշանացէր նմա բժշկել զինքն։ Իսկ ՝երբն Շ աղիտա հանէր զեղէգն՝ որ ընդ վէրն մտեալ էր, և թքանէր 'ի վէրն, և թաշկինակաւն՝ զոր ընդ գլուխն իւր էր ածեալ՝ հանեալ պատէր զթաթ առիւծուն և բժշկէր։

Եւ այսպէս բիւրապատիկ և պէսպէս առնէր զքսքանչելս։ Եւ գազանք էին կենաց կցորդ նորա, մինչ շրջէր նա յանապատս զՀամ աւուրս կենաց իւրոց։ Եւ 'ի գետ իբրև հասանէր, կօշկօքն անցանէր 'ի վերայ ջուրցն գետոյն, և ոչ թանային կօշիկք նորա։ Եւ յորժամ 'ի շէն ուրեք իջանէր, զբազում մոլորեալս դարձուցանէր նշանօք և արուեստիւք։ Մ՚իայն շրջէր. և իբրև իջանէր 'ի շէնս, առնէր բժշկութիւնս բազում հիւանդաց. և էր սա աւուրքք ծերագոյն։

Այլ Համ մարդ սպասէր և ակն ունէր մահու նորա, վասն ըմբռնելոյ զմարմին նորա։ Իսկ ՝երբն Շ աղիտա իմացեալ զայս՝ թէ սպասէն առնուլ զմարմին նորա բազում մարդիկ, ապա խնդրեաց Շ աղիտա յՀայ, զի մի՛ ոք ըմբռնեսցէ զմարմին նորա։ Եւ եղև օր մի յաւուրց, որպէս սովորութիւն էր իւր, գնալ 'ի վերայ ջուրցն գետոյն։ Եւ մինչ դեռ անցանէր նա ընդ գետն Կորդուաց, ըստ խնդրուածոյն իւրոց՝ որպէս և խընդրեաց նա, յանկարծակի՝ իբրև կայր 'ի մէջ գետոյն՝ յանկարծօրէն ընդ ջրովն մտեալ սուրբն Շ աղիտայն ծածկեցաւ։ Եւ մեծ գոյժ եղև գաւառին։ և ժողովեցան անչափ բազմութիւք մարդկանն 'ի մի վայր եկեալք կուտեցան, մինչև հատին դարձուցին ընդ այլ շրջեցին զգետն։ Եւ խնդրէին զմարմինն սրբոյն Շ աղիտայի, և ոչ կարացին ուրեք գտանել. զի իւր խընդրուածքն առ Հած այսպէս էին լեալ յառաջագոյն, սոյնպէս և կատարեցաւ։

Յաղագս սրբոյն Եպիփանու։

Այլ երանելին Եպիփան էր ընդ սրբոյն Շաղիտայի աշակերտ եղեալ մեծին Դանիելի. և սա՝ի մանկութենէ մեծալ էր յանապատի։ Եւ յետ մահուանն մեծի քահանայապետին Ներսիսի եկն բնակեցաւ նա՝ի մեծ Ծոփս յանապատին, որ կոչի անուն տեղւոյն Ամբրէ, ՝ի վերայ գետոյն՝ որ անուանեալ կոչի Ամուշեղ։ Եւ էր բնակեալ՝ի քարանձաւս, և հանապազորդեալ էր ընդ գազանս անապատի, և ժողովէին առ նա արջք և ինձք։ Եւ էր սա հանապազորդեալ յանապատին, և առնէր սա մեծամեծ նշանս և սքանչելիս. և դարձուցանէր զբազում մոլորեալս՝ի հեթանոսութէ՝ի քրիստոնէութի, և ընդոյր զերկիրն Ծոփաց վանիւք. և դնէր վարժեար ընդ ամ երկիրն Ծոփաց, և լինէր ՝ի Եպիփան լոյս երկրին Ծոփաց, և լուսաւորէր զնոսա մեծապէս։

Ինչպանէր և յերկիրն Պղձնեաց, լուսաւորէր և զնոսա. և ընդոյր զերկիրն Պղձնեաց վանիւրով. և շինէր վկայանոց մի յաւանին՝ի քաղաքին Տիգրանակերտի, և յօր յիշատակի սրբոցն՝ի փրկութի և՝ի բարեխօսութի աշխարհի. և առնէր ինքն նշանս, և դառնայր ինքն յիւր վանսն։ Եւ էր մօտ՝ի գետն Ամուշեղ աղբեւր մի, և ձուկն բազում ելանէր ընդ ակն աղբերն. և բազում մարդիկ հանեալ զձուկն, օգտէին՝ի նմանէ։ Այս երկու եղբայրք՝ի վերայ ձկանն հակառակեալք, էսպան մինն զմինն. և իբրև գիտաց ՝ի Եպիփան, ասէ. Յայսմ հետէ այսի ոք ձուկն մի՛ կերիցէ։ Եւ անդէն դառնացաւ ձուկն տեղւոյն, և եղև իբրև զլեղի դառն մինչև ցայսօր ժամանակի. և ոչ ոք որսաց զնա մինչև ցայսօր ժամանակի։ Բազում և այլ զօրութիւնս առնէր և նշանս անչափս։

1 Ցերիս օրինակս չկայ ընդ. և՝ի մուտ օրինակի ՝ԷՔ Եպիփան ընկէր սրբոյն Շաղիտայի։

Իբրև բազում կարգս ուղղութեան թողոյր 'ի գաւառսն յայնոսիկ ՝ընդ Եպիփան, իսկ նա էառ ընդ իւր զաշակերտսն իւր արս միանձունս լեառնականս անապատականս, արս հինգ հարիւր, երթալ գնալ յերկիրն Յունաց։ Եւ մինչ դեռ երթային, 'ի ճանապարհին դիպեցաւ նոցա կին մի. Իբրև անցին ընդ կինն, սկսաւ փորձել զնոսա Եպիփան, և ասէ. Իբրև զի՞ դեղեցիկ էր կինն և վայելուչ։ Ասէ մանուկ մի յաշակերտաց[1] անտի. Կինն, զոր դու դովեցեր, միականի էր։ Եւ ասէ ՝ցնա Եպիփան. Դու բնաւ ընդէ՞ր նայեցար տեսանել զերեսս նորա. տեսանէս զի խորհուրդք չարք կան 'ի քեզ։ Եւ անդէն մեկնեաց զմանուկն յիւրմէ, և հալածեաց զնա։ Եւ ինքն չոգաւ եմուտ 'ի ծով մեծ, և նաւաք անցին յանապատ 'ի կղզիս. և ունէր զկղզին զայն օձից բազմութիւնք, և էին յայնմ կղզւոջ բնակեալ օձք իժք և քարբք, բազում գազանք դաժանք թունաւորք։ Եւ եղև իբրև չոգան, ելհաս ՝ցնա Եպիփան 'ի կղզին յայն, մերժեցան անտի գազանքն, և թողին զկղզին և գնացին։ Եւ այնուհետև ոչ ինչ վնաս եղև նոցա 'ի կղզւոջն յայնմիկ, այլ բնակեցան անդ խաղաղութիւն։ Ընդ եկեաց ՝ցնա Եպիփան, անդէն 'ի նմին կղզւոջ հանգեաւ։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Յաղագս մեծամեծ նշանացն և սքանչելեացն, որ երևեցաւ յայ 'ի Մամբրէ յետ գնալոյն Եպիփանու։

Ապա իբրև գնայր սուրբն Եպիփան 'ի գաւառէն Ծոփաց յիւրմէ միանձնանոցէն՝ որ անուանեալ կոչի Մամբրէ, երթող անդ բազում եղբարս միաբանս միահաւանս հաւատացեալս կրօնաւորս քրիստոնէիցն, լեառնականս ճգնաւորս միանձունս. և 'ի վերայ նո-

1 Յերկուս օրինակս աշակերտաց։

ցա երեց մի գլխաւոր։ Բայց էին 'ի նոցանէ ոմանք, որ բնաւ ամենևին այլ ինչ կերակուր չէր ճաշակէլ նոցա 'ի մանկութենէ իւրեանց, բայց լոկ բանջար և ջուր. և զհամ գինւոյ գիտէին ոչ զիարդ լինի։

Եւ էր անդ եղբայր մի խստակրօն, որ մթին վարս վարէր. և ոչ ճաշակէր ամենևին 'ի բաժակէն կենաց՝ բայց փրկութենն յուսոյն յարութեն, այս ինքն յարեանէն ահն մերոյ Յեսու Քրիստոսի։ Օ՛ի ոչ կարէր հաւատալ՝ թէ ճշմարտիւ արիւն իցէ Աստուծոյն այ, յորժամ ելանիցէ 'ի սեղանն այ. այլ նմա գինի լոկ թուէր թէ իցէ, վասն այսորիկ վիճէր հանապազ ընդ բազումս։ Իսկ եղև օր մի յաւուրց, իբրև կատարէին անդ ըզխորհուրդս գոհութեան պատարագին 'ի վկայանոցի անդ յայնմիկ՝ զոր էր շինեալ սրբոյն Եպիփանու, յորժամ հանին զհացն սրբութեամբ և զգինին՝ արիւնանալ պատարագին 'ի վերայ սեղանոյն, և կայր եղբայրն անհաւատ 'ի վկայանոցին։ Եւ երեցն ելեալ կայր 'ի վերայ առաջի սրբոյ սեղանոյն. յորժամ յառաջ քան զմատուցանել զպատարագն համբառնայր զձեռս երեցն 'ի վերայ սեղանոյն, և ասէր.

Տէր ՝ած զօրութեց, որ արարեր զամ յոչընչէ, և ստեղծեր զմարդ 'ի հողոյ կենդանի և անապականացու. և անցին զքոյով պատուիրանաքդ, և անկան 'ի մահ իւրեանց պատուիրանազանցութենն։ Եւ արդ արդար դատաստանաք քովք մերժեցեր զնս 'ի դրախտէն փափկութենէ յայս աշխարհ ուստի ստեղծեր, և գրաւեցան լինել ընդ մահապարտութեամբ. սակայն ոչ թողեր 'ի ձեռանէ, բարերարդ ՝ած, այլ տեսչութեամբ և շնորհօք միածնիդ քո վերստին ծննդեամբ նորոգեցեր զստեղծուածս քո. և բազում կերպարանաքդ այցելու եղեր արարածոց քոց։ Աշաքեցեր զմարգարէս, արարեր զօրութիս ազգի ազգի նշանս 'ի ձեռն սրբոյ քոյ՝ որք յազգս ազգս իւրեանց հաճոյ եղեն առաջի քո, ետուր զօրէնս յօգնականութեան, առաքեցեր հրեշտակս վերակացուս։ Իսկ իբրև եկն կատարած ժամանակաց, խօսեցար ընդ մեզ միածին Որդւովդ քո՝ որով զաշխարհս արարեր, որ է պատկեր փառաց քոց և կերպարանք էութեան քո, և կրէ զամ բանիւ զօրութեամբ. որ ոչ ինչ յափշտակեաց զէական

Հօրն զմտութեն հաւասար պատիւ անձինն, այլ ՝ածն յաւիտենական 'ի յերկրի երևեցաւ, ընդ մարդկան շրջեցաւ, 'ի սրբոյ կուսէն մարմնացաւ, զկերպարանս ծառայի էառ, և եղև 'ի նմանութի տկարութես մերոյ, զի արասցէ զմեզ նմանակիցս փառաց իւրոց։ Զի յամ գայթակղութեց և յամ մոլորութէ փրկեցեր զմեզ. և բարձեր յամ երկրէ զանցուսութիւն թերահաւատութե, և ետուր զյուսոյ զհաւատս յարուն՝ ամ քոց արարածոց, որոց և զնմանութի պատկերի կերպարանաց քոց շնորհեցեր։ Եւ հաւատովքն, զոր ետուր զօրանալ 'ի մարդիկ, զամենեսեան առ հապարակ միանգամայն կեցուցեր շնորհելով. զի ոչ եթէ վասն արդարութեց ինչ մերոց, զի ոչ ինչ արարաք զբարիս 'ի վերայ երկրի, այլ վասն ողորմութե և գթութեան քո՝ զոր սիրեցեր 'ի մեզ՝ համարձակիմք խնդրել 'ի սրտագէտդ, որ քննես զսիրտս և զերիկամունս որդոց մարդկան։ Ո՛ու, ՝ՀՐ, սրտագէտ յամի, դու գիտես զՀՀմարտութե զվաստակոց զառնս զայսորիկ, զի խստամբերութեք վարի 'ի վարս վաստակոց իւրոց, և չիք հաւատք 'ի սմա. արդ յաւել 'ի սա հաւատս քան զՀատ մանանխոյ, զի մի՛ կորիցէ անձն սորա։ Հովիւ քաջ, որ ելերդ 'ի խնդիր ոչխարին կորուսելոյ, և եդիր զանձն քո 'ի վերայ խաչանց քոց, արդ և զսա փրկեա 'ի թերահաւատութէս՝ յոր ըմբռնեալս է, զի մի՛ յափշտակեսցէ թշնամին զանձն սորա, և քո ստեղծուածս և նմանութի կերպարանացս յապականութի յաւիտենական կորստեան մատնեսցի։

Եւ զայս աղօթս մատուցանէր երէցն յառաջ քան զմատուցանելն պատարագին. և յետ այսորիկ մատոյց կատարեաց զպատարագամատոյցն զՀամ։ Բերև ասաց. Հայր մեր՝ որ յերկինս, եղ ծունր և կայր յաղօթս յերկար։ Եւ մինչ դեռ եղեալ էր նորա ծունր և կայր յաղօթս, և կայր եղբայրն թերահաւատ 'ի յոտն, 'ի խոնարհ 'ի բեմէն նայէր 'ի սեղանն, սկսաւ տեսանել մեծամեծ սքանչելիս աչօք բացօք իւրովք։ Զանազն տեսանէր զՀՀ, զի իջեալ կայր 'ի վերայ սեղանոյն. և բացեալ էր իւր զվերսն 'ի կողմանէ, զոր 'ի կողն գեղարդեամբն խոցեցին. և 'ի

վերէ կողէն արիւնն ցնցղկացեալ հոսէր 'ի բաժակ անդր պատարագին, որ եդեալ էր 'ի վերայ սեղանոյն։ Իսկ իբրև ետես զայս եղբայրն Թերահաւատ կրօնաւորն, զարհուրեալ դողացեալ խռովեալ տագնապեալ յերկիր կործանեալ կայր, 'ի բերանս հարեալ, պարտեալ Թալացեալ ոգին սպառեալ յինքենէ։

Այսպէս երէցն յարուցեալ կատարեաց զգործ սրբութեան պատարագին. ինքուցեալ զսրբութեան օրինացն 'ի բեմբէն, ետես զեղբայրն, զի յերկիր կործանեալ Թալացեալ կայր։ Իբր ետ ում տալ էր զօրէնսն, և եհան զմնացորդսն 'ի սեղանն, ապա ինքն մատուցեալ բուռն հարկանէր զեղբօրէն. և տեսանէր, զի նա Թալացեալ պակուցեալ կայր 'ի գետնին։ Այսպէս ջուր արկանէր ընդ բերանաւն. իսկ նա ուրեմն եթէր զոգի. և զգաստացեալ, մատեաւ եկաց պատմեաց ըզմեծամեծ սքանչելիսն՝ զոր ինչ ետեսն։ Այսպէս կամեցաւ տալ նմա երէցն 'ի սրբութենէն անտի օրինացն. իսկ եղբայրն չհաւանեալ յառնոյր յանձն, վասն զի անարժան համարէր զանձն իւր։ Այլ հոր հատեալ անձինն, 'ի ներքս ի՛ջեալ, զեւթն ամ ապաշխարեալ զթերահաւատութեան մեղաց իւրոց, և յետ եւթն ամին ապա զանձն արժանի ապաշխարութեան համարէր, ելանել առնուլ ընդ օրէնսն հաւասարել։ Սակայն 'ի նոյն հոր ինքուցեալ զանձն իւր զամ աւուրս կենաց իւրոց, մինչև 'ի նմին հոր վաղճանեցաւ եղբայրն։ Այսպէս և նոյն երէցն հանգեաւ, և 'ի միասին երկոքին եդան 'ի ներքս 'ի վկայանոցին, ուր սքանչելիք երևեցան յեղբայրանոցին Եպիփանու։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Յաղագս Յուսկան՝ որ էր 'ի զաւակէ Աղբիանոս եպիսկոպոսէ, զոր կացոյց փոխանակ Ներսէսի Թադաւորն Պապ յիւրոց կամաց՝ առանց մեծ եպիսկոպոսապետին Կեսարու. և վասն այսորիկ բարձաւ իշխանութիւն Հայրապետացն Հայոց զեպիսկոպոսն ձեռնադրել։

Եղեւ յետ մահուանն Հայրապետին Ներսէսի կացոյց Թադաւորն Պապ զՅուսիկ եպիսկոպոս, որ էր 'ի զաւակէ Աղբիանոս եպիսկոպոսին Մանազկերտոյ։ Եւ հրաման ունել նմա զտեղի Հայրապետացն, իշխել փոխանակ նորա՝ զոր սպան. և էր նա փոխանակ նորա։ Բայց լուաւ եպիսկոպոսապետն Կեսարու՝ թէ սպանին զմեծ Հայրապետն Ներսէս, և փոխանակ նորա տեղի նորուն զոր կացուցին զՅուսիկ՝ առանց նորա հրամանի եղեալ, զի ոչ որպէս սովոր էին առ Հայրապետն տանել 'ի Կեսարիա 'ի ձեռնադրութիւն։

Եւ իբրեւ այս մեծ զարմանալով ցասման եղեալ Հայրապետին Կեսարու վասն բանիս այսորիկ, և եղև ժողով եպիսկոպոսացն սիւնհոդոսին նահանգին Կեսարու առանց Հայրապետին. և գրեցին թուղթ ցասմամբ մեծապէս։ Եւ նոյնպէս և գրեցին թուղթ առ Թադաւորն Պապ, և լուծին զիշխանութիւնն կաթողիկոսութեան. զի որ լիցին Հայրապետ Հայոց, նա դրանն արքունի իշխեսցէ՝ զհայն օրհնել. և մի իշխեսցէ ձեռնադրել զեպիսկոպոսն Հայոց, որպէս սովորութիւն էր 'ի ընէ։ Եւ յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն Հայոց զեպիսկոպոսն ձեռնադրել. այլ որ լինէին եպիսկոպոսք ամ գաւառաց գաւառաց Հայոց և կողմանց կողմանց, այնուհետև յայնմ հետէ որ միանգամ լինէին եպիսկոպոսք սահմանացն Հայոց, երթային 'ի քաղաքն Կեսարացւոց, և անդ լինէին եպիսկոպոսք։ Ո՛ւ զի յայնմ հետէ բարձաւ իշխանութիւն յերկրէն Հայոց, այնուհետև ոչ իշխէին եպիսկոպոսք ձեռնադրել. բայց որ լինէր աւագ եպիսկոպոսացն, 'ի վերոյ միայն նստէր, և հաց օրհնէր

թագաւորացն։ Այլ սա քրիստոնեայ, բայց համարձակութիւն յանդիմանութիւն ինչ ընդ ումեք չիշխէր բարբառել. կամ զի երկնչոտ էր և հաւան, և ըստ կամաց թագաւորին միայն ունէր զպատիւն, և կայր 'ի լռութիւն և 'ի հանդարտութեան զամաւուրս կենաց իւրոց։

ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս սգոյն, որպէս սգային զՀայրապետն Ներսէս, և լինէին զնը-մանէ կաթողի։

Զգան յետ սպանանելոյն Պապայ զսուրբ Հայրապետն Ներսէս, տխրեցաւ ամ մարդ խոր տրտմութիւն. և ամ մարդ երկրին Հայոց հաւանէին խօսէին և ասէին. Բարձեալ են արդ փառք Հայոց, զի բարձաւ արդարն այ յայսմ երկրի։ Խօսէին իշխանքն և նախարարքն, և ասէին. Գիտեմք արդ թէ կորեաւ երկիրս մեր. զիարդ հեղաւ արիւն արդար 'ի տարապարտուց, մանաւանդ զի վասն այ սպանաւ։ Այլ խօսէր Մուշեղ սպարապետն Հայոց և ասէր. Սրբոյն այ հեղաւ արիւն 'ի տարապարտուց. այսուհետև ես ոչ կարեմ երթալ 'ի վերայ թշնամեաց, և ոչ նիզակ ումեք ուղղել։ Զի գիտեմ եթէ եթող ած 'ի ձեռանէ զմեզ. և լքեալ եմք, և ոչ կարեմք համբառնալ զգլուխս մեր. զի գիտեմ՝ եթէ չիք յաղթուի 'ի վերայ թշնամեաց երկրիս Հայոց. յաղթիչ նորա էր յաղթուի որ մեռաւն, և ազգի նոցա։ Այլ սգային ամ ազատք և շինականք ծագէ 'ի ծագ ամ սահմանաց երկրին Հայոց, ազատք և շինականք ամ բնակիչք տանն Թորգոմայ, հայ լեզուն առ հասարակ։

ԳԼՈՒԽ ԼԱ.

Յաղագս թէ որպէս զկնի մեռանելոյն Հայրապետին Ներսիսի, և կամ որպէս 'ի նախանձ մտեալ տապալեաց Թադաւորն Պապ զնա եդեալ կրօնս կանոնիցն՝ որ ինչ եդան 'ի Ներսիսէ առ կենդանութեան նորա 'ի նմանէն։

Իսկ Թագաւորն Հայոց Պապ զի թէպէտ և սպան զՀայրապետն աշխարհին Հայոց զ'Ներսէս, սակայն ոչ յագեցաւ մահուամբ նորա, այլ ջանայր այսպէս՝ թէ զինչ միանգամ կարգք իցեն ուղղութեան 'ի 'Ներսիսէ եդեալ յեկեղեցւոջն, եղծեսցէ և խանգարեսցէ։ Այլ սկսաւ նախանձ վարել ընդդէմ յառաջագոյն կանոնելոցն 'ի նմանէ. և սկսաւ հրաման տալ յայտնապէս յաշխարհին աւերել զայրենոցն և զորբանոցն՝ զոր շինեալ էր 'Ներսէս 'ի գաւառս գաւառս, և աւերել զկուսաստանսն 'ի գաւառս գաւառս և յաւանս յաւանս պարսպեալս և ամրացեալս՝ որ նորին 'Ներսիսի էր շինեալ վասն ամրապահս առանգոյն [1] զգուշութեան։ Վասնզի յիւրում կենդանութեանն Երանելոյն 'Ներսիսի էր շինեալ. շինեաց զայս կուսաստանս յամ գաւառս, զի որ միանգամ կուսանք և հաւատացեալք իցեն՝ անդր ժողովեսցին 'ի պահս և յաղօթս, և կերակրեալ յաշխարհէ և յիւրաքանչիւր ընտանեաց։ Զայն աւերել հրամայէր Պապ Թագաւորին, և զկուսանսն հաւատացեալս տայր հրամանս 'ի խառնակութեան պղծութեան։

Այլ յամ աւանս էր շինեալ նորին 'Ներսիսի և հիւանդանոցս, յամ կողմանց և ռոՃիկս և գարմանս կարգեալս, և արս հաւատարիմս Թողեալ տեսուչս հիւանդացն և աղքատացն. նոյնպէս և այնոցիկ յանձն արարեալ որք երկիւղածքն էին յայ, որք դատաստանացն յաւիտենականացն և գալստեանն Քրիստոսի սպասէին։ Զվերակացուսն հալածէր Թագաւորն յիւրաքանչիւր տեսչութենէ, և զտեղիսն 'ի բաց աւերէր։ Զոր վերակացուսն կարգեալ էր յաղագս չքա-

1 'Ի չորս օրինակս առանդոյն։

ւորացն և աղքատաց տեսուչ, զնոսա 'ի բաց հա-
լածէր. և հրաման տայր ամ աշխարհի իշխանուհն
իւրոյ. Աղքատքն բայց եթէ 'ի մոյր ելցեն. այլ անդր
ոք ինչ մի՛ իշխեսցէ տանել, եթէ ոչ նոքա եկեսցեն
ժառեսցեն աղաչեսցեն, ապա թէ զտանել հաղիւ ինչ
կարասցեն։ Եւ զկարգս պտղոյն և զտասանորդացն՝ որ
'ի նախնեացն կարգեալ սովորութիւն էր տալ յեկեղե-
ցին, վասն այնորիկ հանէր հրաման ընդ աշխարհ զի
մի՛ ոք տացէ։

Եւ յաւուրսն 'Ներսիսի հայրապետին ոչ ոք իշ-
խէր 'ի նմանէ հանել կամ թողուլ զկին իւր զամու-
սին յամ երկիրն Հայոց, զոր միանգամ քօղով կամ
պսակաւ հարսանեացն օրհնութիւն առեալ էր. և ոչ
այլ առնել միսանգամ իշխէր ոք համարձակել։ Եւ-
թէ յանկարծ մեռանէր ոք, ոչ ոք իշխէր անյուսութիւն
արտաքոյ կարգի կանոնի եկեղեցւոյ լալ զմեռեալն.
և ոչ կոծ ոք դնէր կամ աշխարանս մեռելոյն, և ոչ
ձայնս ոք արկանէր 'ի վերայ մեռելոյն յաւուրսն 'Ներ-
սիսի. այլ լոկ արտասուօք և ըստ արժանի սաղմո-
սիւք և օրհնութիւք, կանթեղօք և մոմեղինօք լուցե-
լովք զմեռեալն յուղարկէին։ Իսկ յետ մահուան
նոր այնուհետև ամ մարդ առին հրաման համարձա-
կութիւք 'ի թագաւորէն, թողուլ զկանայս զամուսինս
իւրեանց. էր զի մի այր տասն կին փոխէր. և առ-
հասարակ յանօրէնութի դարձան միանգամայն։ Այս-
պա յետ մահուան 'Ներսիսի յորժամ զմեռեալն լային,
փողովք և փանդռօք և ֆնօք զկոծն պարուցն կա-
քաւելով, զտիգն հատեալս, զերեսս պատառեալս,
արք և կանայք պղծութիւք ճիւաղութիւք պարուք դէմ
ընդ դէմ հարկանելով, և կամ ափս [1] հարկանելով,
զմեռեալն յուղարկէին։

Իսկ յամն 'Ներսիսի զաղքատս բնաւ ամենևին
'ի մոյր ոչ տեսանէր ընդ ամ սահմանսն Հայոց. այլ
անդէն 'ի հանգստեան նոցին, այս ինքն յօրկանոցսն,
ամ մարդիկ տանէին զամ պիտոյս նոցա. անդէն իսկ
անկարօտ յամ ումեքէ լցեալ էին։ Իսկ յետ մահուն

1 'Ի ջորս օրինակս կամ ասէ. յօրինակի մուսմ կամ ծափս. մեզ այս-
պէս ուղղել պատշաճ դատեցաւ։

քահանայապետին թէ առնէր զք հանգիստ աղքատացն, մեծ պատիժս կրէր 'ի Թադաւորէն։

Իսկ յաւուրսն Կերսիսի ընդ ամ երկրին Հայոց կարգք պաշտաման եկեղեցւոյն մեծապէս պայծառացեալ էր, և բազմութիւն սրբոց պաշտօնէիցն կանոնէլոցն։ Եւ յիշատակ սրբոց վկայից յաւուրս նոր յամ տեղիս Հայոց մեծախումբ ժողովովք[1] հանապազ պայծառանային, և պատիւ հարցն եպիսկոպոսաց յամ գաւառս Հայոց յաձախէր ըստ արժանի իւրեանց. և կարգք վանականաց և 'ի շէնս և յանշէնս առ հասարակ ծաղկեալ։ Զ.յլ ամ եղծեալ ապականեալ խանգարեցաւ յետ մահուան նոր։

Իսկ յաւուրս քահանայապետուն Կերսիսի ամ գաւառք Հայոց յամ 'ի շէնս և 'ի գեղս յամ կողմանս Հայոց առ հասարակ 'ի հրամանէ քահանայապետին էին շինեալ օտարատունք հիւանդանոցք օտարանոցք. և ամ մարդիկք երկրին Հայոց էին պրտղաբերք և ողորմածք առ 'ի յիշել զաղքատս և զնեղեալս զտառապեալս և զօտարս, զհարստահարս, զնրդեհս, զպանդուխտս, զհիւրս զանցաւորս. և էր նոցա կարգեալ վերակացուս սրբոյն Կերսիսի, և դարմանս 'ի տեղեաց տեղեաց։ Իսկ յետ մահու նոր աւերեաց զայն ամ Թադաւորն Պապ, և անարգեաց զպատիւ եկեղեցւոյ. և բազում ինչ կարգ և կանոնաց ուղղութիւն յօրինուածոց՝ զոր եդ հայրապետն Կերսէս, և անցեալ դարձեալ 'ի մոռացօնս զամ կարգեալն տապալէր։ Յետ նոր ելին յաշխարհէս բազում գաւառք Հայոց և բազում մարդիկ 'ի հնութիւն դիւապաշտութիւն դարձան, և ընդ բազում տեղիս Հայոց կուռս կանգնեցին 'ի համարձակութիւն Թագաւորին Պապայ. զի ոչ գոյր յանդիմանիչ, և ոչ ոք էր այն՝ յորմէ խիթային. զինչ և կամէին գործել, համարձակութիւն գործէին. բազումք պատկերս կանգնեալ, երկիր պագանէին։

Եւ հատ ևս յարքունիս Պապ Թագաւոր զհող եկեղեցւոյն, զոր տուեալ էր Թագաւորին Տրդատայ առ մեծաւն Գրիգորիս քահանայապետիս 'ի սպաս

1 Յամ օրինակս ծողովք։

պաշտամանն Եկեղեցւոյն ընդ ամ երկիրն Հայոց։ Զի յԵւթն հողոյն զՀինգն հատանէր յարքունիս, և զերկուսն միայն Թողոյր երկուս հողս։ Այլ ըստ հողոյն Թողոյր երկուս երկուս առ գեղ մի երեց և սարկաւագ, և զայն 'ի սպասու կացուցանէր յիւր 'ի ծառայութիւն զեղբարս և զորդիս երիցանցն և սարկաւագացն։ Զի նմա այսպէս Թուեցաւ՝ եԹէ զայն չար ինչ կամացն հեՀուկս Ներսիսի առնիցէ 'ի կենդանեաց առ մեռեալս, վասն Թշնամութեան՝ զոր ունէր ընդ նմա։ Այլ զայն ոչ ածէր զմտաւ՝ Թէ զանձն կորուսանէ։ Այլ 'ի ժամանակին նուաղէին ամ կարգք Եկեղեցւոյ պաշտամանն սպասուցն յամենայն երկիրն Հայոց։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Յաղագս Թագաւորին Պապայ Թէ որպէս խոտորեցաւն 'ի Թագաւորէն Յունաց, և կամ որպէս սպանաւ 'ի զօրացն Յունաց։

Այլ շրջեաց զմիտս իւր Թագաւորն Պապ և խոտորեաց զսիրտ իւր 'ի Թագաւորէն Յունաց, և կամեցաւ խառնել զսէր իւր և առնել միաբանութիւն ընդ Թագաւորին Պարսից։ Այլ սկսաւ Թիկունս իւր առնել զարքայն Պարսից, և արձակել անդրէն հրեշտակս յաղագս միաբանութեան։ Այլ առաքէր հրեշտակս առ Թագաւորն Յունաց, եԹէ Կեսարիաւ հետ՝ և տասն քաղաք մեր լեալ է, արդ 'ի բաց տուր. և զՄուռհա քաղաք շինեալ է նախնեացն մերոց. արդ եԹէ ոչ կամիս խանգարել ինչ առնել, տուր 'ի բաց. ապա Թէ ոչ, կռուիմք մեծաւ պատերազմաւ։ Բայլ Պուշեղ և ամ իշխանքն Հայոց շատ եղին 'ի մտի արքային, զի մի քակեսցէ զուխտ յերկրէն Թագաւորութեան Յունաց. և ոչ անսաց նոցա, և յայտնեաց զԹշնամութիւն իւր՝ զոր ունէր ընդ Թագաւորին Յունաց։

Բայլ իշխանքն Յունաց և զօրքն նոցին տակաւին էին յերկրին Հայոց. և անուն իշխանացն՝ միումն

Տերէնտ, միւսումն Մէդէ։ Եւ յղեաց դեսպան մի գաղտուկ Թագաւորն Յունաց առ իշխանսն զօրացն իւրոց՝ որ էին յերկրին Հայոց, և հրաման տայր ըսպանանել զԹագաւորն Հայոց զՊապ։ Եւ եղև իբրև ընկալան զայս հրաման 'ի Թագաւորէն Յունաց իշխանքն իւր՝ որ էին 'ի Հայոց երկրին, սպասէին մահու 'ի դէպ՝ սպանանել զԹագաւորն Հայոց զՊապ։ Եւ եղև 'ի դիպան ժամանակի իբրև գիտացին Տերէնդն և Մէդէն զօրավարքն զօրացն Յունաց՝ թէ միայն է Թագաւորն Հայոց Պապ, և ամ մեծամեծքն և զօրքն Հայոց չէին անդ, և էր Թագաւորն Հայոց Պապ բանակեալ 'ի դաշտին 'ի Բագրաւանդ գաւառի 'ի Խու անուն տեղւոյն, և բանակ զօրացն Յունաց բանակեալ էր անդէն մօտ առ բանակին Հայոց արքային, ապա զօրավարն Յունաց հաց մեծապէս գործեալ՝ յընթրիս հրաւիրեալ կոչեցին զմեծ Թագաւորն Հայոց զՊապ մեծապէս ըստ արժանաւորութեան նորա, որպէս օրէն էր զայր Թագաւոր 'ի հաց մեծ կոչել. և առնէին կազմութիւն պատրաստութեան։

Եւ եկեալ Թագաւորն Պապ յընթրիս, մտեալ բազմեցաւ յուտել և յըմբել։ Եւ իբրև մտանէր արքայն 'ի խորանն Տերէնդի զօրավարին Յունաց, և լեգէոն սպարակիր հետևակն վահան 'ի ձեռն, սակուր զգօտւոյ, շուրջ 'ի ներքոյ զորմովք խորանին պատեալ պսակէին. սոյնպէս և արտաքոյ կազմէին 'ի ներքոյ կուռ վառեալք, և 'ի վերոյ հանդերձք զգեցեալք պատրաստէին։ Իսկ Թագաւորն Պապ համարէր 'ի միտս իւր Թէ 'ի պատիւ ինչ նորա զայն առնիցեն։ Եւ մինչ դեռ յընթրիսն[1] ուտէր, սակրաւոր զօրքն 'ի Թիկանց կուսէ նր կարգեալք պսակեալք կային շուրջ զնովաւ յամ կուսէ։ Իբրև ընդ գինիս մտին, որպէս զառաջին ուրախութեանցն նուագն մատուցին արքային Պապայ, և առ հասարակ Թմբկահարք և սրընգահարք քնարահարք և փողահարք իւրաքանչիւր արուեստօք պէսպէս ձայնիւք բարբառեցան։ Եւ վահանաւոր լեգէոնին հրաման ետուն. և մինչ դեռ Թագաւորն Պապ զուրախութիւն գինին ու-

1 Յերկուս օրինակս ընթրիսն ասէր։

նէր 'ի մատունս իւր, և նայէր ընդ պէսպէս ամբոխս գուսանացն, ահեակ ձեռամբն յարմուկն՝ յոր յեցեալ բազմեալ էր՝ ունէր տաշտ ոսկի 'ի մատունս իւր, իսկ աջ ձեռնն եդեալ էր 'ի դաստապան նրանին՝ զոր կապեալն էր յաջու ազդերն իւրում, և մինչ դեռ բերանն 'ի բաժակին էր յրմպէն, և աչքն յառաջ կոյս պշուցեալ հայէր ընդ պէսպէս ամբոխս գուսանացն, հրաման լինէր ակնարկելով զօրացն Յունաց։ Այս լեգէոն սակրաւորքն երկու 'ի Թիկանց կուսէ կային 'ի սպասու ոսկիկմբէ վահանաքն յանկարծօրէն կից 'ի վեր առեալ զսակուրսն, զարկանէին Թագաւորին Պապայ. մին կշիռ զուրն հարկանէր սակրաւն, և միւսն ևս սակրաւորն զաջ թաթ ձեռինն՝ որ կայր 'ի վերոյ դաստապանի նրանին՝ հարկանէր, կտրէր և 'ի բաց ընդ ենոյր։ Ընդէն 'ի բերանս տապալէր Թագաւորն Պապ. և գինին տաշտիւն և արիւնն պարանոցին նովաւ հանդերձ 'ի վերայ բաժակալ սկըտեղն անկանէր առ հասարակ. և անդէն սատակէր Թագաւորն Պապ։ Ընդ շփոթելոյ տաճարին խռովութեան՝ Պնեալ տէր գաւառին Ընձևացեաց յոտն կացեալ յիւրմէ բազմականէն, հանեալ զիւր սուսերն՝ հարկանէր զմի 'ի լեգէոնաց անդի սպանանէր, յայնցանէ՝ որ հարին զթագաւորն։ Ապա Տէրենդ զբաւարին Յունաց զիւր սուսերն հանեալ ածէր, տարակաց 'ի գլխոյն Պնելոյ զսկաւառակն գլխոյն 'ի վերայ աչացն 'ի բաց ընդ ենոյր։ Այլ այլ ինչ ոք ոչ կարաց յանդգնել ասել ինչ ընդ նմա և ոչ ինչ։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Յաղագս որ ինչ խորհեցան 'ի յետոյ իշխանքն Հայոց, ապա անցին կացին լուռ։

Այր ժողովեցան եկին ՝ամ իշխանքն Հայոց մեծամեծք 'ի մի վայր 'ի միասին, և Մուշեղ սպարապետն, և Հայր մարդպետ, և ՝ամ իշխանքն ասէին։ Զ՞ինչ արասցուք կամ զի՞նչ գործեսցուք, խնդրեսցո՞ւք զվերէժ

թագաւորին մերոյ, թէ ոչ։ Եւ ապա հաստատեցաւ այս բան 'ի խորհրդեանն, և ասեն։ Ոչ կարեմք հեթանոսաց 'ի պարսկաց 'ի ծառայութիւն մտանել, և թշնամի առնել զթագաւորն Յունաց. և ոչ զերկոսեան թշնամի առնել, և ոչ առանց միոյ թիկանց կարեմք կեալ։ Ապա եկաց այս բան 'ի խորհրդին, թէ զինչ եղև՝ ահա եղև, թող ծառայեսցուք թագաւորին Յունաց. կացցուք 'ի հնազանդութիւն իշխանութիւն թագաւորութեն Յունաց. զիարդ և կամք իցեն թագաւորութիւն Յունաց, արասցեն մեզ։ Եւ ոչ ինչ արկին 'ի միտ, կամ վրէժ խնդրել, կամ այլ ազգ ինչ իրս առնել. այլ անցին կացին լուռ։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Յաղագս թագաւորելոյն Վարազդատայ երկրին Հայոց յետ Պապայ։

Եւ եղև յետ մահուն Պապայ թագաւորին Հայոց, թագաւորեցոյց թագաւորն Յունաց զՎարազդատ ոմն 'ինքին տոհմէն արշակունի 'ի վերայ աշխարհին Հայոց։ Եւ էին բազում շքով եմուտ յերկիրն Հայոց, և թագաւորեաց յերկրին Հայոց։ Եւ էր նա մանուկ յաւուրց, լի արութիւն, կորովի ձեռաք, քաջ սրտիւ, և 'ի մտաց թեթև, մանգաբարոյ տղայահանճար մանկամիտ։ Բայց սակայն իբրև տեսին զնա, ժողովեցան առ նա ամ ազգք Հայոց մեծամեծք նախարարք, և կամեցեալ խնդացին զթագաւորելն նորա 'ի վերայ իւրեանց։

Եւ սպարապետն Հայոց Մուշեղ առաջնորդէր Հայոց. և զգուշանայր զսահմանքն Հայոց, որպէս սովոր էր կարգել զաշխարհ մեծապէս. և խրատ բարեաց թագաւորին մանկանն Վարազդատայ մատուցանէր։ Եւ հոգայր հանապազ՝ վասն թագաւորութեան աշխարհին Հայոց, և զիարդ կամ որպէս շէն լինել մարթասցէ. և հանապազ երկս արկանէր բարեխորհուրդն, զի հաստատուն կալ կարասցէ թագաւորութիւն։ Խորհէր ևս ընդ իշխանսն Յունաց, և նո-

քօք ընդ կայսերն, թէ պարտ է նոցա քաղաք մի շինել յերկրին Հայոց. 'ի մի մի գաւառսն, որ մին մի քաղաքս, որ երկուս երկուս ամուր պարսպաւորս զբանիստս հաստատել ընդ ամ երկիրն Հայոց. մինչև 'ի Ղանձակ սահման երկիրն, որ Պարսից կուսէ էր, Հայոց սահման էր. և զամ ազատսն Հայոց կայսերական թօշակօքն զինուորել. սոյնպէս և զօրաց երկրին Հայոց, զի այսպէս ամ զգուշութիւն լիցի առ 'ի թշնամեաց իւրեանց 'ի զօրացն Պարսից։ Այլ թագաւորն Յունաց յանձին ունէր մեծաւ խնդութիւն առնել զայս. զի այսու ամենայնիւ աշխարհն հաստատուն լիցի և անշարժ 'ի նմանէն, զի մի կարասցէ թագաւորն Պարսից յիւր վտարել զաշխարհն Հայոց։

ԳԼՈՒԽ ԼԵ.

Յաղագս թէ որպէս 'ի բանս չարախորհուրդս և անմիտ մարդկան եղեալ թագաւորն Հայոց Վարազդատ, զզօրավարն Հայոց Մուշեղ սպանանէր։

Այլ իբրև տեսանէին զթագաւորն Հայոց Վարազդատ մեծ նախարարքն Հայոց՝ թէ մանուկ բանս երթուկ է, զչար 'ի բարոյ որոշել չգիտէ, սկսան այնուհետև ըստ կամաց իւրեանց վարել զթագաւորն. որպէս և կամէին, բանիւք իւրեանց տանէին և բերէին զնա։ Այս առաւել ունէին դնէր մանկտոյն՝ որ 'ի տիոց հասակակիցք էին նորա, առաւել քան զծերոցն իմաստնոց՝ որք կարող էին զօգտակար խրատն մատուցանել նմա։

Այլ Խատ, որ նահապետն էր ազգին Մահուսեաց տոհմին, դայեակ մուցիչ թագաւորին Վարազդատայ, կամեցաւ նա զգործ զօրավարութեանն սպարապետութիւնն Մուշեղայ յինքն յափշտակել 'ի նմանէ։ Վասն այսորիկ սկսաւ քսիս մատուցանել զնմանէն առ թագաւորին Վարազդատայ առ իւրում սանուն, և ասել՝ թէ 'ի սկզբան 'ի նախնեացն հետէ զձեր արշակունեաց տոհմին մամիկոնէից է կորու-

սեալ, զի հակառակորդք ձեր դոքա լեալ են 'ի քնէ անտի. և համակ զերկիրս Հայոց դոցա է կերեալ, մանաւանդ Մուշեղի. մանաւանդ զի այր չար է և նենգաւոր։ Օ՞ի սիրելի է թշնամեաց ձերոց, և ա՞տելի սիրելեաց ձերոց. և համակ ընդ ձեզ նենգաւ է գնացեալ, երկմտութիւն և դժխեմութիւն։ Օ՞ի ա՞յն Մուշեղ է, որ 'ի թագաւորութեան ժամանակ Պապայ 'ի պատերազմունսն Պարսից քանիցս անգամ ձեռնահաս եղև սպանանել զՇապուհ արքայն Պարսից, և ոչ եսպան, այլ արձակեաց զթշնամին. և երբեմն զկանայս Շապհոյ թագաւորին 'ի բուռն էարկ, և ինամոտ գթով ժանուարօք արձակեաց ըզնոսա զհետ Շապհոյ։ Ո՞չ այդ այն Մուշեղն է, որ զՈւռնայր արքայ Լ՚ղուանից 'ի բուռն էարկ, և սպանանել ոչ կամեցաւ, այլ արձակեաց զթշնամին։ Ո՞չ այդ այն Մուշեղն է, զի զարքայն Պապ հրամանաւ դորա և դորին խորհրդովք զօրավարքն Յունաց սպանին. զի դա ոխացոյց և դրգռեաց զարքայն Յունաց 'ի վերայ թագաւորին Պապայ, մինչև ետ սպանանել։ Լ՚այլ արժան է մեռանել 'ի ձեռաց քոց, և չէ պարտ կեալ դմա. այլ թէ ոչ աճապարեսցես, արքայ, այժմ զՀայ երկիրս խորհի ընուլ քաղաքօք, և զօրանիստ առնէ ասա քնակութեամբ զօրացն Յունաց։ Լ՚ու այնուհետև կամ թագաւորն Յունաց հանէ 'ի քէն զթագաւորութիւն Հայոց, կամ այս Մուշեղ սպանանէ, և ինքն թագաւորէ։ Լ՚ու այսպիսի բանիւք դաղտնի հանապազ զթագաւորն գրգռէին, մինչև հաւանեցաւ ըստ կամաց նոցա զսպարապետն զզօրավարն Հայոց սպանանել։

Լ՚ապա խորհուրդ արարին, թէ ո՛րպէս ըմբռնել կարացեն զնա. քանզի մեծապէս երկնչէին 'ի նմանէն։ Եվ զգայ, ասէն, մեծ պատերազմ առնէ. և ոչ ոք կարէ զդէմ քաջութեամբ նորա ունել, բայց հնարիւք մեքենաւորութիւք ինչ լինիցի հնար։ Լ՚ապէս սպասէին նմա։ Լ՚ու եղև յաւուր միոջ հրաման ետ Վարազդատ արքայ Հայոց ընթրիս մեծ գործել և մեծ պատրաստութիւն առնել. և կոչել հրամայեաց յընթրիսն զամ աւագս պատուականս և զմեծամեծս, և զզօրավարն Մուշեղ։ Պատրաստեաց Վարազդատ

արս ընտիրս հղօրս, զօրեղք, զի կալմ կայցեն գոր-
ծոյն, հարկանել յանկարծօրէն յանպատրաստից յե-
ղակարծումն ժամու 'ի վերայ Մուշեղի։ Օ՞նոսա
քաջ ուրախ առնէր մեծապէս, և շատ գինի տայր
ըմպել, և բաղում առնէր զբօսումն ուրախութեան։
Բ՞ազմայն Ա՞արազդատ տայր նշանս յառաջագոյն այ-
նոցիկ, զոր՝ էր սպանօղն պատրաստեալ, եթէ յոր-
ժամ գիտիցես՝ թէ քաջ արբեալ իցէ, և զմտօք զա-
ռանցեալ յարբեցութենէ սպարապետն Մուշեղ, ես
յարուցեալ իբրև 'ի Ճեմիչն երթալոյ պատՃառաւ,
և դուք պատեսջիք զնովաւ։ Այս եղև իբրև անցին
զառանցին 'ի գինւոյն՝ ըստ չափ անցանելով, և Թա-
գաւորն Ա՞արազդատ պահէր զանձն 'ի գինւոյն. իբ-
րև գիտաց Ա՞արազդատ՝ թէ արդ յարբեցութենէ
մնաց ինչ չզգան[1], ինքն յարուցեալ իբրև յապա-
բահէ զանց առնելոյ պատՃառաւ, և աւագանին
ՇԱՄ բազմականացն յոտն կացին առ հասարակ, իբ-
րև նմա պատիւ ինչ առնել։ Այս յանկարծ արքն, ո-
րոց էր տուեալ հրաման, երկոտասան այր կից զոյգ
զինի կողմանէ զնմանէ բուռն հարկանէին, վեց այր
'ի մի բազուկն Մուշեղի, և վեց այր 'ի միւս բազուկն։
Այս ընդ ոտն կալ Թագաւորին, նայեցեալ ընդ նա՝
եթէ այս ընդէր է. և Թագաւորին պատասխանի
տուեալ, ասէ. Այրթ առ Պապ արքայ, հարց և տես՝
թէ ընդէր է այդ։ Այս Թագաւորն 'ի դուրս կոյս
գնացեալ ելանէր, և ասէ Մուշեղ. Ի՞ վերայ բա-
զում իմոց վաստակոցն արեան և քրտան, և սլաքօքն
զքիրտն ջնջելոյ, այս հատուցումն եղև ինձ։ Բ՞այց
իբրև եհաս ինձ մահս, թէ 'ի վերայ ձիոյ դիպեալ
էր...։ Օ՞այս միայն բանս ժամանեաց ասել, և այլ
ոչ ինչ ոչ։ Այս անդէն Բ՞ատ Սահռունի, դայեակն
արքային Ա՞արազդատայ, զնրանն՝ զոր յիւրում ազ-
գերն ունէր՝ հանեալ, անցոյց ընդ փողս զօրավարին
Մուշեղի. և անդէն 'ի բաց եհատ զգլուխ նորա։
Այս բարձին զնա, և տարան զմարմին նոր 'ի գեւղն Իւր։

1 ՑՃամ օրինակս մաՃոյ ինչ չգան։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Յաղագս անմտութեան կարծեաց ընդանեացն Մուշեղի, և այլ մարդկանն։

Եւ եղև իբրև տարան զմարմինն սպարապետին Մուշեղի 'ի տուն իւր առ ընտանիս իւր, ոչ հաւատային ընդանիք նորա մահուն նորա, թէպէտ և տեսանէին զգլուխ նորուն զատ 'ի մարմնոյն անտի։ Զի ասէին. Զորա յանթիւ ձակատ մտեալ էր, և վէր երբէք չէր առեալ. ոչ նետ մի դիպեցաւ երբէք, և ոչ այլոց զինու խոցեալ է զդա։ Իսկ կէսք յառնելոյ ակն ունէին նմա. մինչև զգլուխն անդէն 'ի կոճեղն կարեալ կցեցին, և հանին եդին 'ի տանիսն աշտարակի մոյ, ասէին՝ թէ վասն զի այր քաջ էր, Աղուեղք իջանեն և յարուցանեն զդա։ Պահապան կային, և ակն ունէին յառնելոյ մինչև նեղեցաւ մարմինն։ Այս պա իջուցին յաշտարակէ անտի, և լացին թաղեցին զնա որպէս օրէն էր։

ԳԼՈՒԽ ԼԷ.

Յաղագս գալոյն Մանուէլի 'ի գերութէ Պարսից, և խնդրելոյ զվրէժն Մուշեղի, և հալածելոյ զթագաւորն Վարազդատ յերկրէն Հայոց, և յինքն ունելոյ զերկիրն Հայոց։

Այս կացոյց թագաւորն Վարազդատ 'ի գործ զօրավարութէ սպարապետութիւնն Մահառունեաց տոհմին, որ էր իւր դայեակ, բանսարկու քսուն սպանօղն Մուշեղի։ Եւ էր նա սպարապետ փոխանակ նորա զօրավար ամ Հայոց։ Եւ ազգին Մամիկոնեան տոհմին տանուտէր Նահապետ կացոյց թագաւորն, Վաչէ անուն 'ի նմին տոհմէ։

Յայնմ ժամանակի դարձան 'ի գերութենէն եկին 'ի Պարսից, զոր տարեալ էր Շապհոյ արքային, որք երկու եղբարք 'ի Մամիկոնեան տոհմէն. անուն միումն

Մանուէլ, և անուն երկրորդին Կոմն[1]։ Քանզի զայն ժամանակաւ Թագաւորին Պարսից սասանականին տուեալ էր պատերազմ ընդ մեծ Թագաւորին Հռուշանայ ընդ արշակունոյն, որ նստէր 'ի Բաղհ քաղաքին։ Եւ իբրև երթային զօրքն Պարսից 'ի Հռուշանացն պատերազմն, ապա և զմարդիկ գերութեան որ 'ի Հայոցն էին Թագաւորին Պարսից՝ յղէր 'ի պատերազմ ընդ իւր զօրսն. և Մանուէլս այս երթայր ընդ նոսա հանդերձ եղբարքն իւրով Կոմնիւ։ Եւ իբրև եղէն խառնորդք երկոցունց գնդացն ընդ միմեանս, ապա 'ի պարտութեան մատնեցան զօրքն Պարսից յերեսաց զօրացն Հռուշանաց. դարձան 'ի փախուստ անհնարին հարուածովք, հասին 'ի վերայ զօրացն Պարսից. զի ոչ մի 'ի նոցանէն ոչ ապրեցուցանէին 'ի զօրացն Պարսից, բանբեր անգամ ոչ ապրեր, բայց Մանուէլ որդի Աշոտաշինայ 'ի մամիկոնեան 'ի տոհմէն, հանդերձ եղբարքն իւրով Կոմնիւ, բազում քաջութիւս կատարեալ 'ի նմին ճակատուն, սակայն հետիոտս ապրէին։ Եւ դայլն յամ զօրացն Պարսիցն սոքա միայն հասանէին առ Թագաւորն Պարսից ողջ ապրեալք, և բազում քաջութիւս կատարեալ։

Սակայն Թագաւորին Պարսից բազում տրտմութիւնքն յաղագս իւրոյ զօրացն կատարածոյն. սակայն և զայնու զայրացեալ զակատէր, զի զնոսա միայն տեսանէր ողջ եկեալ յամ զօրացն իւրոց։ Ցասուցեալ ընդ նոսա, այսպն արարեալ, հալածեաց յիւրոց սահմանացն. արձակեաց զնոսա յերկիրն իւրեանց։ Եւ գնացեալք դայլն դէմ յանդիման յիւրեանց երկիրն արարեալ։ Եւ էին հետիոտք երկոքին եղբարքն. և էին երկոքեան մեծք անհեղեղք, երկոքեան անձնեայք որպէս սկայազունք։ Մինչ դեռ դայլն 'ի ճանապարհի, ոչ կարէր Մանուէլն գնալ, զի ոտիքն ցաւած էր. ապա Կոմն եղբայր իւր ըստանձնեալ առեալ բառնայր, և տասն տասն խրատսխ բերէր ըստ անձին զայնչափ այրն զանհեղեղ զանարի. էին եբեր յերկիրս Հայոց։ Եւ եղև իբրև էկն ե հաս յերկիրն Հայոց Մանուէլ եղբարքն իւրով Կոմնիւ հանդերձ,

1 Ցամ օրինակս Կոն. ուղղեցաք ըստ յաջորդացն։

իբրև ետես զնա Ա աչէն՝ որ յառաջն էր լեալ նա-
հապետ, մինչ չև եկեալ էր 'ի նա՝ ետ ցնա զպատիւ
իշխանութենն, զոր առեալ էր 'ի Թագաւորէն Ա ա-
րաքզատայ։ Բ.անզի նա էր երեց յազգին, և Ա՝ա-
նուէնն ունէր զնահապետութեան ազգին տանուտէրութեան
պատուին. և Ա աչէն լինէր երկրորդ։

Իսկ յորժամ՝ Եհաս եկաց Ա՝անուէնն 'ի փառս տէ-
րութեան իւրոյ, նախ առանց հրամանի Թագաւորին
Ա՝արաքզատայ յինքն յափշտակեաց զզօրավարութեն
զսպարապետութեին. զի այն ինչ որ իւրոց նախնեացն
'ի բնէն կալեալ էր 'ի սկզբանէ, զոր արքայն Ա՝արաքզ-
դատ չնորհ առնէր իւրում դայեկին Բ.ատայ, զայն
Ա՝անուէլ յինքն հանեալ ունէր զիշխանութեին։ Բ.ղև
յետ այսորիկ, պատգամ յղէր սպարապետն Հայոց
Ա՝անուէլ առ Թագաւորն Ա՝արաքզդատ, և ասէր՝
Թէ փոխանակ ՝ամ ազգին մերոյ վաստակոցն, զոր 'ի
նախնեացն 'ի հնոց ժամանակաց հետէ միամտութիւն
առ ձեզ արշակունիս վաստակեալ եմք, և եդեալ
զանձինս մեր 'ի վերայ ձեր, կեցեալ և մեռեալ եմք
'ի վերայ ձեր, ՝ամ նախնիքն մեր առաջինքն անկան
'ի պատերազմունս 'ի վերայ ձեր, Ա՝ասակ հայր Ա՝ու-
շեղն կորեաւ 'ի վերայ Ա.ըշակայ արքայի, և մեք հա-
նապազ վաստակեալ և աշխատեալ եմք 'ի վերայ Թա-
գաւորութեան ազգիդ ձերոյ, և փոխանակ կեանս առ-
նելոյ ընդ վաստակոցն, արդ որք 'ի Թշնամեացն մե-
ռան, որք մնացին՝ զայն դուք արշակունիքդ կոտորե-
ցիք։ Ա.ըդ Ա՝ուշեղ այր քաջ եղբայր իմ, որ 'ի վե-
րայ ձեր մաշեաց զանձն իւր 'ի մանկութենէ իւրմէ,
վանեաց կոտորեաց զԹշնամիս ձեր, և ոչ կարացին
Թշնամիքն սպանանել, դու կալար՝ 'ի բազմականի խեղ-
դեցեր զնա։ Բ.ա դու չես իսկ արշակունի, այլ 'ի
պոռնկութենէ եղեալ ես որդի. վասն այդորիկ ոչ
ծանեար զվաստակաւորսն արշակունեաց։ Բ.ա մեք
չեմք իսկ լեալ ձեր ծառայք, այլ ընկերք ձեր և 'ի
վերոյ քան զձեզ. զի մեր նախնիքն լեալ էին Թագա-
ւորք աշխարհին Ճ՝ենաց, և վասն եղբարց իւրեանց
գրգռութեանն, զի արիւն մեծ անկեալ է 'ի վերայ,
վասն այսր եմք գնացեալք. և վասն բարւոյ հանգստի
գտանելոյ՝ եկեալ դադարեալ եմք։ Ա՝ռաջին Թագա-

ւորքն արշակունիք, որք գիտէին զմեզ ո՛վ էաք կամ ուստի՛ էաք. այլ զի դու քանզի չես արշակունի, գնա յաշխարհէս, և մի՛ մեռանիր 'ի ձեռաց իմոց։

Իսկ Ս՝ արազդատ Թագաւորն պատգամ յղէր պատասխանոյն առ զօրավարն Մ՝անուէլ, և ասէր. Լու քանզի չեմ արշակունի, զի եղի զԹագ նախնեաց իմոց արշակունեացն, և կալայ զաշխարհ առաջնոց իմոց, և խնդրեցի զվրէժ հօրեղբօրն իմոյ Պապայ 'ի չարագործ յեղբօրէն քումմէ 'ի Մ՝ուշեղայ, բայց զի դու չես յաշխարհէս յայսմանէ, զի քեզէն իսկ ասացեր բաս յերկրէն յաշխարհէն Ն՝ենաց եմք լեալք Թագաւորք 'ի բնութէ, և այսր պանդուխտք եմք եկեալք, արդ ըստ օրինակի եղբօրն քո մի՛ մեռանիր։ Օ՛ի իմ, առ բարերարութէ իմոյ, արձակեալ լեցի զքեզ. երԹգնա յերկիրն Ն՝ենաց, անդ կեաց, և անդէն Թաղաւորեսջիր յերկրին քում։ Լ՝ալա Թէ ոչ կամիցիս գնալ, մեռանիս 'ի ձեռաց իմոց որպէս և Մ՝ուշեղն մեռաւ։

Իսկ յորժամ բազում անգամ երԹեալք եկեալք պատգամաւորք՝ բազում խստագոյն քան զխստագոյն բանս կսկծանաց առ միմեանս յղէին, և յետ այսորիկ ժամադիր միմեանց լինէին՝ պատերազմաւ զմիմեանս տեսանել։ Իսկ 'ի հասեալ 'ի ժամադիր ժամուն, եկեալ տային ընդ միմեանս պատերազմ։ Լու Թագաւորն Ս՝ արազդատ առնոյր զլօրն իւրոյ բանակին, և գնայր՝ հասանէր 'ի տեղի Ճակատուն, վառեալ կազմեալ պատրաստեալ 'ի պատերազմ. սոյնպէս և սա պատրաստագոյն քան զնոսա։ Լու Մ՝անուէլ սպարապետն հասանէր իւրով գնդաւն 'ի նոյն տեղի. և 'ի գաշտին Կարնոյ լինէին խառնուրդք երկոցունց գնդացն ընդ միմեանս բախելոցն։

Թագաւորն Ս՝ արազդատ և սպարապետն Մ՝անուէլ զնիզակս առեալ, միմեանց յարձակեալ ախոյեանք ելանէին։ Իբրև զաչս 'ի վեր ամբառնայր արքայն Ս՝ արազդատ, և նայէր ընդ գաւն իւր և տեսանէր զսպարապետն Մ՝անուէլն, 'ի մեծութենէն հասակին և 'ի շքեղութենէ անձինն, և յամրակուռ յերկաԹապատ յոտիցն մինչև ցգլուխն առ հասարակ յանվԹար զինեալն, 'ի հաստատեստ յանձնէն, և 'ի

հաստատուն երիվարէն և յասպազէն[1] վառելոյն յանւ շարժ սպառազինէն համարեցաւ կշռեաց զնա 'ի միտս իւր իբրև զլեառն մի բարձր զանմատոյց։ Սակայն ա ծեալ զմահ ընդ միտս, յարձակեցաւ. զի այնուհետև չունէր ակն անձինն ապրելոյ։ Սակայն զի մանուկ մարդ էր արքայն Ա՝արազդատ, իբրև ետես զնա այնպէս՝ զի չէր ինչ կռուոյ տեղեակ, էած զմտաւ թէ 'ի զրահն ոչ ինչ կարիցէ նիզակ գործել, առ ձեռաց կորովութենն զնիզակն ընդ բերան արկանէր զօրավարին Ա՝անուէլի։ Իսկ Ա՝անուէլ բուռն հարկանէր զնիզակէն. հանեալ 'ի նմանէ զնիզակատէգն՝ ընդ իւր թուրծն հանէր, և բազում զիւր թափէր զատամունսն, զնիզակն յինքն հանէր յարքայէն։

Եւ արքայն Ա՝արազդատ 'ի փախուստ դառնայր յերեսաց զօրավարին Ա՝անուէլի. և անդէն Ա՝անուէլ զտէգ նիզակին 'ի ձեռինն կալեալ, և նիզակաւն 'ի կառափն մատուցեալ ծեծէր զարքայն Ա՝արազդատ. այնպէս տանէր իբրև ասպարէզս չորս։ Եւ անդէն որդիքն Ա՝անուէլի յարձակեցան մէն մի նիզակ 'ի ձեռն, Հմայեակն և Ա՝ղտաշէսն, սպանանել զարքայն։ Ինքն իսկ Ա՝անուէլ աղաղակեր զկնի որդւոցն իւրոց, և ասէր. Ա՝յ մի լինիք տիրասպանուք։ Եւ նոցա լուեալ զձայն հօրն, վաղվաղակի արագ արագ դառնային 'ի նմանէ. և 'ի պարտուն մատնեցաւ այն օր գունդն արքունական առաջի Ա՝անուէլեան գնդին։

Ել ինչ այնուհետև սակաւ սպանեալք անկանէին ընդ երեսս դաշտին, բազում խոցք և խեղք վիրաւորք. և բազում նախարարք սատակեցան. բազում փախստեայք հալածականք լինէին։ Ա՝ինչ դեռ գունդն մանուէլեան էին զկնի փախստէից, և գայր հասանէր Համազասպեան սեպուհ մ՝ 'ի մամիկոնեան տոհմէն, անցանէր առ անկելովք գիակամբն և առ խոց վիրաւորօքն պատերազմին. և ընդ նոսին ընկեցեալ էր և զԳարեգին, տէր գաւառին ուշտունեաց. բայց ողջ կայր, զի ոչ խոց էր և ոչ վնասեալ ինչ։ Ա՝յս Գարեգին փեսայ լեալ էր յառաջնորին Համազասպէի, զքոյր նորին Համազասպուհի անուն ունէր

1 Յետ օրինակս յասպազէն։

կին։ Եւ իբրև եկն Թագաւորն Շապուհ յերկիրն Հայոց, սա եթող զկինն իւր և փախեաւ։ Բայց տա-ման զՀամազասպուհի յերկիրն Ցոսպաց, 'ի քաղաքն 'ի Ալ-ան. հանեալ կախեցին զնա պարսիկքն զարձր աշտարակացն՝ որ կայր 'ի վերայ քարանձաւին, 'ի կա-խաղանի սպանին զնա։

Իսկ յայնմ աւուր իբրև անկեալ կայր այն Պա-ղեգին 'ի մէջ անկելոցն, եկն Համազասպ աներ նո-ղոյն անցանել առ նոքօք։ Բղաղակեաց Պարեգինն, և ասէ. Ցեր Համազասպեան, և զիս տես. հրաման տուր նժոյգ մատուցանել, թող հեծայց։ Եւ ասէ ցնա Համազասպեան. Ո՞վ ես դու։ Եւ ասէ. Ես եմ Պարեգին ուրշտունի։ Եւ ետ հրաման Համա-զասպեան վահանաւորացն, որ ընդ նմա էին, ասէ. Իջէք և դիք զվահանսդ 'ի վերայ նորա, և պահեցէք։ Եւ ինքն էանց. ապա իջին վահանաւորքն եդեալք զվահանսն 'ի վերայ, և կային պահելին ըստ հրամա-նի տուելոյն։

Բպա յետ այսորիկ գայր Պանուն ոմն գամապետ սպարակրացն[1] զնդին մանուելեան զօրացն. ետես զի իջեալ էին վահանաւորք 'ի վերայ, և զՊարեգինն պահելին, եհարց ցնոսա՝ թէ ո՞վ է այդ, և դուք հի՞մ իջեալ կայք յայդմ տեղւոջ։ Բսեն նոքա՝ թէ սա Պարեգին ըուշտունեաց տէր է. և մեզ հրաման ետ Համազասպեան, իջանել պահել զսա։ Եւ մեծաւ ցասմամբ զայրանալով՝ 'ի բարկութիւն մեծ բորբոքեր Պանունն, և ասէր. Բրդ ուրեմն վերստին կամի Համազասպեան զսա իւր փեսայ առնել. և զՀամա-զասպուհի զքոյր իւր տալ սմա կնութիւն. վասն այսո-րիկ անիսայեաց 'ի դա, պահել հրամայեր։ Եւ ան-դէն ոտն ածեալ էջ 'ի ձիոյն, եհան զթուրն, մա-տուցեալ 'ի նա՝ պատառ պատառ կոտորեալ, անդէն ցրեալ սատակեաց զնա։

Իսկ՝ այլ զօրքն ամ դեռ գային 'ի կոտորածոյն, զբազումն ձերբակալ արարեալ և կալեալ ածէին։ Եւ զՊատն, աղքայրն Ալարազատայ զքսուն, զբա-

1 'Ի չորս օրինակս գամապետս պրակացուցոյն. մեզ այսպէս ուղղելի դատեցաւ։
պրակուցոյն. 'Ի միւս այլ գամապետս

պանօղն Մուշեղն, կալեալ իւր որդւոյն առաջի սպարապետին Մանուէլի, և զայլս՝ որք միանգամայն գործոց սատարն լեալ էին՝ ըմբռնէին զամենեսեան, առ նա ածէին։ Եւ մեծաւ դատաստանաւք՝ դատեցաւ զանօրէնն Բատ սպարապետն Մանուէլ։ Բայց նախ յանդիման նմա հրամայէր փողոտել զորդին նորա, ապա յետոյ զնա գլխատել. և զայլսն կոտորեաց ըստ նմին օրինակի։ Եւ զԹագաւորն Ա արազդատ հալածեցին 'ի յերկրէն 'ի սահմանացն Հայոց, չոգաւ գնաց 'ի յերկիրն Յունաց. անդ եկաց ոչչափ և եկեաց, և անդէն մեռաւ։

Եւ սպարապետն զօրավարն Հայոց Մանուէլ նուաճեաց զաշխարհս, և զամենայն մեծամեծս և զնախարարսն Հայոց առ ինքն ժողովէր, և էր նա առաջնորդ և գլուխ նոցա. և վարէր զիւր իշխանութիւն, և տայր հրաման աշխարհի փոխանակ Թագաւորի. և ունէր զաշխարհ 'ի շինութիւն։ Եւ զկինն Պապայ արքայի զՕարմանդուխտ տիկին, հանդերձ որդւովք արշակունովք, առեալ զնոսա՝ 'ի տեղի Թագաւորի կալեալ 'ի պատիւ շրջեցուցանէր։ Մեծաւ իմաստութիւն և բազում յաջողութիւն աշխարհին Հայոց մեծապէս առաջնորդէր, ոչչափ եկաց ժամանակս։ Բայց անուանք պատանեկացն արշակունեացն, անուն երիցուն՝ Արշակ, և կրտսերուն՝ Ա աղարշակ։ Զնոսա առեալ Մանուէլն սպարապետն 'ի բերև զսան մնուցանէր, և զմայրն նոցա զՕարմանդուխտ 'ի մեծի շքի տիկնութեան պատուէր։ Բայց յորժամ տեսանէր Մանուէլն զոր ինչ գործեացն ընդդէմ էր հրամանաց Թագաւորին Յունաց, ածեալ զմտաւ իւրով Թէ արժան է նմա գէթ զմի որ Թիկունս առնել նմա, ապա խորհեցան խորհուրդ ընդ տիկնոջն, և կամեցաւ Թիկունս առնել զարքայն Յունաց։

ԳԼՈՒԽ ԼԸ.

Յաղագս եթէ զնարդ սպարապետն Հայոց Մանուէլ, հանգերձ ամ՛ աշխարհաւն Հայոց, ձեռն էտ 'ի Թագաւորն Պարսից. և մարզպան և աշխարհակալ աշխարհին Հայոց զառաջինն ած 'ի Թագաւորէն Պարսից զՍուրէն, և մեծաւ պարգևօք մեծարեցաւ 'ի նմանէ. և թէ որպէս յետոյ խորամանկութիւն Մերուժանայ արծրունւոյ եղև ապստամբութիւն, և պատերազմունք յուզեցան։

ԱՅՍ յետ այսորիկ առաքեցին Օրմանդուխտ տիկինն Հայոց և սպարապետն Մանուէլ զԳարջայ Մաղխազ, և ընդ նմա զբազումս 'ի նախարարացն Հայոց, հրովարտակօք ընձայիւք և պատարագօք առ Թագաւորն Պարսից, զի 'ի նա ձեռս տայցեն և զնա պաշտիցեն, և նմա միամտութիւն ծառայեսցեն, և տայցեն նմա զաշխարհս Հայոց։ Այս չոգան հասին Գարջոյն, և որք ընդ նմայն էին, 'ի դուռն Թագաւորին Պարսից. մատուցին նմա զհրովարտակսն զտիկնոջն և զսպարապետին Հայոց, և ետուն նմա զյղեալ պատգամսն հնազանդութիւն։ Այս յորժամ ետես զնոսա Թագաւորն Պարսից, մեծաւ խնդութիւն ընկալեալ զնոսա, և մեծապէս մեծարանօք պատուեաց զնոսա, և մեծաւ պարգևաւ առնէր զԳարջայն։

Այս ընդ նմա առաքէր յերկիրն Հայոց զՍուրէն պարսիկ մի ՀՀոխ 'ի նախարարացն իւրոց. և ընդ նմա յղեաց տասն հազար հեծեալս վառեալս սպառազէնս, զի երթիցէ Սուրէն յաշխարհն Հայոց 'ի Թիկունս օգնականութիւն զօրավարին Մանուէլի, և պահել 'ի թշնամեաց զտիկինն զՕրմանդուխտ։ Այս ետ Թագաւորն Պարսից տանել 'ի ձեռն Սուրենայ Թագ և պատմուՀան, և զվառ Թագաւորացն տիկնոջն Օրմանդըխտոյ, և Թագս մանկանցն որդւոցն երկոցունց Աբշակայ և Վաղարշակայն։ Օսոյն և սպարապետին Մանուէլի սոյնպէս ետ տանել զԹագաւորական պատմուՀանն, սամոյր մ՝ և զգլխոյ պատիւ գարդ-մանակ ոսկի արծաթ, ու 'ի պատիւ գլխոյ 'ի վերայ գագաթանն 'ի Թիկանց արծուոյն՝ հանգոյցք Թագի

կապեալ աշխարաւանդ հանգոյց, և լանջաց պատիւ՝ ապիզակ, որպէս օրէնք են ունել Թագաւորաց. և շիկակարմիր խորան, և 'ի վերայ խորանին արծուի-նշան և սրահակս մեծամեծ և կապուտակ երկնագոյն հովանոցս։ Եւ ոսկի սպաս տաճարին առաքէր սպա-ռապետին Մանուէլի. և տայր նմա յիւրմէ ձեռանէ իշխանութիւն մեծ 'ի վերայ աշխարհին Հայոց։

Եւ եկն Եհաս Պարջոյին խորխոռունի յերկիրն Հայոց. և էած զՍուրէն պարսիկ, տասն հազարաւն։ Եկին բերին զպարգևսն տիկնոջն և մանկանց նոր. սոյնպէս սպարապետին Մանուէլի ունէին պարգևս իւրաքանչիւր աւագացն, և տանուտէրացն իւրաքան-չիւր մեծամեծացն Հայոց։ Եւ յորժամ տեսանէին զմեծարանսն[1] և զսէր Թագաւորին Պարսից, տի-կինն Օրմանդուխտ և սպարապետն զօրավարն Հայոց Մանուէլ մեծաւ խնդութիւն մեծարէին զՍուս-րէնն։ Ցային զաշխարհն Հայոց 'ի ձեռն Սուրենայ, և հնազանդէին հրամանաց Թագաւորին Պարսից. և կարգէին Թագաւորին Պարսից յաշխարհին Հայ-ոց հարկս՝ տալ ընձայս և պատարագս։ Սոյնպէս և մարզպանին Սուրենայ հասս և կօշիկս և զպիտոյս[2] զառՃկացն. սոյնպէս և տասն հազարացն դարման և կերակուր ըստ պիտոյիցն։ Եւ սրտի մնաք արարին իւրեանց Թիկունս. և տէր գտեալ իւրեանց զարքայն Պարսից, և կային 'ի ծառայութիւն նորա. և ստէպ ստէպ դէսպանք Թագաւորին Պարսից երթային և գային յերկիրն Հայոց. և մեծապէս զմտերմութիւն միամտութիւնն, որ էրն, ցուցանէին Թագաւորին. և ստէպ առաքէր պարգևս տիկնոջն Օրմանդխտոյն. սոյնպէս և զօրավարին Հայոց Մանուէլի։ Յոյժ մտե-րիմ և սիրելի լինէր Մանուէլ Թագաւորին Պարսից և մեծապէս փառաւորեալ աւագանայր 'ի նմանէն։ Եւ Մերուժանն արծրունի իբրև տեսանէր զայն ամ փառս աւագուն, որովք շքեղացոյց զՄանուէլ սա-քայն Պարսից, զի որպէս զեղբայր կամ զորդի այնպէս

1 'Ի բոլոր օրինակս վՊեՃաբանն, 'ի միումն վՊեՃամեՃան. մեզ այս-պէս ուղղելի թուեցաւ։

2 Յամ օրինակս վպիպոյսս առՃ-կացն։

պատուեաց զնա. յոյժ նախանձէր նա ընդ փառսն Մանուէլի. և խնդրէր նա հնարս հնարել, հանել զնա յաչաց Թագաւորին Պարսից. զի փոխանակ նոր ինքն լեցի սիրելն։ Եւ իբրև այլ հնարս ինչ ոչ կարէր գտանել դուրս նենգութեանն առ Պարսիկս, ընդ որ մնցէ, ապա խորհեցաւ նա ընդ միտս իւր զնենգութիւն չար, և կեղծաւորութիւնն իւրով զգործ իւր յառաջացոյց։ Զի իբրև նա յեցաւ 'ի միամտութիւն զօրավարին Մանուէլի, սկսաւ նախ հպատակութիւն զմիտն գողանալ. նախ մտերմութիւն հաստատել զմիտս նորա. ապա զանձն իւր հոգածու և խնամակալ երևեցուցանէր նմա. ապա եկեալ գուշակութիւն առնէր նմա սուտ 'ի քմաց իւրոց՝ թէ գիտասջիր դու, ո՛ Մանուէլ, զի դեսպան լեալ է յարքայէն Պարսից. յա զագս քո բերեալ ունիս հրաման առ Սուրէնն, զի զքեզ կալցէն կապեսցէն. կամ ստէն սպանցէ, կամ ոտիւք և ձեռօք և պարանոցաւ կապելով մեծաւ ըզ գուշութիւն տանել առ Թագաւորն Պարսից։ Զդդ դուն գիտա՛, տե՛ս խորհեաց ընդ միտս քո թէ զի՛նչ գործեա ցես։ Եւ եղև յորժամ լուաւ զայս Մանուէլ, կայր զարմացեալ հիացեալ ընդ միտս իւր. և ասէր թէ չիք իմ յանցուցեալ առ պարսիկս, էր աղագաւ զայն առնիցէ ընդ մեզ։ Եւ ասէ Մերուժանն ցՄանուէլ. Եւս ճշգրտեցի և հաստատեցի, զի իրքդ այդ ստոյգ էն. ես մեծաւ սիրով և հոգաբարձութիւն գուշակ եղէ քեզ։ Իսկ իբրև հաւատաց բանին Մերուժանայ Մանուէլն. և կարծեաց 'ի միտս իւր թէ ստոյգ էն բանքն այն զոր լուաւ, ապա գունդ կազմեաց, և զօր բազմամառ ինքն կուտեաց զօրավարն Հայոց Մանուէլ։ Եւ մինչ դեռ խաղաղութիւն Սուրէնն իւրով բանակաւն բանակեալ էր յանհոգս յանկարծս և աննենգ խաղաղութիւն, իբրև ոչ ինչ գոյր ի մէջ նոցա նենգութիւն դաւաճանութեանն ըստ համբաւահան չարագործն Մերուժանայ, յանկարծօրէն յեղակարծումն զօրավարն Հայոց Մանուէլ հասանէր անկանէր'ի վերայ բանակին Սուրէնայ, և զտասն հազարսն զպարսիկսն միանգամայն կոտորէր։ Դայց զմարզպան Սուրէնն միաձի արձակէր, շնորհել զարևն իւր՝ պարգև արարեալ։ Եւ զարմացեալ Սուրէն ընդ իրսն ընդ այնոսիկ թէ

ընդէր, եր աղագաւ նա զայս արդեւք գործեաց. և ասէ Մանուէլ ցՍուրէն. Օ քեզ վասն բարեկամութեան սիրոյն արձակեալ, ողջանդամ երթիջիր զձանապարհս քո. այլ ես 'ի պարսկաց 'ի խափս այլ ոչ անկայց։ Եւ ինքն Մանուէլ Հայոց զգունդն կազմէր, և զարս զն պատրաստէր. և գիտաց այնուհետև թէ մեծ թշնամութիւն յարոյց և մեծ գրգռութիւն ընդ Թագաւորին Պարսից։ Եւ յայնմ հետէ զօրավարն Հայոց Մանուէլ հանդերձ ամ գնդաւն զտիկին Օ արմանդուխտ զկին Թագաւորին Պապայ 'ի գլուխս առեալ, 'ի տեղն Թագաւորացն շրջեցուցանէին. և ինքեանք կային 'ի մարտի պատերազմին յաղագս շինութեան աշխարհին Հայոց յամ կողմանց ընդ Թշնամիս և ընդ սահմանակիցս, որ շուրջ զիւրեամբք էին, և աւելի զօրքն Պարսից զամ աւուրս կէնաց իւրոց. բայց Մերուժանն գնայր անդր առ Թագաւորն Պարսից ամբաստան զՄանուէլէ։

ԳԼՈՒԽ ԼԹ.

Յաղագս Գումանդ Շապհոյ՝ որ առաքեցաւ 'ի Թագաւորէն Պարսից տալ պատերազմ ընդ Հայս, և սատակեցաւ 'ի Մանուէլէ զօրաք իւրովք հանդերձ։

Զոն Թագաւորն Պարսից արձակեաց 'ի վերայ Հայոց զԳումանդ Շապուհ քառասուն և ութ հազարաւ, գալ առնուլ զերկիրն. և եկին հասին նոքա, մինչև 'ի սահմանսն Հայոց որ յատրպայական կուսէն էր։ Զոգա իբրև զայն լսեր զօրավարն Հայոց Մանուէլ, և գումարեր զզօրսն իւր ըստ բըրոշոպ ժամանակին որչափ և եկն 'ի ձեռն իւր՝ քսան հազար, և ձեպեաց Մանուէլ և եհաս ընդդէմ գընդին, և արկանէր 'ի սուր զզօրսն Պարսից. և զԳումանդ Շապուհն սպանանէր. և դարձեալ եղանէր մեծաւ յաղթութիւն։

ԳԼՈՒԽ Խ.

Յաղագս Վարազայ թէ որպէս կամ զնարդ առաքեցաւ 'ի Թագաւորէն Պարսից, և սատակեցաւ 'ի Մանուէլէ իբրև զառաջինն։

Զպա յետ այսորիկ Վարազ ոմն զօրավար Թագաւորին Պարսից գայր հասանէր ուԹուտասն բիւրու յերկիրն Հայոց, տալ պատերազմ ընդ Մանուէլի ընդ սպարապետին, և ընդ եամ գնդին Հայոց։ Զպա կազմէր պատրաստէր սպարապետն զօրավարն Հայոց Մանուէլ հեծեալս սպառազէնս տասն հազար, և եկեալ տայր պատերազմ ընդ Վարազայ։ Հարկանէր և սատակէր, ջնջէր զնա 'ի միջոյ. և գլխովին զՎարազն սպանանէր. Թափէր զկապուտ սաստիկ, զզարդ և զզէն զօրացն, և դառնայր մեծաւ խաղաղութ։

ԳԼՈՒԽ ԽԱ.

Յաղագս Մռկանայ՝ զոր առաքեաց դարձեալ Թագաւորն Պարսից 'ի վերայ երկրին Հայոց և 'ի վերայ Մանուէլի զօրօք բազմաք, և սատակէր 'ի Մանուէլէ իբրև զառաջինն։

Այ եղև յետ այսր ամենայնի առաքեաց Թագաւորն Պարսից զՄռկանն քառասուն բիւրու 'ի վերայ երկրին Հայոց։ Այն եհաս հանդերձ եամ բազմութեամբ զօրաց իւրոց յերկիրն Հայոց, և էառ զկողմն մի զերկիրն Հայոց. և բանակեալ էր յՄրտանդան դաշտին։ Նոքանէր 'ի վերայ բանակին Մանուէլն 'ի գիշերի, և անդէն առ հասարակ ընդ սուր հանէր զամենեսեան 'ի դակիչն, և զՄռկանն սպանանէր, և Թափէր աւար բազում. և ոչ զմի ոչ ապրեցուցանէր 'ի նոցանէն։

ԳԼՈՒԽ ԽԲ.

Յաղագս խաղաղութեան ամն եւթն։

Եւ յետ այսորիկ ամն եւթն, և այլ ոչ ևս յա-
ւելին զօրքն Պարսից ժողովել մնանել 'ի սահմանս
Հայոց. և եղև խաղաղութիւն երկրին։ Եւ ժողովեցան
առ զօրավարն Մանուէլ ամ ցրուեալք երկրին. ե-
կին անդան այր յայր, և էին բանակեալ յանհոգս.
և զօրավարն Հայոց Մանուէլ առաջնորդեր նոցա։
Եկին ապա և մնացորդք 'ի տանէն Միհնեաց պատա-
նեակ երեք մնացեալք 'ի կոտորածէն Պարսից առ
զօրավարն Հայոց Մանուէլ. և անուանք նոցա մի-
սումն Բաբիկ, և միսումն Սամ, միսումն Վաղի-
նակ։ Եւ ընկալաւ զնոսա զօրավարն Հայոց Մանուէլ.
և եղև նոցա օգնական, և դարձ արար նոցա յերկիրն
իւրեանց. և կացոյց տէր զԲաբիկ 'ի վերայ երկրին, և
զերկուսն ևս ըստ իւրաքանչիւր չափու. և էր Բաբիկ
նիզակակից զամ աւուրս կենաց նորա։ Այսպէս յամ
գաւառս կացուցանէր սպարապետն Հայոց Մանուէլ
նահապետս և տեարս գաւառաց գաւառաց. և ա-
ռաջնորդեր ամենեցուն խաղաղութիւն։ Եւ ամ երկիրն
Հայոց 'ի խաղաղութեան ընդ հովանեաւն Մանուէլի
զամ աւուրս կենաց նորա, ամ մարդիկ երկրին Հայ-
ոց վայելէին յաւուրս իւրեանց. ուտէին և ըմպէին
և ուրախ լինէին զայն ամն եւթն տերութեան Մա-
նուէլի, մինչև 'ի բաժանումն երկրին Հայոց և 'ի
քակտումն թագաւորութեան։

ԳԼՈՒԽ ԽԳ.

Յաղագս Մերուժանայ արծրունոյ, որ հանդերձ զօրօք եկն 'ի վերայ Մանուէլի, և սատակեցաւ 'ի նմանէ։

Այսպէս Մերուժանն արծրունի վաղուց ևս յա-
ւուրսն Աշչակայ արքայի լեալ էր ապստամբ 'ի թա-
գաւորէն Հայոց, ինքնակամ ձեռս տուեալ յարքայն
Պարսից, և զօրէնս Աղդեզանցն յանձն առեալ էր,

և ուրացեալ զՀաւատն քրիստոնէութեան հաւատոց, և բազումս անգամ լեալ էր առաջնորդ զօրացն Պարսից, և մեծամեծ չարիս անցուցեալ էր ընդ երկիրն Հայոց. և տակաւին էր նա առ Թագաւորին Պարսից։ Այլ զրգռեաց Աստուծոյն այս զԹագաւորն Պարսից, և առեալ զօրս բազումս 'ի նմանէ, և եկն ի հաս յերկիրս Հայոց։ Այլ էր սորա մեծաւ պարծանօք պարծեցեալ առ Թագաւորին Պարսից, զի կամ կալեալ կապեալ տարցի զԱնուէլն առ Թագաւորն Պարսից, և կամ զգլուխն հատեալ՝ զառաջեառ բերէ Թագաւորին Պարսից։

Այլ հասանէր ամ բազմութեան զօրացն Պարսից յերկիրն Հայոց, և Թողոյր զբանակ զօրացն Պարսից 'ի գաւառին Կորձէից, և ինքն իւրով սեփհականաւն գնդաւն հրոսիւն ժողովելով մեկներ զատանէր յԱրեաց գնդէն։ Կամէր յանպատրաստից գալ անկանել 'ի վերայ Անուէլի, միայն անձամբ անուն առնուլ, և ինքեան միայն կատարել զանայր, զի 'ի պարծանսն իւրոյ անձամբ վճարել զգործ պատերազմին։ Ամն այսորիկ այսպիսի բանս խօսէր ընդ զօրավարսն Արեաց գնդին, և ասէր՝ եթէ ես նախ երթայց լրտեսեցից, և զձեզ տարեալ արարից 'ի վերայ, զի այսպէս դիւրաւ լիցի 'ի բուռն արկանել ըմբռնել։ Այլ ինքն զիւր գունդն առեալ, խաղայր գայր հասանէր յերկիրն Կոգ գաւառի. և ինքն զանեղն առեալ, առնէր տես 'ի բանակն Անուէլի։

Այլ գային հասանէին լրտեսքն, և դիտէին զԱնուէլ, զի էր բանակ նոցա 'ի Բագրաւանդ գաւառի 'ի Բագուան աւանի, որ է մօտ յաւերակսն Օշարեհաւանդ քաղաքի։ Եկին դիտեցին դէտքն զբանակն Անուէլի, և զերամակ ձիոց բանակին յորում վայրի կային. և չոգան տարան զրոյց նմա։ Այլ խորհեցաւ նա առնուլ զերամակ բանակին. այնմ ուշ առնէր, և ինդալից եղեալ՝ ասէր պարծելով առաջի իւրոց զօրացն, թէ վաղիւ յայս ժամ իմ կալեալ կապեալ ընկէցեալ զԱնուէլն, և յանդիման նմին զկին նոցա Ամարդանոյշ խայտառակեալ իցէ։ Այլ չու արարեալ կատարել զգործն՝ յոր փութացեալ կամէր հասանել, և էին 'ի վայրսն՝ ընդ որ գալ էր գնդին

ընդ Ճանապարհն՝ լերինք ինչ, որում 'ի բնակչացն Նղջերք կոչեն։ Նա մինչ դեռ դայր Մերուժանն 'ի Ճանապարհի գնդաւն իւրով, դիպեցան նմա ուղևորք. յորս հարցանէր Մերուժանն և ասէր, եթէ Ճանապարհս 'ի Խաղբաւանդ ընդ որ երթայ։ Նա ուղևորացն տուեալ պատասխանի, ասացին. Ճանապարհ ընդ Նղջերս է։ Նա մեծապէս խտրեաց Մերուժանն ընդ միտս իւր. տրտմեցաւ ընդ բանսն, սակայն տայր հրաման չարաչար քարշել զուղևորսն և ծեծել։ Նա ինքն անցեալ ըստ ուղղին՝ ելանէր 'ի հմայս քաղդէ. ութեն, զքուէս հարցանէր. և ոչ գայր նմա յաջողակ յուռուութ կախարդանացն՝ յոր յուսային։

Այպա սրտմտութեամբ մեծաւ զիւր դէտսն առաջի արկեալ՝ յերամակակայն արշաւէր, զի հնար լեցի նմա նախ ըմբռնել։ Նա հասեալ 'ի տեղին, զերամակ ձիոց ոչ գտանէր. վասն զի յայ այնպէս իմն եղև իրաւունք պատրաստութեան Հայոց գնդին, զի սպառապետին Մանուէլի ամ Հայոց գնդին տուեալ էր ժամ յորս երթալոյ. վասն այսորիկ դիպեցաւ, զի զամ երամակն 'ի շէն էր ածեալ. և նոքա դեռ որոշոյ պատրաստեալ էին 'ի հեծանել։ Նա անտի գուժաւոր հասանէր առ զօրավարն Հայոց Մանուէլ, թէ գիտա տես, զի Մերուժանն արծրունի հասեալ է բաղում գնդաւ 'ի վերայ քո։

Այպա կազմեցան ըստ նմին պատրաստեցան ամ զօրքն Հայոց գնդին, և Մանուէլ սպարապետն. և մնին առաջի սուրբ ոսկերացն Յովաննու, որ կայր յայնմ գեւղ. ուխտաւոր լինէին և խնդրէին յայ, զարդար դատաւորն յօգնականութեն կոչէին, լինել նոցա այցելու օգնական։ Նա անտի 'ի դուրս ելեալք, զոմիկինն արշակունի հանդերձ մանկամբն Արշակաւ և Վաղարշակաւ զնոսա և զիւրեանց կանանին ընդ նոսա արձակեալ, յամուր յուղարկէին 'ի լեառնն մեծ՝ որ անուանեալ կոչի Վարազ։ Նա զմանուկն Արտաւազդ, որդի Վաչէի, ընդ կանանին տայր հրաման երթալ Մանուէլ. իսկ նա ոչ հաւանէր, չառնոյր յանձն։ Նա էր նա 'ի տիոց տղայ. և ըստ մանկութեն օրինի, ըստ կրօնից Հայոց՝ որպէս օրէն էր՝ զգլուխ մանկտոյն սոյնպէս 'ի ժամանակին գերծեալ

էր զգլուխս մանկանն Աբրահամեայ, և ցցուն էր թողեալ և գէս արձակեալ։ Այս իբրև ոչ հաւանեցաւ նա ընդ կանանչին երթալ, մարակ'ի վեր առեալ Մանուէլի տանջէր զմերկ գլուխս Աբրահամեայ. սաստէր նմա չերթալ'ի պատերազմ վասն մանկութեան ժամանակին տիոց։ Իսկ նա առ նորա ակամէ գնայ ընդ նոսա. բայց ապա յետոյ վառեալ կազմեալ պատրաստեալ զկնի պատերազմին։

Ա. յլ յորժամ զտիկինն Ամ աղախնիւն իւրեանց յուղարկեցին յամուրն, և ինքեանք վառեալք կարգեալք կազմեալք 'ի պատերազմն, 'ի մի վայր գումարեալք, նշանս արձակեալք դրօշս փողփողեալս, ըստ Գ-ուէրն աւան 'ի դուրս ելանէր ընդ կողմն արևմտից. և անդէն ընդ առաջ ելեալ նոցա Մերուժա նայ իւրով գնդաւն՝ որ եկեալ էր 'ի վերայ նոցա։ Այս չարագործն մեղաւորն Մերուժանն զիւր զգէնն և զարդ և զնշանն սաղաւարտին բազմաց եղեալ էր ընդ նոցն օրինակ, և զբազումս յիւր կերպարանեալ էր 'ի մէջ իւրոյ գնդին, և ինքն զիւր նշան ոչ ունէր։ Սա կայն Մանուէլ իբրև տեսանէր զնոցա գունդն հանդերձ իւրով գրնդաւն, առիւծաբար վարազօրէն յարձակեալ՝ 'ի նոցա գունդն խառնեցաւ. ուշ եդեալ այնոցիկ՝ որ զՄերուժանայ նշանն ունէին, համարեր եթէ զՄերուժանն սպանանիցէ։ Այս զբազումս ախոյենից հատանէին զգլուխս, ոչք զնոցն զնորին Մերուժանայ ունէին զնշանս. և տեսանէին զի չէր նա։

Այս խօսել սկսանէր սպարապետն Մանուէլ ընդ իւրում նիզակակցին Բաբկան, և ասէր. Տեսանե՞ս, քանի՞ խաբեաց զմեզ կախարդն Մերուժանն. այլ իմ և նորա յառաջու շատ լեալ'ի միջ վայրի'ի հաշտութեամբ ժամանակի, նշանս մի գիտեմ ես զնորա. զի յորժամ 'ի ձի հեծեալ էր, երան բարձի նորա ոչ յանձին և 'ի ծունկն ոչ հասանէր, այլ'ի բացեայ կայ'ի ձիոյ անտի։ Այրդ եկ զայդ հասարակ այսմ նշանի ուշ դիցուք, թերևս Ճանաչել կարասցուք զդիւթքուէիցն զկախարդն։ Այս զայդ միտ եդեալ երկոցունցն, և տեսեալ զՄերուժանն, այնու նշանաւ ծանեան տեսին. զի յայլակերպս լեալ էր, զի զիւր նշանն ոչ ունէր։ Այս ձայն տուեալ յառաջ կոչեաց

զՄԵՐՈՒԺԱՆՆ Մանուէլ, և ասէ ցնա՝ Թէ այ կախարդ, ցէրբ խաբեաս զմեզ, և վասն քո և զայլս եւս տաս ջարդել. այլ մեք ծանեաք զքեզ զի աւադիկ կաս, և ապրել քեզ չիք հնար այսօր 'ի ձեռաց մերոց. զի այսօր էած կատարեաց զչարիս քո որ ՈՒԾ 'ի գլուխ քո, և մատնեաց ՈՐ 'ի ձեռս մեր։ Իսկ յորժամ զայն լսէր Մերուժանն, անդէն վաղվաղակի նիզակ առեալ, յառաջ խաղացեալ, ախոյեան ելանէր Մանուէլն։ Սակայն յորժամ հարկանէին նիզակքն, քանզի երկոքեան արքն յաղթք եկին, երկոքեան 'ի ձիոյն յերկիր անկանէին, և անդէն նիզակակիցն Մանուէլի Իսրաելեայ հատանէր, նիզակաւ 'ի վերուստ 'ի վայր 'ի կողին կարէր ընդ գետինն, և ոչ կարէր յառնել։ Իսկ զսպարապետն Մանուէլիւր վարաւանդասպասքն յերիվարն հանէին, և զՄերուժանայ զգլուխն 'ի բաց հատանէին. և ՈՐՄ զօրացն լինէր փախուստ, իբրև տեսին թէ Մերուժանն մեռաւ։

Եւ ասի գունդն Մանուէլեան խրախոյս առեալ յարձակեցան զՀետ մերուժանեան գնդին. հարկանէին սատակէին զնոսա, և զմի 'ի նոցանէն ոչ ապրեցուցանէին։ Այլ Մանուէլն Ալրտաւազդ 'ի Մանուելէ գաղտ եկեալ էր 'ի Ճակատն. սակայն վառեցաւ կազմեցաւ և եմուտ, զանխուլ 'ի Մանուելեան գնդէն, առ ամն Ալփրատ գետովն. Եհար սատակեաց 'ի մերուժանեան գնդէ անտի անթիւ բազում սպառազէնս կոտորեաց։ Եւ նշանակիր մի 'ի Մերուժանայ իբրև ետես զԱլրտաւազդն, յընչացք եբաց. զի տեսանէր զնա պատանեակ մի կայտառ անմուրուս, երեսօք գեղեցիկ. ապա զնշանն զնիզակաւն պատեալ, յարձակեցաւ 'ի վերայ նորա։ Իսկ նա ընդ գիրկս մտեալ, հարկանէր զայրն նետիւ. և կարանէ 'ի կարան թափ հանեալ զնեան ցամաք ընկենոյր զնա։ Եւ առեալ զնիզակն զՀետ մտեալ փախստականն, ընդ սուր հանեալ զզօրն Մերուժանայ, աւելի քան զամենեսեան Ալրտաւազդ որդի Ս աչէին Մանուէլն կոտորէր. և ինքն մեծաւ անուամբ, և բազում աւարաւ՝ զոր կապուտն Թափէին 'ի զօրաց Թշնամեացն։

Բայց յաւուր յայնմիկ լինէր մեծ զնաս անհնա-

ըին. զի Ա՝աչէ երկրորդն Մանուէլի, ձին զուլամբ երթեալ, սպանանէր։ Այնպէս և զԱրջոյլ Մաղխաղ ձին տարեալ սատակեաց. վասն զի տրմուղ 'ի Թերավարժ ձիոյ հեծեալ էին երկոքին։

Իսկ դառնայր Մանուէլ երթայր 'ի բանակն տիկնոջն հասանէր. տանէին ընդ ինքեանս զգլուխն Երուժանայ. և Սամուէլ որդի Ա՝ահմանայ ոչ դիպեցաւ ընդ Մանուէլի, զի դարձաւ նա 'ի բանակն։ Սակայն յորժամ տեսին զգլուխն Երուժանայ կանայք բանակին Մանուէլի, մեծաւ աղաղակաւ ՀԻՒ բառնային. զի նոքա այսպէս համարեցան թէ այն գլուխ Սամուէլի որդւոյ Ա՝ահմանայ իցէ, վասն զի նման միմեանց էին երկոքեան, Մերուժանն և Սամուէլ։ Բ՝ պա տեսին զգլուխն Մերուժանայ, զի զցիցն երկայն կախեալ էր, յայնմ ծանեան եթէ չէ Սամուէլայ, այլ Մերուժանայ արծրունոյ. այլ ասացին. Սակայն դա մեր եղբայր է։ Բ՝պա եկին բերին զմարմին Ա՝աչէի 'ի բանակ անդր հօրն Բ՝րտաւազդայ, և զմարմինն Գարջուլայ Մախազու խոռխոռունոյ. եդին աշխար մեծապէս, և լացին զնոսա։ Դ՝կին բերին զայրն նշանակիրն Մերուժանայ, զոր եհարն Բ՝րտաւազդ նետիւն. և ՈՒՄ որ զարմանայր ընդ այն, զի նետն թափ կարանէ 'ի կարան անցեալ էր, իբրև տեսին զնա՝ ապրեցաւ 'ի մահուանէ։ Բ՝յլ իբրև լուան զօրքն Պարսից՝ զոր թողեալ էր Մերուժանայ 'ի դաւառն Կորձէից՝ թէ սատակեցաւ Մերուժանն, և կորեաւ գունդն որ ընդ նմա, և ինքեանք 'ի Պարսից երկիրն փախստական գնացին. և Հայոց երկրին լինէր խաղաղութիւն բազում։

ԳԼՈՒԽ ԽԴ.

Ցաղագս թէ զնարդ թագաւորեցոյց Մանուէլ սպարապետն զմանուկն Արշակ, և ապա ինքն Մանուէլն մահու մեռանէր։

Բ՝ՊԱ յետ այսր ամենայնի, զոր արարեալ զօրավարն սպարապետն Մանուէլ, հանդերձ արշակունի տիկնաւն, և մանկամբքն երկոքումբք՝ Բ՝ուշակաւն և

Ա աղաղշակաւն, հանդերձ ամ բանականաւն Հայոց մեծամեծ աւագայնովն նախարարօքն երևեալ հատաներ 'ի գաւառն Կարնոյ. և ամ տանուտեարք ընդ նմա։ Այլ տայր սպարապետն Մանուէլ զդուստր իւր Ա արդանդուխտ կին Աբշակայ մանկանն արշակունոյ, և փեսայ իւր առնէր զնա։ Անէր հարսանիս և եղբօր նորին Ա աղաղշակայ, և տայր նմա զդուստր սպարապետին բագրատունոյ 'ի Սպեր գաւառէ, որ թագաւորքն թագակապքն լեալ էին 'ի բնէ ազգին թագաւորութեն արշակունոյ. և մեծապէս արարեալ զհարսանիսն ամ երկիրն Հայոց, ցնծացեալք խընդացեալք էին ընդ այն մեծ խնդութեն ուրախութեն։ Այսպա յետ այսորիկ դարձեալ 'ի մի վայր ժողովեալ զաշխարհ ամ զմարդիկ երկրին Հայոց, և թագաւորեցոյց զմանուէն զԱբշակ երկրին Հայոց, և զԱ աղաղշակ երկրորդ նմին։ Այլ ընդ այն ևս ցնծացեալ առնէին մեծապէս ուրախութեն և ցնծութեն ամ երկրին Հայոց։

Այսպա յետ այսորիկ հիւանդացաւ սպարապետն զօրավարն Հայոց Մանուէլ զախտ հիւանդութեն մահու. և կոչեաց զորդի իւր զԱրտաշիր, և ետ նմա զտէրութեն իւր և զսպարապետութեն զօրավարութեն իւրոյ։ Այլ պատուիրէր նմա հնազանդ հպատակ կալ արքային Աբշակայ, և լինել միամիտ. ջանալ և վաստակել, և տալ պատերազմ փոխանակ աշխարհին Հայոց զանձն քո, որպէս քաջ նախնիքն 'ի վերայ աշխարհին մտադիւր մեռանել։ Օ՛ի, ասէ, առ ամ այն արդարութեն մեծ է և ընդունելի. և ոչ ամ թողու 'ի ձեռաց, յորժամ այնպէս լինիք։ Անուն քաջութեն յերկրի թողցուք, և զարդարուն յերկինս ընծայեցուցանիք. և ամենևին 'ի մահուանէ մի երկնչիք, այլ յուսասջիք յայն, որ զամ արար և հաստատեաց։ Այլ զնենգութեն և զպղծութեն և զչարութիւն յանձանց ձերոց 'ի բաց արարէք. և զամ ամ սրբութիւն և միամտութիւն պահեցէք. և 'ի վերայ ամ ծապաշտ աշխարհի համարձակութիւն մեռարուք, զի այն ինքն մահ վասն ամ է, փոխանակ եկեղեցեաց նորա և ուխտի նորա, և 'ի վերայ բնակ տերանց աշխարհիս արշակունոյ։

Այլ յետ այսորիկ գրեաց հրովարտակ առ Թագաւորն Յունաց, և նմա յանձն արար զաշխարհս Հայոց և զԱրշակ արքայ։ Այլ յետ այսորիկ իբրև միահամուռ ժողովեալ կային շուրջ զնովաւ, և իբրև կայր հիւանդ 'ի մահիճս իւր, անդ Թագաւորն Արշակ և անդ Վարդանդուխտ կին Թագաւորին, և անդ ամ աւագք և մեծամեծք և նախարարքն Հայոց այր և կին առ հասարակ ամ երևելի մարդիկ, ապա եբաց Վանուէլ զամ զանդամն իւր առ հասարակ առաջի ամենեցուն, մերկացաւ և եցոյց զի քան զդրամ խայծ ոչ գտանէր ողջ 'ի մարմնի նորա՝ զոր խոցեալ էր 'ի պատերազմի. զի յառնի յանդամնն աւելի քան զյիսուն սպի կայր վերաց, և զայն անդամ բացեալ առաջի ամենեցուն ցուցանէր։ Վկատ լալ, և ասել՝ Թէ ես 'ի մանկութէ համակ մնայ 'ի պատերազմունս, և մեծաւ քաջութիւնք զամ վերս յանձն իմ առի. և ընդէր ոչ ետաս ինձ մեռանել 'ի պատերազմի, քան զորէն անամնոյ մեռելոյ եղէ։ Օ՜ի լաւ էր ինձ եթէ 'ի պատերազմի մեռեալ էի 'ի վերայ աշխարհի, զի մի զեկեղեցիս և մի զուխտ այ առ ոտն կոխիցեն։ Վասկայն և 'ի վերայ արշակունեաց բնիկ տերանց աշխարհիս, և 'ի վերայ կանանց և 'ի վերայ որդւոց մերոց, և 'ի վերայ ածապաշտ մարդկանս և 'ի վերայ եղբայրութէ ընկերութէ և մտերիմ բարեկամութէն զի՞ էր թէ հասեալ էր ինձ մեռանել. թէպէտ շատ զանձնս յանդուգն վարեցի, զվատթար մահս մահճացս ետաս ինձ մեռանել։

Օ՜այս և բազում և աւելի քան զսոյնս խօսեցաւ առաջի Արշակայ արքայի և առաջի ամենեցուն. և աղաչեաց ևս զԹագաւորն Արշակ, և ասէ. Իմ Աստուծով կեցեալ և ջերմ քրիստոնէութէ, մի յանկարդ իբրև հեթանոսս կոծ կամ աշխարանս ոք անյուսութէ դնիցէ ինձ։ Օ՜ի որ միանգամ յուսոյ յաւրութէ ակն ունին միանգամ կենդանութեան և գալստեանն Քրիստի, չէ պարտ լալ զնոսա։ Արդ իմ ցայժմ յուսով երկիւղիս կեցեալ, բայց դուք մի թիւրիցիք 'ի պատուիրանացն այ. աւելի զարդարութենէ փոյթ արասջիք, ևս առաւել զողորմութենէ։ Օ՜ի մեզ մեծ հայրապետն Ներսէս զայս համակ պատուի

րեր. և ինքն յամ ժամ 'ի կենդանութեանն զսոյն գործէր, և այլոց ուսուցանէր առնել. զի ողորմէր աղքատաց, տնանգաց, գերեաց, ամայեաց, օտարաց, պանդխտաց. զի այսպէս ասէր նա. Եթե զողորմութիւն առնել, կամ քան զտուրս տալ, այլ ինչ մեծ և պատուական առաջի ՅԻ չէր։ Եւ զաշխարհ կամ զկոծ գնել մեռելոց՝ դառն մեղս համարէր, և յամենեւին եհատ զայս յերկրէս Հայոց. զի յաւուրս նորա ոչ ոք իշխէր գնել կոծ կամ աշխարանս. այլ յետ մահու նորա անմիտ մարդիկ համարձակեցան զայս գործել։ Եւ այլ վասն իմ ոք կոծ մի դիցէ. եթէ գնէ ոք, նա լիցի դատապարտ. այլ ոչ եթէ յետ մահուն իմոյ իմ իշխանութիւն ինչ է սաստել, զի զոր ոչն կամիմ՝ մի արասցեն. այլ ինձ յիշատակ արասցէ որ զիս սիրէ։ 'Ի պատերազմի 'ի մահուանէ մի երկնչիք, ուր ես ոչ մեռայ. զի առանց ՅԻ ինչ ոչ լինի։

Օ այս և զայսպիսի, և որ ինչ այս բանից նման են բանք, խօսեցաւ։ Բազում և անչափ գանձս աղքատաց և կարօտելոց բաշխէր, իւրովք ձեռօք մատակարարէր. և բազում մասունս յընչից իւրոց տայր յեկեղեցիս և 'ի վկայանոցս, և բազում գանձս տայր ցքահանայապետսն. և ապա ինքն մեռանէր։ Եւ իբրև մեռաւ մեծ սպարապետն Ա՝անուէլ, հրամանն զոր տայր յաղագս կոծոյն չգնելոց՝ այնմ ինչ ոք ոչ անսաց. այլ ՅԱՄ մարդ երկրին Հայոց կոծ եդեալ, մեծաւ աշխարանօք լային զնա առ հասարակ ազատք և շինականք։ Օ՛ի ՅԱՄ մարդ իբրև զՀօրէ 'ի կարի առնէին զնմանէ վասն քաղցրութիւն մարդասիրութիւն հեզութիւն հանդարտութիւն խնամոտ բարերարութիւն՝ բարենշան զաշխարհաշէն անձն Ա՝անուէլի։ Եւ մեռնէ քեան բերանաբաց հառաչէին զինի նորա, կղկղաթ կաթոգի լինէին զիւրեանց քաջ զօրավարէն, զփրկչէն իւրեանց, զյաղթական զանուանէն զարգասուէն[1], յայնպիսոյն հեռացեալ գնացեալ 'ի յանջատեէն 'ի մեկնելոյն։

1 Յամ օրինակս պարգասուէն։

ԲԻՒՋԱՆԴԵԱՑ

ՎԵՑԵՐՈՐԴ ԽՈՍՏԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ԿԱՆՈՆՔ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ ՄԱՏԵՆԻՑ

Ա. Յաղագս ընդ երկու բաժանելոյ աշխարհին Հայոց, զի կէս ազգին Հայոց Թագաւորեալ Արշակ հրամանաւ Թագաւորին Յունաց, և կէս ազգին Թագաւորեալ Խոսրով հրամանաւ Թագաւորին Պարսից, եթէ որպէս զաշխարհն Հայոց ընդ երկուս բաժանեալ՝ սահմանս 'ի մէջ արկանէին իւրեանց, և որպէս այլ աշխարհքն և գաւառքն ցրուեցան, և սահմանք նոցա կրծեցան յամ կողմանց երկոցուն կուսաց։

Բ. Յաղագս եպիսկոպոսաց, որ երևելիքն էին յայնմ ժամանակի 'ի բաժնի մասին յաշխարհին Խոսրովու յերկրին Հայոց. նախ վասն վարուց Զաւենայ։

Գ. Յաղագս Շահակայ կորճէի, որ եկաց յետ Զաւենայ գլուխ եպիսկոպոսաց։

Դ. Յաղագս Ասպուրակայ մանազկերտացոյ, որ եկաց գլուխ եպիսկոպոսաց յետ Շահակայ։

Ե. Յաղագս Փաւստեայ և Զորթայ եպիսկոպոսաց։

Զ. Յաղագս Առաւստոմեայ եղբօր Փաւստեայ եպիսկոպոսի։

Է. Յաղագս Աբոթայ եպիսկոպոսի բարենացոյ։

Ը. Յաղագս Յոհաննու եպիսկոպոսի և վարուց նորա և աղահուլթե սորա և անմոուլթե, և շաղաշուտ խօսից և գործոցն, և նշանացն՝ որ յայ 'ի վերայ նորա եղեն երբեմն, եթէ որպէս մեղաք հայցէր և առնոյր զաղահուլի 'ի Թագաւորաց։

Թ. Յաղագս Նորին Յոհաննու։

Ժ. Յաղագս Նորին Յոհաննու։

ԺԱ. Յաղագս Կիւրակոսի եպիսկոպոսին։

ԺԲ. Յաղագս Զորթուազայ եպիսկոպոսի Վանանդայ գաւառին։

ԺԳ. Յաղագս Տիրկան և Մովսէսի եպիսկոպոսաց Բասենոյ գաւառին։

ԺԴ. Յաղագս Արշարունայ եպիսկոպոսի։

ԺԵ. Յաղագս գլխաւորին եպիսկոպոսացն որ էրն Ասպուրակայ։

ԺԶ. Յաղագս Գնդայ սրբոյ և առաքելոյ, որ յայնմ ժամանակի գլխաւոր էր աբեղայից Հայոց անապատաւորաց մենակեցաց վաներայոց[1].

Ստորոտ եմ պատմութեց յաղագս իմ տեղեկութեան, որք միանգամ զմատեանս ընթեռնոյք, տունք տան համարական թուք։

1 Յերիս օրինակս վանէրայոյ. յօրինակի միում վանէրայիդ, և յայլում վանորէից։

ԲՈՒՋԱՆԴԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ՎԵՑԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ՎԵՐՔ, ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎՃԱՌՈՒՄՆ
ՄՆԱՑՈՒԱԾՔ ԲԱՆԻՑ Ի ԾԱՅՐԻ

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս ընդ երկուս բաժանելոյն աշխարհին Հայոց, և Թագաւորելոյն Արշակայ հրամանաւ Թագաւորին Յունաց, և կէս աղգին Թագաւորեալ Խոսրով հրամանաւ Թագաւորին Պարսից, Թէ որպէս զաշխարհն ընդ երկուս բաժանեալ՝ սահման 'ի մէջ իւրեանց արկանէին, և որպէս աշխարհն հատան յիւրաքանչիւր յերկոցունց կուսաց։

Ապա յետ մահուն Մանուէլի զօրավարին Հայոց ոչ իմն կարաց հաստատել 'ի վերայ աշխարհի Թագաւորութեն Արշակայ. այլ բազումք 'ի Հայոց նախարարացն անտի ելին զատեան գնացին առ Թագաւորն Պարսից, և մատնեցին նմա զաշխարհն Հայոց. և խնդրեցին 'ի նմանէ Թագաւոր արշակունի։ Եւ նորա յանձին կալեալ մեծաւ խնդութեամբ ընդ իւր ձեռն տալ իւրով բանիւ 'ի նմին տոհմէ 'ի Թագաւորութեն Հայոց արշակունի, և նոքաւ յինքն գրաւել զաշխարհն Հայոց։ Ապա գտանէր 'ի նմին տոհմէ մանուկ մի անուն Խոսրով, և կապեաց Թագ 'ի գլուխ նորա. և ետ նմա կին զքոյր իւր զՕրուանդուխտ, և արար ընդ նմա զամ զզօրս զօրութեան իւրոյ. և Օ՚ի կէս նուիրակ դաստիարակ ետ արքային Խոսրովայ. և եկին հասին յաշխարհն Հայոց։ Իբրև ետես Արշակ արքայ զնոսա, մերժեցաւ տեղի ետ չոգաւ

գնաց 'ի սահմանս Յունաց. և էին Թիկունք Աբշակայ Թագաւորին Հայոց. և Խոսրովու՝ Թագաւորն Պարսից։

Այսպէս եկին զօրքն Յունաց Թագաւորին 'ի Թիկունս. և Թագաւորն Աբշակ զԷկեղեաց գաւառաւ, և զօրքն Պարսից և արքայն Խոսրով Մ.յրայրատ գաւառին։ Այսպէս դեսպանք և հրեշտակք երկուց Թագաւորացն, Յունացն և Պարսից, միմեանց[1] առ միմեանս երթևեկէին։ Եւ այնուհետև առնէ խորհուրդ միաբանութեամբ հաւանութեամբ ընդ միմեանս Թագաւորն Յունաց և Թագաւորն Պարսից. և լաւ համարեցան զաշխարհն Հայոց նախ ընդ երկուս 'ի մէջ իւրեանց բաժանել. զի ասէին՝ թէ 'ի միջի մերում բնակեալ է այս հզօր և հարուստ Թագաւորութիւն, լաւ է զի այսու եղծանել և խանկարել կարասցուք զայս Թագաւորութիւս. նախ ընդ երկու բաժանել երկու Թագաւորօքս արշակունեաք՝ զորս կացուցաք, ապա և ընդ նոսա կրծել ջանասցուք, աղքատացուցանել, 'ի մէջ արկանել 'ի ծառայութիւն, զի մի կարասցեն 'ի մէջ մեր ամբառնալ զգլուխս։

Եւ հաստատեցին զայս խորհուրդ. ընդ երկու զաշխարհն բաժանեցին։ Բաժին կողմանն Պարսից էր Թագաւորին Խոսրովու, և բաժին մասին Յունաց էր Թագաւորին Աբշակայ։ Բայց և 'ի նոցանէ բազում գաւառք կրծեալք հատեալք այսր անդր, և մնաց սակաւ մասն յաշխարհայ երկոցունց առ էր կոսեան Թագաւորսն։ Բայց սակայն երկոքեան Թագաւորքն Հայոց՝ Աբշակ և Խոսրով, որ Սիւնքն գաւառքն մնացին Թագաւորութեանն Հայոց երկոցուն կողմանց 'ի մէջ իւրեանց, և երկոքեան Թագաւորքն արշակունիքն 'ի մէջ երկու բաժնացն սահմանս արկեալ հաստատէին խաղաղութիւն, և երկիրն Հայոց երկոքեան բաժինքն, երկուց Թագաւորացն հնազանդէին իւրաքանչիւր բաժնի իւրաքանչիւր Թագաւորի. բայց սակայն մեծ էր Խոսրովու բաժին նորաքան զԱբշակայ։ Եւ բազում գաւառք յերկոցունցն հատան. նուաղեաց բաժանեցաւ ցրուեցաւ Թագա-

1 Յօրինակի մում դէնց։

ւորութիւն Հայոց, պակասեաց յիւրմէ մեծութենէն յայն ժամանակն և յապայ։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս եպիսկոպոսացն, որ երևելիք էին յայնմ ժամանակի 'ի մասինն յաշխարհին Խոսրովու յերկրին Հայոց՝ որ ընդ Պարսից ձեռամբ էին. նախ վասն վարուց Զաւինայ։

Եւ էր Օաւէնս այս անուանի զաւակ Պզբիանոս եպիսկոպոսի 'ի գեղջէ Մանաւազկերտոյ. էր սա բարոյիւք այր չարարար խիստ և նախանձոտ։ Բայց սակայն կրօնս մի, զոր եդ յիւրում ժամանակի. զի՝ամ քահանայից ուսոյց առնել հանդերձ զինուորաց։ Օ՝ի թողին զկրօն առաքելական եկեղեցեացն, սկսան գընալ ըստ իւրեանց մտաց. զի ոչ ըստ կրօնիցն ագանէին քահանայքն զպՀինաւորն, որպէս օրէն էր 'ի քնէ, այլ սկսան զխոտորկտուրսն 'ի վերայ ծնգացն ունել։ Եւ զարդարէին զՀանդերձս իւրեանց պէսպէս նարօտաք, և սիդային որպէս ոչ վայել էր. և զմորթ մռելոտիս գազանացն քահանայքն անխտիր ագանէին, որ ոչ վայել էր։ Եւ ինքն Օաւէնն ամթխնեալս և զտապակեալս զժապաւինեալս նարօտաք ագանէր, զսամուրէնիս և զինգմէնիս և զգայլէնիս ագանէր. և աղուէսէնիս զանձամբ արկեալ, անխտիր 'ի բեմ եղեալ նստէին։ Որկորստութիւն ագահութիւն անառակութիւն կայր Օաւէն զամ աւուրս կենաց իւրոց. և սա կալաւ զտեղի զամ աւուրս կենաց իւր ամն երիս։

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս Շահակայ կորձէի, որ եկաց 'ի տեղի Զաւենայ գլուխ եպիսկոպոսաց։

Զոր Շահակ կորձեայ եկաց գլուխ եպիսկոպոսաց փոխանակ Զաւենայ յետ մահու նորա ամս երկուս։ Նա էր սա այր քրիստոնեայ, բայց ոչ ինչ զչարեցաւ ընդ կարգս Զաւենայ՝ զոր եդեալն էր նորա՝ փոխել. սակայն առաջնորդեաց սա ամս երկուս, և փոխեցաւ յաշխարհէ։

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս Աստուրակայ մանազկերտացւոյ, որ եկաց գլուխ եպիսկոպոսաց յետ Շահակայ։

Զոր յետ մահուն Շահակայ եպիսկոպոսի եկաց գլուխ եպիսկոպոսաց Աստուրակ ոմն 'ի զաւակէ Զաբիանոսի եպիսկոպոսի, այր քրիստոնէամիտ ՝ՃԾապաշտարդար. և առաջնորդեաց դրամն Խոսրովու։ Բայց միայն վասն կրօնիցն հանդերձոյն զեղեալ կարգն ըստ կրօնիցն Զաւենայ գնային սոքա։

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս Փաւստեայ և Զորթայ եպիսկոպոսաց։

Իբր առ այնմ ժամանակաւ Փաւստոս եպիսկոպոս։ սա 'ի ժամանակս Ներսէսի եպիսկոպոսապետին՝ էր 'ի տան Նորին Իբրև Թելակալ։ Այոյնպէս Զորթ այր Ներքինի ընդ նոսին. քանզի էին 'ի Ներքնի Հայրապետին 'ի տան Իւրում ընդ նորա ձեռամբ երկոտասան եպիսկոպոսք, աթոռակիցք Իւր գործա-

կիցք և խորհրդակիցք։ Ամոլ զայլոց գաւառաց ամ եպիսկոպոսեանն, որ ընդ նուլաւ. այլ երկոքեան սո-քա յայնց երկոտասանիցն։ Եւ էին սոքա 'ի տեսչուն աղքատանոցացն հաւատացեալք, և յամենայնի էին հաւատարիմք նորա 'ի ժամանակս նորա, և յամ Խոսրովու և Ա.ըշակայ երկուց Թագաւորացն բաժա-նաւորացն, մինչ դեռ ևս կային նոքա կենդանիք։

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս Աւոստոմայ եղբօր Փաւստեայ եպիսկոպոսին։

Եւ էր եղբայր մի Փաւստեայ եպիսկոպոսի, կրօ-նաղգեաց մէնակեաց անապատակեաց լեառնական սքանչելի։ Եւ էին լեալ սոքա աղգաւ Հոռոմ. այլ այրս այս մեծաւ վարեօք շրջէր զամ աւուրս կենաց իւրոց։ Եւ էր սա բնակեալ յարայրատեան գաւա-ռին, և վարէր նա Հոգւով սրբով. շրջէր սա յանա-պատս մաշկահանդերձ Ճարակաւոր 'ի լերինն մինչև յօր հանգստեան իւրոյ։ Ա.պա հանկեաւ սա. և բե-րին յանապատէն զմարմին սորա, Թաղեցին 'ի բուն 'ի գեւղն Հայրապետին Ներսէսի, որում անուն Ա.մՃն կոչի. և ամի ամի զյիշատակ նորա կատարէին։

ԳԼՈՒԽ Է.

Յաղագս Արտեմայ եպիսկոպոսին Բասենոյ։

ՅաՃնմ ժամանակի երևելի էր յեպիսկոպոսսն, որ էին, Ա.րտեմ եպիսկոպոս Բասենոյ, այր ծերու-նի պատուական և պիտանի։ ԱրքուՃ և ՃշմարտուՃ էր վարեալ. իբրև արժանի եղեալ սա Հոգւոյն սրբ-բոյ՝ մեծաւ զօրուՃ շրջէր, առնէր նշանս մեծամեծս ամն բազումս։ Սա աշակերտեալ մեծին Դանիելի՝ որ էրն յամն Տիրանայ արքայի, և կենդանի կայր

յամն Խոսրովու արքայի և Բ.ըշակայ, երկուց Թագաւորացն Հայոց։

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս Յոհաննու եպիսկոպոսի, և վարուց նորա, և անմտութեան և շաղաշուտ խօսիցն և գործոցն, և նշանացն՝ որ յայ 'ի վերայ նորա եղեն։

Բ.ՅԼ Յոհան եպիսկոպոս, որդի Փառնայ հայրապետի, հինաւուրց. թէ արժան իցէ զնա կոչել եպիսկոպոս։ Այլ էր սա այր կեղծաւոր, և երևեցուցանէր ինքն զանձն իւր մարդկան պահող և խորգահանդերձ. մինչ զի մոյգս անգամ ոչ ագանէր, այլ զամառն հեսկով պատէր, և զձմեռն կեմով։ Այլ յագահութեամբ առանց չափոյ էր հեղեալ, և ոչ կարէր տալ զագահութիւն իւր ընդ երկիւղին Աստուծոյ. այնչափ ինչ, զի զիրս անարժանս և չհաւատալիս գործէր։

Օ.ի էր երբեմն դիպեալ 'ի Ճանապարհի ուրեմն, զի նստէր նա 'ի գրաստու վերայ և գայր. եկ դիպեցաւ սմա օտար պատանի մի աշխարհական հեծեալ 'ի ձի, սուսեր ընդ մէջ, թուր զգօտւոյ, աղեղնակապարձ զմիջոցն. լուացեալ զհերս իւր օծեալ մերձեալ, վարսակալ եդեալ 'ի գլուխ իւր, և օդիկ[1] արկեալ զուսովք իւր. և գայր զՃանապարհս իւր. թերևս յաւազակութէ։ Խսկ ձին՝ յորում հեծեալ՝ մեծ հասակաւ, և էր գունաւոր, գնացող, մինչ զի 'ի բացէ տեսանէր եպիսկոպոսն Յոհան զձին, մեծապէս զարմացեալ՝ ակնկառոյց լինէր։ Այսպա երբև եկն մերձեցաւ հեծեալն մօտ 'ի նա անդր, ապա սպասեալ Յոհաննու՝ բուռն հարկանէր զերասանակաց ձիոյն, և ասէր. Այլ դու վաղվաղակի 'ի ձիոյ այսի, զի բանք են ինձ ընդ քեզ։ Ասէ այրն. Օ.ի ոչ դու զիս գիտես, և ոչ ես զքեզ, զի՞նչ այն բանք իցեն, զոր դու ընդ իս իցես խօսելոյ։ Ամենաւանդ զի այրն

1 Յօրինակի միւսմ յօդիկ։

արբեալ ևս դիպեցաւ, և շատ յամառեաց այրն ի ջանել 'ի ձիոյն։ Եպա բռնադատեաց զնա Յոհան, ի ջոյց 'ի ձիոյ անտի. և առ տարաւ զնա մեկուսի 'ի Ճանապարհէն։ Եւ առնն խոնարհել հրամայեր և ասէր. Օ՞ երիցու�եթ ձեռն դնեմ 'ի վերայ քո։ Իսկ նա տայր պատասխանի զանձնէն, եթէ այր աւազակ սպանող չարագործ և խառնագնաց լեալ 'ի մանկութենէ իմմէ, ես ոչ ինչ եմ արժանի այդպիսի իրաց. և այժմ գեռ 'ի նմին գործ կամ։ Եւ շատ 'ի վեգ եկեալ յամառէր այրն, և նա ևս չար քան զնա։ Եպա բռնաբար զգեստնեալ զայրն, դնէր Յոհան զձեռն իւր՝ առնել զնա երէց. և յարուցեալ հրամայեր լուծանել զհանգոյցս մեկնոցին, և արկանել նմա աղաբողն։ Եւ ասէր. Երթ 'ի գեղդ քո, և լիջիր դու անդ երէց գեղջն՝ ուստի ես։ Եւ անգամ ոչ գիտէր զայրն թէ յորմէ՛ գեղջէ իցէ. ինքն Յոհան մատուցեալ բուռն հարկանէր զձիոյն, և ասէր. Ելս ինձ կօշիկք լիցին, փոխանակ զի երէց արարի զքեզ։ Իսկ այրն յամառեալ 'ի վերայ ձիոյն չառնոյր յանձն տալ. ապա բռնաբար յինքն հանեալ զձին, և զայրն արձակեաց։ Եւ այս ՝ամ իրքս վասն ձիոյն եղեն։

Եպա այրն թէ ոչ կամօք՝ աղերսողն արկեալ, գընայր 'ի տուն իւր, և երթեալ մտանէր 'ի մէջ ընդառնեաց իւրոց, ասէ ցկին իւր և ցընդանիս. Եբիք յաղօթս կամք։ Եւ նոքա ասեն. Մոլիս դու, դէ՞ ուրեմն հարաւ 'ի քեզ։ Իսկ նա ասէ. Եբիք կամք յաղօթս, վասն զի երէց եմ։ Իսկ նոքա զարմացեալ, մերթ շիկնէին, մերթ ծիծաղէին. մինչև բազում անգամ յամառեալք, ապա ուրեմն հաւանեցան կալ յաղօթս ընդ նմա։ Եպա ասէ կինն ցայրն իւր. Ո՞չ դու երախայ էիր, և չէիր մկրտեալ։ Եսէ այրն ցկինն իւր. Եպշէցոյց, չետ յիշել, և ոչ ես յիշեցի զայդ ասել ցնա. զիս երէց արար, և զձին սանձաւ թամբաւ առ և անց։ Եւ ասէն ցայրն ընդանիքն իւր. Յարիցես անդրէն գնասցես առ եպիսկոպոսն, և ասասցես. Մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց։ Իսկ նորա յարուցեալ գնացեալ առ եպիսկոպոսն, ասէ ցնա. Ելս մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց։ Եւ ասէ Յոհան. Սափորով միով ջուր բերէք։ Եւ ա-

ռեալ զՔուրն Էարկ զգլխով նորա , և ասէ . Կրթ , մկրտեցի զքեզ ։ Եւ արձակէր զայրն վաղվաղակի յիւրմէ ։

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս Նորին Յոհաննու ։

Այրեմն սոյն Յոհան անցանէր առ այգեօք ուրումն . և էր ժամանակն զայգիսն յատելոյ ։ Աղաղակէր առ նա այր մի յայգւոյն, և ասէ . Օրհնեա, Տէր եպիսկոպոս , զմեզ և զայգիս ։ Ասէ Յոհան . Փուշ և տատասկ բուսցի ։ Ասէ այրն . Ի մարմնոյդ քո բուսցի փուշ և տատասկ , փոխանակ զի տարապարտուց անիծանես զմեզ ։ Եւ եղէն նշանք յայ . զի իբրև ջոգաւ եպիսկոպոսն 'ի վանս իւր , հասին հարուածք 'ի վերայ նորա , սկսաւ ընդ Ադամ անդամս մարմնոյ նորա որպէս զփուշ հարկանել ։ Եւ մեծապէս շտապեալ անկեալ 'ի տանջանս չարաչարս հարուածոց , և 'ի մեծ տագնապի կայր աւուրս բազում ։ Ապա յղեաց կոչեաց առ ինքն զայգորդն , աղաչեաց զնա առնել 'ի վերայ նորա աղօթս , զի փրկեսցի նա 'ի ցաւոցն ։ Ասէ գորդն ասէր . Իսկ ես ո՞վ եմ , զի կարեմ զոք օրհնել կամ անիծանել . Թող թէ զայր եպիսկոպոս ։ Իսկ նա բռնադատէր զնա յայնժամ . մինչև յառնէր այգորդն կայր յաղօթս և ասէր . Տէր Ա՛ծ , դու գիտես՝ զի ես այր մեղաւոր եմ և անարժան , ոչ գիտեմ զաղմուկս՝ յորում ըմբռնեցայս . դու փրկեա զիս յայս 'ի չարէս , զի ասեն՝ թէ զայր եպիսկոպոս դու անիծեր , և ասեն՝ քո բանիւ եղև ։ Օ ի լաւ էր ինձ մահ . քանզի չգիտեմ զայս՝ զոր ինչ զինէն ասեն ։ Եւ զայս ասացեալ՝ անդէն բժշկեցաւ եպիսկոպոսն , և սկսաւ յամենայն մարմնոյն փուշն 'ի բաց թափել . և էր իբրև զփուշ խոտոց . վաղվաղակի յարուցեալ ողջացաւ յախտէն ։

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագս Նորին Յոհաննու։

Սոցն Յոհան եպիսկոպոս որդի Փառնայ յորժամ երթայր առ Թագաւորն Հայոց, խաղակատակ լինէր նոցա. որպէս խաղալովն զանձն իւր կրթէր յաւգահութեան, որում ծարաւեալ պասքեալ փափաքէր, սակայն միհանէսք այն էին նորա։ Ի չորք անկեալ յոտս և 'ի ձեռս սողէր առաջի Թագաւորացն, և զուղտու զձայն ածէր կառաչելով, զորէն ուղտու այնպէս փարելով։ Ինդ կառաչելն ապա մի մի բան խառնելով առնէր 'ի ձայն կառաչելոյն, ասելով՝ թէ ուղտ եմ, ուղտ եմ, և զարքայի զմեղս բառնամ. դիք 'ի վերայ իմ զմեղս արքայի, թող բառնամ։ Իսկ Թագաւորքն զմուրհակս գիւղաց կամ զաղարակաց գրեալ և կնքեալ դնէին 'ի վերայ ողկին Յոհաննու փոխանակ ընդ մեղաց իւրեանց. և 'ի Թագաւորացն Հայոց ստացաւ իւր գեւղս և ագարակս և գանձս յուղտն լինելոյ և զմեղսն բառնալոյ ըստ բանիցն։ Այսպիսի էր այրս Յոհանս կապեալ յընդժդութեան և յագահութեան զամ աւուրս կենաց իւրոց. զայսպիսի գործս գործէր վասն ագահութեան, որ չէր արժան։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս Կիւրակոսի եպիսկոպոսի։

Այր էր եպիսկոպոսն Հայոց Կիւրակոս, որ Հաստատ անուն կոչէր, այր ճշմարիտ ՝ծածապաշտ ըստ կամացն ՝այ, և ուղիղ ճշմարտութեամբ առաջնորդէր ժողովրդեանն իւրում. և վարէր զեպիսկոպոսութեան իւր ըստ կամացն ՝այ զամ աւուրս կենաց իւրոց։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս Զորթուազու եպիսկոպոսի Վանանդայ։

Եւ Զորթուազ եպիսկոպոս Վանանդայ գաւառին, այր՝ որ պարկեշտ արժանի էր, արբեալ Ոգւով սրբով. քրիստոնէութիւն գնայր գործէր, առաջնորդէր իւրում ժողովրդեանն ըստ կամացն էր։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս Տիրկան և Մովսէսի եպիսկոպոսաց։

Եւ երկու եպիսկոպոսք Բասենայ գաւառին, Մովսէս և Տիրիկ արք լաւք հրեշտակակրօնք, որ, հաւատացեալք, հրաւիրմանն արժանիք։ Առաջնորդէին իւրաքանչիւր ժողովրդոց 'ի Ճանապարհն էր զամ աւուրս կենաց իւրեանց։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս Ահարոնի եպիսկոպոսի։

Եւ զայնու ժամանակաւ Ահարոն եպիսկոպոս 'ի մէջ Հայոց աշխարհի. այր երևելի և անուանի, քաջ առաքինի. առաջնորդ իւրոց ժողովրդոց լուսաւորապէս զամ աւուրս կենաց իւրոց։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս գլխաւորին եպիսկոպոսին Ասպուրակայ։

Եւ էր գլխաւոր եպիսկոպոսաց Հայոց Ասպուրակ. այր՝ որ և բարէպաշտօն, երկիւղած յայ և 'ի մարդկանէ։ Բայց ոչ ինչ կարէր յանդիմանութիւն խօսել ընդ ումեք. այլ ինքն 'ի լռութիւն էր և 'ի համեստ

տուլթէ 'ի զգաստուլթէ, 'ի պարկեշտուլթէ, 'ի պահս և յաղօթս յամ ժամ աղաչէր զամ։ Բայց 'ի հանդերձն զգէնլոյ՝ ըստ կրօնիցն Օաւինայ գնայր նա. ագանէր զամղայեալս և ժապաւինեալս։ Բայց էր սա այր քաղցր և խոնարհ, բարերար և մարդասէր զամ աւուրս կենաց իւրոց։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս Գնդայ սրբոյ և առաքինոյ, որ էր գլխաւոր յայնմ ժամանակի ամ աբեղայիցն Հայոց անապատաւորացն մենակեցացն և վանականացն։

Այր էր Գինդս այս 'ի Տարօն գաւառէ, և լեալ սա աշակերտ մեծին Դանիէլի. և յետ նորա էր գլուխ աբեղայից, և վարդապետ միանձանց, և առաջնորդ մենակեցաց, և վերակացու վանականացի, և ուսուցիչ ամ անապատաւորաց. և տեսուչ ամենեցուն՝ որք միանգամ վանս սիրոյն այ յաշխարհէ էին մեկնեալ, 'ի յանապատս բնակեալ, 'ի քարանձաւս ամրացեալք յայրս և 'ի քարածերպս երկրի, և միահանդերձք բոկագնացք զգաստացեալք խոտաձարակք ընդաբուտք արմատակերք, զօրէն գազանաց 'ի լերինս շրջէին՝ լեշկամաշկօք և մորթօք այծենեօք, նեղեալք տառապեալք և տարակուսեալք, յանապատի մոլորեալք, 'ի ցուրտ և 'ի տօթ, 'ի քաղց և 'ի ծարաւ վանս սիրոյն այ։

Օ այսպիսի ինչ համբերութեամբ առեալ կրէին յանձինս իւրեանց զամ աւուրս կենաց իւրեանց. զի ոչ արժէ աշխարհս բնաւ զնոսա, որպէս և գրեալ է. զորոնս երամոյ թռչնոց բնակեալ էին սոքա 'ի ծագս[1] վիմաց, 'ի սորս քարանձաւաց, անինչք անստացուածք անխնամք, առանց դարմանոյ՝ ամենևին չտանել մարմնոյ։ Այլ էր նոցա բուն գլխաւոր՝ Գինդ, զի առհասարակ ամ մարդիկ երկրին Հայոց անուանեալ կոչէին սմա վարդապետ։ Բայց էին և 'ի նոցունց

1 Յերկուս օրինակս 'ի ծակս։

այլք աշակերտք, որք նմանէին իւրեանց վարդապետին և նորա ձեռինն, որոց անուանք այս են. Պաչակ, Բրտոյտ, Մարախ. և Տրդատ լեալ էր սոցա ընդեր։ Իսկ որ առ մեծիւն քահանայապետիւն Ներսէսի էր լեալ սարկաւագապետ, և յետ մահուն Ներսէսի 'ի նոյն յառաջին վարդապետսն յանապատաւորաց դասս թիւակոխեաց։ Բռնոյր ՝ի Գինդ և զՄուշէ մանուկ ձեռասուն, հաղորդէր վարուցն մեծին Գնդայ. և այլք բազումք էին նոցա աշակերտք հրեշտակակրօնք, զորոց զվարս ոք պատմել ոչ բաւեսցէ։

Նա էր ՝ի Գինդ լի Հոգւովն Ս՝ այ. և ոչ ընդ նմա, ըստ նմին օրինակի առնէին սոքա նշանս մեծամեծս և զօրութիւս բազումս և բժշկութիւս հիւանդաց յանուն Յեսի Քրիստի։ Նա ընդ բազում հեթանոս տեղիս շրջէին յաշխարհս հեռաւորս, և 'ի սփիւռս հեթանոսաց դարձուցանէին զմոլորութիւն բազմաց, և զբազում մարդիկ ածէին 'ի գիտութիւն կենաց և 'ի ճանապարհն Ճշմարտութեան։ Նա ՝ի Գինդ ընոյր զամ անապատս մենակեցօք, և զամ շէնս վանեբաւ, և բազում յաշխարհի ուղղեալ կացուցանէր կարգս մարդկան զաճեղէն կրօնիցն։ Բայց սակայն ինքն առեալ վիճակ բնակութեան ունէր զանապատն, ուստի բխեալ հոսեն ակունք Եփրատ գետոյն։ Ընդէն բնակեալ ընդ ծագս[1] վիմացն, ուր յառաջու կայեանքն էին մեծին Գրիգորի առաջնոյ, որում տեղեացն Ոսկիք կոչէն, 'ի նոյն ծագս էր բնակեալ մեծն անապատաւորաց Գինդ։ Իսկ ՝ի Մուշէ առ նմա հանապազորդեալ էր. բայց այլքն զայլ գաւառս շրջէին հրամանաւ իւրեանց գլխաւորին Գնդայ։ Նա որբոյն Տրդատայ կայեանք բնակութեան էր 'ի գաւառն Տարօնոյ շինեալ զիւր եղբարց։

1 Ցօրինակի միում ընդ ծակս։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՍՍՀ-ՈՒՄ

ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

Աբա 29։
Ագարակ 48։
Ագէ կոմս 185. 187. 232։
Աթանագինէ որդի Ցուսկան 11. 35. 43. 47։
Ալանք 17. 144։
Ածուշ, փէ՝ Դալարիք։
Ահարոն Արշարունեայ եպիսկոպոս 270։
Աղանայող 152։
Աղբիանոս 9. 45. 226. 263. 264։
Աղթամար 20։
Աղիտրաք 51։
Աղձնիք 21. 38. 42. 123. 130. 141. 142. 146. 159. 211. 212. 221։
Աղէք 144։
Աղցհովիտ 172։
Աղուանք 10. 13. 192. 193. 198. 210. 236։
Ամատունեաց տոհմ 17. 38։
Ամարաշ 15։
Ամիացիք 26։
Ամոք գեղ 265։
Այծեմիկ 77։
Այրարատ, Այրայրատ, փէ՝ Արարատ։
Անակ 6։
Անահիտ 219։
Անգեղ բերդ 142. 206։
Անգեղ տուն 140. 141. 142. 212։
Անդիկան 137. 138. 144։
Անդկան, փէ՝ Անդիկան։
Անդմշ, փէ՝ Անյուշ բերդ։
Անդոյկ, փէ՝ Անդովկ։
Անդովկ, փէ՝ Անդովկ։
Անդովկ սիւնի 28. 44. 54. 56. 72. 116. 133. 161. 177։
Անի բերդ 142։
Անի քաղաք 28։
Անձեւացեաց տոհմ 29. 202. 233։
Անձիտ 29. 141. 160. 212։
Անյուշ բերդ 168. 169. 202. 205—208։
Անուշ բերդ, փէ՝ Անյուշ բերդ։
Աշտիշատ 8. 37. 48. 114։
Ապական Վսեմական 150։
Ապահունիք 51. 52։
Առաւիւտոց գեղ 117։
Առաւստոմ, փէ՝ Առոստոմ։
Առաքելարան հնաշակերտացն, փէ՝ Հանգիստ առաքելոցն։
Առեստ 19. 138։
Առեւծ լեառն 73. 218. 219։
Առլեզք 238։
Առոստոմ 265։
Աստեղեստան 133։
Աստուրկ 109։
Ասպուրակ 264. 270։
Աստամ 29։
Արպայական } 13. 16. 50. 124. 137.
Արպատական } 141. 143. 144. 154. 160. 177. 187. 189. 192. 198. 200. 208։
Արպատհայ գաւառ, փէ՝ Արբատական։
Արագած 144։
Արարատ 114. 144. 204. 262։
Արդեանք 204։
Արիանոս 25։
Արիստակէս 6. 25։
Արձախ 210։
Արշակ որդի Տիրանայ 47. 52. 57. 66—70. 73. 90. 103. 106. 107. 110. 113. 117. 120—169. 191. 201—208։
Արշակ որդի Պապայ 244. 245. 252. 255—257. 261. 262. 265. 266։
Արշակաւան 107. 110. 112։
Արշակունիք 90. 117. 120. 142. 170։
Արշամունիք 123։
Արշարունիք 28. 54. 72. 105. 129։
Արշաւիր կամսարական 28. 44. 54. 56. 72։
Արուեստան 136։
Արտագերք 129. 170. 171։
Արտանդան 29։
Արտաշատ 18. 30. 171. 172։

Արտաշէս մամիկոնեան որդի Մանուէլի 242:
Արտաշէն 239:
Արտաշիր որդի Մանուէլի 256:
Արտաթագէրք, փէ՝ Արտագէրք:
Արտաւազդ մամիկոնեան 28. 47:
Արտաւազդ մանուկ որդի Վաչէի մամիկոնենի 252–255:
Արտաւան իշխան Վանանդայ 38:
Արտեւան 167:
Արտիթ 265:
Արտոյտ 272:

Բաբիկ սիւնի 250. 253. 254:
Բագաս, փէ՝ Բագոս:
Բագասեր 110:
Բագաւան 192. 251:
Բագէնք 104:
Բագոս 138. 139:
Բաղուան, փէ՝ Բագաւան:
Բագրատ բագրատունի 17. 71:
Բագրաւանդ 105. 172. 176. 232. 251. 252:
Բագրեւանդ, փէ՝ Բագրաւանդ:
Բախիշն 188. 192:
Բակուր 21:
Բաղասաճիք 15. 17:
Բաղհ 239:
Բամբիշն 43. 48. 68:
Բառաէջ 38:
Բասան 10:
Բասէն 21. 55. 139. 142. 265. 270:
Բատ 235. 237. 238. 243:
Բարսեղ երիցապետ Կեսարիոյ 72. 94–103:
Բարսիղիոս. փէ՝ Բարսեղ:
Բարսիղեոս. փէ՝ Բարսեղ:
Բզնունիք 19. 114:
Բնաբեղ 32. 206:
Բոյեական 152:

Գաթք 15:
Գամիրք 30. 44. 45. 68. 72. 94. 104:
Գայիանէ 37:
Գանձակ 16. 137. 187. 198. 200. 203. 235:
Գառնի 18:
Գարդմանաձոր 45. 159. 210:
Գարդմանայ ձոր, փէ՝ Գարդմանաձոր:
Գարեգին Ռշտունի 17. 178. 242. 243:
Գարջոյլ Մաղխազ խորխոռունի 104. 245. 255:
Գինդ 271. 272:
Գղուարք 15:
Գնել 70. 104. 116–122. 133. 155. 187. 203. 233:
Գնիթ 29:
Գնթունիք 104:
Գնունիք 29. 66:
Գոդորք կամ Գուգորք, փէ՝ Գուգարք:
Գողթն 19:
Գորուիթ 29:
Գուգարք 15. 211:
Գուգարք 159:
Գումանդ Շապուհ 148. 248:
Գրիգոր լուսաւորիչ 1. 5. 15. 29. 32. 35–38. 40. 42. 48. 73. 114. 117. 230. 272:
Գրիգորիս 10. 13. 14. 17. 37:

Դալարիք 52. 53:
Դանիէլ իշխան 72:
Դանիէլ եպիսկոպոս 36. 38. 42. 219. 221. 265. 271:
Դանուն 243:
Դասարնտրէ 159:
Դատ 21:
Դատաբէ, Դատաբէն 19. 20:
Դարանաղէ, Դարանաղեաց գաւառ 6. 28. 29. 32. 36. 114. 142. 187:
Դարեւնից բերդ 16. 153. 187:
Դարիւնայ բերդ, փէ՝ Դարւնից:
Դարօնից բերդ, փէ՝ Դարւնից:
Դգղակ փէ՝ Դղակ:
Դեհկան 149:
Դեմետ գնթունի 104:
Դիմաքսենից տոհմ 38:
Դղակ 191. 203–205:
Դմաւոնդ Վսեմական 147:
Դուին 18:
Դրաստամատ 205–208:
Դրստամատ, փէ՝ Դրաստամատ:

Եգերսուանք 15:
Եգիպտոս 25:
Եկեղեաց գաւառ, Եկեղեցեաց գաւառ 6. 36. 38. 48. 114. 142. 216. 219. 262:

Եպիփան աշակերտ Դանիէլի 42. 218. 221–224:
Եռանդ 188. 192:
Երուանդաշատ 172:
Եւսեբիոս եպիսկոպոս Կեսարիոյ 72. 94–98:
Եփրատ 115. 191. 192. 254. 272:

Զարաւանդ 18:
Զարեհ 29:
Զարեհաւան, Զարեհաւանդ 172. 176. 251:
Զարեհվան, փէ՝ Զարեհաւան:
Զարիշատ 172:
Զարմանդուխտ 244. 245. 246. 248:
Զաւէն 263. 264. 270:
Զիկ 150. 151. 169. 177. 187. 261:
Զինդկապետ 154:
Զնդկապետ, Զնդակապետ, փէ՝ Զինդկապետ:
Զոմն 38:
Զորթ 264:
Զորթուազ 270:
Զուիթ 172. 174. 175:
Զրուանդուխտ 261:

Ընդմիշ, փէ՝ Անյուշ բերդ:
Ընձաքիարս 24:
Ըռըշտունիք, փէ՝ Ռըշտունիք:

Թադէոս 5. 30. 40. 71:
Թաւասպարք 15:
Թաւրէժ, Թաւրեշ 144. 152. 189:
Թեկղ. Թեկղէ 101:
Թէոդորոս 102:
Թիլն 6. 38. 219. 219:
Թորդան 6. 29. 32. 36:

Իժմանիք 15:
Իարայէլ 41:

Լսին 120:

Խադ 105–109. 118. 214:
Խախ 216. 218:
Խաղանիք 179:
Խարտիզան. 139:
Խեշտ 21:
Խորխոռունիք 29. 104:
Խոսրով Ա. 1. 6:
Խոսրով Բ. 6. 15. 18. 26. 28. 29:
Խոսրով արշակունի 261. 262. 264. 265. 266.
Խոսրովակերտ 18:
Խուժաստան 205:

Ծովք մեծ 6. 21. 32. 42. 72. 114. 141. 160 206. 212. 221. 222:
Ծովք Շահէի կամ Շահունոց 21. 141:

Կաղբք 160:
Կամենական տոհմ 17. 29:
Կամսարական տոհմ 129:
Կարէն իշխան ամատունեաց 38. 169. 177. 187:
Կարին 105. 241. 256:
Կաւռական տոհմ 145:
Կեսարիա 30. 44. 45. 68. 72. 99. 226. 231:
Կեշկէն 104:
Կիրակոս կամ Կիւրակոս Շահապ 269:
Կոգ, փէ՝ Կովգ:
Կողբացիք 29:
Կողթ 210:
Կոմս մամիկոնեան 239:
Կոստանդիանոս 25. 55:
Կովգ 16. 106. 187. 251:
Կոտակ, փէ՝ Խոսրով Բ:
Կորդիք 159. 209:
Կորդուք 21. 22. 42. 123. 159. 209. 219. 220:
Կորճէք 158. 251. 255:
Կուր 15. 210. 211:

Հաբանդ 15:
Հաբուժենք 104:
Հազարաւուխտ 137. 138. 146:
Համազասպ, Համազասպեան 243:
Համազասպուհի 178. 242. 243:
Հայ 171. 172. 173:
Հայոց մարզպան 45. 46. 71. 113. 114. 115. 171. 191. 217. 218. 233.
Հանդիստ առաքելոցն 7. 36:
Հաշտէնք 21. 29:
Հայեաց դրախտ 38. 43:
Հայեաց կամ Հայեկայ գեղ 48. 49:
Հեճմատակք 15:
Հերակլ, փէ՝ Վահագն:
Հէր 18:
Հիւրկանոս 173:

Հմայեակ մամիկոնեան որդի Մանուէլի 242։
Հոնք 14. 15. 17. 144։
Հոռոմք 25. 187. 202։
Հռիփսիմէ 37։
Հրեայ 171. 172. 173։
Հրեշղում, պէս Հրեշղում։
Հրեշղում 151. 152։
Հրսիձոր 104։

Ձկնատեսանէն արքունի 19. 138։
Ձկնատեսանք, պէս Ձկնատեսանք։
Ձորայ գաւառ, պէս Ձորոց աշխարհ։
Ձորոց աշխարհ 29. 159։

Ճենք 199. 240. 241։
Ճղիք 15։

Մաղդեղունք 177–179. 188. պէս Ե Պարսք։
ՄաղքուԹք 10. 14. 16. 17։
Մակաբէ 28։
Մակեդոնիա 78։
Մախազեան, Մաղխազեան 147. 157։
Մաղխազ. պէս Գարջայլ։
Մաղխազունեան տուն 29։
Մամբրէ 221. 222։
Մամուշեղ 221։
Մանազկերտ 226. 263։
Մանակ 21։
Մանաճիրհ, Մանաճերհ 24։
Մանասպ 29։
Մանաւազ 29։
Մանաւազեան տոհմ 9։
Մանաւազկերտ. պէս Մանազկերտ։
Մանուէլ մամիկոնեան 239–258. 261։
Մասեաց լեառն 51։
Մատաթի 28։
Մարախ 272։
Մարգարէանոցն Յոհաննու. պէս Յոհաննու Կարապետի մատուռն։
Մարիամ 81։
Մարի երէց 125. 126. 165։
Մարիճ 154։
Մարուճան, պէս Մարիճ։
Մալք 143. 160. 209։
Մեծամոր 18։
Մեհաւ անձեւացի 104։
Մեհենն Ուրշտունի 104։
Մեհանդակ. պէս Մեհենդակ։
Մեհենդակ Ուրշտունի 17. 44. 47. 72։
Մեհընդակ. պէս Մեհենդակ։
Մեհունդակ. պէս Մեհենդակ։
Մերուժան արծրունի 140–142. 148–160. 176. 177. 178. 189. 193. 247. 250. 255։
Մղուր 141։
Մէջաշխարհն Հայոց 136. 143. 160։
Մինագեսք Ասորոց 136։
Մինջաշխարհն Հայոց. պէս Մէջաշխարհն Հայոց։
Մծբին 22։
Մծբնացիք 23. 26։
Մծուրք 115։
Մշկան 153. 154։
Մոգայ անդերձապետ 157։
Մովսէս մարգարէ 23։
Մովսէս եպիսկոպոս 270։
Մուշեղ մամիկոնեան 170. 185–192. 193–195. 198–202. 203. 209–213. 218. 228. 231. 233. 235–238. 240. 241։
Մուշէ 272։
Մուշկ սահառունի 104։
Մուրիկ 118։
Մռիկան 158. 249։
Մռկան, պէս Մռիկան։
Մրջիւնիկ 123։

Յակոբ Մծբնայ. 22–26։
Յակոբայ ալբեւր 24։
Յոհան եպիսկոպոս 266–269։
Յոհաննու Կարապետի մատուռն 7. 36. 44. 117. 252։
Յուդա մակաբէ 28։
Յուսիկ Թոռն լուսաւորչին 10. 29–32. 35. 71։
Յուսիկ եպիսկոպոս 266։

Կաղնաձաւան 173։
Ներսէհ արքայ Պարսից 50. 55. 59. 177։
Ներսէհ մեծն 43. 48. 68–95. 98. 99. 104. 106. 108–114. 117–123. 129. 161. 175. 186–188. 193–200. 211–219. 227–231. 257. 264. 265։
Նիկիա 25։
Նծբին, պէս Մծբին։
Նոյ իշխան 72։

Նոշիրական 159. 209.
Նորշիրական, փե՛ Նոշիրական :
Նպատ լեառն 192. 193. 195:

Շակաշէն 210:
Շահակ յաջորդ Փառինայ 45:
Շահակ կորձեայ 264:
Շահապ, փե՛ Կիրակոս :
Շահապիվան 117:
Շահէի կամ Շահունոց Ծովք. փե՛ Ծովք Շահէի :
Շահէն իշխան 29:
Շաղխտա 42. 218. 219. 220:
Շապուհ արքայ Պարսից 124–126. 177. 192. 193. 200–208. 236. 243:
Շապուհ Գուումանդ, փե՛ Գուումանդ Շապուհ :
Շապուհ Վարազ. փե՛ Վարազ Շապուհ :
Շապտան անգերձապետ 157:
Շաւասպ արծրունի 47. 115:
Շիրակ 28. 129:
Շէքիք 15 :

Ոխսա, փե՛ Ոսխա :
Ողական բերդ 191:
Ողոմպի 122:
Ոսխա 55. 139:
Ոսկիք 272:
Որդորու 10:
Որդանիք 9. 10:
Որմիզդուխտ 160. 179:
Ուռհա 231:
Ուռնայր 192. 193. 198. 199. 200. 236:
Ուտի 210:

Զունակ, Զոնակ 123

Պաղեստինացիք 171. 173:
Պապ որդի Յուսկան 11. 35. 43. 47:
Պապ որդի Արշակայ 122. 155. 156. 170. 185. 193–205. 212. 214–216. 226–234. 241. 244. 248:
Պարգեւ իշխան 72 :
Պարսք 18.20.21.26.36.50.55–58.187 :

Ջանջանակ 18.
Ջոն 71 :
Ջրաբաշիք 18:

Ռաստոմ 91.
Ռշտունիք 29. 24. 46. 104. 178:

Սակտան անգերձապետ 156:
Սահառունիք 29. 38. 235. 238:
Սահռունիք, փե՛ Սահառունիք :
Սաղամաս 153 :
Սաղամուտ 160:
Սամ սիւնի 250:
Սամուէլ մամիկոնեան 179. 255:
Սանատրուկ 5. 115. 142 :
Սանէսան 14. 15. 16. 17:
Սատաղ 16. 55:
Սասան 50:
Սարարադ նոյն ընդ Այրարատ 22. 24:
Սարգիս 101.
Սիւնիք 21. 117. 133. 177. 249. 250:
Սիւս 119. 120:
Սուրէն Պահլաւ 149. 150. 151. 245–248 :
Սուրիկ 104:
Սպանդարատ կամսարական 129 :
Սպեր 256 :
Ստեփաննոս 77 :

Վահագն 37. 38:
Վահան ամատունի 17. 20:
Վահան մամիկոնեան 160. 176. 177. 178. 179 :
Վահրիճ 147. 148 :
Վաղարշ 29:
Վաղարշակ որդի Պապայ 244. 245. 252. 256:
Վաղարշապատ 16. 172:
Վաղէս 57. 80. 90. 95. 98. 99. 100–104 :
Վաղինակ սիւնի 21. 250 :
Վան 172. 178. 243 :
Վանանդ 29. 270 :
Վաչակ 272 :
Վաչական նախարար Պարսից 153 :
Վաչէ մամիկոնեան որդի Արտաւազդայ. 9. 16. 18. 20. 21. 26:
Վաչէ մամիկոնեան 238. 240. 255 :
Վաչէ արծրունի 47.
Վասակ մամիկոնեան 44. 47. 66. 104. 124. 125. 160–162 168. 169. 170. 185. 189. 240:
Վասնեայ դաշտ 14:

Վարազ կամենական 17:
Վարազ շահունի 29:
Վարազ իշխան գիմաքսենից 38:
Վարազ Շապուհ 49. 50. 51–53. 56:
Վարազ իշխան պարսիկ 249:
Վարազ լեառն 252:
Վարազդատ 234–237. 238. 240–244:
Վարազդուխտ 43:
Վարդան մամիկոնեան 66. 104. 117: 126–128. 178:
Վարդան որդի մամիկոնենին 128:
Վարդանդուխտ 256. 257:
Վարդանոյշ 251:
Վին 145:
Վիրք 10. 13. 211:
Վրոյթ 29:
Վեսմական, պէ՛ս Դամաւունդ և Ապական:
Վրթանէս 1. 6–13. 16. 19. 26. 30:
Վրիկ 49:
Վրկէն 104:

Տաճատ ըռշտունի 47:
Տաճար մայրի 18:
Տայք 66. 128. 269:
Տարօն 7. 36. 42. 44. 48. 113. 114. 123. 191. 271:
Տափեր կամուրջ 30. 172:
Տերէնտ ստրատելատ 185. 187. 201. 203. 232:
Տիգրան 171. 173:
Տիգրանակերտ 142. 221:
Տիզբոն 125. 132. 165:
Տիկնունի ապարանք 18:
Տիսպոն կամ Տիսփոն, պէ՛ս Տիզբոն:
Տիրան 11. 29–32. 34. 38. 42. 46. 49. 51. 52. 57. 66. 68. 113. 192. 206. 465:
Տիրանամ 91:
Տիրիկ եպիսկոպոս 270:
Տիրիթ 90. 104. 116–122:
Տմորիք 159. 209:
Տոզբ, Տոսբ, Տոսպ 173. 178. 243:
Տրդատ 218. 272:
Տրդատ 1. 6. 36. 45. 55. 114. 117. 230:
Տրդատ. պէ՛ս Տրդատ:

Ցլու գլուխ լեառն, պէ՛ս Ցուլ:
Ցուլ 16. 18. 38:

Փայտակարան 210.
Փառանձեմ 116. 120–123. 133. 155. 169–174. 191. 214:
Փառաւաղեանք 211:
Փառէն 44. 45. 266. 269:
Փաւստոս 70. 218. 264. 265:
Փիսակ 49. 50:
Փոխք 15:

Քուշանք 206. 239:

Օշական 17: